Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2035

24
9-61

1873

2010

24
9-61

ԳԻՐՔ

ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՒԹԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑ

Տ. ԵՍԱՅԵԱՑ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՑ

Տ. ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ


Յ ԵՐՈՒՍԱՂԷՄ

1873

16
2001
5239



30517-ԿՀ



Ազատուած յօրինուածքիւն նոյն օրհներգից ցրից,
տառնացնաւ. սացմնաարանաւ. սացմնա ասա-
ցից քեզ ի սաղ • ՃԻԳ • Ց։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Ани ССР
Կ. Մ. Ա. Маркиана
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆՎԱՆ

(7678-56)

13542-58

ԳԻՐՔ
ՍԱՂՄՈՍԱՅ ԴԱՒԹ

ՍԱՂՄՈՍ Ա.

ԵՐԱՆԵԱԼ է այր՝ որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց, ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց, և յաթոռս ժանտից ոչ նստաւ։

Այլ յօրէնս Տեառն են կամք նորա, և յօրէնս նորա խորհեցայ նա ի տուէ և ի գիշերի. և եղիցի նա որպէս ծառ որ տընկեալ է ի գնացս ջուրց։

Որ զպտուղ իւր ի ժամու տացէ, և տերեւ նորա մի թափեսցի. և զամենայն զոր ինչ արասցէ յաջողեսցի նմա։

Ոչ այսպէս են ամբարիշտք, և ոչ այսպէս. այլ որպէս զխուշ, զոր հոսէ հողմ՝ ի վերայ երեսաց երկրի:

Վասն այսորիկ ոչ յարիցեն ամբարիշտք ի դատաստան, և ոչ մեղաւորք ի խորհուրդս արդարոց:

Գիտէ Ճանապարհս արդարոց, Ճանապարհք ամբարշտաց կորիցեն:

Տունք գ:

ՍԱՂՄՈՍ Բ.

Անվերնագիր ի Հերոդեցւոց, երկոքին սոքա ընդ մի համար են:

Ընդէր խառնեցան հեթանոսք, եւ ժողովուրդք խորհեցան ի սնոտիս:

Յանդիման եղեն թագաւորք երկրի, եւ իշխանք ժողովեցան ի միասին՝ վասն Տեառն և վասն օծելոյ նորա:

Խզեսցուք զկապանս նոցա, եւ ընկեսցուք ի վզին պատճ նոցա:

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք, և Տէր արհամարհեսցէ զնոսա:

Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութեամբ իւրով, և սրտմտութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա:

Ես կացի թագաւոր ի նմանէ, ի վերայ

ZUUՈ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

լերին Սիանի սրբոյ նորա՝ ի պատմել զկնի բանիս Տեառն:

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, եւ ես այսօր ծնայ զքեզ:

Խնդրեա յինէն և տացի քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի:

Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեայ, եւ որպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա:

Արդ, թագաւորք, զայս ի միտս առէք, եւ խրատուեցարուք ամենեքեան որ դատիք զերկիր:

Ծառայեցէք Տեառն երկիւղիւ, և ցնծայեք առաջի նորա դողութեամբ:

Ընկալարուք զկրաւտն նորա՝ զի մի բարկասցի Տէր, եւ կորնչիցիք ի ճանապարհայն աջադատութեան:

Ի ժամանակի յորժամ բորբոքեսցի բարկութիւն նորա:

Երանի ամենեցուն՝ որ յուսացեալ են ի Տէր:

Տունք ժգ:

ՍԱՂՄՈՍ Գ.

Սաղմոս ի Դաւիթ. ի ժամանակի զի փախուցեալ էր նա յերեսաց Աբիսողմայ որդւոյ իւրոյ:

Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ. և բազումք յարեան ի վերայ իմ:
Բազումք ասեն զանձին իմում, թէ չիք փրկութիւն սորա առ Աստուած նմա:
Այլ դու, Տէր, օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ:
Ձայնիւ իմով առ Տէր կարդացի, և լուաւ ինձ ի լերինն սրբոյ իւրմէ:
Ես ննջեցի և ի քուն եղէ, զարթեայ եւ Տէր ընդունելի իմ է:
Ոչ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նզովեցելոց, որ շուրջանակի պատեալ պաշարեալ պատհէին զիս:
Արի, Տէր, և փրկեա զիս, Աստուած իմ. զի դու հարեր զամենեսեան որք էին ընդդիմ թշնամանելոցդ ի տարտարոսս, և զոսկորունս մեղաւորացն փշրեացեր:
Տեառն է փրկութիւն, ի վերայ ժողովրդեան քոյ օրհնութիւն քո:

Տունք ը: Գոլոյա իբ:

ՍԱՂՄՈՍ Դ.

Ի կատարած օրհնութեան. սաղմոս երգոյ, ի Դաւիթ:

Ի կարդալ իմում լսեաւ ինձ, Աստուած, ողորմութեան, ի նեղութենէ էիր ինձ անդորր ապարեր. ողորմեա ինձ եւ լսեր աղօթից իմոց:
Որդիք մարդկան, մինչեւ յո՞րչափ էք խստասիրտք. ընդէր սիրէք զնանրութիւն, եւ խնդրէք զստութիւն:
Ծանեարուք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում. և Տէր լսիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:
Բարկանայք՝ և մի մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք:
Մատուսջէք պատարագ արդարութեան, և յուսացարուք ի Տէր:
Բազումք ասեն թէ՝ ո՞ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, եւ եառուր ուրախութիւն սրտից մերոց:
Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:
Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեացուք

և զարհիցուք. զի դու, Տէր, միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ:

Տունք ը:

ՍԱՂՄՈՍ Ե.

Ի կատարած վանն վճակելոյն, ասացեալ ի Դաւիթ:

Բանիք իմոց ունկնդիր, Տէր, և ի միտ առ զաղաղակ իմ:

Եսայեա ի ձայն աղաթից իմոց, Թագաւոր իմ և Աստուած իմ:

Քեզ զքեզ աղաչեմ, Տէր, ընդ առաւօտս լսիցես ձայնի իմում. ընդ առաւօտս պատրաստ եղեց յանդիման լինել առ քեզ:

Ոչ հաճ դու Աստուած կամիս զանօրինութիւն, և ոչ բնակիսի առ քեզ չարք, և անօրինք մի բնակեսցին առաջի աչաց քոց:

Ատեցեր զգայեսիկ. սյք գործեն զանօրինութիւն, կորուսանես զամենեսեան սյք խօսին սուտ:

Զայր արիւնահեղ եւ զինեգաւոր պիղծ առնեսն դու, Տէր, այլ ես քոյ բազում ողորմութեան քում մտից ի տուն քո, և երկիր պագից ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո:

Տէր, առաջնորդեա ինձ յարդարութեան քում. վասն թշնամեաց իմոց ուղիղ արա առաջի իմ զճանապարհս քո:

Զի ոչ գոյ ի բերանս նոցա ճշմարտութիւն, և սիրտք նոցա նանրեալք են:

Որպէս դերեզմանք բաց են կոկորդք նոցա, և լեզուօք իւրեանց նենդաւորք եղեն:

Դատեա զնոսա, Աստուած, զի անկցին ի խորհուրդս սրտից իւրեանց. քոյ բազում ամբարշտութեան նոցա մերժեա զնոսա՝ զի դառնացուցին զքեզ:

Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են ի քեզ, յաւիտեան ցնծասցեն, և բնակեսցիս դու ի նոսա:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քո, զի օրհնեսցես դու զարդարն, Տէր, որպէս զինու հաճութեամբ քո պսակեցեր զնոսա:

Տունք ժբ:

ՍԱՂՄՈՍ Զ,

Ի կատարած ընդ օրհնութիւնս վասն ութերորդի. ասացեալ ի Դաւիթ:

Տէր, մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս:

Ողորմեա ինձ, Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ:

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու, Տէր, մինչեւ յերբ:

Գարձ, Տէր, և փրկեա զանձն իմ, կեցո զիս, Տէր, ըստ ողորմութեան քումմ։
Զի ոչ ոք է որ ի մահու յիշէ զքեզ, կամ՝ ի դժոխս խոստովան առնի առ քեզ։
Վատակեցայ ես ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, եւ արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։
Խռովեցաւ ի սրտմտութենէ աչին իմ, և մաշեցայ ես ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։
Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն։
Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր աղաչանաց իմոց, եւ Տէր զինդրուածս իմ ընկալաւ։
Ամաչեսցեն եւ խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

Տունք ժ։ Գոբզայս Լ։

ՍՍՂՄՈՍ Ե։

Սաղմոս ի Դաւիթ, զոր ասաց Տէառն վասն բանին Քուսեայ որդւոյ Յեմինեայ։

Տէր Աստուած իմ, ի քեզ յուսացայ՝ փրկեա զիս, և յամենայն հալածչաց իմոց ապրեցո զիս։

Գուցէ երբեք յափշտակիցէ որպէս առիւծ զանձն իմ։ ոչ ոք իցէ որ փրկիցէ, և ոչ այն՝ որ ապրեցուցանիցէ։
Տէր Աստուած իմ, թէ արարի զայս, եւ թէ կայեն անօրէնութիւնք ի ձեռս իմ։
Թէ հատուցի երբեք այնոցիկ՝ որք հատուցին ինձ չար, անկեայց և ես ի թշնամեաց իմոց ընդունայն։
Հալածեսցէ ապա թշնամին զանձն իմ, հատցէ և կոխեսցէ յերկիր զկեանս իմ, և փառս իմ՝ ի հող բնակեցուսցէ։
Արի, Տէր, բարկութեամբ քով, և բարձր եր՝ ի սպառել թշնամեաց իմոց։
Զարթիր, տէր Աստուած իմ, ի հրամանս զոր պատուիրեցեր, և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին քեզ։
Վասն այսորիկ՝ ի բարձունս դարձ, Տէր. և Տէր դատի զժողովուրդս իւր։
Դատ արա ինձ, Տէր, ըստ արդարութեան իմում, և ըստ անբծութեան իմում որ յիս։
Կատարեսցին չարիք՝ ի վերայ մեղաւորաց, և յաջողեսցես դու արդարոյ։
Որ քննէ զսիրտս և զերիկամունս Աստուած արդար. յիրաւի է ինձ օգնութիւն յԱստուծոյ, որ ապրեցուցանէ զյուսացեալսն՝ զսիրտս ուղիղ են սրտիւք։

Աստուած դատաւոր արդար հզօր և երկայնամիտ, որ ոչ ածէ զբարկութիւն իւր ամենայն օրհնասացաց։

Ապա թէ ոչ դառնայք առնա, զսուր իւր սրեալ է և զաղեղն իւր լարեալ. և ի նմա պատրաստեալ է զանօթս մահու, և զնետս իւր այրեցեալք է գործեալ։

Ահաւասիկ երկնեայ զանօրէնութիւն, յղեալ զցաւս զցաւս և ծնաւ զանիրաւութիւն։

Գուբն զոր փորեաց և սրեհեաց, ի նմին անկեալ ի խորխորատս զոր և գործեաց։

Դարձցին ցասք ի գլուխս նորա, և ի վերայ գագաթան նորա անօրէնութիւնք իւր իջցեն։

Խոստովան եղիցի տեառն ըստ արդարութեան նորա, և սաղմոս ասասցից անուան տեառն բարձրելոյ։

Տունք ԺԷ։

ՍԱՂՄՈՍ Ը.

Ի կատարած ի վերայ հնձանացն, սաղմոս ի Դաւիթ։

Տէր, տէր մեր, զի սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի։

Համբարձաւ մեծվայելչութիւն քո ի վերայ քան զերկինս. ի բերանոց մանկանց ողջոց եւ ստընդիեցաց հաստատեցեր զօրհնութիւն։

Վասն թշնամեաց քոց, տէր, զի եղծցէ թշնամին և հակառակորդն։

Տեսից զերկինս զգործս մատանց քոց, զլուսին և զաստեղս զորս դու հաստատեցեր։

Ո՞վ է մարդ զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ թէ այց լինիս առ նմա։

Փոքր լինիս խոնարհ արարեր զնա քան զՀրեշտակս քո, փառօք և պատուով պսակեցեր զնա, և կացուցեր զնա ի վերայ ամենայն ձեռագործոց քոց։

Զամենայն լինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա, զխաշն և զարջառ և զամենայն լինչ։

Եւս և զերէս վայրի, զթռչունս երկնից և զձկունս ծովուց որք շրջին ընդ շաւիղս ծովուց։

Տէր, տէր մեր, զի սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի։

Տունք Թ։ Գոլացաւ կէտ։

ՍԱՂՄՈՍ Թ.

Ի կատարած, վասն գաղտնեացն որդւոյ, սաղմոս ի Դաւիթ։

Զոհացայց զքեզն, տէր, բոլորով սրտիւ իմով, պատմեցից զամենայն սքանչելիս քո։

Ուրախ եղէց և ցնծացայց ի քեզ, սաղմոս

ասցից անուան Տեառնդ բարձրելոյ։
Ի դառնալ յետս Թշնամեաց իմոց, տկա-
րասցին և կորիցեն յերեսաց քոց։
Արարեր զդատաստանս իմ և զերաւունս,
նստար յաթոռ դատաւոր արդարութեան։
Սաստեցեր ի հեթանոսս, և կորեաւ ամ-
բարիշտն. զանուանս նոցա ընջեցեր յաւի-
տեանս յաւիտենից, եւ Թշնամեացն պէն
սպականաց միշ իսպառ։
Ջքաղաքս աւերեցեր, եւ կորեաւ յիշո-
ւսակ նոցա ազաղակաւ։
Աստուած կայ և մնայ յաւիտեան, պատ-
րաստ արար զաթոռ իւր ի դատաստանի։
Ինքն դատի զաշխարհս արդարութեամբ,
և զժողովուրդս իւր ուղղութեամբ։
Եղեւ Տէր ապաւէն ունանկի, օգնական ի
նեղութեան՝ ի դէպ ժամանակի։
Յուսացին ի քեզ ամենեքեան որք գիտեն
զանուն քո. զի ոչ թողցես զաշնասիկ, որ
խնդրեն զքեզ, Տէր։
Սաղմոս ասացէք Տեառն՝ որ բնակեալն է
ի Սիոն. պատմեցէք ի հեթանոսս զգոր-
ծս նորա։
Ի խնդրել զարիւն նոցա՝ յիշեաց և ոչ մո-
ռացաւ Տէր զաղաղակ տնանկաց։
Ողորմեա ինձ, Տէր, և տես զվոհարհու-

թիւն իմ՝ ի թշնամեաց իմոց. ո՛ բարձր
արարեր զիս ի դրանց մահու։
Որպէս պատմեցից զամենայն օրհնութիւն-
քս ի դրունս դստերս Սիոնի, և ցնծացայց
ի փրկութեան քումմ։
Ընկալան հեթանոսք յապականութեան ի-
րեանց զոր արարին. և որոգայթ զոր թա-
գուցին՝ առցէ զոտս նոցա։
Ճանաչի Տէր յառնել զդատաստանս իւր,
և ի գործս ձեռաց իւրեանց կապեացին
մեղաւորք։
Դարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս,
եւ ամենայն հեթանոսք որք մոռացան
զԱստուած։
Ոչ իսպառ մոռանայ Տէր զաղքատն, համ
բերութիւն անանկաց մի կորիցէ իսպառ։
Արի, Տէր, եւ մի զօրասցի մարդ. դա-
տեսցին հեթանոսք առաջի քո։
Կացո, Տէր, օրէնսդիր ի վերայ նոցա, և
ծանիցեն հեթանոսք՝ թէ մարդիկ են։
Ընդէր, Տէր, կացեր ի հեռաստանէ, անտես
արարեր ի դէպ նեղութեան ժամանակի։
Յամբարտաւանել ամբարշտին՝ այրի տա-
քան. արգելցին ի խորհուրդս իւրեանց
զոր և խորհեցան։
Զի գոյր մեղաւ[illegible] Թիւն անձին

(76 78-15) 13542-78
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
им. А. Мясникяна

խըոյ . որ զրկէն , և նա գալի ։
իսկ ընդէր բարկացոյց մեղաւորն զԱստուած , ըստ բազում բարեխօսեան խնբում թէ ոչ լինդրի ։
Ոչ է Աստուած առաջի աչաց նորա , պիղծ են ճանապարհք նորա յամենայն ժամ ։
Բարձեալ են լրաւունք յերեսաց նորա , ի վերայ ամենայն թշնամեաց իւրոց տիրեացէ ։
Աստց ի սրտի իւրում թէ ոչ սասանեցայց ազգէ յազգ առանց չարի ։
Անխիթար և դառնութեամբ և նեղութեամբ լի է բերան նորա , եւ ի նեղբոյ լեզուի նորա յաւք և վաստակք ։
Նստի դարանեալ ընդ մեծամեծս , ի գաղտնիս սպանանել զանբիծն ։
Աչք նորա ի տնանկս հային , դարանի ի գաղտնիս՝ որպէս զառիւծ ի մորուղ խնբում ։
Դարանի յափշտակել զաղքատն , յափշտակել զաղքատն և ձգել զնա ։
Յորոգայթ իւր խոնարհեցուսցէ զնա , խոնարհեսցի եւ անկցի ի տիրել իւրում ի վերայ անտնանկաց ։
Զի ասաց ի սրտի իւրում թէ մոռացաւ Աստուած , դարձոյց զերեսս իւր զի մի տեսցէ խօսքս ։

Արի , տէր Աստուած իմ , բարձր եղիցի ձեռն քո , և մի մոռանար զտնանկս ։
Իսկ ընդէր բարկացոյց ամբարիշտն զԱստուած , զի ասաց ի սրտի իւրում թէ ոչ քննի ։
Տեսանես դու զնա ի ցաւս , և ի սրտմտութիւնս հայիս , ի քեզ թողեալ է աղքատն , և որբոյն դու ես օգնական ։
Խորտակեացի բազուկ մեղաւորի և չարի , խնդրեացին մեղք նորա և նա մի գտցին ։
Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից , կորիցեն հեթանոսք յերկրէ նորա ։
Զդանկութիւն տնանկաց լուաւ տէր , ի պատրաստութիւն սրտից նոցա հայեցաւ ակն քո ։
Դատ առնել որբոյն և տնանկի , զի մի եւս յաւելցի մարդ ի մեծաբանել իւրում ի վերայ երեսաց երկրի ։

Տունք խ ։

ՍԱՂՄՈՍ Ժ ։

Ի կատարած , սաղմոս ի Դաւիթ ։

Ի տէր յուսացայ . ընդէս ասիցէք ցանձն իմ , փոփոխեաց ի լերինս որպէս ճնճղուկ ։
Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղնս իւրեանց , պատրաստ արարին զնետս ի

կատարած, ձգել ընդ խաւար այնոցիկ՝ որ ուղիղ են սրտիւք։

Զի ըստ դու քննեցեր՝ նոքա աւերեցին. իսկ արդարն ո՞ւր արար։

Տէր ի սաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում։

Աչք նորա ի տնանկս հային, և արտեւանունք նորա քննեն զորդիս մարդկան։

Տէր քննէ զարդարն և զամբարիշտն. որ սիրէ զիւեզս, ատէ զանձն իւր։

Տեղասցի ի վերայ մեղաւորաց որոգայթ՝ հուր և ծծումբ, այս մրրիկ բաժին բաժակի նոցա։

Արդար է Տէր՝ և զարդարութիւն սիրէ, և զուղղութիւն տեսանեն երեսք նորա։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ԺԱ.

Ի կատարած, ի վերայ ութերորդին. սաղմոս ի Դաւիթ։

Ապրեցո զիս, Տէր, զի նուազեաց սուրբ. նուազեցան ճշմարտութիւնք յորդւոց ի մարդկանէ։

Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւր, շրթամբք նենգաւորօք սրտի ի սիրտ խօսեցաւ։

Սատակէ Տէր զամենայն շրթունս նենգաւոր

լեզու և զլեզուս մեծաբանս։

Որ ասացին, զլեզուս մեր մեծս արասցուք, շրթունք մեր առ մեզ են, և արդ մեր ո՞վ է Տէր։

Վասն տառապանաց աղքատին և հեծութեան տնանկին՝ այժմ յարեայց ասէ Տէր, եդից զփրկութիւն իմ և համարձակեցայց ի նմա։

Բանք Տեառն են բանք սուրբք, որպէս զարծաթ ընտրեալ և փորձեալ յերկրի, սրբեալ և պարզեալ եօթնապատիկ ի հողոյ։

Դու, Տէր, պահեցեր զմեզ, և ապրեցուցեր զմեզ յայգեմանէ միւնդ յաւիտեան։

Շուրջանակի ամբարիշտք շրջին. ըստ բարձրութեան քում մեծս արասցես դու զորդիս մարդկան։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ԺԲ.

Ի կատարած. սաղմոս ի Դաւիթ։

Մինչեւ յե՞րբ, Տէր, մոռանաս զիս յանպատ, մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն։

Մինչեւ յե՞րբ դնեմ զխորհուրդս յանձն իմ, և ցաւք սրտի իմոյ զաւուրս։

Մինչեւ յե՞րբ բարձրանայ թշնամին ի

վերայ իմ, նայեա և լուր ինձ, Տէր Աստուած իմ։

Լոյս տուր, Տէր աչաց իմոց, զի մի երբէք ննջեցից ի մահ։

Մի ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց։

Ես յողորմութիւնս քո, Տէր, յուսացայ, ցնծացաւ սիրտ իմ ի փրկութեան քումմ։

օրհնեցից զՏէր զբարերարդ իմ։

Տունք ղ։

ՍԱՂՄՈՍ ԺԴ.

ի կատարած, ասղմոս ի Դաւիթ։

Ասաց անզգաճն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած։

Ապականեցան եւ պղծեցան յանօրէնութեան իւրեանց, եւ ոչ ոք է որ առնէ զբարեզործութիւն։

Տէր յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ ոք խնամած առն որ խնդրիցէ զԱստուած։

Ամենեքեան խոտորեցան, ի միասին եւ անպիտանացան։

Ոչ ոք է որ առնէ զբարեզործութիւն, և չէ ոք մինչեւ ի մի։

Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որք գործեն զանօրէնութիւն։

Որք ուտէին զժողովուրդ իմ որպէս կեր բաւուր հացի, և առ Տէր ոչ կարդացին։

Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ իցէ երկիւղ, զի Տէր է յազգս արդարոց։

Զխորհուրդ աղքատին յամօթ արարին, զի Տէր է յոյս նորա։

Ո՞տացէ ի Սիոնէ զփրկութիւն Իսրայելի. ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ, ցնծասցէ Յակոբ և ուրախ եղիցի Իսրայէլ։

Տունք ժ։ Գոբղաս լբ։

ՍԱՂՄՈՍ ԺԴ.

ի կատարած, ասղմոս ի Դաւիթ։

Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քումմ, կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո։

Որ գնայ անբիծ՝ գործէ զարդարութիւն, խօսի ճշմարտութիւն ի սրտի իւրում։

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար ընկերի իւրում ոչ արար։

Նախատինս ի վերձաւորսդ նա ոչ առնու, արհամարհեալ է առաջի նորա չարագործն։

Չերկիւղած Տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ։
Զարծաթի իւր՝ ի վարձու ոչ տայ, և կաշառս ըստ ի վերայ իրաւանց ոչ առնու. որ զայս արասցէ, նա մի սասանեսցի յաւիտեան։

Տունք գ՝

ՍԱՂՄՈՍ ԺԵ.

ՀԱՐՅԱՒՈՐ. սաղմոս ի Դաւիթ։

Պահեա զիս, Աստուած իմ, զի ես ի քեզ յուսացայ. տուայ Տեառն, Տէր իմ ես դու, և բարիք իմ ինձ ի քէն են։
Սրբոց իւր որք են յերկրի իւրում, սքանչելի արարեր զամենայն կամս իմ ի նոսա։
Յաճախեսցին հիւանդութիւնք նոցա, յետ այսորիկ ոչա վաղվաղեսցին։
Ոչ ժողովեցայց ի ժողովս նոցա յարեանց, և ոչ յիշեցից զանուանս նոցա ի շրթունս իմ։
Տէր, բաժին ժառանգութեան իմոյ և բաժակի իմոյ, դու ես, որ զտէրն դարձուցանես զժառանգութիւն իմ ինձ։
Վիճակք եղեն ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղեւ ինձ։
Օրհնեցից զՏէր՝ որ խրատեաց զիս ապար գիշերի՝ մինչ ի վերջի եւս խրատեցին զիս երիկամունք իմ։

Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի ես ընդ աջմէ իմմէ՝ զի մի սասանեցայց։
Վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ, եւս և մարմին իմ բնակեսցի յուսով։
Զի ոչ թողցես զանձն իմ՝ ի դժոխս, եւ ոչ տացես սրբոյ քումմէ տեսանել զապականութիւն։
Յուցեր ինձ զճանապարհս քո կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց՝ ի բաղձրութենէ վայելչութեան աջոյ քո մինչ յաւիտեան։

Տունք ժա։

ՍԱՂՄՈՍ ԺԶ.

Աղօթք, ի Դաւիթ.

Լուր, Տէր արդարութեան, և նայեաց ի խնդրուածս իմ. ունկն դիր աղօթից իմոց, զի ոչ շրթամբք նենգաւորօք։
Յերեսաց քոց իրաւունք ինձ երկին, և աչք իմ տեսցեն զուղղութիւն։
Փորձեցեր զսիրտ իմ եւ քննեցեր՝ ի գիշերի, փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ յիս անիրաւութիւն։
Մի խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վասն բանից շրթանց քոց եւս

պահեցից զճանապարհս իմոստ։
Հաստատեա զաւիղս իմ ՚ի ճանապարհի
քում, զի մի գայթակղեցից գնացք իմ։
Ես առ քեզ, Տէր, կարդացի զի լսաւր լինիս,
Աստուած, խոնարհեցո առ իս զականջն քո
և լսել բանից իմոց։
Սքանչելի արարեր զողորմութիւնս քո, ո՛
փրկես զյուսացեալսն ՚ի քեզ՝
յայնցանէ որ հակառակ կան աջոյ քո։
Պահեա զիս որպէս բիբ ականն, ընդ հովա
նեաւ թեւուց քոց ծածկեացես զիս յերեսաց
ամբարշտաց, որք տառապեցուցին զիս։
Թշնամիք զանձն իմ պաշարեցին, և ՚ի ճար
պիս խաբեանց արկանելն. և քերանք նոցա
խօսեցան զամբարտաւանութիւն։
Մերժեցին զիս և այժմ դարձեալ պատե
ցան զինեաւ, ուշ եդին խոնարհեցուցանել
զիս յերկիր։
Համանմանեցան ինձ որպէս առիւծ զի պատ
րաստի յորս, և որպէս կորիւն առիւծու
զի նստի դարանեալ։
Արի, Տէր, ժամանեա նոցա և խափանեա
զնոսա, փրկեա զանձն իմ յամբարշտաց ՚ի
սրոյ և ՚ի ձեռաց թշնամեացն։
Տէր, կորո զնոսա յերկրէ, բաժանեա եւ
խափանեա զնոսա ՚ի կեանս իւրեանց։

Գաղտնեօք քովք լցան որովայնք նոցա,
յագեցան կերակրովք եւ թողին զմնաց
ցուածս տղայոց իւրեանց։
Ես արդարութեամբ երեւեցայց երեսաց
քոց, և յագեցայց յերեւիլ փառաց քոց։
Տունք ԺԷ։ Գոլղաթա լբ։

ՍԱՂՄՈՍ ԺԷ։

Ի կատարած ՚ի վերայ պատերազմող նահատակի Ծո
ռայի Տեառն Դաւթի։ Զոր խօսեցաւ ընդ Տեառն
զբանս օրհնութեան, յաւուր յորում փրկեաց զնա
Տէր ՚ի ձեռաց ամենայն թշնամեաց, եւ ՚ի ձեռաց
Սաուղայ, և ասէ։

Սիրեցից զքեզ, Տէր, զօրութիւն իմ, Տէր,
հաստատուիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ։
Աստուած օգնական իմ և ես յուսամ ՚ի
նա, ապաւէն իմ եղջիւր փրկութեան ի
մոյ ընդունելի իմ է։
Օրհնելով կարդացից առ Տէր, և ՚ի թշնա
մեաց իմոց ապրեցայց։
Շուրջ եղեն զինեւ երկունք մահու, եւ
ուղիք անօրէնութեան խռովեցուցին զիս։
Վիշտք դժոխոց պաշարեցին զիս, և ժա
մանեցին ինձ որոգայթք մահու։
Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդա
ցի, և առ Աստուած իմ աղաղակեցի։

Լուաւ ինձ ի սաստիկ սրբոյ խրմէ ձայն
նի աղօթից նոյ, և ազատակ իմ առաջի
նորա մնայէ յանկնջս նորա։
Խռովեցաւ և դողայ երկիր, և հիմունք
լերանց սասանեցան և խռովեցան՝ ի բար-
կացաւ ի վերայ նոցա Աստուած։
Ել ծուխ ի բարկութենէ նորա, և հուր
յերեսաց նորա բորբոքեցաւ, եւ վայլա-
սակունք հատան ի նմանէ։
Խոնարհեցոյց զերկինս և էջ, եւ մէգ ի
ներքոյ ոտից նորա։
Ել ի քրովբէս և թռեաւ, սլացաւ նա
ի թեւս հողմոյ։
Եդ զխաւար ի ծածկոյթ իւր, եւ շուրջ
զնովաւ են յարկք իւր, եւ խաւարային
ջուրք միւնչեւ յամպս օդոյ։
Ի վայլասակել նորա առաջի նոցա, ամպք
անցուցին զկարկուտս,և զկայծակունս հուր։
Որոտաց Տէր յերկինից, և Բարձրեալն եւտ
զձայն իւր ի կարկուտ եւ ի կայծակունս
հուր։
Աւաքեաց զնետս իւր և ցրուեաց զնոսա
յամախեաց զփայլատակունս իւր և խըռ-
ովեցոյց զնոսա։
Երեւեցան աղբերք ջուրց, և յայտնեցան
հիմունք աշխարհի։

ի սաստիկ քումմէ, Տէր, և ի շնչել հոգւոյ
բարկութեան քո։
Աւաքեաց ի բարձանց և ընկալաւ զնս,
ընկալաւ զնս ի ջուրց բազմաց։
Փրկեաց զնս Տէր ի թշնամեաց իմոց հզ-
օրաց, և յատելեաց իմոց՝ զի հզօրք եղեն
քան զնս։
Ժամանեցին ինձ աւուրք չարչարանաց ի-
մոց. եղեւ Տէր հզօրիչ իմ, և եհան զնս
յանդորր, և փրկեաց զնս Տէր՝ զի կամե-
ցաւ զնս։
Հատուսցէ ինձ Տէր ըստ արդարութեան
իմում, ըստ սրբութեան ձեռաց իմոց հա-
տուսցէ ինձ։
Թս պահեցից զճանապարհս Տեառն, և ոչ
ամբարշտեցայ յԱստուծոյ իմմէ։
Ամենայն իրաւունք նորա առաջի իմ են,
և ընդդարութիւն իւր ոչ ի բացեայ ա-
րար յինէն։
Եղէց և ես ամբիծ ընդ նմա, և զգուշա-
ցայց յանօրէնութենէ իմմէ։
Հատուսցէ ինձ Տէր ըստ արդարութեան
իմում, ըստ սրբութեան ձեռաց իմոց ա-
ռաջի աչաց նոցա։
Ընդ սրբոյն սուրբ եղիցիս,ընդ առն ամբիծ
ամբիծ եղիցիս, ընդ ընտրեալն՝ ընտրեալ

եղեալս, և զթիւրսն կործանեսցես։
Դու զժողովուրդս խոնարհս կեցուցանես,
եւ զաչս ամբարտաւանից դու խոնարհեցուցանես։
Դու լուսաւոր առնես զճրագ իմ, Տէր.
Աստուած իմ, լոյս արա ինձ ի խաւարի։
Քեզ փրկեցայց ի փորձութենէ, Աստուծով
իմով անցից ընդ պարիսպս։
Աստուած իմ, ամբիծ են ճանապարհք քո,
և բանք Տեառն ընտրեալ են, և ապաւէն
ամենեցուն որք յուսան ի նա։
Վասն զի ոմն է Աստուած՝ բայ ի Տեառնէ,
կամ ոմն է Աստուած՝ բայ յԱստուծոյ մերմէ։
Աստուած, որ զգեցուցեր ինձ զօրութիւն,
և եդեր յամբծութեան զճանապարհս իմ։
Հաստատեցեր զոտս իմ որպէս զեղջերուի,
և ի վերայ բարձանց կացուցեր զիս։
Ուսուցեր զձեռս իմ ի պատերազմ, և ա-
բուրեր զբազուկ իմ որպէս զաղեղն հաստ.
և ետուր ինձ զպաշտպանութիւնն փրկու-
թեան քոյ։
Աջ քո ընկալաւ զիս, և խրատ քո կանգ-
նեաց զիս խոնարհ, և խրատ քո ուսուց
զիս զիս։
Ընդարձակեցեր զընացս իմ ի ստորև իմ
ինձ, և ոչ տկարացան շաւիղք իմ։

Հալածեցից զթշնամիս իմ և հասից նոցա,
և ոչ դարձայց ի նոցանէ՝ մինչեւ սպա-
ռեցից զնոսա։
Նեղեցից զնոսա, և այլ մի կարասցեն կեալ.
և անկցին ի ներքոյ ոտից իմոյ։
Զգեցուցեր ինձ զօրութիւն ի պատերազ-
մի, և դյարուցեալսն ի վերայ իմ ներքոյ
իմ արարեր։
Զթշնամիս իմ հալածականս արարեր, եւ
զատելիս իմ ամաւակեցեր։
Աղաղակեցին, և ոչ ոք էր որ փրկեր զնոսա.
կարդացին առ Տէր, և ոչ լուաւ նոցա։
Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի
հողմոյ, և որպէս կաւ դռեհաց կոխեցից
զնոսա։
Փրկեսցե զիս Տէր ի հակառակութենէ
ժողովրդոց, և կացուսցէ զիս գլուխ հե-
թանոսաց։
Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի, ծառայեսցէ
ինձ, և ի լուր ականջաց լուաւ ինձ։
Օրդիք ստարաց ստեղծին ինձ, որդիք օտա-
րաց մաշեցան եւ կաղացան ի շաւղաց
իւրեանց։
Կենդանի է Տէր և օրհնեալ է Աստուած,
եւ բարձր եղիցի Աստուած փրկութեան
իմոյ։

Աստուած է որ ինդրէ զվճիռ իմ; և հնա-
զանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:
Փրկիչ իմ՝ ի թշնամեաց իմոց քարկացու-
ցոյց, յայնցանէ որք յարուցեալ են ի վե-
րայ իմ՝ բարձր արարեր զիս, եւ յառնէ
անիրաւէ փրկեցեր զիս:
Վասն այսորիկ խոստովան եղէց քեզ ի
հեթանոսս, և անուան քումդ սաղմոս ա-
սացից:
Մեծ արարեր փրկութիւն թագաւորի
նորա. առնել ողորմութիւն ընդ օծելոյ
նորա ընդ Դաւթի, և ընդ զաւակի նորա
ազգէ մինչեւ յաղդ:
Տունք ծ:
Պաշտօն Գաթողայս է: Սաղմոս ժէ: Տունք միք:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԻՍՈՅ ԵՒ ՈՐԻՈՑՆ
ԻՍՐԱՑԵԼԻ
Եւէ ժբ:

Օրհնեացուք զՏէր՝ զի փառաւք է փառա-
ւորեալ:
Զհեծեալս և զերիվարս ընկէց ի ծով. օգ-
նական ընդունելի իմ Տէր, եւ եղեւ ինձ
ի փրկութիւն:
Սա է իմ Աստուած և փառաւորեմ զնա

զայս. Աստուած հօր իմոյ, եւ բարձր ա-
րարից զնա:
Տէր խորտակէ զպատերազմունս, և Տէր է
անուն նորա:
Զընտիրս արանց և զընտիրս սպառազի-
նաց, զկառս և զերիվարս և զամենայն զօ-
րութիւնս փարաւոնի ընկէց ի ծով:
Ծով ծածկեաց զնոսա. ընկղման յանդունդս
խորոց իբրեւ զվէմն:
Աջ քո Տէր՝ փառաւորեալ է զօրութեամբ
իւրով. և աջ քո Տէր՝ խորտակեաց զթըշ-
նամիս քո:
Եւ մեծութեամբ փառաց քոց մանրեցեր
զհակառակորդս քո. առաքեցեր զբարկու-
թիւն սրտմտութեան քոյ. և եկեր զնոսա
որպէս զեղէգն:
Հոգւով զօրութեան սրտմտութեան քո
պատատեցան ջուրք. դիզան՝ կացին որ-
պէս պարիսպ քարեայ ջուրք ծովուն. եւ
պաղեցան դիզան ալիք ջուրցն ի մէջ ծո-
վուն:
Ասաց թշնամին. ասէ, հալածեցից հասից
հարից. բաժանեցից զաւարն, և լցուցից
ի նոցանէ զանձն իմ:
Ի սուր իմ արկից զնոսա. ակրեսցէ եւ
բարձրասցի ի վերայ նոցա աջ իմ:

Առաքեցեր վհուկն քո, և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան, և իջին որպէս կապար ի ջուրս առատիկս:

Ո՞ նմանի քեզ Աստուածս Տէր, կամ ո՞վ նմանիցի քեզ՝ փառաւորեալ ի սուրբս:

Աքանչելի փառաւորեալ՝ որ առնես զնշանս և զսքանչելիս. ձգեցեր զձեռն քո, և եկուլ զնոսա երկիր:

Առաջնորդեցեր այգաւուրքեամբ ժողովրդեան քո զոր, զոր և փրկեցեր:

Մխիթարեցեր զնոսա զօրութեամբ քով ի բանակեաղ սրբութեան քո. լսեան ազգք՝ և բարկացան, և երկունք կալան զբնակիչսն Փղշտացւոց:

Յայնժամ վհուտացան դատաւորք Եդոմ մայ և իշխանք Մովաբացւոց:

Կալաւ զնոսա դողումն. հալեցան ամենայն բնակիչք Քանանացւոց:

Անկան ի վերայ նոցա ահ և դողումն. և ի զօրութենէ բազկի քո քարացան:

Մինչեւ անցցէ ժողովուրդ քո, Տէր, մինչեւ անցցէ ժողովուրդ քո այս՝ զոր ստացար:

Տարեալ տնկեացես զնոսա ի լերին ժառանգութեան քոյ, ի պատրաստութիւն բնակութեան քոյ, ի սրբութիւն Տեառն ժառանգութեան քոյ:

Զոր ստացար ի սկզբանէ, Տէր, ստացար սրբութեամբ՝ զոր պատրաստեցին ձեռք քո. Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից, և եւս:

Զի եմուտ փարաւոն կառօք և երիվարօք և ընտիր սպառազինօք ի ծով, և Տէր եբեր զնոսա ի վերայ նոցա զջուրս ծովուն, և որդիքն Իսրայելի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն:

Փառք Հօր և Որդւոյ և:

ՄԱՂԹԱՆՔ

Բրնաւոս է իմ Աստուած, և փառաւոր առնեմ զնա. Աստուած Հօր իմոյ, և բարձր արարից զնա:

Մարդասէր Տէր, վասն սրբութեան անուան քոյ մերձ քոյ և կուսի, և վասն խաչի քո պատուականի, ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ:

Փառք և պզտիկ՝ երանելոյ և իրեւ հանուցին:

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զՏէր աղաչեսցուք:

Տէր ողորմեա:

Վասն լսելի լինելոյ տեառն Աստուծոյ ձայն նի աղաչանաց մերոց, ղՏէր աղա.

Վասն բաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ ի վերայ մեղաց մերոց, ղՏէր աղա.

Վասն Թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ, ղՏէր աղա.

Վասն զի մի ընդ խոտանան դատաստիւքդ յաւուրն պատասխանատուութեան, ղՏէր աղա.

Վասն հոգւոյն հանգուցելոց՝ որք ձշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս նրնջեցին, ղՏէր աղա.

Եւ եւս՝ միսբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոց, ղՏէր աղա.

Զանձինս մեր և զիրերանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեայ մեզ, տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քումմ. աստոյգ ապաւինեբեան միսբանութեամբ:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղօթք:

Տէր տուընջեան, և գոյացուցիչ գիշերոյ, որ արարեր զմիս ի զօսանս քարեգործութեան ի փրկութիւն անձանց մերոց, և զգիշեր ի հանգիստ քնոյ տկարացեալ

քնութեան մերոյ: Իսկ այժմ զարթուցեալ բայեր զերեսանս մեր յօրհնաբանութիւն՝ ահաւոր և փառաւորեալ անուանդ քումմ որբոյ: Ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յայցելեա մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք ի նայն պաշտօն քո կանխել միշտ. և նովին կանոնիւս անդադար փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:
Աստուծոյ երկիր պագեցուք:

Զքեզ՝ որ յամենայնի գթած եւ մարդասէր Տէրդ ես, աղաչեմք հանապազ, դու զբացուսցես զմեզ օր ըստ օրէ կալ ի կարգի կրօնասիրութեան մերում: Թեթեւացո, Տէր, զբաղդը լուծ քո՝ զոր եդեր ի վերայ մեր, դու կարասցուք կալ ի պատուիրանի քում, եւ զհաճոյն առնել առաջի քո յամենայն ժամ ի տուէ եւ ի գիշերի: Հրեշտակային երկակցութեամբ զքեզ օրհնել, զքեզ գովել, և քեզ գոհութիւն և փառս մատուցանել ամենազօր սէրութեանդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:


Մաղթանք։

Սաղմոսիք և օրհնութեամբ և երգիք հոգեւորօք անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ ունք մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս.





Լուսե գուսան եւ տես Յոհաննիցո ցուսին քո, մուսա գիտնութեան քո եւ ցուսան հոգ քոյ, յի ցանկացաւ Բագաւոր գեցայ՞րեայ։

ՍԱՂ. ԽԴ. 12։



ՍԱՂՄՈՍ ԻԵ.

Ի կատարած սաղմոս Դաւիթ։

ԵՐԿԻՆՔ պատմեն զփառս Աստուծոյ, եւ զգործս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն։

Օր աւուր բղխէ զբան, եւ գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն։

Ոչ են բանք եւ ոչ են խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Յարեւուտս եհար զխորան իւր, եւ ինքն որպէս փեսայ՝ ել ելանէ յառագաստէ իւրմէ, եւ ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս իւր։

Ի ծագաց երկնից են ելք նորա, եւ հանդիպած նորա մինչեւ ի ծագս նորուն, եւ ոչ ոք կայ որ թագիցէ ի ստացուած նորա։

Օրհնեք Տեառն ամբիծ են և գարձուցանեն
զնոգիս. վկայութիւն Տեառն հաւատարիմ
է, և իմաստուն առնէ գպղծեայս ։
Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ
առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս
են, և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ
է, և մնայ յաւիտեան ։
Դատաստան Տեառն ճշմարիտ է. և արդար է ի նմին ։
Ցանկալի է նա քան զոսկի և քան զոսկիս
պատուականս բազումս, քաղցր է նա քան
զմեղս խորիսխ ։
Ծառայ քո պահեսցէ զնոսա, ի պահել նմա գհատուցումն բազում։
Զ յանցսաձս իւր ով կարէ առնուլ ի միտ.
ի գաղտնեացդ իմոց սուրբ արա զիս, Տէր,
և յօտարէն պահեա զծառայս քո ։
Ապա թէ ոչ տիրեսցեն ինձ, յայնժամ անբիծ եղէց, և սուրբ եղէց ի մեղացս մեծաց։
Եկեսցեն քեզ հաճոյ բանք բերանոյ իմոյ, և խորհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ; Տէր օգնական իմ և փրկիչ իմ։

Տունք ժզ ։

ՍԱՂՄՈՍ ԺԹ ։

Ի կատարած ։ ասմնա ի Դաւիթ ։

Լուսաւորէ քեզ Տէր յաւուր անձկութեան ։

օգնական եղիցի քեզ անուն Աստուծոյ
Յակոբայ ։
Առաքեսցէ քեզ Տէր օգնութիւն ի սրբութենէ իւրմէ, և ի Սիովնէ, ընկալցի զքեզ։
Յիշեսցէ Տէր զամենայն պատարագս քո,
և զուխտս քո ընդունելի արասցէ ։
Տացէ քեզ Տէր ըստ սրտի քումմ, և զամենայն խորհուրդս քո նա կատարեսցէ ։
Յնձասցուք մեք ի փրկութեան քումմ; յանուն Աստուծոյ մերոյ մեք մնձք եղիցուք։
Լցուսցէ Տէր զամենայն խնդրուածս քո.
այժմ ծանեաք՝ զի կեցոյց Տէր զծեծեալ իւր։
Լուաւ սմա յերկնից ի սրբութենէ իւրմէ,
ի զօրութիւն փրկութեան աջոյ իւրոյ ։
Սոքա կառօք և սոքա երիվարօք, այլ մեք զանուն տեառն Աստուծոյ մերոյ կարդասցուք ։
Սոքա խափանեցան և անկան, մեք յարեաք և ուղիղք եղաք ։
Տէր, կեցո զքաւաւորն և լսեր մեզ, յաւուր յորում կարդասցուք առ քեզ։

Տունք ժ ։

ՍԱՂՄՈՍ Ի ։

Ի կատարած, ասմնա ի Դաւիթ ։

Տէր, ի զօրութեան քումմ ուրախ եղիցի

Թագաւորն, ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։
Զգանկութիւն սրտի նորա ետուր նմա, եւ կամս շրթանց նորա ոչ արգելեր ի նմանէ։
Ժամանս արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո, և եդիր ի գլուխ նորա պսակ ի քարէ պատուականէ։
Կեանս խնդրեաց ի քէն, և եառուր նմա ընդ երկայն աւուրս՝ յաւիտեան յաւիտենից։
Մեծ են փառք նորա ի փրկութեան քում, զփառս և զմեծավայելչութիւն քո դիցես ի վերայ նորա։
Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից, և ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց։
Թագաւոր յուսացաւ ի Տէր, յողորմութենէ Բարձրելոյն նա մի սասանեսցի։
Գտցի ձեռն քո ի վերայ թշնամեաց քոց, և աջ քո գտցէ զամենայնատելիս քո։
Դիցես զնոսա որպէս հնոց ի հուր՝ ի ժամանակի երեսաց քոց։
Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա, և հուր կերիցէ զնոսա։
Պտուղ նոցա յերկրէ կորիցէ, եւ զաւակ

նոցա յորդւոց ի մարդկանէ։
Խոտորեցան ի քէն չարութեամբ, խորհեցան զխորհուրդ, զոր ոչ կարացեն հաստատել։
Արասցես զնոսա հալածեալս, ի մնացուածս քո պատրաստեսցես զերեսս նոցա։
Բարձր լեր, Տէր, ի զօրութեան քում. օրհնեսցուք, և սաղմոս ասասցուք ի զօրութեան քում։
Տ ՀՆԳ ԺԴ։ ԳՕՐՁԱՑ ԼԲ։

ՍԱՂՄՈՍ ԻԱ.

Ի կատարած. վասն առաւօտեան օգնականութեանց, սաղմոս ի Դաւիթ։

Աստուած, Աստուած իմ, նայեաց առ իս, ընդէր թողեր զիս. հեռի եղէ ի փրկութենէ իմմէ՝ վասն բանից յանցանաց իմոց։
Աստուած իմ, ի տուէ կարդասի առ քեզ, և ինձ ոչ լսես. ի գիշերի՝ և ինձ ոչ անհագեր։
Դու ի սուրբս բնակեալ ես, և գովեալդ Իսրայէլի։
Ի քեզ յուսացան հարքն մեր, յուսացան ի քեզ և փրկեցեր զնոսա։
Առ քեզ աղաղակեցին, և կեցին. ի քեզ յուսացան և ոչ ամաչեցին։

Ա.Լ ես արդն եմ, և ոչ եմ մարդ. նաև
խառնիք մարդկան, և արհամարհանք ժո-
ղովրդոց:
Ա.Մինեքեան որք սեռականէին վնս, արհա-
մարհէին վնեե. խօսէին ընթամբք, և շար-
ժէին զգլուխս իւրեանց:
Յուսայաս՝ ի Տէր, և փրկեսցէ զնա. կե-
ցուսցէ զնա, զի կամի զնա:
Դու ես՝ որ հաներ զնս յարգանդէ, յոյս
իմ՝ ի ստեանց մօր իմոյ:
Ի քեզ անկայ ես յարգանդէ, յորովայնէ
մօր իմոյ դու ես Աստուած իմ:
Մի՛ ի բացեայ առնիր յինէն, զի նեղու-
թիւնք մերձեալ են, և ոչ որ է՝ որ օգնէ
ինձ:
Շուրջ եղեն զինեե զուարակք բազումք,
և ցուլք գեղք պաշարեցին զնս:
Բացին՝ ի վերայ իմ զբերանս իւրեանց, զո-
պես առիւծ զի մռնչէ և յափշտակէ:
Ես որպես զջուր հեղայ, և ցրուեցան ա-
մենայն ոսկերք իմ, և եղեւ սիրտ իմ որ-
պես մոմ հալեալ՝ ի մէջ որովայնի իմոյ:
Զօրացաւ որպես խեցւոյ զօրութիւն իմ,
լեզու իմ՝ ի բերան իմ կպեցաւ, և՝ ի հող
մահու իջուցին զնս:
Շուրջ եղեն զինեե շունք բազումք, ե-

ժողովք չարաց պաշարեցին զնս:
Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, և թո-
ւեցին զամենայն ոսկերս իմ. նոքա հայե-
ցան և տեսին զնս:
Բաժանեցին զհանդերձս իմ՝ ի մէջ ի-
բեանց, և՝ ի վերայ պատմուճանի իմոյ
վիճակս արկանէին:
Դու, Տէր, մի հեռի առներ զօգնութիւն քո
յինէն, և Տէր յօգնել ինձ նայեաց:
Փրկեա՝ ի սրոյ զանձն իմ, և՝ ի ձեռաց շանց
զվիամօրութիւն իմ:
Փրկեա զնս՝ ի բերանոյ առիւծու, յեղջերւ
միեղջերուաւ զնութիւն իմ:
Պատմեցից զանուն քո եղբարս իմոց, և՝ ի
մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ:
Երկիւղածք Տեառն օրհնեցէք զՏէր, և ա-
մենայն զաւակն Յակոբեան փառաւորս ա-
րասցին զնս:
Երկիցէ՝ ի Տեառնէ ամենայն զաւակն Իս-
րայելի, զի ոչ արհամարհեաց և ոչ անար-
գեաց Տէր զաղօթս աղքատի, և ոչ դար-
ձոյց զերեսս իւր յինէն, այլ՝ ի կարդալ ի
մէմ առնն՝ լուաւ ինձ:
Ի քէն է գովեստիւն իմ, Տէր, յեկեղեցւոյ
մեծ օրհնեցից զքեզ:
Զոհասս իմ կատարեցից առաջի ամենայն

երկիւղածաց նորա։
Կերկրին անանկք և յագեսցին, օրհնեսցեն զՏէր՝ զոք խնդրեն զնա։
Կեսցեն սիրտք նոցա յաւիտեան յաւիտեանս, յիշեսցեն եւ դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի։
Երկրպագցեն նմա ամենայն տոհմք ազգաց. զի Տեառն է արքայութիւն, և նա տիրէ ի վերայ ամենայն հեթանոսաց։
Կերին և երկրպագին նմա ամենայն պարարտք երկրի, առաջի նորա անկցին ամենեքեան՝ որք իջանեն ի հող։
Անձն իմ նովաւ կեսցէ, և զաւակ իմ ծառայեսցէ նմա
Պատմեսցի Տեառն ազգ՝ որ գալոցն է, պատմեսցեն գարդարութիւն նորա ժողովրդեան, որ ծնանելոցն է, զոր արար Տէր։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ԻԸ.

Ի կատարած. սաղմս ի Դաւիթ։

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի։
Ի վայրի դալարուղ՝ անդ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս։
Դարձոյց զանձն իմ առ իս, և առաջնորդեաց զիս ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ։
Թէպէտ և գնացից ես ի միջի աստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ՝ զի դու, Տէր, ընդ իս ես։
Ցուպ քո և գաւազան, նոքա միխիթարեցեն զիս։
Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ակն յանդիման նեղչացս իմոց։
Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո արպէս անասպակ արբեցոյց զիս։
Ողորմութիւն քո, Տէր, զկեաս իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակիլ ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ԻԹ.

Սաղմս ի Դաւիթ, միաշաբաթեան։

Տեառն է երկիր լիս և լրութիւն, աշխարհ և ամենայն բնակիչք նորա։
Նա ինքն ի վերայ ծովու հիմնեաց զսոսկ նմա, ի վերայ գետոց պատրաստեաց զնա։
Ո՞վ ելցէ ի լեառն Տեառն, կամ ո՞վ կացցէ ի տեղւոջ սրբութեան նորա։
Որ սուրբ է ձեռօք և սրբիծ սրտիւ, որ ոչ էառ զնանրութիւն յանձն իւր, և ոչ

երդուաւ ընդ ընկերսն իւրում՝ նենդու-
թեամբ։

Սա առեալ զօգնութիւն՝ ի տեառնէ, զա-
ղօրմութիւն յԱստուծոյ փրկէէ իւրմէ։

Այս ազգ է՝ որ խնդրէ զՏէր, խնդրէ տե-
սանել զերեսս Աստուծոյ Յակովբայ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր՝ ի վեր,
համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ
Թագաւոր փառաց։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց, Տէր հզօր
զօրութեամբ իւրով, Տէր հզօր՝ ի պա-
տերազմի։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր՝ ի վեր,
համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ
Թագաւոր փառաց։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց, Տէր զօրու-
թեանց՝ սա ինքն է Թագաւոր փառաց։

Տունք ժ։ Գոբզաց ն։

ՍԱՂՄՈՍ ԻԴ։

Ի կատարած. սաղմոս՝ ի Դաւիթ։

Ա՛ռ քեզ, Տէր, համբարձի զանձն իմ։ Աս-
տուած իմ՝ ի քեզ յուսացայ, մի՛ ամաչե-
ցից, և մի՛ ծիծաղեսցին զինեւ թշնամիք
իմ։

Ամենեքեան որք համբերեն քեզ, մի՛ ա-
մաչեսցեն. այլ ամաչեսցեն անօրէնք յա-
նապատութեան իւրեանց։

Զճանապարհս քո, Տէր, ցոյց ինձ, և ճա-
նապարհս քո ուսո՛ ինձ։

Առաջնորդեա՛ ինձ՝ ի ճշմարտութեան
քում՝ և ուսո՛ զիս, զի դու ես Աստուած
փրկիչ իմ. եւ ես քեզ համբերի զօրհա-
նապաղ։

Յիշեա՛, Տէր, ողթութիւնս քո և զողոր-
մութիւնս քո որք են յաւիտենից։

Զմեղս մանկութեան իմոյ և զանգիտու-
թեան իմոյ մի՛ յիշեր, այլ յիշեա՛ զիս, Տէր,
ըստ ողորմութեան քում՝ վասն քաղցրու-
թեան քո, զի քաղցր և ուղիղ ես։

Վասն այսորիկ օրէնսգէտ առնես զմեղա-
ւորս՝ ի ճանապարհի, առաջնորդես հե-
զոց՝ ի դատաստանի, և ուսուցանես հե-
զոց զճանապարհս քո։

Ամենայն ճանապարհք Տեառն ողորմու-
թեամբ և ճշմարտութեամբ են այնոցիկ,
որք խնդրեն զուխտ և զվկայութիւնս նորա։

Վասն անուան քո, Տէր, քաւեա՛ զմեղս
իմ, զի բազում եղեն. ո՞վ է մարդ որ երկ-
նչի՝ ի Տեառնէ. օրէնսգէտ առնէ զնա
՝ի ճանապարհի՝ յոր և հաճեցաւ։

Անձն նորա ՚ի բարութեան հանգիցէ, և
զսաւակ նորա ժառանգեսցէ զերկիր։
Զօրութիւն է տէր երկիւղածաց իւրոց,
և զիւականան նոցա ուսուցանել նոցա։
Աչք իմ յամենայն ժամ առ տէր են, և
նա հանէ յորոգայթէ զոտս իմ։
Նայեա առ իս և ողորմեա ինձ, զի միա-
մօր և աղքատ եմ ես։
Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն
յոյժ, և ՚ի վշտաց իմոց հան զիս։
Տես զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ,
և թող ինձ զամենայն մեղս իմ։
Տես զթշնամիսն իմ՝ զի բազում եղեն, ա-
տելութեամբ՝ որք ՚ի նանիր ատեցին զիս։
Պահեա զանձն իմ և փրկեա զիս, և մի
յամօթ եղէց՝ զի յուսացայ ՚ի քեզ։
Ամբիծք և ուղիղք կցորդք եղեն ինձ, և
ես քեզ համբերի. փրկեա, Աստուած,
զիսրայէլ յամենայն նեղութենէ նորա։
Տունք ժբ։

ՍԱՂՄՈՍ ԻԵ.

Ի կատարած. սաղմոս ՚ի Դաւիթ։

Դատա արա ինձ, տէր, զի ես յամբծութեան
իմում գնացի, ՚ի տէր յուսացայ զի մի ե-
ղէց հիւանդ։

Փորձեա զիս, տէր, և քննեա զիս, փոր-
ձեա զերիկամունս իմ և զսիրտ իմ։
Ողորմութիւն քո, տէր, առաջի աչաց իմոց,
և հաճոյ եղէց ճշմարտութեան քում։
Ոչ նստայց ես յաթոռս նանրաց, և ընդ
անօրէնս ես ոչ մտից։
Ատեցի ես ժողովս չարաց, և ընդ ամբա-
րիշտս ոչ նստայց։
Լուացից սրբութեամբ զձեռս իմ, եւ
շուրջ եղէց զսեղանով քով, տէր։
Լսել ինձ զձայն օրհնութեան քո, և պատ-
մել զամենայն սքանչելիս քո։
Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո, եւ
զտեղի յարկի փառաց քոց։
Մի կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն
իմ, և մի ընդ արս արիւնահեղս զկեանս
իմ։
Որոց ձեռք խրտեանց յանօրէնութեան են,
և աջ նոցա լի է կաշառօք։
Ես յամբծութեան իմում գնացի, փրկեա
զիս, տէր, և ողորմեա ինձ։
Ոտն իմ կացցէ յուղղութեան, յեկեղեցիս
մեծս օրհնեցից զքեզ։
Տունք ժբ։

ՍԱՂՄՈՍ ԻԲ.

Սաղմոս ՚ի Դաւիթ. մինչեւ եր օծեալ:

Տէր լսո իմ և կեանք իմ, ես յուսմէ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոյ, ես յումէ մէ դողայցայց:

Ի մերձենալ առ իս չարսոց ուտել զմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ նոքա տկարացան և անկան:

Թէ պատրաստանայցէ ՚ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիւղէ սիրտ իմ. Թէ յարիցէ ՚ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսու իսկ ՚ի քեզ, Տէր, յուսացայ:

Զմի խնդրեցի ՚ի Տեառնէ և զսոյն աղաչեմ, բնակիլ ինձ ՚ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց:

Տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն, և հրամանս տալ ՚ի տաճարի նորա:

Ծածկեաց զիս ՚ի խորանի նորում յաւուր չարի, ընդ յարկաւ սրբոյ զիս ՚ի ճանկից խորանի նորում:

Ի վեմ բարձր սրբեր զիս, և այժմ բարձր սրբ զգլուխ իմ ՚ի վերայ թշնամեաց իմոց:

Շուրջ եղէց և մատուցից ՚ի խորանի նորա պատարագ օրհնութեան, օրհնեցից և սաղմս ասացից Տեառն:

Լոյս, Տէր, ձայնի իմում, զի կարդացի առ քեզ. ողորմեա ինձ և լուր ինձ, զի քեզ ասաց սիրտ իմ, և խնդրեցին երեսք իմ, զերեսս քո, Տէր, խնդրեցին:

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, եւ մի խոտորիր բարկութեամբ ՚ի ծառայէ քումմէ:

Օգնական իմ լեր, Տէր, մի անարգեր զիս, և մի թողուր զիս, Աստուած փրկչի իմ:

Հայր իմ և մայր իմ թողին զիս, և Տէր իմ ընկալաւ զիս:

Օրինադիր սրա զիս, Տէր, ՚ի ճանապարհի քումմ, և առաջնորդեա ինձ ՚ի շաւիղս քո ուղիղս:

Վասն թշնամեայ իմոյ, մի մատներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց:

Յարեան ՚ի վերայ իմ վկայք սուտք, եւ սուտեցին ինձ յանօրէնութեան խրեանց:

Հաւատացի տեսանել զբարութիւն Տեառն յերկրին կենդանեաց. Համբեր Տեառն և քաջալերեսցի, զօրասցի սիրտ քո եւ համբեր Տեառն:

Տունք ժդ: Գօրգոյս խզ:

ՍԱՂՄՈՍ ԻԷ.

Սաղմոս ի Դաւիթ :



Ա՛ռ քեզ, Տէր, կարդացի. Առատաձ իմ, մի լռեր յինէն. մի երբէք լռեսես յինէն, նմանիմ այնոցիկ՝ որք իջանեն ի գուբ :

Լսեր, Տէր, ձայնի խնդրուածոց իմոց յաղաչել զինձ առ քեզ, ի համբառնալ ձեռաց իմոց ի տաճար սուրբ քո :

Մի համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ, եւ մի ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն՝ կորուսանեսցես զիս :

Որք խօսեին զխաղաղութիւն ընդ ընկերս իւրեանց, և չարութիւն է ի սիրտս նոցա :

Տուր նոցա, Տէր, ըստ գործոց նոցա ըստ անօրէնութեան գնացից նոցա հատո նոցա :

Ըստ գործոց ձեռաց նոցա հատո նոցա՝ զհատուցումն նոցա նոցին :

Ոչ իմացան նոքա զգործս Տեառն, և ոչ ի գործս ձեռաց նորա հայեցան. կործանեսցես զնոսա և այլ մի շինեսցին :

Օրհնեալ է Տէր՝ զի լուաւ ձայնի աղօթից իմոց, Տէր օգնական իմ և պաշտպան իմ :

Ի նա յուսացաւ սիրտ իմ, օգնեցաւ ինձ. զուարճացաւ մարմին իմ, եւ ես կամօք իմով խոստովան եղէց նմա :

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոց, ա պաւէն փրկութեան օծելոյ իւրոյ :

Փրկեա զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա և բարձրացո զնոսա մինչեւ յաւիտեան :

Տուն ժա :

ՍԱՂՄՈՍ ԻԲ.

Սաղմոս ի Դաւիթ. օրհնութեանց նաւակատեաց տաճարին :

Մատուցէք Տեառն, որդիք Աստուծոյ, մատուցէք Տեառն զորդիս խոյոց :

Մատուցէք Տեառն զփառս և զպատիւ, մատուցէք Տեառն զփառս անուան նորա. և երկիր պագէք Տեառն ի սրահ սրբութեան նորա :

Ձայն Տեառն ի վերայ ջուրց, և Աստուած փառաց որոտաց, եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց :

Ձայն Տեառն զօրութեանց, և ձայն Տեառն մեծվայելչութեանց :

Ձայն Տեառն փշրէ զմայրս, և մանրէ Տէր զմայրսն Լիբանանու :

Մանրեսցէ զնոսա որպէս մատաղատունկն Լիբանանու, որ սիրելին է որպէս զորդիս միեղջերուաւ :

Զայն տեառն հասանէ զբոց ՚ի հրոյ. ձայն տեառն շարժէ զանապատն, եւ խռովէ-ցուցանէ տէր զանապատն կադէս։

Զայն տեառն հասուսանէ զեղջերուս, եւ յայտնի առնէ զանտառս։

Ի տաճարի նորա ամենեքեան ասասցեն զփառս նորա։

Տէր զջրհեղեղս նստուցանէ եւ ցաճուցանէ, թագաւորեսցէ տէր յաւիտեան։

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ, եւ օրհնեսցէ զժողովուրդ իւր ՚ի խաղաղութիւն։

Տունք ժա։

ՍԱՂՄՈՍ ԺԹ.

Սաղմոս ՚ի Դաւիթ, ՚ի նոյն։

Բարձր առնեմ զքեզ, տէր, զի ընկալար զիս, եւ ոչ ուրախ արարեր զթշնամին իմ ՚ի իս։

Տէր Աստուած իմ, կարդացի առ քեզ եւ բժշկեցեր զիս, տէր, հաներ ՚ի դժոխոց զանձն իմ, եւ փրկեցեր զիս յայնցանէ որք իջանեն ՚ի գուբ։

Սաղմոս ասացէք տեառն սուրբք նորա, եւ խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա։

Սրտմտութիւն է ՚ի բարկութեան նորա, եւ կեանք են ՚ի կամս նորա։

Ընդ երեկոյս հանգիցէն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն։

Ես ասացի ՚ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան։

Տէր, ՚ի կամ քո եռուր գեղջ իմոյ զօրութիւն, դարձուցեր զերեսս քո յիս՝նն՝ եւ ես եղէ խռովեալ։

Առ քեզ, տէր, կարդացի, եւ առ Աստուած իմ աղաչակեցի. զի՞նչ օգուտ է քեզ յարեւնէ իմմէ,թէ իջանեմ ես յապականութիւն։

Մի թէ հող խոստովանի առնիցէ առ քեզ, կամ պատմեսցէ զճշմարտութիւնս քո։

Լուաւ ինձ տէր եւ ողորմեցաւ, եւ տէր եղեւ ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, եւ զերծ յինէն զքուրձ, եւ ինձ պատեցոյց զուրախութիւն։

Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ, եւ այլ մի եւս զղջացայց. տէր Աստուած իմ, յաւիտեան խոստովան եղեց քեզ։

Տունք ժբ։ Գոբզայս լգ։

ՍԱՂՄՈՍ Լ.

Ի կատարած, սաղմոս ի Դաւիթ. նահատակութիւն գովութեան:



Ի քեզ, Տէր, յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան. յարդարութեան քում փրկեա և ապրեցո զիս:

Խոնարհեցո առ իս զականջն քո, վաղվաղեա կեցուցանել զիս:

Լեր իմ, Աստուած, պաշտպան և տուն ապաւինի ապրեցուցանել զիս, զի հզօրիչ իմ և ապաւէն իմ դու ես:

Վասն անուան քոյ, Տէր, առաջնորդեցեր ինձ, և սնուցեր զիս, և հանցես զիս յոգւոյ ախտից յայտնանէ որ թագուցաւ ինձ:

Դու ես պաշտպան իմ, Տէր, և ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ:

Փրկեցեր զիս, տէր Աստուած, ճշմարտութեամբ քով. ատեցեր զպահիկ՝ որք պահհեն զերկիւղ ի սնոտիս:

Ես ի Տէր յուսացայ, ցնծացայց և ուրախ եղէց ի փրկութեան քում:

Զի հայեցար ի խոնարհութիւն իմ, և փրկեցեր ի վշտաց զանձն իմ. և ոչ մատնեցեր զիս ի ձեռս նեղչաց իմոց, և կացուցեր յանդարձու զոտս իմ:

Ողորմեա ինձ, Տէր, զի նեղեալ եմ ես. խռովեցաւ ի սրտմտութենէ աչի իմ՝ անձն իմ և փոր իմ:

Պակասեցան ի ցաւոց կեանք իմ, և տարի իմ յոգւոց ելանելոյ:

Աղքատացաւ ի տկարութենէ զօրութիւն իմ, և ոսկերք իմ խռովեցան:

Ըստ զամենայն թշնամիս իմ եղէ ես նախատս դրացեաց իմոց, յոյժ ահ և երկիւղ ծանօթից իմոց:

Անվնեբեան որք տեսանէին զիս, արտաքս վախչէին յինէն:

Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ, և եղէ ես որպէս զանօթ կորուսեալ:

Զի լսայ ես զբամբասանս բազմաց՝ որք շուրջ էին զինեւս, ի ժողովել նոցա ի միասին՝ առնուլ զանձն իմ խորհեցան. այլ ես ի քեզ, Տէր, յուսացայ:

Ասացի՝ դու ես Աստուած իմ, և ի ձեռս քո է ժառանգութիւն իմ:

Փրկեա զիս ի ձեռաց թշնամեաց իմոց, և ի հալածչաց իմոց:

Երեւեցո զերեսս քո ի ծառայս քո, ապրեցո զիս, Տէր, ըստ ողորմութեան քում.

Տէր, մի յամօթ եղէց, զի կարդացի առ քեզ: Անհնչեսցին ամբարիշտք և իջցեն ի դժո-

խալա. և համն եղեցին ըղձումնք նենգա-
ւորք՝ զի խօսեին զարդարոյ զանիրաւու-
թիւն, յամբարտաւանիլ եւ յանդգնել
իւրեանց։

Որպէս ղի բաղձամ է ողորմութիւն քաղ-
ցուածոց քոց, տէր, ղոր պահեցեր երկիւ-
ղածոց քոց։

Արարեր դու այնոցիկ՝ զի յուսացեալ են
ի քեզ, առաջի որդւոց մարդկան։

Ամրացուցեր զնոսա ի ծածկոյթ երեսաց
քոց ի խռովութենէ մարդկան։

Ծածկեցեր զնոսա ի խորանի քում ի հա-
կառակութենէ լեզուաց։

Օրհնեալ է տէր, զի սքանչելիս արար ող-
ղորմութիւն իւր ի քաղաք ամուր։

Ես ասացի ի զարմանալ իմում, թէ լինիցի
ոչ ուրեմն յերեսաց աչաց քոց։

Վասն այսորիկ լուար ձայնի աղաչից իմոց՝
յաղաղակել իմում առ քեզ։

Սիրեցէք զՏէր, ամենայն սուրբք նորա, զի
ողորմութիւն խնդրէ Տէր, և հատուցա-
նէ այնոցիկ՝ որք առատել առնեն զամբար-
տաւանութիւն։

Քաջալերացարուք և զօրասցին սիրտք ձեր,
ամենեքեան՝ որ յուսացեալ էք ի Տէր։

Տունք իբ։

ՍԱՂՄՈՍ ԼԱ.

Խնամատարութիւն, ի Դաւիթ։

Երանի ոմ թողութիւն եղեւ մեղաց, և
ծածկեցան ամենայն յանցանք նորա։

Երանի առն՝ որում ոչ համարեցաւ Տէր
զմեղս նորա, եւ ոչ գոյ նենգութիւն ի
բերան նորա։

Լռեցի ես և մաշեցան ամենայն ոսկերք
իմ, առ աղաղակել ինձ առ Տէր զօրհա-
նապատ ի տուէ և ի գիշերի։

Ծանրացաւ ձեռն քո ի վերայ իմ, դարձ
ձայ ի թշուառութիւն՝ ղի հարան ցիս
փուշք։

Զմեղս իմ ցուցից քեզ, եւ զանօրէնու-
թիւնս իմ ոչ ծածկեցից ի քէն

Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ,
և դու թողցես զամենայն ամբարշտու-
թիւնս մեղաց իմոց։

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ
ամենայն սուրբք ի ժամ ընդունելի։

Բայց միայն ի ջուրցն հեղեղաց բազմաց,
որք առ նոսա հնչ ոչ մերձենացին։

Դու ես ապաւէն իմ ի նեղութենէ յայս-
մանէ, որ շուրջ եղեն զինեւ։

Յնծութիւն իմ, փրկեա զիս յայնցանէ՝

այք պաշարեցին զնա։
Իմացաւան արարից զքեզ և խելամուտ ի
ձանձաղարհ յոր և գնացես, և հաստա-
տեցից ի վերայ քո զաչս իմ։
Մի լինիք որպես զձիս և զջորիս, զի ոչ
գոյ ի նոսա իմացաւութիւն. ի սանձս և
ի դանդանաւանդս ձմլեացես զկզակս նո-
ցա, որք առ քեզ ինչ ոչ մերձենային։
Բազում տանջանք են մեղաւորաց, բայց
այք յուսան ի Տէր՝ ողորմութիւն Տեառն
շուրջ եղիցի զնոքօք։
Ուրախ եղերուք և ցնծացէք, արդարք, ի
Տէր, պարծեցարուք ամենեքեան այք ու-
ղիղ էք սրտիւք։

Տունք ԺԳ։ Գոբզայս խբ։

ՍԱՂՄՈՍ Լ.Բ.

Սաղմոս ի Դաւիթ։

Ցնծացէք, արդարք, ի Տէր, ուղղոյ վա-
յելէ օրհնութիւն. խոստովան եղերուք
Տեառն օրհնութեամբ, տամնաղեաւ սաղ-
մոսարանաւ սաղմոս ասացէք նմա։
Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր զի բարի
է, սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ։

Ուղիղ են պատգամք Տեառն, և ամենայն
գործք նորա հաւատովք են, և սիրէ ող-
ղմութիւն և զիրաւունս Տէր։
Ողղմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, և
բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և
հոգւով բերանոյ նորա ամենայն զօրու-
թիւնք նոցա։
Ժողովեաց որպէս ի սիկ զջուրս ծովու, և
պահէ ի խորս պգանձս իւր։
Երկիւղ ի Տեառնէ ամենայն երկիր, և ի
նմանէ դողացին ամենայն բնակիչք աշ-
խարհի։
Զի նա ասաց՝ և եղեն, ինքն հրամայեաց՝
և հաստատեցան։
Տէր յորուէ զխորհուրդս հեթանոսաց, ա-
նարգէ Տէր զխորհուրդս ժողովրդոց, և
արհամարհէ Տէր զխորհուրդս իշխանաց։
Խորհուրդ Տեառն յաւիտեան մնայ, և
խորհուրդ սրտի նորա ազգէ ազգ։
Երանի ազգի որոյ տէր Աստուած սո՛ն
կան է նմա, ժողովուրդ զոր ընտրեաց ի
ժառանգութիւն իւր։
Յերկնից նայեցաւ Տէր յամենայն որդիս
մարդկան, ի պատրաստի բնակութենէ
իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշ-
խարհի։

Ո առեղծ առանձին զիւրս նոցա, ի միտ առնու զամենայն գործս նոցա։

Ոչ լեր ի բազում զօրս իւր ապրեցեալ թագաւոր, և ոչ հսկայ ի բազում զօրութեան իւրում։

Սուտ է ձի ի փրկութեան իւրում, ի բազում զօրութեան իւրում ոչ ապրեցուցանէ զինեալն։

Աչք Տեառն ի վերայ երկիւղածից իւրոց, և ոք յուսան յողորմութիւն նորա։

Փրկել ի մահուանէ զանձինս նոցա, և կեցուցանել զնոսա ի սովու։

Անձինք մեր համբերեցան Տեառն, զի օգնական և պաշտպան մեր է։

Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր, և յանուն սուրբ նորա յուսացաք։

Եղիցի ողորմութիւն քո, Տէր, ի վերայ մեր, որպէս յուսացաք ի քեզ։

ՑՈՒՆՔ ԺԲ։

ՍԱՂՄՈՍ ԼԴ.

Պաղմոս ի Դաւիթ, ի ժամանակի զի ծղոտանէաց զերես իւր առաջի Աբիմելեքայ, և ապա աքսանեաց զնա, և գնաց։

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ։

Ի Տէր պարծեսցի անձն իմ, լսեցեն հեզք

և ուրախ եղիցին։

Մեծ արարէք զՏէր ինձեւ, եւ բարձր արասցուք զանուն նորա ի միասին։

Խնդրեցի ի Տեառնէ և լուաւ ինձ, յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս։

Մատիք առ Տէր և առիք պայծառ, և երեսք ձեր մի ամաչեսցեն։

Այս աղքատ կարդաց առ Տէր, և Տէր լուաւ նմա, յամենայն նեղութենէ ապա փրկեաց զնա։

Բանակ հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք, և պահեն զնոսա։

Ճաշակեցէք և տեսէք՝ զի քաղցր է Տէր, երանելոյ է այր որ յուսայ ի նա։

Երկեսցուք ի Տեառնէ ամենայն սուրբք նորա, զի ոչ ինչ է պակասութիւն երկիւղածաց նորա։

Մեծամեծք աղքատացան և քաղցեան, բայց որք խնդրեն զՏէր՝ մի պակասեսցի ի նոցանէ ամենայն բարութիւն։

Եկայք, որդեակք իմ, լուարուք ինձ, երկիւղ Տեառն ուսուցից ձեզ։

Ո՞վ է մարդ որ կամի կեանս, սիրէ զտեսութիւն բարութեան։

Լեզուս զերծ քո ի չարութենէ, և շրթունք քո մի խօսեսցին զնենգութիւն։

Խոտոբեա ՚ի չարէ և արա զբարի, խնդրեա զխաղաղութիւն և երթ զկնա նորա։
Աչք տեառն ՚ի վերայ արդարոց, և ականջք նորա ՚ի վերայ աղօթից նոցա։
Երեսք Տեառն ՚ի վերայ չարագործաց, առնել յերկրէ զյիշատակս նոցա։
Կարդացին արդարքն առ Տէր՝ և Տէր լուաւ նոցա, յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա։
Մերձ է Տէր առ այնոսիկ՝ որք մաշեալ են սրտիւք, և զհոգեպէս կեցուցանէ։
Բազում նեղութիւնք են արդարոյ, յամենայնէ փրկէ զնոսա Տէր, և պահէ զամենայն ոսկերս նոցա, եւ մի ՚ի նոցանէ մի փշրեսցի։
Մահ մեղաւորի չար է, քանզի որ ատէ զարդարն՝ զղջասցի։
Փրկէ Տէր զանձինս ծառայից իւրոց, մի զղջասցին ամենեքեան՝ որք յուսացեալ են ՚ի նա։

Տունք խա։ Գոբզայա խ։

ՍԱՂՄՈՍ ԼԴ։

Ի կատարած, ածեա ՚ի Դաւիթ։

Դաւեա Տէր զայնոսիկ՝ որք դաւեն զիս, մարտիր ընդ այնոսիկ՝ որք մարտնչին ընդ իս։

Առ զվէնն և զասպար քո, և արի յօգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց. ասեսցէ անձն իմ, թէ փրկութիւն քո ես եմ։
Ամաչեսցին և յամօթ լիցին՝ որք խնդրեն զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն՝ որք խորհին ինձ չար։
Եղիցին նոքա որպէս փոշի առաջի՝ հողմոյ. և հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա։
Եղիցին ճանապարհք նոցա ՚ի խաւար և ՚ի դայթակղութիւն. և հրեշտակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա։
Ի դանիկ թաղուցին ինձ որոգայթ յապաշտութեան իւրեանց, և ՚ի դանիկ նախատեսցին զանձն իմ։
Հասցէ ՚ի վերայ նոցա որոգայթ, զոր ոչ գիտասցին, և որս զոր թաղուցին՝ առցէ զնոսա նոցա, և յորոգայթ ՚ի նոյն անկցին։
Ա՛յլ անձն իմ ցնծասցէ ՚ի Տէր, ուրախ եղիցի ՚ի փրկութեան նորա. և ամենայն ոսկերք իմ ասասցեն, Տէր՝ ո՞ նման է քեզ։
Զի փրկեաց զաղքատն ՚ի ձեռաց հզօրի, զաղքատն և զտնանկն յայնցանէ՝ որք յափշտակեն զնա։
Յարեան ՚ի վերայ իմ վկայք չարայց, և զոր ինչ ոչ գիտէի՝ հարցանէին ցիս։

Հաւատացին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, անժառանգել զանձն իմ խորհեցան յորդւոց ի մարդկանէ:
Եա՛ ի նեղել նոցա քուրձ զգենուի, խոնարհ առնէի պահօք զանձն իմ, և աղօթք իմ ի ծոց իմ դարձցին:
Որպէս զեղբայր և զընկեր՝ այնպէս հաճոյ լինէի, որպէս սգաւոր և տրտում՝ այնպէս խոնարհ առնէի:
Ի վերայ իմ ուրախ եղեն և ժողովեցան, ժողովեցան յիս տանջանք և ես ոչ ծանեայ, դրուեցան և ոչ զղջացայ:
Փորձեցին զիս և արհամարհեցին, արհամարհանօք կրճտեցին ի վերայ իմ զատամունս իբրեւ. Տէր, երբ տեսցես:
Ի բաց ա՛ռ զանձն իմ ի խորամանկութենէ նոցա, և յառիւծուց զմիամօրութիւն իմ:
Խոստացայ եղէց քեզ, Տէր, յիւրեղեցիս մեծ ծայս, և ի ժողովս բազմաց օրհնեցից զքեզ:
Մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ, որ ատելիս զիս ի սուտ. ակնարկիս առնէին յիս աչօք իբրեւ:
Ընդ իս զխաղաղութիւն խօսէին, և ի նեղութեան բարկութեամբ զնենգութիւն խորհէին:
Բացին ի վերայ իմ զբերան իբրեւ, և ասացին՝ այո այո տեսին աչք մեր:

Տեսեր, Տէր, և մի լռեր, Տէր՝ մի՛ ի բացեայ առնիր յինէն:
Զարթիր և հայեաց, Տէր, յիրաւունս իմ, Աստուած իմ և Տէր իմ, ի դատաստանս իմ. և իրաւ արա ինձ ըստ արդարութեան քումմ, տէր Աստուած իմ:
Մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ, և մի ասասցեն ի սիրտս իւրեանց Լեհ վաշ վաշ անձանց մերոց, մի ընկլուզեաք զնա:
Ամաչեսցեն և յամօթ լինիցին՝ որք խնդային ընդ չար իմ. զգեցցին զամօթ և զանարգութիւն որք մեծաբանեն ի վերայ իմ:
Ցնծասցեն և ուրախ լինիցին ի քեզ ամենեքեան, որք կամին ընդ արդարութիւն իմ:
Ասասցեն յամենայն ժամ՝ մեծ է Աստուած, և որք կամին զխաղաղութիւն ծառայից քո:
Լեզու իմ խոհեսցի զարդարութիւնս քո, զօրհնութիւն զքումդ:

Ցաւեք լե:

ՍԱՂՄՈՍ Լ.Ե:

Ի կատարած, ծառայի Տեառն. ասացս ի Դաւիթ:

Ասէ անօրէնն՝ ի մեզանէ ընդ միտս իւր, չէ վախ երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նորա:
Նենգեաց առաջի նորա գտանել զանօրէ-

նաւթիւն, և առել զնա։
Բանք բերանոյ նորա՝ անօրէնութիւն եւ
նենգութիւն են։
Ոչ կամեցաւ նա լմանալ զգործն, զանօրէ-
նութիւն խորհեցաւ յանկողնի իւրում։
Եկայց նա յամենայն ճանապարհ որ ոչ է
բարի, և՝ ի չարէ նա ոչ ձանձրացաւ։
Տէր, յերկինս է ողորմութիւն քո, ճշմար-
տութիւն քո մինչեւ յամպս։
Արդարութիւն քո որպէս լերինք, Աս-
տուած, իրաւունք քո որպէս խոր-
ղաւմբ. զմարդիկ և զանասուն կեցուցա-
նես դու, Տէր։
Որպէս պն բազում արարեր զողորմութիւն
քո, Աստուած. այլ որդիք մարդկան՝ ի
հովանի թեւոց քոց յուսացին։
Արբեսցին նոքա՝ ի պաթարտութենէ տան
քո, և զուարճս փափկութեան քո ասցես
ըմպել նոցա։
Ի քէն է, Տէր, աղբիւր կենաց, եւ լու-
սով երեսաց քոց տեսանեմք զլոյս։
Ծաւալս զողորմութիւնս քո՝ այլ ճանաչեն
զքեզ, զարդարութիւնս քո, այլ ուղիղ
են սրտիւք։
Մի եկեսցեն՝ ի վերայ մեր ոտք ամբար-
տաւանից, և ձեռք մեղաւորաց մի դո-

ղացուսցեն զմեզ։
Անդ անկան ամենեքեան՝ այլ գործեն զա-
նօրէնութիւն, մերժեցան և այլ մի կա-
րասցեն հաստատել։
Տուն ժգ։ Գոքղայս ի։
Կանոն Գոքղայս է։ Սաղմոս ժբ։ Տուն մէ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՄԱՎ. ՍԻՍԻ
ԱՍՏՈՒԱԾԱՏԵՍ ՄԱՐԳԱՐԷԻ
ք. Օգոստ. լե։

Սայեցարուք երկինք և խօսեցայց, լս-
ւիցէ երկիր զպատուիրան բերանոյ իմոյ։
Ընդունելի լիցի որպէս անձրեւ բարբառ
իմ՝ և իջցեն որպէս ցօղ պատգամք իմ։
Որպէս անձրեւ՝ ի վերայ սիզոյ, և որպէս
ստարտ՝ ի վերայ խոտոյ, զի զանուն Տեա-
ռըն կարդացուք. և տուք օրհնութիւն
մեծաւն Աստուծոյ մերոյ։
Աստուած՝ որոյ ճշմարտութեամբ են
գործք նորա, և ամենայն ճանապարհք նո-
րա իրաւամբ են։
Աստուած հաւատարիմ է, և ոչ գոյ՝ ի
նմա անիրաւութիւն, արդար և ճշմարիտ
է Տէր։

Մեղան՝ և ոչ նմա՝ որպէսզի Արասց, Ար-
նաւնդք խոստովանք և Թիւրեալք։
Ո՞չ այդ այն է՝ զոր Տեառն Հատուցանէիք
դուք՝ ժողովուրդք յիմարք եւ ոչ խոհե-
մունք։
Ո՞չ սա ինքն է Հայր քո՝ որ ստացաւ զք-
քեզ, արար զքեզ, և ստեղծ զքեզ։
Յուշ լեցին քեզ աւուրքն յաւիտենից. ի-
մացարուք զամս ազգաց միմեանց յազգս։
Հարցիր զոր ցհարս քո, և պատմեսցեն
քեզ. ցծերս քո, և ասասցեն քեզ.
Ի ժամանակի՝ յորժամ բաժանեաց Բարձ-
րեալն զազգս ամենայն. որպէս սփռեաց
նա զորդիան Ադամայ։
Կացոյց սահմանս հեթանոսաց, ըստ Թո-
ւոյ Հրեշտակաց Աստուծոյ։
Եղեւ բաժին Տեառն ժողովուրդ իւր Յա-
կոբ, և վիճակ ժառանգութեան իւրոյ Իս-
րայէլ։
Բաւական եղեւ նմա յանապատի. ի ծա-
րաւ ասէիցէ յանձգուոյ պաշտպանեաց զնա
Խրատեաց զնա, և պահեաց որպէս բիւր
ականն. որպէս զարծաւի ի թեւս իւր ըն-
կալաւ զնա, և որպէս ի վերայ ձագուց
իւրոց դիմացաւ։
Տարածեաց զթեւս իւր, և ընկալաւ զնա.

և բարձեալ բերեր զնա ի վերայ միջո-
ղոց իւրոց։
Տէր միայն ածէր զնոսա, և ոչ գոյր ընդ
նոսա Աստուած օտար։
Էած եհան զնոսա ի զրուժիւնս երկրի.
և կերակրեաց զնոսա արդեամբք անդաս-
տանաց։
Դիեցոյց նոցա մեղր ի վիմէ, և խուզ յա-
պառաժ վիմէ։
Իւղ կովուց և կաթն մանեաց, ճարպով
հանդերձ խոցոց որթուց ցլուց և նոխազաց։
Զպարարատուժիւն երիկամանց ցորենոյ.
և զարիւն խաղողոյ էարբ գինի։
Եկեր ցակովբ և յագեցաւ, և անգու-
ժեաց ղսիրելին։
Գիրացաւ՝ ստուարացաւ՝ լայնացաւ, և
Թող զաեր Աստուած զարարիչ իւր, եւ
յետս եկաց յԱստուծոյ փրկչէ իւրմէ։
Բարկացուցին զնա օտարոտիւք իւրեանց
և կռօվք իւրեանց դառնացուցին զնա։
Զոհեցին դիւաց՝ եւ ոչ Աստուծոյ. գիւն՝
զորս ոչ գիտէին, նորք և առժամայնք,
զորս բնաւ ոչ ճանաչէին հարք նոցա։
Թողին զՏէր՝ որ ծնաւ զնոսա. մոռացան
զԱստուած՝ որ կերակրեաց զնոսա։
Եահս Տէր և նախանձեցաւ, և պոռնուե-

ցաւ ՚ի վերայ ուստերայ և դաստերայ նո-
ցա և ասէ .
Դարձուցից զերեսս իմ ՚ի նոցանէ , և ցու-
ցից նոցա զինչ լինելոց էիցէ յապագայ ժամա-
նակի :
Չի ազգ մի թիւր են նոքա՝ և որդիք անհ-
աւանք . նոքա նախանձեցուցին զիս ՚ի
չաստուածս իւրեանց , և դառնացուցին
զիս ՚ի կուռս իւրեանց :
Այլ և ես նախանձեցուցից զնոսա յայլ
անպիտան , և անմիտ ազգաւ գրգռեցուցից
զնոսա :
Փառք Հօր և Որդւոյ և :

ՄԱՂԹԱՆՔ

Տուք փառս Աստուծոյ , տուք օրհնու-
թիւն մարդասիրին Թագաւորին յաւիտե-
նից , որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ :
Մարդասէր , Տէր , վասն որբուհւոյ անա-
րատ մօր քոյ և հաւատ , և վասն խաչի քո
պատուականի , ընկալ զաղաչանս մեր , և
կեցո զմեզ :

Փառք և պատիւ՝ երկինք պատմեն և Տէր ապաւէն
կոչեն :

Վասն ՚ի դիշերի և ՚ի տուընջեան և յա-
ւիտենից ժամուս խոսիլ մեզ զբան Տեառն ,
զՏէր աղաչեսցուք :
Տէր ողորմեա :
Վասն չանկանելոյ մեզ ՚ի փորձութիւն , ո-
րում ոչ կարեմք հանդուրժել , զՏէր ա .
Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ
առաջի ահեղ աւետման Քրիստոսի , զՏէր ա .
Վասն առաջնորդելոյ մեզ ՚ի հաւատոյ
կենսատու անվախճանից , զՏէր աղա .
Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն
և երկնից արքայութեանն , զՏէր աղա .
Վասն հոգւոյն հանգուցելոյ՝ որք ձգմա-
բիտ և ուղիղ հաւատով ՚ի Քրիստոս նըն-
ջեցին , զՏէր աղա .
Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և առ-
քեալ հաւատոյս մերոյ , զՏէր աղա .
Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստու-
ծոյ ամենակալին յանձն արասցուք :
Ողորմեայ մեզ , տէր Աստուած մեր , ըստ
մեծի ողորմութեան քոյմ . աստուածք ա-
ւետացուք միաբանութեամբ :
Տէր ողորմեա . Տէր ողորմեա . Տէր ողորմեա :

Աղօթք։

Ի գիշերի և՛ ի տունկնեան և յամենայն ժամու զքեզ ազաչեմք, և՛ ի քէն խնդրեմք մարդասէր Տէր։ Լուր մեզ, Աստուած փրկիչ մեր. խոնարհեացի ունկն քո՛ ի խնդրուածս մեր, զի մի՛ ունայն լինիմ վասն ակն ծառայից քոց. այլ համարեա զաշխատութիւնս մեր՛ ի գործ արդարութեան և՛ ի պատուղ առաքինութեան։ Ընկալ Տէր, զաղօթս և զերկրպագութիւնս մեր, և հատո մեզ զողորմութիւն քո ա-րատապէս։ Ծածկեա զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ քոյ. զօրացո զմեզ Տէր, զօրութեամբ Սուրբ Հոգւոյդ. պահեա զոչ մեզ որպէս բիւր ականս, և արա առ մեզ նշան բարի՛ ի գովեաս եւ՛ ի փառաբանութիւն անուանդ քոմ՛ սրբոյ։ Զի՛ ի քոյ փառս կատարի ամենայն պատարագ մշտնջենաւոր փառաբանութիւն՝ ի բարձունս հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խոստովանութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկիր պագեսցուք։

Համբ քաջ հանդիր բարի և յաւիտենական, հայեեաց և այց զայս քանաւոր հօտի քո,

զոր ժողովեցեր առ քեզ գիտութեամբ քով։ Զի քո առաքի կամք Տէր, եւ առ՛ ի քէն ողորմութեանցդ եւ գիտութեանցդ ակն ունիմք։ Զամենեսեան օրհնեա. զամենեսեան խնամատարեա. զամենեսեան բուսուսոլեա, և ամենեցուն պարգեւեա զերկնից արքայութիւնդ։ Վասն զի դու ես Տէր կենաց և Աստուած ողորմութեանց. և քեզ վայելէ փառք խնամատարութիւն եւ պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Մաղթանք։

Ի գիշերի և՛ ի տունկնեան եւ յամենայն ժամու անդադար փառաւորեմք զՀայր և զՈդի և զՍուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս.



Ա. յաօր մանկունք եկեղեցւոյ ուրախութեամբ ասեն յերկրի, ցիսոյսմն կուսին յերուսաղեմ բացաթն ցերին։ ԸԱՐ.



ՍԱՂՄՈՍ Լ.Զ.

Սաղմոս Ի Դաւիթ։

Ա՛ Նախանձիր ընդ չարս, և մի՛ ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն։

Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին, որպէս զդալարի խոտոյ վաղվաղակի անցցեն։

Յուսա Ի տէր, և արա զբարութիւն, բնակեա յերկրի, եւ հովուեսցիս Ի մեծութեան նորա։

Ծաեա Ի տեառնէ, և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո. յայտնեա առաջի տեառն զճանապարհս քո, և յուսա Ի նա։ Նա արասցէ և հանիցէ որպէս զլոյս զարդարութիւնս քո, և զիրաւունս քո որպէս զօրհասարակ։

Հնազանդ լեր Տեառն, և ծառայեա նմա.
և մի՛ նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց առա-
կեալ իցեն ճանապարհք խաբեանց ընդ
մարդոյ՝ որ գործէ զանօրէնութիւն:
Լռեա՛ ի բարկութենէ, և հանգիր՛ ի սրտա-
մբոտութենէ, և մի՛ նախանձին ընդ չար:
Զի չարք վաղվաղակի սատակեսցին. բայց
սք համբերեն Տեառն, նոքա ժառանգեա-
ցեն զերկիր:
Փոքր մի և այլ ոչ եւս իցէ ամբարիշն.
խնդրեսցես զտեղի նորա, և ոչ գտցես:
Ա՛յլ որ հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն
զերկիր, և փափկասցին ի բազում խաղա-
ղութեան խաբեանց:
Սպասէ մեղաւորն արդարոյ, և կրճտէ՛ ի
վերայ նորա զատամունս իւր, այլ Տէր ծի-
ծաղեսցէ զնովաւ:
Քանզի յառաջապէս տեսանէ, զի հաս-
սեալ է օր նորա:
Սուր հանին մեղաւորք, և լարեցին զա-
ղեղունս իւրեանց՝ հարկանել զաղքատան և
զանանձն, սպանանել զայն՝ որ խոնարհն է
սրտիւ:
Սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա, և ա-
ղեղունք նոցա փշրեսցին:
Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ, քան զբա-

զում մեծութիւն մեղաւորաց, և բազուկք
ամբարշտաց խորտակեսցին:
Հաստատէ Տէր զարդարս, և ճանաչէ զա-
ւուրս ամբծից. ժառանգութիւն նոցա յա-
ւիտեան եղիցի:
Մի՛ ամաչեսցեն նոքա ի ժամանակս չա-
րութեան, այլ յաւուրս սովոյ յագեսցին:
Ահա մեղաւորք կորիցեն, այլ թշնամիք
Տեառն ի փառաւորիլ և ի բարձրանալ
խաբեանց պակասեսցին որպէս ծուխ՝ ի
պակաս:
Փոխս առնու մեղաւորն և ոչ հատուցանէ,
այլ որ արդարն է, ողորմի և տայ:
Ոյք օրհնեն ղՏէր՝ ժառանգեսցեն զերկիր,
և որք անիծանեն՝ սատակեսցին ի նմանէ:
Ի Տեառնէ ուղղին գնացք առն, զճանա-
պարհս նորա նա կամի յոյժ:
Թէպէտ և պայթակղեսցի, նա մի՛ կործա-
նեսցի, զի Տէր ձեռնկալու է նորա:
Մանուկ էի ես և ծերացայ, և ոչ տեսի
զարդարն արհամարհեալ, եւ ոչ զզաւակ
նորա՝ թէ մուրանայ հայց:
Զօրհնանապատ ողորմի և տայ փոխ, զաւակ
նորա օրհնեալ եղիցի յաւիտեան:
Խոտորեա՛ ի չարէ և արա զբարի, և բնա-
կեսցես յաւիտեանս յաւիտենից ի նմա:

Տէր սկսէ ցնորաւունս, և ոչ ընդ վայր հաթ-
կանէ զսուրբս Իւր, այլ յաւիտեան պա-
հէ զնոսա:

Անօրէնք հալածեսցին ի միասին, և զա-
ւակք ամբարշտաց սատակեսցին:

Ա՛յլ արդարք ժառանգեսցեն զերկիր, եւ
բնակեսցին յաւիտեանս յաւիտենից ի նմա:
Բերան արդարոյ խորհի զիմաստութիւն,
և լեզու նորա խօսեսցի զնրաւունս:

Օրէնք Աստուծոյ Իւրոյ են ի սրտի Իւրում,
և ոչ գայթակղեսցին գնացք նորա:

Հայի մեղաւորն ընդ արդար եւ խնդրէ
սատանանել զնա, այլ Տէր ոչ թողու զնա ի
ձեռս նորա, և ոչ դատապարտե զնա՝ յոր-
ժամ դատի զնա:

Համբեր Տեառն և պահեա զճանապարհս
նորա, և բարձր արասցէ զքեզ ի ժառան-
գել զերկիր, և զսատակումն մեղաւորացն
տեսցես:

Տեսի զամբարիշն վերացեալ և բարձրա-
ցեալ որպես զմայրսն Լիբանանու:

Անցի՛ և ահա ոչ էր, խնդրեցի՛ և ոչ գը-
տաւ տեղի նորա:

Պահեա զամբծութիւն, և տես զուղղու-
թիւն, զի գան մնացուածք առն խաղա-
ղարարի:

Անօրէնք հալածեսցին ի միասին, և զաւակ
ամբարշտաց կորնչեսցէ:

Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է, վե-
րակացու է նոցա ի ժամանակս նեղու-
թեան:

Օգնեսցէ նոցա Տէր և փրկեսցէ զնոսա,
ապրեցուսցէ ի մեղաւորաց և կեցուսցէ
զնոսա, զի յուսացան ի նա:

Տունք լը:

ՍԱՂՄՈՍ Ղ.

Սաղմոս ի Դաւիթ. առ ի յիշատակ շաբաթու:

Տէր, մի սրտմտութեամբ քով յանդիմա-
նես զիս, և մի բարկութեամբ քով խրա-
տես զիս:

Զի նետք քո հարան յիս, և յիս հաստա-
տեցաւ ձեռն քո:

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց
բարկութեան քոյ:

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յե-
րեսաց մեղաց իմոց:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգ-
լուխս իմ, որպես բեռն ծանր ծանրացան
ի վերայ իմ:

Ընթեցան և փութեցան վերք իմ յերեսաց անզգամութեան իմոյ։

Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ, զօրհնած պատուհաս գնայի, զի անձն իմ լի եղեւ չարչարանօք, և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։

Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչեւ յոյժ, մանկէի առ հեծութեան սրտի իմոյ։

Տէր, առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ, և հեծութիւն իմ՝ ի քէն ոչ ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս և եթող զիս զօրութիւն իմ, լոյս աչաց իմոց՝ եւ այս ոչ եղեւ ընդ իս։

Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին, և մերձաւորք իմ հեռի եղէն յինէն։

Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ. այք խորհէին չար ի վերայ իմ՝ խօսեցան զանօրէնութիւն, և զնենգութիւն զօրհնած նապատ խորհեցան։

Ես իբրեւ որպէս խուլ՝ զի ոչ լսէ, որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, և ոչ գոն խօսք ի բերան նորա։

Ես ի քեզ, Տէր, յուսացայ, և դու լուր-

ցես ինձ, տէր Աստուած իմ։

Ասացի թէ մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ, ի սասանիլ ոտից իմոց՝ ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Ես ի սովջանս պատրաստ եմ, եւ ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգայցայ վասն մեղացս իմոց։

Իսկ արդ թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալք են քան զիս. եւ բազումք եղեն այք ատելին զիս ի սուտ պարտուցեալ։

Այք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. չարախօսէին զինէն, զի ես երբեմն զհետ արդարութեան։

Մի թողուր զիս, տէր Աստուած իմ, և մի ի բացես առնել յինէն, հայեաց յօգնել ինձ, Տէր փրկութեան իմոյ։

Տունք խ։

ՅԱՂՄՈՍ ԼԱ.

Ի կատարած, Ցիդիթամ օրհնութիւն, սաղմոս ի Դաւիթ։

Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ. զի մի մեղայց լեզուաւ իմով։
Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ի հակա-

ռակիլ մեղաւորին առաջի իմ։
Խուլ եղէ և խոնարհեցայ, լռեցի ՚ի բա-
րութենէ՝ և ցաւք իմ նորոգեցան յիս։
Ջերմա սիրտ իմ ՚ի փորի իմում, եւ ՚ի
խորհուրդս իմ վառեցաւ հուր։
Խօսեցայ լեզուաւ իմով եւ ասացի. ցոյց
ինձ, Տէր, վախճան իմ և չափոյ աւուրց
իմոց՝ քանիթո՞ւ է, զի գիտացից թէ որչափ
ինչ պակասեալ է յինէն։
Ահա չափով եդեր զաւուրս իմ, եւ կար
զօրութեան իմոյ որպէս ոչինչ է առաջի
իմ. սակայն ամենևին ընդունայն է ամե-
նայն մարդ մնեղի։
Ասպաքէն որպէս ՚ի պատկերի շրջի մարդ,
սակայն ՚ի զուր խռովի, դանձէ և ոչ գիտէ
ումմ ժողովէ։
Իսկ արդ՝ ո՞վ է համբերութիւն իմ՝ թէ
ոչ դու, Տէր, կամ կար զօրութեան իմոյ՝
թէ ոչ ՚ի քէն։
Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկեսցես
զիս, նախատինս անզգամոյ արարեր զիս։
Խուլ եղէ և ոչ բացի զբերան իմ, զի դու
արարեր։
Ի բաց արա յինէն զսանձաքս իմ, զի ՚ի զօ-
րութենէ ձեռին քո ես պակասեցայ։
Կշտամբութեամբ վասն մեղացդ խրատես

զերբ զմարդ. մաշեցուցեր որպէս ասղիտօս.
ասայն զանձն նորա. սակայն ընդունայն է
ամենայն մարդ։
Լուր, Տէր, աղօթից իմոց, ունկն դիր
խնդրուածոց իմոց, արտասուաց իմոց մի
լռեր։
Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ և
անցաւոր որպէս ամենայն հարք իմ։
Թոյլ արա ինձ՝ զի հանգիստ մինչեւ երբ
թեալ իցեմ, ուստի ոչ եւս դառնիցիմ։
Տունք ԺԸ։

ՍԱՂՄՈՍ Լ.Թ.

Ի կոտորած. ազգին ՚ի Դաւիթ։

Համբերելով համբերեցի Տեառն, և նայեցաւ
առ իս, և լուաւ աղօթից իմոց։
Եհան զիս ՚ի գբոյ սատափանայ, ՚ի կա-
ւոյ և ՚ի տղմոյ։
Հաստատեաց ՚ի վէմսյ վիմի զոտս իմ, և
ուղղեաց զդնացս իմ։
Էարկ ՚ի բերան իմ օրհնութիւն նոր, զօրհ-
նութիւն տեառն Աստուծոյ մերոյ։
Տեսցեն բազումք և երկիցեն և յուսասցին
՚ի Տէր. երանեալ է այր որոյ անուն Տեառն
յոյս է նորա։

Ոչ հայեցաւ նա ՚ի նահրութիւն, և ոչ ՚ի մոլութիւն սուտ։

Բազում արարեր դու, տէր Աստուած իմ; զսքանչելիս քո. և խորհրդոց քոց ոչ ոք է որ նմանիցի քեզ։

Պատմեցի և խօսեցայ՝ և բազմամբ եղեն քան զթիւ. ընդ ցոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար, լսելիս հաստատեր ինձ. ողջակէզս և վասն մեղացն ոչ խնդրեցեր։ Յայնժամ ասացի՝ Թէ ահաւասիկ գամ ես, ՚ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ։

Առնել կամս քո, Աստուած իմ; կամեցայ, և զօրինս քո ՚ի միջ որովայնի իմոյ։

Աւետարանեցից զարդարութիւնս քո յեկեղեցիս մեծս. ահա շրթունս իմ ոչ արգելից ՚ի քէն։

Տէր, դու գիտացեր զի զարդարութիւնս քո ոչ ծածկեցի ՚ի սրտի իմում, զճշմարտութիւնս քո և զփրկութիւնս քո։

Ասացի և ոչ թագուցի զողորմութիւնս քո, և զճշմարտութիւնս քո ՚ի ժողովրդեանէ մեծէ։

Ա՛լ դու, Տէր, մի հեռի առներ զողորմութիւնս քո յինէն. զի ողորմութիւն քո և ճշմարտութիւն քո յաւիտեան ժամ ընկալ զի զիս։

Շուրջ եղեն զինեւ չարք՝ որոց ոչէր նոցա թիւ, հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ոչ կարացի տեսանել։

Բազում եղեն քան զհեր գլխոց իմոց, եւ սիրտ իմ եթող զիս։

Կամեաց, Տէր, փրկել զիս, և Տէր, յօգնել ինձ նայեաց։

Ամաչեցեն և յամօթ լիցին՝ որք խնդրէին զանձն իմ՝ բառնալ զոսա. դարձցին յետս և ամաչեսցեն՝ որք խորհէին ինձ չար։

Կրեսցեն զամօթ առ ժամայն վաղվաղակի, որք ասէին ինձ վաշ վաշ։

Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ, ամենեքեան որք խնդրեն զքեզ, Տէր։

Ասասցեն յաւիտեան ժամ՝ մեծ է Աստուած, և որք սիրեն զփրկութիւնս քո։

Ես աղքատ եւ անանկ եմ, Աստուած, խորհեա զիս. օգնական և պաշտպան իմ ես, և դու, Աստուած իմ, մի յամենար։

Տունք իբ։ Գոլայս ձը։

ՍԱՂՄՈՍ Խ.

Ի կատարած, ասացեալ ՚ի Դաւիթ։



Երանի որ խորհի զաղքատն և զտնանկին, յաւուր չարի փրկէ զինա Տէր։
Տէր փրկէ զինա եւ կեցուցանէ, երանելի առնէ զինա ՚ի վերայ երկրի, և ոչ մատնէ զինա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց։
Տէր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց իւրոց, զամենայն անկողինս նորա դարձուցանէ ՚ի հիւանդութենէ նորա։
Ես ասացի, Տէր, ողորմեա ինձ, բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։
Թշնամիք իմ ասացին ինձ չար, երբ կայէ զի մեռցի և կորիցէ անուն նորա։
Մտանէր տեսանել զինանրութիւն, խօսէր ՚ի սրտի իւրում, և ժողովէր զանօրէնութիւն յանձն իւր։
Արտաքս ելանէր եւ զնոյն խօսէր, զինէն շնչէին ամենայն թշնամիք իմ։
Խորհէցան չար ՚ի վերայ իմ, բան անօրէնութեան եդին ՚ի վերայ իմ։
Մի թէ որ ննջիցէն՝ այլ ոչ եւս յաւելցի յառնել. քանզի և այրն խաղաղութեան իմոյ՝ յոր և ետու յուսացայ։

Որ ուտէր զհաց իմ յաճախեաց առնել ինձ խաբէութիւն։
Ա՛յլ դու, Տէր, ողորմեա ինձ, և կանգնեա զիս, և ես հատուցից նոցա։
Յայսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս, զի մի ուրախ եղիցին ինձ թշնամիք իմ։
Ա՛յլ զիս յամբծութեան իմում ընկալար, և հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։
Օրհնեալ աեր Աստուած Իսրայելի յաւիտեանս յաւիտենից, եղիցի եղիցի։

Տունք ԺԳ։

ՍԱՂՄՈՍ ԽԱ.

Ի կատարած, խանաստութեան որդւոցն Կորխայ։ Ասացեալ ՚ի Դաւիթ։

Որպէս փափագի եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագի անձն իմ առ քեզ, Աստուած։
Ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած հզոր և կենդանի, երբ եկիցէ երեւեցայց երեսացդ Աստուծոյ։
Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տուէ և ՚ի գիշերի, եւ այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ Թէ ո՞ւր է Աստուած քո։

Զայս որպէս յիշեմ՝ տառապեր յիս անձն իմ. քաջալերեմի զի մոխ ընդ յարկաւ քանզելեաց տանն Աստուծոյ։

Ի ձայն ցնծութեան խոստովանութեան, և ի ձայն բարեկենդանութեան։

Արդ ընդէր տրտում ես, անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, վասն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն Յորդանանաց, ի Հերմոնէ լեռնէ փոքուէ։

Խոր՛ք ի խորոյ կարդացին ասւ քեզ, ի ձայն ահեղանաց քոց։

Ամենայն ղեօսանք քո և ալիք քո անցին ի վերայ իմ։

Ի տուէ պատուիրեաց Տէր ողորմութիւն իւր, ի գիշերի ղօրհնութիւն նորո. և աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց։

Ասացի Աստուծոյ՝ ընդունող իմ ես. ընդէր մերժեցեր զիս, ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ։

Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ, յասել ցիս զօրհանապազ՝ Թէ ո՞ւր է Աստուած քո։

Արդ ընդէր տրտում ես, անձն իմ, կամ

ընդէր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Տունք ժգ։

ՍԱՂՄՈՍ ԽԲ.

Յաղթող՝ ի Դաւիթ։

Դատա արա ինձ, Աստուած, և իրաւ արա ինձ ի դատաստանի իմմէ։

Յազգէ որ աչք է առաքք, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս։

Դու, Աստուած հզօրիչ իմ ես, ընդէր մոռացար զիս, ընդէր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ։

Առաքեա, Տէր, զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեացեն ինձ, և հանեցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած որ ուրախա առնէ զմանկութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած Աստուած իմ։

Արդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա առ Աստուած,

խոստովանեա նմա , վրկիչ երեսաց իմոց
Աստուած ի :

Տունք ե : Գոբղայա լե :

ՍԱՂՄՈՍ ԽԹ .

Ի կատարած . իմաստութիւն որդւոյն Կորխայ .
Սաղմոս ի Դաւիթ :

Աստուած , ականջք մերովք լսեաք , զոր հաբքն մեր պատմեցին մեզ :
Զգործն զոր գործեցեր յաւուրս նոցա , յաւուրսն առաջինս :
Ձեռն քո խլեաց զհեթանոսս , եւ զնոսա անկեցեր . չարչարեցեր զժողովուրդս քո , և հաներ զնոսա :
Ոչ թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր , և ոչ բազուկ նոցա փրկեաց զնոսա :
Այլ աջ քո և բազուկ քո և լոյս երեսաց քոց , զի հաճեցար դու ընդ նոսա :
Դու ինքն ես Թագաւոր իմ և Աստուած իմ , որ հրամայեցեր զփրկութեանցն Յակովբայ :
Քեզ զթշնամիս մեր հարցուք , և անուամբ քով արհամարհեցուս զյարուցեալսն ի վերայ մեր :

Ոչ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ , և ոչ սուր իմ կեցուցանէ զիս :
Այլ դու փրկեցեր զմեզ ի թշնամեաց մերոց , և զամաւելիս մեր յամօթ արարեր :
Աստուածով պարծեցուք զօրհնեսցուք զանուան նորա խոստովան եղիցուք յաւիտեան :
Բայց արդ մերժեցեր և անարգեցեր զմեզ , և ոչ ելեր , Աստուած , ընդ զօրս մեր :
Դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս մեր , և առեալք մեր յափշտակեցին զմեզ :
Եւսուր զմեզ որպէս զոչխար ի կերակուր , և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ :
Վաճառեցեր զժողովրդս քո առանց գնոյ , և ոչ քոյ թիւ աղաղակի մերոյ :
Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց , ծաղր և այպն կատականաց այնոցիկ , որք շուրջ էին զմեզ :
Արարեր զմեզ յառակս հեթանոսաց , ի շարժել գլխոյս ժողովրդոց :
Զօր ամենայն նախատինք իմ առաջի իմ են , և ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս :
Ի ձայնէ նախատողին և չարախօսի , յերեսաց թշնամւոյն և հալածչի :
Այս ամենայն եկն ի վերայ մեր , և մեք զքեզ ոչ մոռացաք և ոչ ստեցաք ուխտի

քում, և ոչ դարձաք յետս սրտիւք մե-
ծովք ։

Դարձուցեր զքաւիղս մեր ի ճանապարհս
քոց, խոնարհ արարեր զմեզ ի տեղի չար-
չարանաց, եւ ծածկեցին զմեզ սաստիկք
մահու ։

Թէ մոռացեալ լինէ մեր զանուն Աստուծոյ
մերոյ, կամ ձգեալ լինէ զձեռս մեր յաս-
տուածս օտարս ։

Սակայն Աստուած խնդրէ զայս, զի նա
քննէ զպաղտնիս սրտից մերոց ։

Վասն քո մեռանիմք զօրհասապաղ, հա-
մարեցաք որպէս զոչխար ի զենումն ։

Զարթիր, ընդէր ննջես, տէր. արի և մի
մերժեր զմեզ ի սպառ ։

Զմէ՞ դարձուցանես զերեսս քո ի մէնջ,
մոռանաս զաղքատութիւն եւ զնեղու-
թիւնս մեր ։

Խոնարհ եղեն մինչեւ ի հող անձինք մեր,
և յերկիր կպեցան մէնք մեր ։

Արի, տէր, օգնեա մեզ, և փրկեա զմեզ
վասն անուան քո ։

Տումք փ ։

ՍԱՂՄՈՍ ԽԴ ։

Ի կատարած ։ զաւանդելոց Ժամանակաց, որպէսզի
Կարիայ խնամատարեսցի, ազգիս օրհնութեան վասն
սիրելոյն ։

Բղխեսցէ սիրտ իմ զպատուական քո բարիս,
և ասացից զգործս իմ թագաւորի ։
Լեզու իմ որպէս գրիչ սրագագիր գրչի,
գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդ-
եաց մարդկան ։
Սիրեցար հնարհք ի շրթանց քոց, վասն
այսորիկ օրհնեաց զքեզ Աստուած յաւի-
տեան ։
Ած զսուր ընդ մէջ քո, հզօր, վայելչու-
թեան և գեղջ քո ։
Լարեա ուղղեա և թագաւորեա՝ վասն
ճշմարտութեան հեզութեան և արդա-
րութեան, և առաջնորդեսցէ քեզ սքան-
չելապէս աջ քո ։
Նետք քո սրեալ են, հզօր, և ժողովրդք
ի ներքոյ քո անկցին, ի սիրտս թշնամեաց
թագաւորի ։
Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւի-
տենից, գաւազան ուղղութեան գաւա-
զան արքայութեան քո ։

Սիրեցեր զարդարութիւն, եւատեցեր
զանօրէնութիւն:

Վասն այսորիկ եօծ զքեզ Աստուած, Ա-
ստուած քո, իւղով ուրախութեան առա-
ւել քան զընկերս քո:

Զմուռս և սաւկան և կասիայ ի զգեստ
քումմէ, ի տաճարացն փղոսկրէից, ուստի
ուրախ արարին զքեզ դստերք թագաւո-
րաց ի պատիւ:

Կայցէ Դշխոյ ընդ աջմէ քումմէ, ի հան-
դերձս ոսկեհուռս զարդարեալ եւ պա-
ճուճեալ:

Լուր, դուստր, և տես, խոնարհեցո զնշ-
մարս քո. մոռա զժողովուրդ քո և զտուն
հօր քո, զի ցանկացաւ թագաւոր գեղե-
ցիկ քո:

Սա ինքն է Տէր քո, երկիր պագցես նմա,
և դուստր Ծուրայ երկիր պագցէ նմա. և
պատարագօք զերեսս սորա պաշտեացեն
մեծամեծք ի ժողովրդոց:

Ամենայն փառք դստեր թագաւորի ի ներ-
քոյ, ի վերջնատոս ոսկեհուռս զարդարեալ
և պաճուճեալ:

Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա,
և զընկերս նորա տարցին նմա:

Ածցին ցնծութեամբ և ուրախութեամբ,

և տարցին ի տաճար թագաւորի, և վա-
խճանակ հարց քոց եղիցին որդիք քո:

Կայուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն
երկիր, և յիշեսցի անուն քո ընդ ամենայն
ազգս ազգաց:

Վասն այսորիկ ժողովեսցէ խոստովան ե-
զիցին զքեզ, յաւիտեան և յաւիտեանս
յաւիտենից:

Տունք Ժը:

ՍԱՂՄՈՍ ԽԵ:

Ի կատարած, որդւոցն Կորխայ ի վերայ գաղանեացն:

Աստուած մեր ապաւէն և զօրութիւն,
օգնական ի վերայ նեղութեանց որք գտին
զմեզ յոյժ:

Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք ի խառ-
նել երկրի, ի փոփոխել լերանց ի սիր-
տս ծովու:

Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա, խռո-
վեցան լերինք ի զօրութենէ նորա:

Գնացք գետոյ ուրախ առնեն զքաղաքն
Աստուծոյ, եւ սուրբ արար զյարկս իւր
Բարձրեալն:

Աստուած ի մէջ նոցա՝ և նոքա մի սա-
ռանեսցին, օգնեսցէ նոցա Աստուած ի

վաղորդայնէ մինչեւ ի վաղորդայն։
Խոովելեան հեթանոսք, եւ խոնարհեցան
թագաւորութիւնք. եւ զձայն իւր բարձ-
րեան՝ եւ խոովեցաւ երկիր։
Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունելի է
մեր Աստուած Յակովբայ։
Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որ
սարսր զնչանս եւ զարութեսս ի վերայ
երկրի։
Եհար զպատերազմ ի ծագաց մինչեւ ի
ծագս երկրի. զաղեղունս փշրեաց, զրնկ
խորտակեաց և զասպարս այրեաց հրով։
Կանխեցէք և ծաներուք, զի ես եմ Աս-
ուած. բարձր եղէց ի հեթանոսս, և բարձ-
րացայց ի վերայ երկրի։
Տէր զօրութեանց ընդ մեզ, ընդունելի է
մեր Աստուած Յակովբայ։
Տունք ժա։ Գոբզայս ծգ։

ՍԱՂՄՈՍ Խգ.

Ի կատարած. վասն որդւոցն Կորխայ։
Սաղմոս ի Դաւիթ։

Ծափս հարէք, ամենայն հեթանոսք, ա-
ղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծ-
ութեան։

Տէր բարձրեալ և ահարկու, թագաւոր
մեծ ի վերայ ամենայն երկրի։
Հնազանդ արար զժողովուրդս ընդ մեզ,
և զհեթանոսս ի ներքոյ ոտից մերոց։
Ընտրեաց զմեզ իւր ի ժառանգութիւն,
զգեղեցկութիւն Յակովբայ՝ զոր և սիրեաց։
Համբարձաւ Աստուած օրհնութեամբ, և
Տէր մեր ձայնիւ փողոյ։
Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղ-
մոս ասացէք թագաւորին մերում, սաղ-
մոս ասացէք։
Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի
Աստուած է, սաղմոս ասացէք նմա իմաս-
տութեամբ։
Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթա-
նոսաց, Աստուած նստաւ յաթոռ սրբու-
թեան իւրոյ։
Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ Աստ-
ուած Աբրահամու, զի Աստուծոյ զօրու-
թիւնք յերկրէ յոյժ համբարձան։
Տունք թ։

ՍԱՂՄՈՍ Խէ.

Սաղմոս օրհնութեան որդւոյն Կորխայ.
երկրորդ շաբաթու։

Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ, ի քաղաք
Աստուծոյ մերոյ, ի լեառն սուրբ նորա։

Հաստատմամբ ցնծասցէ ցնծութեամբ ա-
մենայն երկիր, լերինք Սիովնի, կողմանք
հիւսիսոյ քաղաք թագաւորին մեծի։
Աստուած ի տաճարի իւրում յայտնի, ի
ժամանակի ոտից օգնական լինէր նոցա։
Ահաւասիկ թագաւորութիւնք երկրի ժո-
ղովեցան, և անցին ի միասին։
Ինքեանք տեսին այսպէս եւ զարմացան,
խռովեցան սասանեցան, և դողութիւն կա-
լաւ զնոսա։
Անդ երկունք որպէս ի ծննդեան, ի հողմն
սաստիկ փշրեսցէ զնաւս ի Թարսիս։
Որպէս լուաք՝ այնպէս և տեսաք, ի քա-
ղաք Տեառն զօրութեանց՝ ի քաղաք Ա-
ստուծոյ մերոյ։
Աստուած հիմունս էարկ նմա յաւիտեան.
ընկալաք, Աստուած, զողորմութիւն քո ի
միջ ժողովրդեան քո։
Ըստ անուան քում, այնպէս եւ օրհնու-
թիւն քո ընդ ամենայն տիեզերս, և արդ-
արութեամբ լի է աջ քո։
Ուրախ եղիցի լեառն Սիովն, և ցնծասցեն
դստերք Յուդայ վասն իրաւանց քոց, Տէր։
Շրջեցարուք զՍիովնիա, պատմեցէք զնա,
և պատեցէք զաշտատակս նորա։
Դիք զսիրտս ձեր ի վերայ զօրութեանց

նորա, բաժանեցէք զամուրս նորա, զի
պատմել կարասջիք յազգ յազգ։
Սա է Աստուած, Աստուած մեր յաւի-
տեանս յաւիտենից, եւ սա հովուեսցէ
զմեզ մինչեւ յաւիտեան։

Տունք ԺԴ։

ՍԱՂՄՈՍ ԽԷ.

Ի կատարած, որդւոցն Կորխայ, սաղմոս օրհնութեան
ի Դաւիթ։

Լուարուք զայս, ամենայն ազգք, ականջ
դիր լերուք ամենեքեան որ բնակեալ էք
յաշխարհի։
Ծնունդք երկրի եւ որդիք մարդկան, ի
միասին մեծամեծք և անանկք։
Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն, եւ
խորհուրդք սրտի իմոյ զհանճար։
Խոնարհեցուցից յառակուճն զականջն իմ,
բացից զառակս օրհնութեան ի սկզբանէ։
Ընդէր բնաւ երկնչիմ՝ եւ յաւուր չարի.
զանօրէնութիւնք պնդացից իմոյ շուրջ
եղեն զինեւ։
Յուսացեալք ի զօրութիւն իւրեանց, ի
բազմութիւն մեծութեան իւրեանց պար-
ծեսցին։

Եղբայր ոչ փրկէ, և ոչ փրկէ մարդ և ոչ առ Աստուծոյ սիրական իւր, և ոչ զգիտա փրկանաց անձին իւրոյ։

Վաստակեա յաւիտեան, և կեցցես մինչ ի սպառ, և ոչ տեսցես զապականութիւն։

Յորժամ տեսցես՝ թէ իմաստունք մեռա նին, ի միասին անզգամք և անմիտք կորնչեն, և թողուն օտարաց զվճռութիւն իւրեանց։

Գերեզմանք նոցա տունք նոցա եղիցին յաւիտեան, և յարկք նոցա ազգէ մինչ ազգ յաղդ, և կարդասցին անուանք նոցա ի հոլս իւրեանց։

Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից և նըմանեցաւ նոցա։

Ա յս ճանապարհ է գայթակղութեան նոցա նոցին, յետ այսորիկ բերանօք իւրեանց հաճեսցին։

Որպէս խաչն ի գժոխս մատնեսցին, եւ մահ հովուեսցէ զնոսա, և սիրեսցեն նոցա ուղիղք ընդ առաւօտս։

Օգնութիւնք նոցա մնչեսցին ի գժոխս, և ի փառաց իւրեանց անկցին։

Բայց սակայն Աստուած փրկեսցէ զանձն իմ ի ձեռաց գժոխոց, յորժամ ընդունին զիս։

Մի երկնչիր յորժամ մեծանայ մարդ, եւ յորժամ բազում լինին փառք տան նորա։

Զի ոչ թէ ի մեռանիլ իւրում առցէ ընդ իւր զամենայն, և ոչ թէ ի քաջեն փառք տան նորա ընդ նմա։

Ա յլ անձն նորա ի կեանս իւրում օրհնեսցի, և խոստովան եղիցի քեզ յորժամ բարի արասցես դու նմա։

Մտցէ նա մինչեւ յազգ հարց իւրոց, մինչ չեւ յաւիտեան ոչ մի տեսցէ։

Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից և նըմանեցաւ նոցա։

Տունք ի գոլոյս իւր։

ՍԱՂՄՈՍ ԽԹ.

Սաղմոս ի Դաւիթ։

Աստուած աստուածոց Տէր խօսեցաւ, և կոչեաց զերկիր յարեւելից մինչեւ ի մուտս արեւու։

Ի Սիովնէ մեծավայելչութիւն, փրկութեան գեղջ նորա։

Աստուած մեր յայտնապէս եկեսցէ, եւ Աստուած մեր մի դադարեսցէ։

Հուր առաջի նորա բորբոքեսցի, և շուրջ
ընդ[ա]լաւ մրրիկ յոյժ։
Կաչեսցէ զերկինս ի վերուստ, և զերկիր
ի դատել զժողովուրդ իւր, ժողովել առ
ինքն զսուրբս իւր, և որք զնեն զպատա-
րագս ուխտիւ ի վերայ սեղանոյ նորա։
Պատմեսցեն երկինք զարդարութիւն նո-
րա, զի Աստուած դատաւոր է։
Լսեր, ժողովուրդ իմ, և խօսեցայց ընդ
քեզ, և Իսրայէլ քեզ վկայեցից. զի Ա-
ստուած, Աստուած քո ես եմ։
Ոչ թէ վասն պատարագաց քոց կշտամ
բեմ զքեզ. զի ողջակէզք քո առաջի իմ
են յամենայն ժամ։
Ոչ ընդունիմ ի տանէ քումմէ զնախրակս,
և ոչ ի հօտից քոց նոխազս։
Իմ է ամենայն գազան անտառի, երէ լե-
րանց և ամենայն անասունն։
Գիտեմ ես զամենայն թռչունս երկնից,
գեղեցկութիւն վայրի ընդ իս է։
Թէ քաղցեայց, քեզ ինչ ոչ ասացից. զի
իմ է աշխարհ լիս իւրով։
Ոչ ուտեմ ես զմիս զնախրակաց քոց, և ոչ
զարիւն նոխազաց քոց ըմպեմ։
Մատո Աստուծոյ պատարագ օրհնու-
թեան, կատարեա ընծայեցցին զնախատ քո։

Կարդացեա առ իս յաւուր նեղութեան
քո, ես փրկեցից զքեզ, և դու փառա-
ւոր արասցես զիս։
Սակայն մեղաւորին ասէ Աստուած. իսկ
դու ընդէր բնաւ պատմես զարդարու-
թիւն իմ, կամ առնուս զուխտ իմ ի բե-
րան քո։
Զի դու ատեցեր զնախատ իմ, մերժեցեր
ես յետս ընկեցեր զամենայն բանս բե-
րանոց իմոց։
Թէ տեսանէիր զգող՝ ընդհանայիր ընդ նո-
սա, և ընդ շունս դնէիր զբաժին քո։
Բերան քո յաճախեր զչարութիւն, և լե-
զու քո նիւթեր զնենգութիւն։
Նստեալ զեղբօրէ քումմէ չարախօսէիր, և
ի վերայ որդւոյ մօր քո դնէիր զպատ-
ղութիւն։
Զայս ամենայն արարեր, ես լռեցի քեզ.
կարծեցեր անօրէնդ ի մտի քում, թէ և
ես քեզ նմանիցեմ։
Արդ յանդիմանեցից և կացուցից զայս ա-
մենայն առաջի քո. իմացարուք ամենա-
քեան՝ որոց մոռացեալ իցէ զԱստուած։
Գուցէ երբեք յափշտակիցիք, և ոչ ոք ի-
ցէ՝ որ փրկիցէ։
Պատարագ օրհնութեան փառաւոր ա-

բառդ ինձ. և անդ է ճանապարհ, ուր
ցուցից նմա փրկութիւն Աստուծոյ:
Տունք իգ:

ՍԱՂՄՈՍ Ը.

Ի կատարած. սաղմոս Դաւթի. ի ժամանակի որ
եկն առ նա Նաթան մարգարէ, իբրեւ ել մտեալ էր
նա առ Բերսաբեէ:

Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ո-
ղորմութեան քումմ, ըստ բազում գթու-
թեան քումմ քաւեա զանօրէնութիւնս
իմ:
Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ,
և ի մեղաց իմոց սուրբ արա զիս:
Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ,
և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:
Քեզ միայն մեղայ, տէր, եւ չար առաջի
քո արարի:
Որպէս արդար եղիցիս ի բանս քո, եւ
յաղթել ի դատել գաս:
Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծը-
նաւ զիս մայր իմ:
Դու, տէր, զճշմարտութիւն սիրեցեր, զան-
յայտս եւ զծածկեալս իմաստութեամբ
քումբ յայտնեցեր ինձ:

Ցօշեա յիս մշտակաւ և սուրբ եղիցի, լուա
և քան զձիւն սպիտակ եղիցի:
Լսելի արա ինձ զցնծութիւն եւ զուար-
ճութիւն, և յնծայցեն ոսկերք իմ տա-
պեալք:
Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, և զա-
ւերնային անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:
Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուած,
և հոգի ուղիղ նորոգեա ի փորձ իմում:
Մի ընկենուր զիս, տէր, յերեսաց քոց, և
զՀոգի քո Սուրբ մի հաներ յինէն:
Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քո, և
հոգեւոր պետութեան քով հաստատեա զիս:
Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և
ամբարիշտք առ քեզ դարձցին:
Փրկեա զիս յարեանց, Աստուած Աստուած
փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ
յարդարութեան քումմ:
Տէր, եղիծ զբերանս իմ բանաւ, բերան իմ
երգեսցէ զարհնութիւնս քո:
Թէ կամեցեալ էիր պատարագս մատու-
ցանէիք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ
հաճեցար:
Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, սիր-
սիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած
ոչ արհամարհէ:

Բարի արա, Տէր, կամօք քովք Սիովնի, և
շինեսցին պարիսպքն Երուսաղեմի:
Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտիդ պատարագքն
դնեն հանցեն ի սեղան քո զուարակս:

Տունք ի:

ՍԱՂՄՈՍ ԾԱ.

Ի կատարած խնամատութեան, սաղմոս ի Դաւիթ.
ի ժամանակի զի էկն Դոէկ եդովմայ, պատմեաց
Սաւուղայ, թէ անդաւասիկ Դաւիթ ի տանն Աբիմելեքայ է:

Զի պարծի ի չարութեան հզօր՝ զանօրէնութիւն, զօրհնանապազ զանիրաւութիւն
խորհեցաւ ի լեզուի իւրում:
Որպէս զածելի սուր սրեաց զնենգութիւն, սիրեաց զչարութիւն քան զբարութիւն, զանօրէնութիւն քան զխօսս
արդարութեան:
Սիրեաց նա զամենայն խօսս կործանման,
և զլեզուս նենգաւորս:
Վասն այսորիկ Աստուած կործանեսցէ զնա ի սպառ, խլեսցէ և հանցէ զնա յարկաց իւրոց, և զարմատս նորա յերկրէն
կենդանեաց:

Տեսցեն արդարք և երկիցեն, զնովաւ ծիծաղեսցին և ասասցեն.
Այս այր է, որ ոչ սրար զԱստուած իւր
օգնական, այլ յուսացաւ սա ի բազում
մեծութիւն իւր, և զօրացաւ ի նանրութեան իւրում:
Այլ ես որպէս ձիթենի պտղալից ի տան
Աստուծոյ. յուսացայ յողորմութիւն Աստուծոյ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:
Խոստովան եղէց քեզ յաւիտեան՝ զի արարեր, և համբերից անուան քում, զի
քաղցր ես առաջի սրբոց քոց:

Տունք ը: Գորգաս ծբ:

ՍԱՂՄՈՍ ԾԲ.

Ի կատարած. վասն Մաղաղեթայ. խնամատութիւն
ի Դաւիթ:

Ասաց անզգամն ի սրտի իւրում՝ թէ ոչ
գոյ Աստուած. ապականեցան և պղծեցան
յանօրէնութեան իւրեանց, և ոչ ոք է որ
առնէ զբարեգործութիւն:
Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ ոք խնդրիցէ զԱստուած:

Ամենեքեան խոստացան ի վիճակին, եւ անպիտանացան։

Ոչ ոք է որ առնէ զբարի, և չէ որ մինչեւ ի մի։

Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան, զի գործեն զանօրինութիւն։

Ոչ զի ուտիցին զժողովուրդ իմ որպէս կեր բանաւք հացի, և առ Աստուած ոչ կարդացին։

Անդ երկիցեն երկիւղ ուր ոչ էր երկիւղ. զի Աստուած ցրուեսցէ զոսկերս մարդասահճոյց։

Ամաչեցան և յոռնիք լինին, զի Աստուած անարգեաց զնոսա։

Ո՞ տացէ ի Սիովնէ փրկութիւն Իսրայէլ. ի դարձուցանել Տէառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ, ցնծասցէ Յակոբ և ուրախ եղիցի Իսրայէլ։

Տունք Թ։

ՍԱՂՄՈՍ ԾԲ.

Ի կատարած, ընդ օրհնութիւնս խնամատարութեան ի Դաւիթ. ի ժամանակի որ եկն Նխովսէն, և ասեն զՔաղդէացւոցն Ահաւասիկ Դաւիթ խոգաւորեալ ընտի առ մեզ։

Աստուած, յանուան քում կեցո զիս, և ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուած, լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոց։

Օտարք յարեան ի վերայ իմ, եւ հզօրք խնդրեցին զանձն իմ, եւ ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Այհա Աստուած օգնական իմ, և Տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քում սատակեա զնոսա։

Եա կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոստովան եղէց անուան քում, Տէր, զի բարի է։

Յամենայն նեղութենէ խնդիր փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ եւտես աչն իմ։

Տունք Ե։

ՍԱՂՄՈՍ ԾԳ.

Ի կատարած, ընդ օրհնութիւնս խնամատարութեան, ոտանաւոր ի Դաւիթ։

Ունկն դիր, Աստուած, աղօթից իմոց, և մի անտես առներ զխնդրուածս իմ։

Նայեաց առ իս և լուր ինձ, զի սրտմտեցայ ես ի ձանձրանալ իմում և խռովեցայ։

Ի ձայնէ թշնամւոյն և ի նեղել մեղաւորի, խոստովեցան չիս անիրաւութեամբ, բայց հնութեամբ սիս պահեին ինձ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մա-
հու անկաւ ի վերայ իմ։
Ահ և դողմունք եկին ի վերայ իմ, և ծած-
կեաց զիս խաւար։
Ասէի՝ ապա՛ ով լինիմ Թեւս որպէս գաղաւ-
նուց, զի թռչիցեմ վերանայի, և հեռացեալ
դադարիցեմ յանապատի։
Ահին ուշնէի Աստուծոյ՝ որ վրիժէր զիս ի
կարճմտութենէ զայրանալով, և ի մրրիկեալ
նեղութենէ։
Ընկէց, տէր, և բաժանեա զլեզուս նոցա,
զի տեսի զանօրէնութիւն և զհակառակու-
թիւն ի քաղաքի։
Ի տուէ և ի գիշերի շուրջ եղեն զպա-
րսպօք նորա անօրէնութիւնք, չարիք և
մեղք են ի մէջ նոցա. և ոչ պակասեալ
ի հրապարակաց նոցա վաշխ եւ նենգ-
գութիւն։
Զի թէ թշնամին նախատեալ էր, համ-
բերէի արդեօք, կամ ատելոյն մեծաբա-
նեալ էր ի վերայ իմ՝ թագչէի արդեօք
ի նմանէ։
Իսկ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ
իմ և ծանօթ իմ։
Ապաքէն ի նոյն քաղցրացուցեր լինէ եւ
քեզ կերակուր, զի գնայաք միաբանու-

թեամբ ի տան Աստուծոյ։
Եկեսցէ մահ ի վերայ նոցա, և կենդան-
ասցին ի գժոխս, զի չարութիւն է ի
բնակութեան նոցա և ի մէջ նոցա։
Ես առ Աստուած կարդացի, և նա լուաւ
ինձ յերեկոյ՝ ի վաղորդայն և ի հասա-
րակ աւուր։
Պատմեցի և ասացի, և լուիցէ ձայնի իմ
մեծ. փրկեսցէ խաղաղութեամբ զանձն
իմ ի մերձաւորեալ իմոց, զի կարեօք հա-
սին ի վերայ իմ։
Լուիցէ Աստուած և խոնարհ արասցէ զնո-
սա, որ յառաջն է քան զյաւիտեանս։
Զի ոչ գոյր նոցա փոխանակ, և ոչ երկեան
յԱստուծոյ։
Զգեաց զձեռն իւր ի հատուցանել նոցա,
և նոքա պղծեցին զբլինս նորա։
Բաժանեցան ի սրտմտութենէ երեսաց
նորա, և եհաս ի սիրտս նոցա։
Կակուղ եղեն բանք նոցա քան զձէթ, և
ինքեանք որպէս սլաք։
Ընկեա ի տէր զհոգս քո, և նա կերակրէ
զքեզ, և ոչ տայ յաւիտեան սասանու-
թիւն արդարոյ։
Դու, Աստուած, իջուսցես զնոսա ի փուլ
ապականութեան, արք արիւնահեղք եւ

Նենգաւորք մի հասարակեսցեն զաւուրս իւրեանց. այլ ես ի քեզ, Տէր, յուսացայ:

Տունք իբ: Գոբղայս լբ:

Կանոն Գոբղայս է: Սաղմոս ժԹ: Տունք իւ:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՄՈՎՍԻՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՏԵՍ ՄԱՐԳԱՐԷԻ

բ. Օրինաց. լբ:

Զի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ քումէ. այրեսցէ և իջցէ մինչեւ ի դժոխս ներքինս:

Կերիցէ զերկիր և զամենայն բոյս երկրի նոցա. վարեսցին հրով, եւ բորբոքեսցին հիմունք լերանց նոցա:

Կուտեցից զչարիս ամենայն ի վերայ նոցա, և նետիւք իմովք ապառեցից զնոսա: Մաշեալ և հիւծեալք ի սովոյ, գազանաբեկ գեշ անկեալ ամենայն Թռչնոց երկնից:

Լարս առանց բժշկութեան արձակեցից ի վերայ նոցա. զդազանս անասնոյն, որք սպար և անդը քարշեսցեն զնոսա ընդ երկիր:

Աբասաքուստ մանկակոտորս սպասցէ զնոսա սուր, և ի ներքուստ շտեմարանաց նոցա անաւր արհաւիրք ահից:

Զերիտասարդս նոցա կուսանաք հանդերձ, և զսպասս հասուտեալովք ծերովք հանդերձ:

Ասացի թէ ցրեցից զնոսա, և դադարեցուցից զյիշատակս նոցա յայգեաց:

Թէ ոչ վասն բարկութեան սրտմտութեան թշնամւոյն, զի մի երկայնակեացք եղիցին, և մի բարձրասցին հպարտասեալ թշնամիքն, և ասասցեն.

Թէ ձեռն մեր բարձր է, և բազուկ մեր հզօր. եւ ոչ տէր Աստուած սպար զսյս ամենայն:

Զի ազգ մի խորհրդակորոյսք են նոքա և ոչ գոյ ի նոսա իմաստութիւն, և ոչ խորհեցան ի միտ առնուլ զսյս ամենայն, և արդ ընկալցին զամօթ յանձինս իւրեանց:

Զարմանք մի մեծ սյս են. զինարդ մին ընդ հազարս հալածեսցէ, կամ երկուք զբիւրս չարժեսցեն:

Թէ ոչ սեառն Աստուածոյ մատնեալ էր զնոսա, եւ տուեալ իցէ զնոսա ի ձեռս թշնամեաց նոցա:

Զի ոչ են զինք նոցա որպէս զԱստուած մեր,

այլ Թշնամիք մեր վատախոհ-հուդք։
Յայնգեսյն Սոդոմմոյ էր որթ նոցա, եւ
տունկ նոցա ի Գոմորայ։
Խաղող նոցա խաղող դառնութեան եւ
ողկոյզ նոցա ի դառնութեան լեղւոյ։
Սրամոռեալն բարկութեան վիշապաց
գինի նոցա, սրամոռեալն իմից՝ անհնա-
րին առանց բժշկութեան։
Ո՞չ այս ամենայն ժողովեալ է առ իս, եւ
կնքեալ պահի ի գանձի իմում։
Յաւուր վրիժուց հատուցման հատուցից
նոցա, ի ժամանակի յորում հարցի զքա-
րի ոտն նոցա։
Մերձ է օր կորստեան նոցա, հասեալ է
պատրաստութեամբ տէր ի վերայ նոցա։
Դատի տէր զժողովուրդ իւր, և ի ծա-
ռայս իւր միխիթարի։
Զի եաես զնոսա լքեալս, լսծեալս եւ
մատնեալս ի գերութիւն։
Եւ ասիցէ տէր. ո՞ւր են դիքն ձեր՝ յոր
յուսացեալ էիք դուք ի նոսա, զորոց ըն-
ծայս ապանդիցն ուտէիք, եւ ըմպէիք
զգինի զոհիցն։
Արդ յարիցեն օգնեսցեն, և եղիցին ձեզ
թիկունք։

ՆՈՐԻՆ ՄՈՎՍԻՍԻ

Ծաներուք և տեսէք՝ զի ես եմ, և ոչ
գոյ այլ Աստուած բայ չինէն։
Ես սպանանեմ, և ես կեցուցանեմ, հար-
կանեմ եւ ես բժշկեմ, և ոչ ոք իցէ՝ որ
հանիցէ զձեզ ի ձեռաց իմոց։
Համբարձի յերկինս զձեռս իմ, երդուաց
աջովք իմով և ասացի՝ թէ կենդանի եմ ես
յաւիտեան։
Սրեցից որպէս փայլակն զսուսերս իմ, և ի
խնդիր վրիժուց արձակեցից զաջ իմ։
Հատուցից ընդատուցումն թշնամեաց իմոց,
և տուիցեմ իմոց հատուցից զհատուցումն
նոցա նոցին։
Արբեցուցից զնետս իմ յարենէ նոցա, և
սուր իմ կերիցէ միս, յարենէ վիրաւորելոց
գերելոց գլխոց իշխանաց՝ թշնամեաց նոցա։
Ուրախ եղիցին երկինք նմանաւ, եւ երկիր
պատցեն նմա ամենայն որդիք Աստուծոյ։
Ուրախ եղերուք հեթանոսք ընդ ժողովրդե-
անն նորա, և զօրացուսցեն զնա ամենայն
Հրեշտակք Աստուծոյ։
Խնդրելով խնդրեցաւ վրէժ արեան որդւոց
նոցա, և հատուցումն թշնամեաց նոցա
հատուցաւ նոցա։

Հաստուցումն առելեաց նոցա հաստուցաւ նոցա, և սրբեսցե տէր զերկիր ժողովրդեան իւրոյ:

Փառք Հօր և Որդւոյ և.

++++++++++++++++++++++++++++++++

ՄԱՂԹԱՆՔ

Դու ես տէր մեր, դա ես Քրիստոս փրկիչ մեր, զքեզ օրհնեն անձինք մեր:

Ամարդասէր, տէր, վասն սրբուհւոյ անուանդ քոյ մերում քոյ և կուսի, և վասն Խաչի քոյ պատուականի, ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ:

Քարոզ Ա ազգի՝ Մի նախանձիր և խաստովան ինձնոյն:

Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան, զտէր աղաչեսցուք:

Տէր ողորմեա:

Վասն ցրելոյ ի մէնջ զամենայն խորհուրդս չար, զտէր աղա.

Վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս, զտէր աղա.

Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ, զտէր աղա.

Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք, զտէր աղա.

Վասն հոգւոցն հանգուցելոյ՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի քրիստոս նքնին, զտէր աղա.

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զտէր աղա.

Ձանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեայ մեզ, տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քումմ. աղաչեսցուք ամենեքեան միաբանութեամբ:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

ԱՂՕԹՔ:

Տէր, երկնի և երկրի, արարիչ ամենայն արարածոց՝ երեւելեացդ և անտեսանելոցդ: Աստ քեզ կարդամբ յամենայն ժամ. ով ընդ ամենայն տեղիս ե տէրութիւն քո, և արքայութիւն քո ամենեցուն տիրէ: Շնորհեա մեզ երկիւղիւ ի պաշտօն քո կանխել հանապազ. սիրել զքեզ ի բոլոր սրտէ և ի բովանդակ մտաց, և յամենայն զօրութենէ մերմէ պահել զպատուիրանս քո: Համբառնալ առ քեզ զձեռս մեր ի սրբ-

քուԹիւն առանց բարկուԹեան և երկմտուԹեան. և գտանել ի քէն զնարհս և զաղաչմունԹիւն, և զառաքինասէր գործոյն յաջողուԹիւն: Վասն զի դու ես Տէր կենայ եւ Աստուած սղաչմունԹեանց. եւ քեզ վայելէ փառք իշխանուԹիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամէն:

ԽաղաղուԹիւն ամենեցուն:

Աստուծոյ երկիր պագեցուք:

Քառամեծաղօր և յաղԹող տէրուԹեանդ կրկնի ամենայն ծունր յերկրպագուԹիւն, և փառաւորի յամենեցունց ԹագաւորուԹիւն քո: Նայեա յերկրպագուԹիւնս մեր, և ուստ մեզ առնել զարդարուԹիւն ճշմարտուԹեան: Վասն զի դու ես Աստուած խաղաղուԹեան, որ բարձեր զԹշնամուԹիւն ի միջի, և արարեր զխաղաղուԹիւն յերկինս և յերկրի. հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգեւս քոյին բարեացդ: Որոմ եւ զմեզ մեծի ընդհացդ արժանաւորս արասցես՝ դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո, Աստուած մեր և Տէր մեր և փրկիչ Յիսուս

Քրիստոս: Որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամէն:

ԱղաԹանք:

Յերկս օրհնուԹեան և ի ձայն սաղմոսաց անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս.



Զայն Տեառն ՚ի ջերայ ջուրց, եւ Աստուած վառաց որոտաց, եւ Տէր ինքն ՚ի ջերայ ջուրց բազմաց : սաղ • ԻԹ • 3 :

ՍԱՂՄՈՍ ԾԵ •

Ի կատարած • վասն Ժողովրդեանն , որ ՚ի սքանչ հրաշեալ էին ՚ի Ժամհանակի զվ կազան ջնա սյլազգեաքն ՚ի Դէթ : Յորժամ ագիր • առվնս ՚ի Դաւիթ :

ՊԱՐՄԵՄ ինձ , Աստուած , զի կոխեաց զիս մարդ , ցօրհանապազ սպառամարտեալ նեղեցին զիս :
Կոխեցին զիս թշնամիք իմ ցօրհանապազ , բազումք եղեն պատերազմեալք ընդ իս ՚ի բարձանց :
Ի տուէ ես ոչ երկեայց՝ զի ՚ի Տէր յուսացայց , Աստուածով գովեցից զբանս իմ. յԱստուած յուսացայ և ոչ երկեայց , զի ոչ գործեսցէ ինձ մարդ :

Զօրհանատակ զբանս իմ անարդեցին, զինէն էին խորհուրդք նոցա ի չարութեան։

Պանդուխտք եղէին եւ թաքթաքուրք ջրէացին. նոքա գալշապարի իմում ոպասեսցեն՝ որպէս և ոպասէին անձին իմոյ։

Որպէս առ ոչընչէ մերժեացես զնոսա, բարկութեամբ զժողովուրդս հնազանդեցուցես։

Աստուած, զկեանս իմ պատմեցից քեզ. եդից զարտասուս իմ առաջի քո որպէս խոստացայ զու ինձ։

Դարձցին թշնամիք իմ յետս իւրեանց, յաւուր յորում կարդացից առ քեզ։

Ահա ծանեայ զի Աստուած իմ ես դու, զԱստուած օրհնեցից ի բանս իմ, և զՏէր գովեցից ի խօսս իմ. յԱստուած յուսացայ և ոչ երկեայց, զի արասցէ ինձ մարդ։

Յինէն են ուխտք իմ, զոր ասց քեզ օրհնութեամբ Աստուած Աստուած իմ։

Փրկեցեր զանձն իմ ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ ի գայթակղութենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց։

ՍԱՂՄՈՍ ԾԺ.

Ի կատարած, մի ապականեր. սաղմոս ի Դաւիթ յորձանագիր. ի ժամանակի զի փախուցեալ և թագուցեալ էր նա յերեսաց Սաուղայ յորի անգ։

Ողորմեա ինձ, Աստուած, ողորմեա ինձ, զի ի քեզ յուսացաւ անձն իմ։

Ի հովանի թեւուց քոց յուսացայց, մինչեւ անցցէ անօրէնութիւն։

Աղաղակեցի առ Աստուած բարձրեալ, առ Աստուած բարերար իմ։

Առաքեաց յերկնից և կեցոյց զիս, եդ ի նախատինս որք կոխէին զիս։

Առաքեաց Աստուած զողորմութիւն եւ զճշմարտութիւն իւր, և փրկեաց զանձն իմ ի միջոց գազանաց, զի ննջէի ես խռովեալ։

Որդւոց մարդկան ատամունք իւրեանց զէն և նետք են, և լեզուք նոցա որպէս զսուր սուսերի։

Բարձրեալ ես դու յերկինս, Աստուած, և յամենայն երկրի են փառք քո։

Որոգայթ պատրաստեցին ոտից իմոց, խոնարհ արարին զանձն իմ. փորեցին առաջի իմ խորխորատ, և անկան ինքեանք ի նոյն։

Պատրաստ է սիրտ իմ, Աստուած, պատ-

բաստ է սիրտ իմ օրհնել և սաղմոս ասել քեզ փառօք իմովք։

Զարթիք, փառք իմ, զարթիք սաղմոսիւք և օրհնութեամբ, և ես զարթեայց առաւօտուց։

Խոստովան եղէց քեզ ի ժողովուրդս, Տէր, և սաղմոս ասացից քեզ յազգս։

Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւն քո, մինչեւ յամպս ճշմարտութիւն քո։

Բարձրեալ եւ դու յերկինս, Աստուած, և յամենայն երկրի են փառք քո։

Տունք ժգ։

ՍԱՂՄՈՍ ԻԵ։

Ի կատարած. մի ապականեր, յաւժանագիր. սաղմոս ի Դաւիթ։

Թէ արդարեւ զարդարութիւն խօսիք, և ուղիղս դատիք, որդիք մարդկան։

Քանզի և արդ իսկ ի սրտի ձերում զանօրէնութիւն գործէք յերկրի, զանիրաւութիւն ձեռք ձեր նիւթեն։

Օտար եղեն մեղաւորք ի մօրէ, խաբեցան յարգանդէ և խօսեցան սուտ։

Արտաւթիւն նոցա ըստ նմանութեան

օձի, որպէս լիւի եւ քարբի ղի խցեալ է զականջս իւր։

Զի մի լուիցէ նա ձայն թովչի ճարտարի, և մի առցէ դդեղ ի դեղատուէ խմաստնոյ։

Աստուած փշրեսցէ զատամունս նոցա ի բերանս նոցա, և զժանիս առիւծուց խորտակեսցէ Տէր։

Անարգ եղիցին նոքա որպէս ջուր ղի հեղղու, ի լարել աղեղան նոցա ակարասցին որպէս մամ ղի հալի, և ապառեսցին։

Անկաւ հուր և ոչ տեսին զարեւ, մինչեւ ի միտ առեալ էր զիւրաքանչիւր, որպէս դժնիկ բարկութեամբ կենդանւոյն կլլեալ զնոսա։

Ուրախ եղիցի արդարն՝ յորժամ տեսցէ զհատուցումն, եւ զձեռս իւր լուասցէ յարեան մեղաւորի։

Եւ ասասցէ մարդ, թէ արդարեւ գոյցէ պտուղ արդարոյ, և է Աստուած որ դատի զնոսա յերկրի։

Տունք ժ։ Գոբզայս լդ։

ՍԱՂՄՈՍ ԾԸ.

Ի կատարած. մի ապականեր, յաւիտեանական. ի ժառանգաւորի ի առաքեալ Սաւուղ, և պաշտպան զոհն նորա. զի ապանեկ զնա. սաղմոս ի Դաւիթ:

Փրկեա զիս ի Թշնամեաց իմոց, Աստուած, յայնցանէ որ յարուցեալ են ի վերայ իմ ապրեցո զիս:

Փրկեա զիս յայնցանէ որ գործեն զանօրէնութիւն, յարանց արիւնահեղաց ապրեցո զիս:

Որսալ զանձն իմ կամեցան, և հասին ի վերայ իմ հզօրք:

Ոչ մեղք իմ և ոչ յանցանք, առանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ:

Զարթիր ընդ առաջ իմ և տես, դու Տէր զօրութեանց Աստուած Իսրայելի:

Նայեաց և այց արա ամենայն հեթանոսաց, մի ողորմիր ամենեցուն որ գործեն զանօրէնութիւն:

Դարձցին ընդ երեկոյս, սոլեսցին որպէս շունք և շրջեսցին գքաղաքաւ:

Նոքա պղտանջեսցեն բերանօք իւրեանց, և սուր է ի շրթունս նոցա:

Իսկ արդ ոմն լուաւ զոյս, զի դու, Տէր,

ծիծաղեսցես զնոքօք, և արհամարհեսցես զամենայն հեթանոսս:

Զօրութիւն իմ առ քեզ պահեցից, զի Աստուած օգնական իմ է:

Աստուած իմ, ողորմութիւն նորա կանխեսցէ առ իս, և Աստուած իմ ցուցցէ ինձ ի թշնամիս իմ:

Մի սպանաներ զնոսա, զի մի մոռասցին զժողովուրդս քո:

Ցրուեա զնոսա զօրութեամբ քով և ընկճեա զնոսա, զի դու ես պաշտպան իմ, Տէր:

Մեղք բերանոյ նոցա և բանք շրթանց նոցա, ընկալցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց:

Յանէծս և ի սուտ թիւնս մատնեսցին, ի կատարած բարկութեան սպառեսցին, և մի գոյցին:

Գիտասցեն զի Աստուած տիրէ Յակովբայ, և ամենայն ծագաց երկրի:

Դարձցին ընդ երեկոյս, սոլեսցին որպէս շունք և շրջեսցին գքաղաքաւ:

Նոքա սիրեսցին յուտել, ապա թէ ոչ յագեսցին՝ տրտնջեսցեն:

Ես օրհնեցից զօրհնութիւնս Տեառն, զկնի ծագացայ առաւօտուց յողորմութեան քում:

Չի եղեր իմ պաշտպան և տուն ապաւէ-
նի, յաւուր նեղութեան իմոյ օգնական
իմ։
Փեղ սաղմոս ասացից, Աստուած ապաւէն
իմ, Աստուած ողորմութեան իմոյ։
Տունք կա։

ՍԱՂՄՈՍ ՃԽ.

Ի կատարած, զաւանեցելոյ ժամանակաց առ ուսմանէ.
՚ի ժամանակի զի հրձիգ նա պարր զՄիջագետս և զԱ-
սորեստանն Սոփողայ, և ՚ի գալ՚ն հարկանել Յովաբ
զձորն աղուից յերկոտասան հազարս. յարձանագիր,
սաղմոս ՚ի Դաւիթ։

Աստուած, մերժեցեր և աւերեցեր զմեզ՝
բարկացար և դիմացեր ՚ի մեզ։
Շարժեցեր զերկիր և խռովեցուցեր զա-
նա, բժշկեա զվարուածս սորա, զի սասանե-
ցաւ։
Ցուցեր ժողովրդեան քումմ՝ խստութիւն,
և եռուր լմնցեր մեզ գինի միմարութեան։
Ետուր երկիւղածից քոց նշան, զի ապ-
րեսցին յերեսաց աղեղան։
Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո աջով
քով և լուր մեզ։
Աստուած խօսեցաւ ՚ի սրբութենէ իւրմէ,
ցնծացայց, բարձր եղէց, բաժանեցից զը-

Սիւքէմ, և զհովիտսն յարկաց չափեցից։
Իմ է Գաղեադ և իմ է Մանասէ, և Ե-
փրեմ հզօրիչ գլխոյ իմոյ։
Յուդայ թագաւոր իմ, Մովաբ սաւազան
յուսոյ իմոյ։
Յեդովմէ ուղղեցից զգնացս իմ, եւ ինձ
պղպգիք հնազանդ եղեն։
Ո՞ տարցէ զիս ՚ի քաղաք ամուր, կամ ո՞
առաջնորդեսցէ ինձ մինչեւ յԵդովմէ։
Եթէ ոչ դուն, Աստուած, որ մերժեցեր զը-
մեզ, և ոչ ելիր, Աստուած, ընդ զօրս մեր։
Տուր մեզ օգնութիւն ՚ի նեղութենէ, զի
ընդունայն է փրկութիւն մարդոյ։
Աստուծով արասցուք զօրութիւն, և նա
արհամարհեսցէ զթշնամիսն մեր նեղեն զմեզ։
Տունք ժգ։

ՍԱՂՄՈՍ Կ.

Ի կատարած. ընդ օրհնութիւն. սաղմոս ՚ի Դաւիթ։

Լուր, Աստուած, աղօթից իմոց, և նայեա,
տէր, յաղօթս իմ։
Ի ծագաց երկրի կարդացի առ քեզ, մինչ
՚ի վաստակիլ սրտի իմոյ։
Ի վիմէ բարձր արարեր զիս, առաջնորդե-
ցեր ինձ, և իմ եղեր յոյս, և աշտարակ

Հզօր եղեր ինձ յերեսաց Թշնամւոյն։
Բնակեցայց ես ի յարկս քո յաւիտեան, և
ծածկեցայց ընդ հովանեաւ թեւոց քոց։
Դու, Աստուած, լուար աղօթից իմոց, և
տուր ժառանգութիւն՝ ոյք երկնչին յանուանէ քումմէ։
Աւուրս յաւուրս յաւելցը թագաւորի
ամաց նորա, աւուրս աղգաց մինչեւ յաղգս
գրս նորա։
Կայ և մնայ յաւիտեան առաջի Աստուծոյ
ողորմութիւն և ճշմարտութիւն, որ
ինդրեացեն ի նմանէ։
Ա յսպէս սաղմոս ասացից անուան քումմ
յաւիտեանս յաւիտենից, եւ տայց քեզ
ղաղօթս իմ օր ըստ օրէ։

Տանք ը։ Գոբզայս խբ։

ՍԱՂՄՈՍ ԿԱ։

Ի կատարած։ Ի վերայ խդիթամէոյ։
Սաղմոս Ի Գաւիթ։

Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր, անձն
ձկն իմ, զի նմանէ է ինձ փրկութիւն։
Նա է Աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն
իմ՝ զի մի սասանեցայց առաւել։

Մինչեւ յերբ յառնէք ի վերայ մարդոյ
սպանանել ամենեքեան, որպէս յորմէ
թիւրելոյ և ի ցանկոյ մերժելոյ։
Բայց միայն զպատիւ իմ խորհեցան մեր-
ժել լինէն, և ընթացան ի ծարաւս լա-
րեանց։
Բերանօք իւրեանց օրհնէին, եւ սրտիւք
անիծանէին։
Բայց սակայն Աստուծոյ հնազանդ լեր անձն
իմ, զի ի նմանէ է ինձ համբերութիւն։
Նա է Աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն
իմ՝ զի մի սասանեցայց։
ՅԱստուծոյ է ղօրութիւն իմ և փառք իմ։
Աստուած օգնութեան իմոյ, յոյս իմ՝ Աս-
տուած է։
Յուսացարուք ի նա ամենայն ժողովք ժո-
ղովրդոց, սիրեցէք առաջի նորա զսիրտս
ձեր, զի Աստուած օգնական է մեր յաւի-
տեանս ժամանակաց։
Սակայն ընդունայն են որդիք մարդկան,
սուտ են որդիք մարդկան, ի կշռուս իջ-
նեալ մեղանչեն, և ինքեանք յանդիսու-
թեան են ի միասին։
Մի յուսայք յանիրաւութիւն, յափշտա-
կութեան մի ցանկայք. և մեծութիւն թէ
առնու գայցէ, մի յօժարեսջին սիրտք ձեր։

Մի անգամ խօսեցաւ Աստուած, եւ ելաւ
կուս զայս լուսաք։
Յ Աստուծոյ է զօրութիւն, և քո, Տէր, ո՞
զորմութիւն. և դու հատուցանես իւրա-
քանչիւր ըստ գործս նոցա։
Տունք ժգ։

ՍԱՂՄՈՍ ԿԲ.

Սաղմոս ի Դաւիթ. մինչդեռ նաւեր նա յանապատի
անդ Հրէաստանի։

Աստուած, Աստուած իմ, ես առ քեզ ա-
ռաւօտ առնեմ. ծարաւեաց առ քեզ հո-
գի իմ, քանիպատիկ եւս և մարմին իմ։
Որպէս երկիր անապատ և անջուր, ուր ոչ
գոյ ի նմա ճանապարհ։
Ա յսպէս ի սուրբս երեւեցայց քեզ, տես-
անել ինձ զզօրութիւն քո և զփառս քո։
Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան
զկեանս իմ, եւ շրթունք իմ գովեսցեն
զքեզ։
Ա յսպէս օրհնեսցից զքեզ ի կեանս իմ, և
յանուն քո համբարձից զձեռս իմ։
Որպէս ի ճարպոյ պարարտութենէ լցցի
անձն իմ, շրթամբք ցնծութեամբ օրհնես-
ցէ զքեզ բերան իմ։

Զի թէ յիշեի զքեզ յանկողնի իմում,
ընդ առաւօտս կանխեալ խօսեի ընդ քեզ։
Զի եղեր իմ օգնական, ի հովանի թեւոց
քոց ցնծացայց։
Եկն զկնի քո անձն իմ, և զիս ընկալաւ
աջ քո. և նոքա ի նանիր խնդրեցին զան-
ձն իմ։
Մտցեն ի ներքոյ անդնդոց երկրի. մատ-
նեսցին ի ձեռս սրոյ, և բաժինք աղուե-
սաց եղիցին։
Թագաւոր յուսացաւ ի Տէր, գովեսցին
ամենեքեան որ երդնուն նմա, խցցին
բերանք այնոցիկ՝ որք խօսէին զանիրաւու-
թիւն։
Տունք ժա։

ՍԱՂՄՈՍ ԿԳ.

Ի կատարած. սաղմոս ի Դաւիթ։

Լուր, Աստուած, աղօթիկ իմոյ յաղաչել
ինձ առ քեզ, յերկիւղէ թշնամւոյն փրկ-
կեա զանձն իմ։
Ծածկեացես զիս ի ժողովոյ չարաց ի բազ-
մութենէ՝ որք գործեն զանօրէնութիւն։
Որք սրեցին որպէս սուսեր զլեզուս իւ-
րեանց, լարեցին զաղեղունս իւրեանց
իրս դառնութեան։

Չգիտէ՛ի գաղտնիս այնոցիկ՝ զոր ուղիղ են սրտիւք. յանկարծակի ձգեսցեն՛ի նոսա և մի՛ երկիցեն։

Ո՛չ զօրացուցին յանձինս իւրեանց զքաջ նրա չարութեան, խորհեցան խափանել զինձ որոգայթ, և ասացին՝ ոչ տեսանէ զայս Տէր։

Գիտեցին զանօրէնութիւն, պատրաստեցան՛ի քինել զքննութիւն։

Մատիկ այր՛ի խորութիւն սրտի իւրոյ, և բարձր եղիցի Աստուած։

Նետք տղայոց եղեն վէրք նոցա, տկարացան՛ի նոսա լեզուք նոցա. և խռովեցան ամենեքեան՝ զոր հայեին ընդ նոսա։

Երկեաւ ամենայն մարդ, եւ պատմեցին զգործս Աստուծոյ. և զարարածս նորա՛ի միտ առին։

Ուրախ եղիցի արդար՛ի Տէր, և յուսասցի՛ի նա. նովաւ գովեսցին ամենեքեան, զոր ուղիղ են սրտիւք։

Տունք ժ։ Գործոյ լգ։

ՍԱՂՄՈՍ ԿԱ.

Ի կատարած. սաղմոս՛ի Դաւիթ, օրհնութիւն երէ-ւելոյն եղկիելի և ժողովրդեանն, յորժամ՛ի պան-դխտութենէն կամէին ելանել։

Քեզ վայելէ օրհնութիւն, Աստուած, ՛ի Սիոն, և քեզ տացին աղօթք Երուսաղէմ։

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ։

Բանք անօրինաց զօրացան՛ի վերայ մեր, և զամբարշտութիւնս մեր դու քաւեացես։

Երանի՛ զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցին՛ի գաւիթս քո։

Լցցուք մեք՛ի բարութենէ տան քո, սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ։

Լուր մեզ, Աստուած փրկիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկրի և որ՛ի ծով հեռի։

Ո պատրաստէ զերինս զօրութեամբ իւրով, և զգեցեալ է զօրութիւն։

Ո խռովեցուցանէ զմեծութիւն ծովու, և զձայն ալեաց նորա ցաւուցանէ։

Խռովեսցին հեթանոսք, և երկիցեն բնակիչք երկրի՛ի նշանաց քոց։

Ցեղս առաւօտու, ընդ երեկոյս զուարճասցին. հայեցար յերկիր՝ արբեցուցեր զգ

նա, և բազում արարեր զՔրիստոսէիւն նորա։
Գեան Աստուծոյ լի եղեալ ջուրբ, պատրաստ արարեր զկերակուր նորա, զի այսպէս է պատրաստուԹիւն։
Զակաս նորա արբեցուցեր, և բազում աղբարեր զարմանիս նորա։
Ի ցօղել նորա՝ զուարԹ եղիցի բոյս նորա, օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրուԹեան քոյ։
Դաշաք քո լցցին պարարտուԹեամբ, պարարտացին գեղեցկուԹիւնք անապատի։
Բլուրք զինուԹիւն զգեցցին, և զգեցցին խայք մաքեաց։
Հովիտք բազում արասցեն զցորեան, աղաղակեսցեն և օրհնեսցեն։
Տունք Ժղ։

ՍԱՂՄՈՍ ԿԵ.

Ի կատարած տաճարն Դաւիթ. յարուԹեան։

Աղաղակեցէք առ Աստուած ամենայն երկիր. տաղմոս ասացէք անուան նորա, և տուք զփառս օրհնուԹեան նորա։
Ասացէք Աստուծոյ, որպէս զի ահեղ են գործք քո, ի բազում զօրուԹեան քում ստեցին քեզ Թշնամիք քո։

Ամենայն երկիր երկիր պագցեն քեզ, տաղմոս ասասցեն քեզ, եւ տաղմոս ասասցեն անուան քում։
Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որպէս զի ահեղ են խորհրդով քան զամենայն որդիս մարդկան։
Ո դարձոյց զծովն ի ցամաք, և ընդ գետս անցին ոտանաւորք։
Անդ ուրախ եղիցուք մեք ի նա, որ տիրէն զօրուԹեամբ իւրով յաւիտենից։
Աչք նորա ի հեԹանոսս հային, որք դառնացուցին զնա՝ մի բարձրասցին յանձինս իւրեանց։
Օրհնեցէք, հեԹանոսք, զԱստուած մեր, լսելի արարէք զձայն օրհնուԹեան նորա։
Ան որ եդ զանձն իմ ի կեանս, և ոչ եթ դողուԹիւն ասիցէ ինձ։
Փորձեցեր զմեզ, Աստուած, և քննեցեր, որպէս և քննի արծաԹ։
Իջուցեր զմեզ յորոգայթ, եդիր նեղուԹիւն ի թիկունս մեր, և անցուցեր զմարդիկ ի վերայ գլխոց մերոց։
Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ ի հանգիստ։
Մտից ի տուն քո պատարագօք, տացից քեզ զուխտս իմ, զոր խոստացան քեզ շրթունք

Թուն ք իմ, զոր բերան իմ խօսեցաւ ի ինձ զուարճեան :

Զաղջակէզս ուղղակից մատուցից քեզ խոյովք և խնկովք, եւ քեզ մատուցից զեւարակս և նոխազս :

Եկայք լսարարք լինիմ, և պատմեցից ձեզ, ամենեքեան որք երկնչիք յԱստուծոյ, զոր ինչ արար անձին իմոյ :

Առ նա բերանով իմով կարդացի, և բարձր արարի ընա լեզուաւ իմով :

Զմեղս թէ տեսանէի ի սրտի իմում, մի թէ լսէր ինձ տէր :

Վասն այսորիկ լուաւ Աստուած, և նայեցաւ ի ձայն խնդրուածոց իմոց :

Օրհնեալ է Աստուած՝ որ ոչ ի բացեաց արար զաղօթս իմ, եւ ոչ զողորմութիւնն իւր յինէն :

Տունք ԺԹ :

ՍԱՂՄՈՍ ԿԲ.

Ի կատարած ընդ օրհնութիւնս. սաղմոս երգոց :

Աստուած ողորմեա մեզ և օրհնեա զմեզ, երևեցո զերեսս քո ի մեզ և ողորմեա մեզ: Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յամենայն ազգս զփրկութիւնս քո :

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք, Աստուած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն :

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազգք, զի դու դատիս զժողովուրդս ուղղութեամբ, և ազգս երկրի դու առաջնորդես :

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք, Աստուած, գոհասցին ազգքն ժողովուրդք ամենայն :

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Աստուած, Աստուած մեր :

Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, և ի նմանէ երկիւղեն ամենայն ծագք երկրի :

Տունք է : Գոլոյա խր :

ՍԱՂՄՈՍ ԿԵ.

Ի կատարած. սաղմոս ի Դաւիթ :

Յարիցէ Աստուած՝ և սրուեսցին ամենայն թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա :

Որպէս պակասի ծուխն՝ պակասեսցին, որպէս հալի մոմ առաջի հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւորք յերեսաց Աստուծոյ :

Արդարք ուրախ եղիցին՝ և ցնծասցեն առաջի նորա, և զուարճասցին յուրախութեան իւրեանց։

Օրհնեցէք զԱստուած և սաղմոս ասացէք անուան նորա. ճանապարհ արարէք այնմիկ՝ որ նստի ընդ արեւմուտս, և տէր է անուն նորա։

Ցնծացեն առաջի նորա, եւ խռովեսցին յերեսաց նորա։

Որ հայրն է որբոց և դատաւոր այրեաց, Աստուած ի տեղւոջ սրբութեան իւրում։ Աստուած բնակեցուցանէ զմիակրծս ի տան, և հանէ զկապեալս քաջութեամբ իւրով, այնպէս և զդառնացողս՝ որք բնակեալ են ի գերեզմանս։

Աստուած, ընդ երանել քեզ առաջի ժողովրդեան քո, ընդ անցանել քեզ ընդ անապատ երկիր շարժեցար։

Քանզի և երկինք յօրէսցին յերեսաց Աստուածոյ ի Սինէ առաջի Աստուածոյ Իսրայելի։

Անձրեւ կամաց պատրաստեցեր, Աստուած, ժառանգութեան քում. Թէպէտ և հիւանդացաւ՝ ապակի դու հաստատեցեր զնա, և գաղանք քո բնակեցին ի նմա։

Պատրաստ արարեր քաղցրութեամբ քում

աղքատի, Աստուած, տէր ստոյգ զան, զոր աւետարանեն զօրութեամբ բազմաց։

Թագաւորք զօրութեանց սիրելեաց, զգեզկութիւն տան քո բաժանեալ յաւարի, Թէպէտ և ննջեսջիք ի մէջ վիճակաց։

Թեւք աղաւնեայ արծաթատոհմ, և թիկունամէջ նորա ի գոյն ոսկւոյ։

Ի գումարել երկնաւորին զԹագաւորս ի վերայ նորա, ձիւնացին ի Սաղմոն։

Լեառն Աստուծոյ լեառն պարարտ՝ լեառն մնծեալ և լեառն պարարտ, և զինչ կարծէք, լերինք հպարտացեալք։

Լեառն՝ ընդ որ հաճեցաւ Աստուած բնակել ի նմա, քանզի և տէր յանկ բնակեցի ի նմա յաւար։

Կառք Աստուծոյ բիւրապատիկք, հազարք ուղղիչք, և տէր ի նոսա ի Սինէ սրբութեան իւրում։

Եւ ի բարձունս՝ և գերեաց զգերութիւն, ետու ասար, բաշխեաց պարգեւս և ետ որդւոց մարդկան, քանզի Թեպետահասատից եւս բնակեալ եղիցին ի նմա։

Տէր Աստուած օրհնեալ, օրհնեալ տէր զօրհնասացաց մեզ Աստուած փրկիչ մեր։

Աստուած մեր Աստուած կենդարար, և ի

տեառնէ են եւք մահու ։
Բայց ասկայն Աստուած փշրեսցէ զգլուխ թշնամեաց մերոց, եւ զհերն կարձնալին՝ որ գնան յանօրինութեան իւրեանց ։
Ասաց Տէր. ի խորոց անդնդոց դարձուցից, եւ ի միջի ժանեաց զայն ի դուրս կորզեցից ։
Որպէս թացցի ատն քո յարեան, եւ լեզուք շանց քոց յարենէ թշնամեաց քոց ։
Երեւեցան գնացք քո, Աստուած, գնացք Աստուծոյ թագաւորին մերոյ սրբոյ ։
Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն, ի մէջ կուսանաց եւ գուսլաց ։
Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, եւ զՏէր յաղբերանն Իսրայելի ։
Անդ Բենիամին՝ ի տղայութեան զարմանալի, իշխանք Յուդայ տաւարնորդք նորա՝ իշխանք Զաբուղոնի եւ իշխանք Նեփթաղիմայ ։
Հրամայեա, Աստուած, զօրութեամբ քով, զօրացո զայս, զոր հաստատեցեր ի մեզ ։
Ի տաճարէ քումմէ յերուսաղէմ քեզ մատուսցեն թագաւորք ընծաստրակս ։
Սաստեա ի գազան եղեգան, ի ժողովս ազգաստակաց եւ ի դաստ երինջոց ։
Խոտեսցին այնպիսիք՝ որք ընտրեալ են ար-

ծաթով, ցրուեա զհեթանոսս եւ սք կամին ընդ պատերազմ ։
Եկեսցեն հրեշտակք յԵգիպտոսէ, Հնդիկք յառաջապահն ձեռնտու լինին առ Աստուած ։
Թագաւորութիւնք երկրի, օրհնեցէք զՏուած, եւ ողջմոս առացէք Տեառն ։
Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս ։
Ահա ասացէ ձայն իւր՝ ի ձայն զօրութեան, եւ տուք զփառս Աստուծոյ ։
Ի վերայ Իսրայելի մեծավայելչութիւն նորա, եւ զօրութիւն նորա մինչեւ յամպս երկնից ։
Սքանչելի է Աստուած ի վերայ սրբոց իւրոց, Աստուած Իսրայելի ։
Նա ասացէ զօրութիւն հաստատութիւն ժողովրդեան իւրոց. օրհնեալ է Աստուած ։
Տուն լը ։

ՍԱՂՄՈՍ ԿՀ ։

Ի կատարած. վասն զաւանցելոցն. սաղմոս ի Դաւիթ ։

Ակեայս զիս, Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ, ընկղայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ հինձ հանգիստ ։

Եկի ես ի խոս ծովու, եւ ջրնկը ընկ-
կղմեցին զիս։
Վաստակեցայ ես առ աղաղակել, և կեր-
կերեցաւ կոկորդ իմ։
Նուազեցան աչք իմ, առ յուսալ ինձ
առ տէր Աստուած իմ։
Բազումք եղեն քան զհեր գլխոյ իմոյ, որք
ատէին զիս ի սպրապարտուց։
Զօրացան յիս թշնամիք իմ և ատելիք իմ
ի նանիր, ինչ զոր ոչ յափշտակեալ էի
ոտաժէի նոցա։
Աստուած, դու ծանեար զանզգամու-
թիւն իմ, և յանցանք իմ ի քէն ոչ ծած-
կեցան։
Մի ամաչեսցեն վասն իմ՝ որք համբերեն
քեզ, Տէր, Տէր զորութեանց. մի պատ-
կառեսցին վասն իմ՝ որք խնդրեն զքեզ,
Աստուած Իսրայելի։
Վասն քո համբերի նախատանաց, և ծած-
կեաց ամօթ զերեսս իմ։
Օտար եղէ ես յեղբարց իմոց, եւ հիւր
որդւոց մօր իմոյ։
Նախանձ տան քո եկեր զիս, և նախա-
տինք նախատողաց քոց անկան ի վերայ իմ։
Խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և եղեն
ինձ այս նախատինք, արարի զհանդերձս

իմ քուրձ, և եղէ առակ նոցա։
Զինէն խորհէին՝ որք նստէին առ դրունս,
զիս այսն առնէին՝ որք լսնկէին գինի։
Ես յաղօթս կայի առ քեզ, Տէր, ի ժամա-
նակ ընդունելի։
Աստուած, ի բազում ողորմութեան
քում լուր ինձ, ի ճշմարտութենն փրկ-
կութեան քո։
Ապրեցո զիս ի կաւոյ՝ զի մի ընկղմեցայ, ապ-
րեցայց ես յատելեաց իմոց և ի խորոց
ջուրց բազմաց։
Մի ընկղմեն զիս պոռոյտք ջուրց, և մի ընկղմ-
ժեացեն զիս անդունդք խորոց. և ջրհոր մի
կափարեսցէ զբերան իւր ի վերայ իմ։
Լուր ինձ, Տէր, զի քաղցր է ողորմութիւն
քո, ըստ բազում դթութեան քոյ հայեա
յիս, եւ մի դարձուցաներ զերեսս քո ի
ծառայ քումմէ, զի նեղեալ եմ ես. վաղ
վաղակի լուր ինձ։
Հայեա յանձն իմ և փրկեա զիս, և վասն
թշնամեաց իմոց ապրեցո զիս։
Զի դու դիտես զնախատինս իմ, զամօթ
իմ և զպատկառանս իմ։
Առաջի քո են ամենայն նեղչքն անձին ի-
մոյ. նախատանաց համբեր սիրտ իմ եւ
թշուառութեան։

Ան՝ ուրախ՝ թէ որ տրամեցի ընդ իս, եւ
ոչ որք էր. եւ միխիթարիչ ինձ որ ոչ գտաւ:
Եւաւն՝ ի կերակուր ինձ լեղի, եւ՝ ի ծա-
րաւ իմ տրբուցին ինձ քացախ:
Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորո-
գայթ, ի հատուցումն եւ՝ ի գայթակ-
ղութիւն:
Խաւարեսցին աչք նոցա զի մի տեսցեն,
եւ զթիկունս նոցա հանապազ կորացո:
Արկցես՝ ի վերայ նոցա զբարկութիւն քո,
եւ սրտմտութիւն բարկութեան քոյ հասցէ
՝ի վերայ նոցա:
Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ, եւ
՝ի յարկս նոցա մի որ իցէ՝ որ բնակիցէ:
Զի զոր դուն հարեր՝ հալածեցին, եւ՝ ի
վէրս ցաւոց իմոց յաւելին:
Դիր զմեզս՝ ի վերայ մեղաց նոցա, զի մի
մտցեն յարդարութիւն քո:
Ջնջեսցին նոքա՝ ի գրութենէ քումմէ կե-
նաց, եւ ընդ արդարս քո մի գրեսցին:
Աղքատ եւ ցաւած եմ ես, փրկութիւն
քո, Աստուած, ընկալցի զիս:
Օրհնեցից զանուն Աստուծոյ իմոյ օրհնու-
թեամբ, եւ բարձր արարից զնա գովու-
թեամբ:
Հաճոյ եղիցի Աստուծոյ քան զարջի մա-

տաղ, որ բերէ պեղջևրս եւ կճղակս:
Տեսցեն աղքատք եւ ուրախ եղիցին, խնդա-
րեցէք զԱստուած եւ կեցցեն անձինք ձեր:
Զի լսաւ տէր տնանկաց, եւ զկապեալս
իւր ոչ արհամարհեաց:
Օրհնեսցեն զնա երկինք եւ երկիր, ծով եւ
ամենայն որ պեղտ՝ ի նոսա:
Աստուած փրկէ զՍիովն, եւ շինեսցին քա-
ղաքք Հրեաստանի. շինեսցեն բնակեսցեն
եւ ժառանգեսցեն՝ ի նմա:
Զաւակ ծառայից քոց հատուտեսցի անդ,
եւ որք սիրեն զանուն քո՝ բնակեսցեն՝ ի
նմա:

Տունք լ:

ՍԱՂՄՈՍ ԾԹ.

Ի կատարած. աղմոս՝ ի Դաւիթ, առ՝ ի յիշատակ
փրկելոյ զնա Տեառն:

Աստուած, յօգնել ինձ նայեաց, եւ տէր,
յընկերել ինձ փութա:
Ամաչեսցին եւ յանձի լեսցին որք խնդրէին
զանձն իմ, դարձցին յետս եւ ամաչեսցին
որք խորհէին ինձ չար:
Դարձցին առ ժամայն ամաչեցեալք՝ որք
ասէին ինձ վաշ վաշ:

Յնճատցեն և ուբախ լիցին ի քեզ ամենեքեան զբ կողմանս երկրի։
Աստուած յամենայն ժամ՝ մեծ է Աստուած, և զբ սիրեն զփրկութիւնս քո։
Ես աղքատ և տնանկ եմ, Աստուած, օգնեա ինձ. օգնական և փրկիչ իմ ես եւ դու, Տէր իմ, մի յամենաւր։

Տունք ը։ Գորգաց խգ։

ՍԱՂՄՈՍ Հ.

Ի կատարած. որդւոյն Յովնադաբայ. յետ առաջնոյ գերութեանն. սաղմոս ի Դաւիթ։

Ի քեզ, Տէր, յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան. յորդորութեան քում փրկեա և ապրեցո զիս։
Խոնարհեցո առ իս զականջն քո, և կեցո զիս։
Լեր իմ, Աստուած, ապաւէն և տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես։
Աստուած իմ, փրկեա զիս ի ձեռաց մեղաւորի, ի ձեռաց անօրինի և անիրաւի։
Դու ես համբերութիւն իմ, Տէր, Տէր, յոյս իմ ի մանկութենէ իմմէ։

Ի քեզ հաստատեցայ ես յորդանէ, ի բովանդակ մոր իմոյ դու ես ապաւէն իմ, և առ ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ։
Որպէս զի նշաւակ եղէ ես բազմաց, եւ դու օգնական իմ և հզօրիչ իմ։
Լցցի բերան իմ գովութեամբ, որպէս օրհնեցից զփառս քո, զօրհանապազ զմեծ վայելչութիւնս քո։
Մի ընկենուր զիս, Տէր, ի ժամանակս ծերութեան, ի պակասիլ զօրութեան իմոյ մի թողուր զիս։
Ասացին թշնամիք իմ ինձ, և որք պաշարեցին զանձն իմ, խորհեցան ի միասին և ասացին.
Աստուած եթող զնա՝ հալածեցարուք եւ հասցուք նմա, զի ոչ ոք է որ փրկէ զնա։
Աստուած իմ, մի հեռի առնիր յինէն, և Աստուած, յօգնել ինձ նայեաց։
Ամաչեսցեն և պակասեսցին սք չարախօսք կային զանձինք իմոյ, զգեցցին զամօթ և զպատկառանս սք խնդրելոյն ինձ չար։
Ես յամենայն ժամ յուսացայց, և յաւելից յօրհնութիւնս քո։
Բերան իմ պատմեսցէ զարդարութիւնս քո, զօրհանապազ զգովութիւնս քո։

Որպէս ոչ թէ խարդախութիւն ինչ դիտէի ես գալստեան, այլ մտից ի զօրութիւնս տեառն. և տէր, յիշեցի զարդարութիւնս քո միայն:

Աստուած իմ, ուսուցեր զիս ի մանկութենէ իմմէ, և ցարդ ևս պատմեցից զարդարութիւնս քո:

Մինչեւ. յարեւսրիլ և ի ծերանալ, Աստուած իմ, մի լքեսցես զիս:

Մինչեւ պատմեցի բազուկ քո ազգի ազգեանցի որ գալոյն է:

Զգօրութիւնս քո և զարդարութիւնս քո մինչեւ ի բարձունս, որ արարեր մեծամեծս. Աստուած, ո՞ նման է քեզ:

Որչափ ցուցեր ինձ նեղութիւն բազում եւ չարչարանս, դարձեալ մխիթարեցեր զիս, և ի խորոց անդնդոց երկրէ հաներ զիս:

Յաճախեցեր զգօրութիւնս քո, դարձեր եւ մխիթարեցեր զիս, և ի խորոց երկրէ միւսանգամ հաներ զիս:

Արդ և ես խոստովան եղէց քեզ ի պատրաստութիւն սաղմոսաց, ճշմարիտդ Աստուած. սաղմոս ասացից քեզ օրհնութեամբ, սուրբդ Իսրայելի:

Ցնծասցեն շրթունք իմ՝ յորժամ սաղմոս

ասիցեմ քեզ, և անձն իմ զոր փրկեցեր:

Եւս և լեզու իմ զօրհնապազ խօսեսցի զարդարութիւնս քո:

Ի ժամանակի՝ որպէս յամօթ լինին և ամաչեսցեն որք խնդրէին ինձ չար:

Տունք իդ:

ՍԱՂՄՈՍ ՀԱ.

Ի Սողոմոն սաղմոս:

Աստուած, զիրաւունս քո արքային տուր, և զարդարութիւնս քո որդւոյ Թագաւորի:

Դատել զժողովուրդս քո արդարութեամբ, և զաղքատս քո իրաւամբք:

Առցեն լերինք զխաղաղութիւն ժողովրդեան, և բլուրք զարդարութիւն:

Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեան, և կեցուսցէ զորդիս անապակս, և խոնարհեցուսցէ զամբարտաւանս:

Կայցէ և մնասցէ լնդ արեւս, յառաջ քան զլուսին ազգէ ազգի:

Իջցէ որպէս զանձրեւ ի վերայ գեղման, որպէս յօղ որ ի յերկիր:

Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն՝ բազում խաղաղութիւն, մինչեւ կատարեսցի լուսին:

Տիրեցէ նա ի ծովէ մինչեւ ի ծով, ի գետոյ մինչեւ ի ծագս աշխարհի:
Աւազք նորա նախ հնդիկք անկանին, եւ թշնամիք նորա հող կլիցեն:
Թագաւորք Թարսիս և կղզեաց պատարաւք մատուցանեն նմա. Թագաւորք Արաբայ և Սաբայ պատարագս բերցեն նմա:
Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա:
Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի, զաղքատն եւ զտնանկն, որոյ ոչ է իւր օգնական:
Անխնայեսցէ նա յաղքատն և ի տնանկն, և զանձինս տնանկաց կեցուսցէ, ի վաշխոյ չարաց փրկեսցէ զանձինս նոցա:
Պատուական է անուն նորա առաջի նոցա, կեցցէ և տացի նմա յոսկւոյն Արաբացւոց:
Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ, և զօրհնասցեն զնա:
Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր, և ի վերայ գլխոց լերանց:
Բարձրասցի քան զԼիբանան պտուղ նորա, եւ ծաղկեսցի ի քաղաքի Տեառն որպէս խոտ երկրի:
Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան,

զի յառաջ քան զարեւ է անուն նորա:
Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, և ամենայն ազինք երանիցեն նմա:
Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի որ առնէ սքանչելիս միայն, և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր. եղիցի եղիցի:
Տունք ի: Գոբզայս խզ:
Կանոնս Գոբզայս է: Սաղմս ժէ: Տունք մձ:

ԱՒՕԹՔ ԱՆՆԱՑԻ ՄՕՐՆ ՍԱՄՈՒԵԼԻ

ա. Թագ. բ:

Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր, և բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած փրկիչ իմ:
Ընդարձակեցաւ բերան իմ ի վերայ թշնամեաց իմոց. ուրախ եղէց ի փրկութեան քումմ:
Զի ոչ գոյ սուրբ որպէս դու, և ոչ արդար որպէս զԱստուած մեր, և չիք սուրբ բայ յԱստուածոյ մերմէ:
Մի պարծիք և մի խօսիք զամբարտաւանս, եւ մի ելցէ ընդ բերանս ձեր բան հպարտ մեծաբանութեան:
Աստուած գիտութեանց՝ տէր Աստուած

պատրաստակ իւրով իմաստութեամբ զգեխ-
ուքիւն յարարածս իւր :
Հզօրսդ հաստ ազեղութիւնք Թուլացան , եւ
ակռքք վարեցան զօրութեամբ :
Յագք եւ լիք հացիւ՝ նուաղեցին . և քաղ-
ցեալք լցան զերկիր :
Ամուլն ծնաւ եօթն , և բազմածնին նուա-
զեաց ի ծննդոց :
Տէր մեռուցանէ և տէր կենդանացանէ . ի-
ջուցանէ ի դժոխս՝ և հանէ :
Տէր աղքատացուցանէ՝ և տէր մեծացու-
ցանէ . խոնարհ առնէ զամբարտաւանս
մինչեւ յերկիր , և բարձր առնէ զտառա-
պեալս յաղբեւոց :
Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշխանս
ժողովրդեան . և աթոռ փառաց ժառան-
գեցուցանէ նոցա :
Կատարէ զբախտս ուխտաւորաց . և օրհ-
նեաց զամս արդարոց :
Զի ոչ թէ իւրով զօրութեամբ զօրանայ
հզօր. այլ տէր ակար առնէ զհակառակորդս
իւր . տէր սուրբ է :
Մի պարծեսցի խորհրդականն ի խորհուր-
դըս իւր . և մի պարծեսցի հզօրն ի զօրու-
թեան իւրում . և մի պարծեսցի մեծն ի
մեծութեան իւրում :

Ա՛լ ու պարծին ի տէր պարծեսցի . ի
խորհուրդս գիտութեան զՏէր ճանաչել :
Առնել վրէժխնդիր , և գործել զարդարու-
թիւն ի վերայ երեսաց երկրի :
Տէր եղ յերկինս և որոտայ , և ինքն դա-
տի առանց բարբառելոյ :
Տայ զօրութիւն թագաւորաց մերոց . եւ
բարձր առնէ զեղջիւր օծելոյ իւրոյ :
Փառք Հօր և Որդւոյ և .

✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦✦

ՄԱՂԹԱՆՔ

Բարձրացոյ եղջիւր իմ յԱստուած փրկու-
կիչ իմ. հաստատեցայ սիրտ իմ ի Տէր
սերամբ և հաւատով :
Մարդասէր , Տէր , վասն սրբոյ անուա-
նի մերոյ քոյ և կաւսի , և վասն Խաչի քոյ
պատուականի , ընկալ զաղաչանս մեր , և
կեցո զմեզ :

Քարոզ Աղօթից՝ Ողորմեա և ի նեղութեան խնդրոյն :

Վասն գոհանալոյ մեզ զնորհս և զողոր-
մութիւն ի բարերար Տեառնէ մերմէ . լկ-
Տէր աղաչեսցուք :
Տէր ողորմեա :

վան փրկելոյ զմեզ ի զզպարտութենէ մարդկան եւ յորդայթից սատանայի, զՏէր աղա.

Վան ամենայն անձանց քրիստոնէից եւ ամենց հաւատացելոց, զՏէր աղա.

Վան որք ի լերինս յայրս և ի փոսերս բնակեալ են սուրբ հարքն մեր, զՏէր աղա.

Վան որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց, զՏէր աղա.

Վան հոգւոյն հանգուցելոյ՝ որք ձշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս նընջեցին, զՏէր աղա.

Եւ եւս միաբան վան ձշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղա.

Ղանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Ողորմեայ մեզ, տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քումմ. աղաչեմք ա. մենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Աղեխ։

Պահանամբ զքէն, Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ ի հանգստենէ քնոյ

ենարհիւ ողորմութեան քո։ Զարթո զմիտս մեր արդարութեամբ առ քեզ, տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո։ Եկեսցէ և բնակեսցէ առ մեզ ստուգութիւն քո, և ողորմութիւն քո հալանի և պահապան լեցի ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ զծառայս քո արժանի արա ի տուէ և ի գիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ ի սէր պատուիրանաց քոց։ Եւ գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիր պագեսցուք։


Կենդանարար զօրութիւն և աղբիւր անմահութեան, դու ես, Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ ենարհեցեր մեզ ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինիլ առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քո։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, տէր Աստուած մեր, արա զմեզ արժանս և պատրաստս ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Մաղթանք։

Գոհութեամբ եւ ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն։ Հայր մեր որ յերկինս.





Դրակցին ցձեռս իմ եւ ցոտս իմ, եւ Յուե-
ցին ցամենայն ոսկերս իմ. նոքա հայեցան
եւ տեսին ցիս : սաղ. իբ. 16 :

ՍԱՂՄՈՍ ՀԲ.

Սաղմոս Դաւթի. օրհնութեան :

Ի ԲՐԵՒ զի բարի է Իսրայելի Աստուած,
և այք ուղիղ են սրտիւք :
Բայց զի իմ՝ փոքր մի եւս սասանեալ էին
ոտք, սակաւիկ մի եւ դայթակղեալ էին
գնացք իմ :
Նախանձեցայ ես ընդ անօրէնս՝ զխաղա-
ղութիւն մեղաւորաց տեսանէի, զի
ոչ կայր վախճան մահու նոցա :
Հաստատուն են տանջանք նոցա, ՚ի վաս-
տակս մարդկան չեն նոքա, և ըստ մարդ-
կան ոչ տանջեսցին :
Վասն այսորիկ կալաւ զնոսա ամբարտա-
ւանութիւն, արկին զխրատամբք զամբա-
րըշտութիւն և զանիրաւութիւն իւրեանց :

Եթէ որպէս ի ճարպոյ անիրաւութիւնք նոցա, ըմ գինոյին նոքա լսեսո խորհրդոյ սրտից իւրեանց։

Խորհեցան և խօսեցան չարութեամբ, և զսպիրատութիւն ի բարձունս խորհեցան։ Եդին յերկինս զբերանս իւրեանց, և ըզ լեզուս իւրեանց ածէին ի վերկրաս։

Վասն այսորիկ ժողովուրդ իմ դարձցի այս րէն, և աւուրք իմ լի կատարեալ գտցին ի նոսա։

Ասացին՝ միայրդ գիտայ Աստուած, կամ գուցէ արդեօք գիտութիւն առ ի Բարձ բելոյն։

Ահա մեղաւորք են և յաջողեալ է նոցա, կան և ունին զմեծութիւն աշխարհի։

Ասացի. ի զուր ուրեմն արդարացուցի զսիրտ իմ. լուացից արդութեամբ զձեռս իմ, և եղէ ես խաչանկեալ զօրհանապազ. և կշտամբանք իմ ընդ առաւօտս։

Թէպէտ և ասէի, Թէ այսպէս պատմեցից, ահաւասիկ յազգ որդւոց քոց՝ որոց եւ ոչխատեցի։

Ի մտի եդի՝ Թէ սակայն և այս ջանէ ա ռաջի իմ, մինչեւ մտից ի սրբութիւնն Աստուծոյ եւ ի միտս առից զկատարած նոցա։

Սակայն վասն նենգութեան նոցա տարա դիր արասցես զնոսա, և կործանեսցես ըզ նոսա յամբարտաւանութեան իւրեանց։

Իսկ զնաւրդ եղեն յաւեր յանկարծակի. սա սակեցան պակասեցան կորեան վասն ա նօրէնութեան իւրեանց, և եղեն որպէս երազք զարթուցելոյ։

Տէր, ի քաղաքի քումմ զպատկերս նոցա անարգեսցես. զի հուր բորբոքեցաւ ի սրտի իմում, և երիկամունք իմ պղտուցեան։

Ես արհամարհեալ եղէ և ոչ գիտացի, որպէս զանասուն համարեցայ առաջի քո, և ես յամենայն ժամ ընդ քեզ եմ։

Կալար զաջոյ ձեռանէ իմմէ, ի խորհուրդս քո առաջնորդեցեր զիս, եւ վասն փառաց ընկալար զիս։

Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ ի քէն զի՞նչ եւս խնդրեցից յերկրի։

Նուաղեցաւ սիրտ իմ և մարմին իմ. Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան։

Ահաւասիկ որք հեռի սրարին զանձինս իւրեանց՝ կորիցեն, սատակեսցես զամենեսեան՝ որք պատառեմբ եղեն ի քէն։

Ինձ մերձենալ առ Աստուած բարի է, և

դնել առ Տէր զայծ իմ։
Պատմել զամենայն օրհնութիւնս քո՝ ի
դրունս դստերն Սիովնի։
Տունք կդ։

ՍԱՂՄՈՍ ՀԳ.

Ի մեռանելն Աբեսաղմ։

Ընդէր մերժեցեր, Աստուած, ի տարտ.
բարկացաւ սրտմտութիւն քո ի վերայ
հաստին արօտի քո։
Յիշեա ժողովրդդ քո զոր ստացար ի
սկզբանէ, փրկեցեր գվիճակ ժառանգու-
թեան քո։
Լեառն Սիովն այն՝ ուր բնակեցար դու ի
սմա, համբարձ զձեռն քո ի վերայ ամ-
բարտաւանութեան նոցա ի տարտ։
Որ ինչ անիրաւեցաւ թշնամին ի սրբու-
թեան քումմ, պարծեցան ատելիք քո ի
մէջ բարեկենդանութեան խրեանց։
Եդին զնշանս խրեանց ի նշանս, և ինք
քեանք ոչ ծանեան զնա ի վերուստ։
Որպէս յանտառի փայտատոք կատարեցին
զդրունս նորա, ի միասին փայտատոք և
մշակք կործանեցին զնա։
Արկին ի հուր զսրբութիւն քո, յերկրի

պղծեցին զխորան անուան քո։
Ասացին ի սիրտս իւրեանց ապիք նոցա ի
միասին. տակաւ լուծցուսցուք զամենայն
տօնս Աստուծոյ յերկրի։
Նշանս մեք ինչ ոչ տեսաք, և ոչ եւս
դուցէ մարգարէ. և զմեզ ինչ ոք ոչ ճա-
նաչէ։
Մինչեւ յե՞րբ, Աստուած, նախատէ թըշ-
նամին, բարկացուցանէ հակառակորդն
զանուն քո սուրբ։
Ընդէր դարձուցանես զձեռն քո, և զաջ
քո ի միջի ծոցոյ քումմէ ի տարտ։
Աստուած, թագաւոր մեր յառաջ քան
զյաւիտեանս, որ արարեր զփրկութիւն
ի մէջ երկրի։
Դու հաստատեցեր զօրութեամբ քով ըզ-
ծով, դու խորտակեցեր զգլուխս վիշապաց
ի վերայ ջուրց։
Դու փշրեցեր զգլուխ վիշապին, և եւսս
զնա կերակուր զօրացն Հնդկաց։
Դու բղխեցուցեր զաղբիւրս և զվտակս,
դու ցամաքեցուցեր զգետս սատափս։
Քո է ամն և քո է գիշեր, զոյս և զարեւ
դու հաստատեցեր, և դու հաստատեցեր
զամենայն սահմանս երկրի, զգարուն եւ
զամառն դու ստեղծեր։

Ա՛յս յու՛շ լեսի քե՛զ՝ զի Թշնամին նախա-
տեաց զՏէրդ, ժողովուրդ անդադար բար-
կացոյց զանուն սուրբ քո։
Մի՛ մատներ գազանաց զանձն՝ որ խոստո-
վան առնի առ քեզ, և զանձինս տնանկաց
քոց մի՛ մոռանար ի տարո։
Հայեա յուխտ քո՝ զի լցան տունք ապիճ-
լոց յերկրի անիրաւութեամբ։
Մի՛ դարձցի տնանկն ամաչեցեալ, այլ աղ-
քատն և տնանկ օրհնեսցեն զանուն սուրբ
քո։
Արի, Աստուած, և դատեա զդատաստա-
նըս քո. յիշեա զնախատինս՝ որ յանդա-
դին զօրհանատագ։
Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից քոց. ամ
բարձրանութիւն ատելեաց քոց վերա-
ցի հանապազ։

Տունք իբ։ Գոբզայս խզ։

ԱՂՄՈՍ ՀԴ։

Ի կատարած. մի՛ ապականիր. ընդ օրհնութիւնս։
Սաղմոս Ասաֆ. երգ առ Ասորեստանեայս։

Խոստովան եղիցուք առ քեզ, Աստուած,
խոստովան եղիցուք և կարդասցուք զա-
նուն սուրբ քո։

Պատմեցից զամենայն սքանչելիս քո. յոր-
ժամ ժամ առից՝ ես ուղիղ դատեցայց։
Մաշեցաւ երկիր և ամենայն բնակիչք նո-
ա, ես հաստատեցի զսիւնս նորա։
Ասացի անօրինաց՝ մի՛ գործէք անօրինիք. և
մեղաւորաց՝ մի՛ բարձրացուցանէք
զեղջիւրս ձեր։
Մի՛ համբառնայք ի բարձունս զեղջիւրս
ձեր, և մի՛ խօսիք զԱստուծոյ անիրաւու-
թիւն։
Զի ոչ յարեւելից և ոչ յարեւմտից և ոչ
յանապատէ լերանց, այլ Աստուած դա-
տաւոր է։
Զայս խոնարհ առնէ, և զայն բարձրա-
ցուցանէ. բաժակ ի ձեռին Տեառն՝ գի-
նի լի անառակ արկեալ. և խոնարհեցու-
ցանէ յայսմանէ յայս։
Սակայն մրուր նորա ոչ սպառեսցի, եւ
արբցեն զնա ամենայն մեղաւորք երկրի։
Ես ցնծացայց յաւիտեան, սաղմոս ասա-
ցից Աստուծոյ Յակովբայ։
Զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեսցես,
և բարձր եղիցի եղջիւր արդարոյ։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՀԸ·

Ի կատարած · ընդ օրհնութիւնս · մի ապականել ։
Սաղմոս յԱսաֆ · երգ առ Ասորեստանեայս ։

Յայտնի է ՚ի Հրէաստանի Աստուած , եւ
յԻսրայէլ մեծ է անուն նորա ։
Եղեւ խաղաղութիւն տեղի նորա , և բը-
նակութիւն նորա Սիովն ։
Անդ խորտակեաց զէր զղօրութիւն աղե-
ղանն , զվէնն՝ զսուր և զճակատամարտս ։
Լուսաւոր ես դու զքանչելագոյն լերանցն
յաւիտենից . խառնեցան ամենեքեան որ
անմիտ են սրտիւք . ննջեցին զքունս իւ-
րեանց և ինչ ոչ գտին ։
Ամենայն արք ՚ի մեծութեան ձեռաց իւ-
րեանց , ՚ի ատամս քումմէ , Աստուած Յա-
կոբայ , ննջեցին , և սյք հեծեալ էին ՚ի
ձիս ։
Դու ահաւոր ես , և ո՞վ կարէ կալ առաջ
քո . որպէս երեւեցար դու յերկնից ,
յայտնի եղեւ բարկութիւն քո ։
Երկիր երկեաւ և սարսեաց ընդ յառնելն
Աստուծոյ ՚ի դատաստան , ընդ ապրեցու-
ցանել զամենայն հեզս երկրի ։
Խոհրդ մարդկան խոստովան առնիցեն
առ քեզ , և ծածկեալք խնդասութեամբ
օրհնեսցեն զքեզ ։

Ուխտս ա՛ք և կատարեցէք առաւն Աս-
տուծոյ մերոյ , ամենեքեան որ շուրջ էք
զնովաւ ։
Մատուսցէք պատարագս ահաւորին . ո՛
քաղէ զհոգիս իշխանաց , ահաւոր է նա
քան զամենայն թագաւորս երկրի ։
Տունք ժ ։

ՍԱՂՄՈՍ ՀԹ·

Ի կատարած · վասն Իդիթամեայ · սաղմոս յԱսաֆ ։

Ձայնիւ իմով եւ առ Տէր կարդացի , ձայ-
նիւ իմով առ Աստուած , եւ նայեցաւ
առ իս ։
Յաւուր նեղութեան իմոյ զԱստուած
խնդրեցի ձեռօք իմովք , և ՚ի գիշերի ա-
ռաջի նորա ոչ խաբեցայ ։
Ոչ կամեր մխիթարել անձն իմ , յիշեցի
զԱստուած՝ և ուրախ եղէ . հոգայի՝ եւ
նուաղեր յիս հոգի իմ ։
Ժամանեցին պահուց աչք իմ , խռովեցայ
և ոչ խօսեցայ . խորհեցայ զաւուրսն զա-
ռաջինս , և զամս յաւիտենից յիշեցի ։
Խօսեցայ ՚ի գիշերի ընդ սրտի իմում , հո-
գայի և տառապեր յիս հոգի իմ ։
Միթէ յաւիտենից մերժեսցէ վա՞ս Տէր , և
ո՞չ եւս յաւելցու ՚ի հաճել և եւս ։

Կամ ի սպառ արդելջ զողորմութիւն իւր յինէն, կամ կատարեաց զքան իւր ազգէ մինչեւ յապ։

Կամ մնասցի զթալ Աստուած իմ եւ եւս, կամ արդելջ զողորմութիւն իւր բարկութեամբ իւրով։

Ասացի՝ Թէ այժմ սկսայ, այս է նորոգումն աջոյ Բարձրելոյն։

Յիշեցի զգործս Տեառն ի սկզբանէ, յիշեցի զքանչելիս նորա։

Խորհեցայ յամենայն գործս քո, և ի ձեռնագործս քո խորհեցայ։

Աստուած՝ ի սրբութեան են ճանապարհք քո. ո՞վ է Աստուած մեծ՝ որպէս զԱստուած մեր. դու ես Աստուած՝ որ առնես սքանչելիս։

Ցուցեր ժողովրդեան քում զզօրութիւն քո. փրկեցեր բազկաւ քով զժողովուրդս քո, զորդիսն Յակովբայ և Յովսեփայ։

Տեսին զքեզ ջուրք, Աստուած, տեսին զքեզ ջուրք և երկեան, և խորք խռովեցան ի ձայնէ ջուրց բազմաց։

Զայն ետուն ամպք, քանզի և նետք քո գնան ի ձայնէ որոտալոյ քո անտի։

Երեւեցան փայլատակունք քո տիեզերաց, խռովեցաւ և դողաց երկիր։

Ի ծովս են ճանապարհք քո, և շաւիղք քո ի ջուրս բազումս, և հետք քո ոչ եւս երեւին։

Առաջնորդեցեր որպէս խաշին ժողովրդեան քո, ի ձեռն Մովսիսի և Ահարոնի։

Տունք ժը։ Գորշայս լը։

ՍԱՂՄՈՍ ՀԱ։

Խնամատութիւն Յաւտի։

Ականջ արարուք, ժողովուրդք, յօրէնս իմ, խոնարհեցուցէք զունկն ձեր ի բանս բերանոյ իմոյ։

Բացից առակս զբերան իմ, և խօսեցայց զառակս ի սկզբանէ։

Որպէս լուաք և ծանեաք զայս, և հարքն մեր պատմեցին մեզ։

Ոչ ինչ ծածկեցաւ յորդւոց սոցա յապագայսն, պատմել զգոհունութիւնս Տեառն՝ զզօրութիւն և զքանչելիս իւր զոր արար։

Հաստատեաց վկայութիւն իւր առ Յակովբ, և օրէնս եդ ի վերայ Իսրայէլի։

Որ ինչ միանգամ պատուիրեաց հարցն մերոց՝ ցուցանել զայս որդւոցն իւրեանց, զի ծանիցեն յապագայսն։

Որդիք որ ծնանին՝ յարկեին և պատուեցին զայս որդւոյ իւրեանց. զի դիցեն առ Աստուած զայս իւրեանց, և մի մոռասցին զգործս Աստուծոյ։

Զպատուիրանս նորա խնդրեսցեն, և մի գայցին որպէս և հարքն իւրեանց։

Ազգ ևար և դառնացեալ, ազգ որ ոչ ուղղ զեաց զսիրտ իւր, և ոչ հաստատեաց առ Աստուած զհոգի իւր։

Որդիք Եփրեմի լուծիցք եւ պնդաճիգք, յաւուր պատերազմի կապարձան դարձուցին։

Ոչ կացին ընդ սուրբ Տեառն, և ըստ իրաւանց նորա ոչ կամեցան գնալ։

Մոռացան զերախտիս նորա, և զքանզեղիան՝ զոր երեոյց նոցա։

Առաջի հարց նոցա զոր արար զքանզեղիս իւր, յերկրին Եգիպտացւոց և ի դաշտին Տոյանու։

Հերձ զծովն և անցոյց զնոսա, եւ կացոյց զջուրսն որպէս ի սիկս։

Առաջնորդեաց նոցա ամպով ի տուէ, և զամենայն գիշեր ի լոյս հրոյ։

Հերձ զվէմն յանապատի, եւ ետ ըմպել նոցա որպէս ի խորոց մեծէ։

Հան զջուրսն ի վիմէն, և հոսեաց որպէս

զգետս զջուրսն։

Սակայն յաւելին ի մեղանչել, և ևս բարկացուցին զբարձրեալն յանապատի։

Փորձեցին զԱստուած ի սիրտս իւրեանց, ի հնդրել զկերակուր անձանց իւրեանց։

Տրտնջեցին զԱստուծոյ և ասացին. միթէ կարող իցէ Աստուած պատրաստել սեղան յանապատի։

Քանզի հարկանէր զվէմն՝ և հոսէին ջուրք, և վտակք հեղուլին ի նմանէ։

Այլ՝ հաց ևս կարասցէ տալ նա մեզ, կամ պատրաստեսցէ սեղան ժողովրդեան իւրոյ։

Վասն այսորիկ լուաւ զայս Տէր և յարոյց զեաց. հուր բորբոքեցաւ ի Յակովբ, և բարկութիւն ել ի վերայ Իսրայէլի։

Զի ոչ հաւատացին յԱստուած, և ոչ յուսացան ի փրկութիւն նորա։

Հրամայեաց ամպոց ի վերուստ, և դրունս երկնից եբաց, և տեղեաց ի նոսա մանանայ ի կերակուր։

Զհաց երկնից ետ նոցա, զհաց հրեշտակաց կերան մարդիկ. և ի յոյժ ի նոսա կերակուր ի լիութիւն։

Հան զհողմն հարաւոյ, և ած զզօրութեամբ իւրով զհիւսիսոյ։

Տեղեաց ի նոսա միս որպէս զհող, որպէս

զաւազ ծովու զթուաչեանն Թեւաւորս։
Արկ ի մէջ բանակի նոցա, և շուրջ զբանակօքն նոցա։
Կերան և յագեցան յոյժ, զգանկութիւն նոցա ետ նոցա, և ոչինչ կարօտ եղեն ի ցանկութենէ իւրեանց։
Մինչդեռ կերակուրք ի բերանս իւրեանց էին, բարկութիւն Աստուծոյ ել ի վերայ նոցա։
Սպան զպատուական ի նոցանէ, եւ զընտիր ընտիրս Իսրայելի սատակեաց։
Յայսմ ամենայնի մեղան և եւս, և ոչ հաւատացին սքանչելեացդ նորա։
Պակասեցան յումնայնութենէն աւուրք նոցա, և սուբ նոցա փութապէս անցին։
Յորժամ սպանանէր զնոսա՝ խնդրէին զնա, դառնային և առաւօտ առնէին առ Աստուած։
Յիշեցին՝ զի Աստուած օգնական էր նոցա, Աստուած բարձրեալ փրկիչ էր նոցա։
Սիրեցին զնա բերանօք իւրեանց, և լեզուօք իւրեանց սուտչին նմա. և սիրտք նոցա ոչ էին ուղիղք ընդ նմա, և ոչ հաւատացին ուխտի նորա։
Ա՛յլ նա ինքն գթած էր, քաւէր զմեզս նոցա՝ և ոչ սպրանգանէր։

Յաճախէր դարձուցանել զբարկութիւնն իւր, և ոչ բորբոքէր զամենայն սրտմտութիւն իւր։
Յիշեաց՝ թէ մարմին են նոքա. հոգի որ երթանէ՝ և ոչ եւս դառնայ։
Քանիցս անգամ դառնացուցին զնա յանապատի, եւ բարկացուցին զնարձրեալն յանդորդի։
Դարձան և փորձեցին զԱստուած, և զսուրբն Իսրայելի զպրոացուցին։
Ոչ յիշեցին զձեռն նորա յաւուր յորում փրկեաց զնոսա ի ձեռաց դիղջաց նոցա։
Որպէս արար զնշանս և զպարուհասս իւր յերկրին Եգիպտացւոց և ի դաշտին Տանեայ։
Դարձոյց յարիւն զգետս նոցա, և զանձրեւս նոցա՝ զի մի արբցեն։
Առաքեաց ի նոսա շանաճանճ եւ եկեր զնոսա, և գորտիս ապականեաց զնոսա։
Եւ ժանկայ զպտուղս նոցա, և զվաստակս նոցա մարախոյ։
Եհար կարկտիւ զայգիս նոցա, և զթզենիս նոցա եղեմամբ։
Մատնեաց ի կարկտաւ զանասունս նոցա, և զստացուածս նոցա հրոյ դատեցաւ։
Առաքեաց ի նոսա զսրտմտութիւն՝ զբար-

կութեան իւրոյ, ըստ մտութիւն՝ պաշտ-
կութիւն և ընդդութիւն:
Առաքեաց ի նոսա տանջանս ի ձեռն հր-
բեշտակի չարի, դիմեցոյց ի նոսա ըղձմ-
տութիւն բարկութեան իւրոյ:
Ոչ անխոցեաց ի մահս անձինս նո-
ցա, և զանասունս նոցա ի մահ մատնեաց:
Եհար զամենայն անդրանիկս Եգիպտացւոց,
զսկիզբն ամենայն վաստակոց նոցա ի չար-
կըս բամս:
Հորդան եւս որպէս խաշին ժողովրդեան ի-
րոյ, եւ եհան զնոսա որպէս զհօտս յանա-
պատ:
Առաջնորդեաց նոցա յուսով և ոչ երկեան,
և զթշնամիս նոցա ծով ծածկեաց:
Եհան զնոսա ի լեառն սրբութեան իւրոյ,
լեառն այն՝ զոր ստացաւ աջ քո:
Մերժեաց յերեսաց նոցա զհեթանոս, վի-
ճակեցոյց ի նոսա զվիճակ ժառանգութե-
իւրոյ, և բնակեցոյց ի չարս նոցա զաղ-
գըն Իսրայելի:
Փորձեցին զառնացուցին զԱստուած բար-
ձրեալ, և զվկայութիւն նորա ոչ պահեցին:
Դարձան խոտորեցան որպէս և հարքն ի-
րեանց, դարձան և եղեն որպէս զաղեղն
թիւր:

Գարձան բարկացուցին զնա ի բագինս ի-
րեանց, և դրոշելովք իւրեանց նախանձ
արկին նմա:
Լուաւ Աստուած և արհամարհեաց զնոսա,
և անարգեաց յոյժ զԻսրայէլ:
Մերժեաց յիւրմէ զվրանն ի Սելով, խո-
րանն զոր բնակեցոյց ի մէջ մարդկան:
Մատնեաց ի գերութիւն զզօրութիւնս
նոցա, և զգեղս նոցա ի ձեռս թշնամեաց
նոցա:
Արգել ի սուր զժողովուրդ իւր, և զմա-
ռանգութիւն իւր անտես արար:
Զերիտասարդս նոցա եկեր հուր, և վան
կուսանաց նոցա ոչ ոք ոգացաւ:
Քահանայք նոցա անկան ի սուր, և զոյ-
րիս նոցա ոչ ոք էր որ լայր:
Զարթեաւ որպէս ի քնոյ Տէր, որպէս
հզօր ոմն Թափէ զգինի:
Եհար յետս զթշնամիս իւր, և նախատինս
յաւիտենից արար զնոսա:
Մերժեաց նա զվրանն Յովսեփու, և զաղ-
գըն Եփրեմի նա ոչ ընտրեաց:
Ա՛յլ ընտրեաց նա զազգն Յուդայ, զլեառն
Սիովն՝ զոր և սիրեաց:
Շինեաց որպէս միեղջերուի զսրբութիւն նո-
ցա, յերկրի հաստատեաց զնա յաւիտեան:

Ընտրեալ գործիքի ծառայ իւր և ընկալաւ զնա ի հօտէ խաշանց, ի վերջին ծը-
նելոցն ընկալաւ զնա։
Հովուեալ զձակովը ծառայ իւր, և գիտաց յէլ ժառանգութիւն իւր։
Արածէր զնոսա իմաստութեամբ սրտի իւրոյ, յանմեղութիւն ձեռաց իւրոց ա-
ռաջնորդէր նոցա։
Տունք հգ։

ՍԱՂՄՈՍ ՀԸ.

Սաղմս յԱսաֆ։

Աստուած, մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ
քո։
Արարին զերուսաղէմ որպէս հիւղս մրգապահոյ. արկին դիակունս ծառայից
քոց՝ կերակուր թռչնոց երկնից, և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի։
Հեղին զարիւն նոցա որպէս ջուր շուրջ զերուսաղէմ, և ոչ ոք էր որ թաղէր
զնոսա։
Եղեալ մեք նախատինք դրացեաց մերոց, ծաղր և այսն կատականայ այնոցիկ, որ
շուրջ էին զմեզ։

Մինչեւ յերբ, Տէր, բարկանաս դու ի լռութիւն, բորբոքեսցի որպէս հուր նախանձ
քո։
Հեղ զբարկութիւն քո ի վերայ ազգացն՝ որք զքեզ ոչ ճանաչեցին, ի վերայ թա-
գաւորացն՝ որք զանուն քո ոչ կարդացին, զի կերիցին զձակովը և զտեղի նորա աւե-
րեցին։
Մի յիշեր զմեղս մեր զառաջինս, վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմութիւն քո, Տէր, զի
աղքատացաք յոյժ։
Օգնեա մեզ, Աստուած փրկիչ մեր, վասն փառաց անուան քո։
Տէր, փրկեա զմեզ և քաւեա զմեղս մեր վասն անուան քոյ։
Մի երբէք ասասցեն ի հեթանոսս, թէ ուր է Աստուած նոցա։
Այլ յայտնի լինի ի վերայ հեթանոսաց առաջի աչաց մերոց, առ ի խնդրել
զվրէժ արեան ծառայից քոյ՝ որ և հեղաւ։
Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոյ. ըստ մեծութեան բազկի քո շահեա դու
ղորդիս սպանելոցդ։
Հատո դրացեաց մերոց եօթնապատիկ ի ծոց նոցա, նախատինս զոր նախատեցին
զքեզ, Տէր։

Մեք ժողովուրդք և խաչն սրբոյ քոյ խոս-
տովան եղիցուք առ քեզ յաւիտեան , ազ-
դե յազգ պատմեսցուք զօրհնութիւն քո :

Տունք ԺԳ :

ՍԱՂՄՈՍ ՀԵ ·

Ի կատարած · ի վերայ զառանցելոցն վերնոյ թիւնս · սաղմոս Ասափայ · ի վերայ Եթանեղայեցւոյն :

Ո՛ հովուեաց Իսրայելի՝ նայեաց , որ առաջ-
նորդես որպես խաչին Յովսեփու :
Որ նստիր ի քրովբէս՝ յայտնեա առաջի
Եփրեմի , Բենիամինի և Մանասէի :
Զօրթո զզօրութիւն քո , և եկ ի կեցու-
ցանել զմեզ :
Աստուած զօրութեանց , դարձո զմեզ , և ե-
րեւեցո զերեսս քո ի մեզ և կեցցուք :
Տէր Աստուած զօրութեանց , մինչեւ յերբ
բարկանաս յաղօթս ծառայից քոց :
Ջամբեցեր մեզ հաց արտասուաց , և ար-
բուցեր մեզ արտասուս չափով :
Առարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց ,
այսն կատականայ թշնամեաց մերոց :
Աստուած զօրութեանց , դարձո զմեզ , և ե-
րեւեցո զերեսս քո ի մեզ և կեցցուք :
Այգի յԵգիպտոսէ փոխեցեր , հաներ զա-

հեթանոսս և ընտրա անկեցեր , և առաջ-
նորդեցեր նմա :
Հաստատեցեր զարմատս նորա և եղից զեր-
կիր , ծածկեաց զլերինս հովանի նորա , և
բարուձակ նորա զմայրս Աստուծոյ :
Զգեաց զտերև իւր մինչեւ ի ծով , մինչեւ
ի գետս են շառաւիղք նորա :
Ընդէր քակեցեր զպանկ նորա , կթձեն զնա
անցաւորք ճանապարհի :
Ապականեաց զնա խոզ անտառի , և երկ-
վարի արածեցաւ ի նմա :
Աստուած զօրութեանց , դարձ հայեաց
յերկնից և տես , այց արա այգւոյս այսմիկ
և գարման տար սմա զոր տնկեաց աջ քո :
Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր
զնա ի քեզ , այրեցեալ ի հուր և սաե-
լեալ , ի սասան քոմմէ կորիցէ :
Եղիցի ձեռն քո ի վերայ առն , աջ քո ի
վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր ընդ
նա ի քեզ :
Ոչ եւս ի բացեայ եղիցուք մեք ի քէն ,
կեցուսցես զմեզ , և զանուն քո , Տէր ,
կարդասցուք :
Աստուած զօրութեանց , դարձո զմեզ ,
երեւեցո զերեսս քո ի մեզ և կեցցուք :

Տունք ԺԶ :

ՍԱՂՄՈՍ Զ.

Ի կատարած. վան Հնձանաց. ասմունս յԱսափ. հինգերորդ շաբաթուց։

Ցնծայեք առ Աստուած օգնականն մեր, ազաղակեցէք առ Աստուած Յակովբայ։
Առէք սաղմոս և տուք օրհնութիւն, սաղմոս ասացէք նմա՛ ի ձայն քաղցրութեան։
Փող հարէք՛ ի պլուխս ամսոյ, յաւուր նշանաւորի տաբեկանացդ մերոյ։
Հրաման է այս Իսրայելի, և իրաւունք են Աստուծոյ Յակովբայ։
Վկայութիւնն Յովսեփու՝ զոր եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ։
Ի բաց արա՛ ի բեռանց զթիկունս նորա, և զձեռս նորա յորթ և՛ ի թիւ ծառայելոյ։
Ի նեղութեան կարդացեր առ իս՝ և փրկեցի զքեզ, լսայ քեզ՝ ի գաղտնութենէ մրրկին, և փորձեցի զքեզ՝ ի վերայ ջուրցն հակառակս թեան։
Լուր, ժողովուրդ իմ, և վկայեմ քեզ, և Իսրայէ՛ թէ լսիցես ինձ։
Մի եւս եղիցին քեզ աստուածք առ մամբ, և մի երկիր պագանիցես դու աստուծոյ օտարի։

Ես եմ տէր Աստուած քո՝ որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց, բաց զբերան քո՝ և լցից զդա։
Ժողովուրդ իմ՝ ոչ լուաւ ձայնի իմում, և Իսրայէլ չիս ինչ ոչ նայեցաւ։
Բարձի Թողի զնոսա երթալ զհետ կամաց սրտից նոցա՛ զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց։
Զի թէ ժողովրդեան իմոյ լսեալ էր ինձ, կամ Իսրայէլի զճանապարհս իմ գնացեալ էր։
Որպէս զոչինչ իսոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նորա, և՛ ի վերայ նեղչաց նորա տրկեալ էր զձեռն իմ։
Թշնամիք տեառն առեցին նմա, եղիցին ժամանակք նոցա յաշխարհի։
Կերակրեաց զնոսա՛ ի պարարուտենէ ցորենոյ, ի վիմէ մեղր յագեցոյց նոցա։
Տուն Ժգ։

ՍԱՂՄՈՍ ԶԱ.

Սաղմոս յԱսափ։

Աստուած եկաց՝ ի ժողովս աստուածոց, և՛ ի միջի նոցա դատէր զնոսա։
Մինչեւ յերբ դատիք անիրաւութեամբ,

և ակն առնուք մեղաւորաց։
Գաւտ արարէք որբոյն և այրւոյ, իրաւունս
արարէք տնանկին և խոնարհի։
Ազատեցուցէք զաղքատն եւ զանանկ, ի
ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա։
Ոչ լմնցան և ոչ ի միտ առին, ի խաւա-
րի գնացին, եւ շարժեցան ամենայն հիմունք երկրի։
Ես ասացի՝ Թէ աստուածք էյք, կամ
որդիք Բարձրելոյն ամենեքեան։
Գուք աւադիկ որպէս մարդիկ մեռանիք,
և որպէս զմի իշխանացն անկանիք։
Արի, Աստուած, և դատեա զերկիր, զի
դու ժառանգեցուս զամենայն հեթանոսս։
Տունք ը։ Գոլոյս ծղ։

ՍԱՂՄՈՍ ՁԲ.

Օրհնութիւն. սաղմոս Ասափայ։

Աստուած, ո՞ քեզ նմանիցէ. մի լռեր և
մի դադարիր, Աստուած։
Զի ահա թշնամիք քո գոչեցին, և ատե-
լիք քո համբարձին զգլուխս իւրեանց։
Ի վերայ ժողովրդեան քո խորհրդակից եղին,

զգիտութիւն, խորհեցան ի վերայ որբոյ
քոյ և ատացին.
Եկայք սատակեսցուք զնոսա յազգայ, և
մի յիշեսցի անուն Իսրայելի և եւս։
Խորհեցան միաբանութեամբ ի միասին,
վասն քո ուխտ արարին։
Բանակք Եդոմացեացւոց և Իսմայելացիք,
Մոաբ և Հագարացիք։
Գեբաղ՝ Ամմէն՝ Ամաղէկ, եւ այլազգիքն
ամենայն բնակչքն Հանդերձ Ծուրայ։
Նաև Ասուր եկեալ էր ընդ նոսա. ամե-
նեքեան սաքա զօրավիղն էին որդւոցն
Ղովտայ։
Արա զնոսա որպէս Մադիամ, որպէս Սի-
սարա, որպէս Յաբին ի Ցուցմոյն Կիսոնի։
Սատակեցան նոքա յականս Դովրայ, և եղ-
ձն որպէս զաղբ երկրի։
Արա զնիշխանս նոցա որպէս զՈրեբն, զԶէբն,
զԶեբեհ և զՍաղմանա և զամենայն իշ-
խանս նոցա։
Ո՛յք ասացին՝ Ժառանգեսցուք ի մեղ զըս-
պրութիւն Աստուծոյ։
Աստուած իմ, արա զնոսա որպէս զանիւ,
որպէս զեղէգն առաջի հողմոյ։
Որպէս հուր՝ զի տայր զանտառս, որպէս
բոց՝ զի կիզաւ զլերինս։

Ա յտպէս հալածեսցես զնոսա մրրկաբ քովլ եւ բարկութեամբ քով խռովեցուսցես զնոսա ։

Լ[ի]ց զերեսս նոցա անարգանաք , և խընդրեսցեն զանուն քո , Տէր ։

Ամաչեսցեն և խռովեսցին յաւիտեանս յաւիտենից , և ամօթալից կորիցեն ։

Ճանիցեն զի անուն քո Տէր է , և դու միայն բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի։

Տունք ԺԸ։

ՍԱՂՄՈՍ ՁԹ ։

Ի կատարած . վասն հնձանաց . որդւոյն Կորխայ սաղմոս ։

Որպէս սիրելի են յարկք քո , Տէր զօրութեանց , յանկոյս և վաճաքէ անձն իմ ի գաւիթս քո ։

Սիրտ իմ եւ մարմին իմ ցնծացին առ Աստուած կենդանի ։

Քանզի ճնճղուկ եգիտ իբր տուն , և տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր ։

Սեղանս քո , Տէր զօրութեանց , Թագաւոր իմ և Աստուած իմ։

Երանի ամենեցուն՝ որ բնակեալ են ի տան Տեառն , յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ ։

Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն իւր ի քէն է . ելս եդ ի մտի իւրում ի հովտեսս արտմութեան ի տեղւոջ յորում ութ աեայ ։

Զօրհնութիւն ստասցի՝ որ զօրէնս դնէ , գնասցէ նա ի զօրութենէ ի զօրութիւն , եւ երեւեսցի Աստուած Հրեշտակաց ի Սիոնի ։

Տէր Աստուած զօրութեանց , լուր աղօթից իմոց , ունկն դիր , Աստուած Յակովբայ ։

Ընդունելի ես դու մեր , տես , Աստուած , և նայեաց յերեսս օծելոյ քոյ ։

Վասն զի լաւ է ինձ մի օր ի գաւիթս քոյ , քան զհազարս ։

Ընտրեցի ընդ աղբ գալ ի տան Աստուծոյ , աւաւել քան զբնականալ ի յարկս մեղաւորաց ։

Զողորմութիւն և զճշմարտութիւն սիրէ տէր Աստուած մեր , շնորհս և զփառս տացէ ։

Տէր ոչ պակաս առնէ զողորմութիւն իւր յայնոցանէ , որ գնան յանբծութեան ։

Տէր Աստուած զօրութեանց , երանեալ է այր՝ որ յուսայ ի քեզ ։

Տունք ԺԳ ։

ՍԱՂՄՈՍ ՁԴ.

Ի կատարած սրբոցն Կիպրիանոսի եպիսկոպոսի:

Հաձեցար, Տէր, ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւնն Յակովբայ:
Թողեր զանկրատութիւն ժողովրդեան քոյ, ծածկեցեր զամենայն մեղս նոցա:
Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, դարձար ի բարկութենէ սրտմտութեան քո:
Դարձ առ մեզ, Աստուած փրկիչ մեր, և դարձո զսրտմտութիւնս քո ի մէնջ:
Մի յաւիտեան բարկանար մեզ, Տէր, և մի՛ ձգեր զգարկութիւն քո ազգէ մինչև յազգ:
Աստուած, դու դարձեալ կեցուցանես զմեզ, ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ:
Ցոյց մեզ, Տէր, զողորմութիւնս քո, եւ զփրկութիւնս քո տուր մեզ:
Լսեաք ընձեռ խօսի ածր Աստուած մեր. խօսեսցի վասն ողորմութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ որք դարձեալ են առ նա սրտիւք:
Սակայն մերձ է առ երկնչեալս իւր փրկութիւն նորա, բնակել փառաց նորա յերկրի մերում:

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին:
Ճշմարտութիւն յերկրէ բուսցի, արդարութիւն յերկնից երեւեսցի:
Տէր տացէ զբարերարութիւն, և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ, դիցէ ի ճանապարհի զգնացս իւր:
Տաւնք ժբ: Գոլշայս խդ:

ՍԱՂՄՈՍ ՁԵ.

Սաղմոս ի Դաւիթ. Աղօթք երկոցի:

Լանարհեցո, Տէր, զանկն քո և լաւ լինձ, զի ազքատ և անանկ եմ ես:
Պահեա զանձն իմ սուրբ. Տէր, և փրկեա զծառայ քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացեալ:
Ողորմեա լինձ, Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ, ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ, Տէր, համբարձի զանձն իմ:
Զի դու, Տէր, քաղցր և ուղիղ ես, բազում ողորմ առ ամենեսեան՝ որ կարդան առ քեզ:

Ունկն դիր, Տէր, աղօթիկ իմոյ, և նայեա ի ձայն խնդրուածոյ իմոյ:

Յաւուր նեղութեան իմոյ կարդասի առ քեզ, և լուար ինձ:

Ոչ ա՛ր է նման քեզ յաստուածս, Տէր, և ոչ ա՛ր է որպէս գործս քո:

Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո, փառաւորեսցեն զանուն քո յաւիտեան:

Մեծ ես դու, Տէր, և առնես սքանչելիս, և դու միայն ես Աստուած:

Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում, և գնացից ի ճշմարտութեան քում, եւ ուրախ եղիցի սիրտ իմ՝ յերկնչել յանուանէ քումմէ:

Խոստովան եղէց առ քեզ, տէր Աստուած իմ, բոլորով սրտիւ իմով, փառաւորեսցեն զանուն քո յաւիտեան:

Մեծ եղեւ ի վերայ իմ ողորմութիւն քո, փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքինոց:

Աստուած, անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան դքեզ Աստուած առաջի իւրեանց:

Այլ դու, տէր Աստուած իմ, գթած ես և ողորմած, երկայնամիտ՝ քաջ ողորմիդ և

ճշմարիտ, նայեա առ իս և ողորմեա ինձ:

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս նշան բարութեան:

Տեսցեն առեւելիք իմ եւ ամաչեսցեն, զի դու, Տէր, օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս:

Տունք ԺԶ:

ՍԱՂՄՈՍ ՁԲ.

Սաղմոս օրհնութեան. որդւոցն Կորխայ:

Չխմեսնք նորա ի լեառն սուրբ նորա. սիրէ Տէր դռունս Սիովնի առաւել քան զամենայն յարիան Յակովբայ:

Փառաւորեալն խօսեցաւ վասն քո, ահա ստադիկ քաղաքդ Աստուծոյ:

Յիշեցի զՌահաբ և զԲաբելոն՝ որք ճանաչեն զիս. ահա այլազգիք և Տուր և ժողովուրդք Ընդկայ՝ սոքա եղեն անդ:

Սիովնի ասի մայր, և մարդ ծնաւ ի նմա, և ինքն հիմնեաց զսա ի նմա Բարձրեալն:

Տէր պատմեսցէ գրով ժողովրդեան, իշխանացս այսոցիկ՝ որ եղեն անդ:

Որպէս զի ուրախ լինիցին ի քեզ ամենեքեան, որոց բնակութիւն իւրեանց ի քէն է:

Տունք ՀԵ:

ՍԱՂՄՈՍ ՁԷ.

Ի կատարած. վասն Աղաչելոյ խնամոտութիւն, զի եւս պատահանի Եմն խնամոտութեամբ խորհել:

Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո:
Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ:
Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք իմ ի դժոխս մերձեցաւ. և համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ի գուբ:
Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռելս ազատ:
Որպէս վիրաւորս, որ ննջեն ի գերեզմանս:
Զորս դուն ոչ յիշեցեր, եւ նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան:
Եդին զիս ի գբի ներքնումն, ի խաւարի և ի տուընջեան մահու:
Ցիս հասոտատեցաւ բարկութիւն քո, զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ:
Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նշաւակ իւրեանց:
Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկտրեցան յազքատութենէ:
Աղաղակեցի առ Տէր զօրհնատպաղ, եւ համբարձի առ քեզ զձեռս իմ:

Մի՛թէ մեռելոց առնիցես սքանչելիս, կամ բժիշկք յարուցանիցե՞ն խոստովան առնիցին առ քեզ:
Մի՛թէ պատմեսցի ոք երբէք ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան:
Մի՛թէ ճանաչեցին ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ:
Ես առ քեզ, Տէր, աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ:
Ընդէր, Տէր, մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն:
Տնանկ և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ, ի բարձրութենէ խոնարհեցայ և ամչեցայ:
Ցիս հասոտատեցաւ բարկութիւն քո, սարսափութիւնք քո խռովեցուցին զիս:
Շրջեցան զինեւ որպէս ջուր, զօր ամենայն պաշարեցին զիս ի միասին:
Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ եւ զծանօթս իմ, վասն թշուառութեան իմոյ:

Տունք ի: Գարգար խբ:

ՍԱՂՄՈՍ 2Ը ·

Խոստովանութիւն եմանայ Տեառնեղբօրեցւոյ ։

Ձաղղմունթիւնս քո , Տէր , յաւիտեան օրհնեցից , ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով ։

Ասացեր՝ թէ աշխարհս ողորմութեամբ շինեացի , յերկինս պատրաստ եղիցի ճրշմարտութիւն քո ։

Եդի ուխտ ընտրելոց իմոց , երդուայ Դաւթի ծառայի իմոյ ։

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո , և շինեցից ազգէ յազգ զաթոռ քո ։

Խոստովան եղիցին երկինք սքանչելեացդ քոց , Տէր , և ճշմարտութիւն քո յեկեղեցի սրբոց ։

Ո՞վ է յամպս՝ որ հաւասարէ քեզ , կամ ո՞վ նմանիցէ Տեառն յորդիս Աստուծոյ ։

Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց , մեծ և ահաւոր ի վերայ այնոցիկ որ շուրջ են զնովաւ ։

Տէր Աստուած զօրութեանց , ո՞նմանէ քեզ հզօր ես դու , Տէր , և ճշմարտութիւն քո շուրջ է զքեզ ։

Դու տիրես զօրութեանց ծովուն , և ըղ-

խաւղութիւն ալեացդ նորա դու ցածուցանես ։

Դու խոնարհեցուցանես որպէս վիրաւոր զամբարտաւանն , ի զօրութիւն բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո ։

Քո են երկինք և քո է երկիր , զաշխարհս լիս իւրով դու հաստատեցեր , զհիւսիս և զհարաւ դու արարեր , Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն ։

Քո է բազուկ և քո է զօրութիւն , զօրասցի ձեռ քո և բարձր եղիցի ձեռն քո ։

Յարդարութիւն եւ իրաւունս հաստատեալ է աթոռ քո , ողորմութիւն եւ ճշմարտութիւն գնասցէ առաջի երեսաց քոց ։

Երանի ժողովրդեան՝ որ գիտեն զօրհնութիւնս քո , Տէր , ի լոյս երեսաց քոց գնասցեն , և յանուն քո ցնծասցեն զօրհնութեամբ , և յարդարութեան քում բարձր եղիցին ։

Պարծանք զօրութեան մերոց դու ես , Տէր , և ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր ։

Ի Տեառնէ է օրհնութիւն սրբոյն Իսրայելի՝ Թագաւորին մերոյ ։

Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս

քո և ասացեր. Եդից զօգնութիւն ի վե-
րայ հզօրին, և բարձր արարից զընտրեալն
ի ժողովրդենէ իմմէ:
Գտի զԴաւիթ ծառայ իմ, իւղով սրբով
իմով օծի զնա:
Ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զո-
րացուսցէ զնա:
Մի՛ մեղցէ նմա թշնամի, և որդի անօրէ-
նութեան մի՛ չարչարեսցէ զնա:
Հարից առաջի նորա զթշնամիս նորա, և
զատելիս նորա ի պարտութիւն մատնեցից:
Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն իմ
ընդ նմա, և յանուն իմ բարձր եղիցի եղ-
ջիւր նորա:
Եդից ի ծովս զձեռն նորա, և ի վերայ
գետոց զաջ նորա:
Նա կարդասցէ առ իս, Հայր իմ ես դու,
Աստուած ընդունելի փրկութեան իմոյ:
Ես անդրանիկ արարից զնա, և բարձր
քան զամենայն թագաւորս երկրի:
Յաւիտեան պահեցից նմա զողորմութիւն
իմ, և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա:
Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից
զզաւակ նորա, և զաթոռ նորա որպէս
զաւուրս երկնից:
Թէ թողցեն որդիք նորա զօրէնս իմ, և

յիրաւունս իմ ոչ կամեսցին գնալ:
Թէ զարդարութիւնս իմ անարդեսցեն, և
զպատուիրանս իմ ոչ պահեսցեն:
Հարից գաւազանաւ զանօրէնութիւնս նո-
ցա, և ասանձաւօք զանիրաւութիւնս
նոցա:
Բայց զողորմութիւն իմ ոչ արգելից ի
նոցանէ, և ոչ նենգեցից ճշմարտութեան
իմում, և ոչ անարգեցից զուխտ իմ, եւ
ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ՝ զայն ոչ
արհամարհեցից:
Միանգամ երդուայ ի սրբութիւն իմ, թէ
Դաւթի ես ոչ ստեցից:
Զաւակ նորա յաւիտեան կացցէ, և աթոռ
նորա՝ որպէս արեգակն առաջի իմ, որպէս
լուսին՝ զի հաստատեալ է յաւիտեան վկայ
հաւատարիմ յերկինս:
Իսկ արդ դու մերժեցեր և անարգեցեր,
և ընդ վայր հարեր զօծեալ քո:
Դարձուցեր զուխտ ի ծառայ քումմէ,
պղծեցեր յերկրի զսրբութիւն նորա:
Քակեցեր զամենայն պարիսպս նորա, եւ
եդիր զամուրս նորա ի դողութիւն:
Յափշտակեցին զնա անցաւորք ճանապար-
հի, եղեւ նա նախատ դրացեաց իւրոց:
Բարձր արարեր զաջ նեղչաց նորա, և ու-

բան արարիր զամենայն Թշնամիս նորա։
Գարձուսցեր զգնաւթիւն ՚ի սրոյ նորա,
և ոչ ընկալար զնա ՚ի պատերազմի։
Անարգեցեր զլրբութիւն նորա, և զաթոռ
նորա յերկիր կործանեցեր։
Նուազ արարեր զաւուրս ժամանակաց
նորա, և հեղեր զնովաւ զամօթ։
Մինչեւ յե՞րբ դարձուսցանես զերեսս քո ՚ի
սպառ, բորբոքեսցի որպէս հուր բարկու-
թիւն քո։
Խոկ արդ յիշեա և տես՝ թէ ո՛վ է իմ
հանդիման. մի՞թէ ՚ի զո՞ւր ինչ ստեղծեր
զամենայն որդիս մարդկան։
Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ,
կամ՝ փրկեսցէ զանձինս ՚ի ձեռաց դժոխոց։
Ո՞ւր են ողորմութիւնք քո, Տէր, առա-
ջինք, զոր երդուար Դաւթի ճշմարտու-
թեամբ քով։
Յիշեա զնախատինս ծառայից քո, զոր ըն-
կալայ ՚ի ծոց իմ յազգաց բազմաց։
Զոր նախատեցին Թշնամիք քո, Տէր, նա-
խատեցին փոխանակ օծելոյ քոյ։
Օրհնեալ աստ Աստուած յաւիտեանս յա-
ւիտենից. եղիցի եղիցի։

Տունք իգ։

Կանոն Գաբրիէլ ՚ի։ Ձայնս ժգ։ Տունք լիկ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՑԵԱՅ ՈՐԴՒՈՅՆ
ԱՄՈՎՍԱՅ

Եռաչեայ իգ։

Ի գիշերայ կանխէ հոգի իմ՝ առաւօտ
առնել առ քեզ Աստուած։
Վասն զի լոյս են հրամանք քո ՚ի վերայ
երկրի. ուսարարք զարդարութիւն քոյ
կիւրք երկրի։
Կարկեցաւ ամբարիշտն, և այլ ոչ եւս
ուսցի առնել յերկրի զարդարութիւն ճըշ-
մարտութեան։
Բարձցի ամբարիշտն յերկրէ, և մի՛ տեսցէ
փառս Աստուծոյ։
Տէր, բարձր ես և բազուկ քո հզօր, եւ
նորա ոչ գիտացին։
Ծանիցեն՝ ամաչեսցեն, և նախանձ անկցի
անհպատ ժողովրդեան. և արդ հուր ըզ-
Թշնամիս քո կերիցէ։
Տէր Աստուած մեր, տուր մեզ զխաղա-
ղութիւն քո, զի ընտ ամենայն գործոց
մերոց հատուցեալ մեզ։
Տէր Աստուած մեր, տուգիր զմեզ՝ զի բաց
՚ի քէն զայլ ոք ոչ գիտեմք, և զանուն քո
անուանեմք զօրհնութիւնդ։

Իսկ արդ մեռեալք զկենդանութիւն այլ
ոչ տեսանիցեն, և ոչ բժիշկք յարուցա-
նիցեն։
Վասն այսորիկ ածեր հարեր՝ սատակեցեր
և ջնջեցեր՝ զամենայն արուս մանուկ նոցա։
Յաւել տէր զքար ՚ի վերայ քարի նոցա. և
ած զքար ՚ի վերայ անօրինաց երկրի։
Տէր, ՚ի նեղութեան յիշեցաք զքեզ. զի
փոքր ի նեղութիւն է խրատ քո ՚ի վերայ մեր։
Որպէս երկունք յղւոյ՝ զի հասեալ լցէ ժա-
մանակ ծննդեան, և առ ցաւս իւր ձգիցէ։
Ա՛յնպէս եղեալ սիրելւոյ քում, տէր, յահ
և յերկիւղ քո յղացեալ երկնեցաք, և ծը-
նաք զՀոգի փրկութեան քո։
Ոչ եւս կործանեացուք մեք, այլ կործա-
նեսցին անօրէնք երկրի։
Յարիցեն մեռեալք, և կանգնեսցին ամե-
նեքեան որ եդեալ են ՚ի գերեզմանս։
Զարթիցեն ցնծացեն, և ուրախ եղիցին
դադարեալք յերկրի։
Վասն զի ցօղդ որ ցօղէ ՚ի քէն, այդ բըր-
ժիշկութիւն է նոցա. բայց երկիրն ամբա-
րըշտեալ սատակեսցի։
Թագս տուր, Ժողովուրդ իմ, դնա մուտ ՚ի
շտեմարանս քո, փակեա զդրունս քո ա-
ռաջի երեսաց քոց։

Փախիր և թագիր առ ժամանակ մի, մինչ
չեւ անցցէ բարկութիւն տեառն։
Փառք Հօր և Որդւոյ և.

\+

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

Աղաղակութեանց տուողդ, Քրիստոս, վնաս-
ղաղութիւն և զերինային ողորմութիւն քո
պարգեւեա յարարածս քո։
Մարդասէր, տէր, վասն որբուհւոյ անա-
բատի մօր քոյ և կուսի, և վասն Թաշի քոյ
պատուականի, ընկալ զաղաչանս մեր եւ
կեցո զմեզ։

Զարուն Աղօթիւ՝ ՚ի վերջ Երանելոյ Յանդին գրեալ
՚ի 35 Երես։





Յարիցէ Աստուած՝ եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա : սաղ. կե. 1 :

ՍԱՂՄՈՍ ՁԹ.

Աղօթք ՚ի Մաքսէս յայնմ Աստուծոյ :

Տէր, ապաւէն եղեր մեր ազգէ մինչեւ յազգ. մինչեւ լերինք հաստատեալ էին, եւ մինչեւ ստեղծեալ երկիր եւ զամենայն սիրելեր :
Յաւիտենից մինչեւ յաւիտեան դու ես. մի դարձուցաներ զմարդ ՚ի տառապանս, և ասացեր, դարձարուք ա՛ռ իս, որդիք մարդկան :
Հազար ամ յաչս Տեառն որպէս օր երեկի՛ զն անց, որպէս պահ մի գիշերոյ, և ամբ նոցա անարգաբեմեամբ եղիցին :
Ընդ առաւօտս որպէս դալարի քաւցին, ընդ առաւօտս որպէս դալարի զաւարձանացին և ծաղկեացին, ընդ երեկոյս թմարշաւացին չորացին և անկցին :

ներաղեցաք մեք ի բարկութենէ քումմէ, և ի սրտմտութենէ քումմէ խռովեցաք։
Եդեր զմեզս մեր առաջի քո, եւ զկեանս մեր ի լոյս երեսաց քոց։
Ամենայն աւուրք մեր նուաղեցան, և ի բարկութենէ քումմէ խռովեցաք։
Ժամանակ ամաց մերոց անդադար սրտէ՞ սարդի, և թիւ աւուրց ամաց մերոց ի նոսա եօթանասուն ամ։
Ապա թէ առաւել եւս՝ ութսուն ամ. սր ինչ աւելի քան զայն՝ ցաւօք և հեծութեամբ։
Եկին ի վերայ մեր հեծութիւն, և խրատեցաք, իսկ արդ ո՞վ գիտացէ զզօրութիւն բարկութեան քո, կամ յահէ քումմէ ըստ սրտմտութիւն քո հաստատեսցէ։
Ա՛յսպէս ցոյց ինձ զձեզ քո, և սր խնամարհն են պտուիք՝ զիմաստութիւնս քո։
Դարձ, Տէր, մինչեւ յե՞րբ. մխիթարեա՛ ի ծառայս քո։
Լ՛ցաք առաւօտուս ողորմութեամբ քոյ, ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։
Ուրախ եղաք փոխանակ աւուրցն սր խոնարհ արարին զմեզ, և ամացն՝ յորս տեսաք չարչարանս։

Հայեա, Տէր, ի ծառայս քո և ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա որդւոց նոցա. եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր։
Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։
Տա՛նք ժղ։

ՍԱՂՄՈՍ Դ.

Օրհնութիւն գովեստեան ի Դաւիթ։

Ո բնակեալն ի յօգնութիւն Բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ։
Ասացէ Տեառն, ընդունելի իմ ես, ապաւէն իմ Աստուած, և ես յուսասցի՛ ի նա։
Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և ի բանից ի խռովութենէ։
Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. ի հովանի թեւոց նորա յուսասցիս։
Որպէս զէն շուրջ եղիցի զքեզ ճշմարտութիւն նորա։
Ոչ երկեսցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ի նետէ որ թռչի ի տուէ։
Ցիրէ որ շրջի ի խաւարի, ի գայթակղութենէ դիւի ի հասարակ աւուր։

Անկեալն ի կողմանէ քումմէ հազարք, եւ բիւրք ընդաջմէ քումմէ, որ առ քեզ լինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, եւ պհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու, Տէր, յոյս իմ ես։

ԶԲարձրեալն արարեր քեզ ապաւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք, եւ տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, պահել զքեզ յամենայն ճանապարհս հըս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբեք հարցես զքարի զտան քո։

Ի վերայ իժից և բորբից գնասցես դու, եւ առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Փոխանակ յիս յուսացար, և փրկեցից զնա, հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց ի նեղութեան։

Փրկեցից և փառաւոր արարից զնա, երկայն աւուրբք լուսոյ, եւ ցուցից նմա զփրկութիւն իմ։

Տունք ԺԶ։

ՍԱՂՄՈՍ Ղ.Ա.

Սաղմոս օրհնութեան առաւօտ շաբաթու ի Գ աւուրն։

Բարի է խոստանալ լինել ցտառն, սաղմոս ասել անուան քումմ, Բարձրեալ։

Պատմել առաւօտուն զողորմութիւնս քո, և զճշմարտութիւնս քո ի գիշերի։

Տանդալեաւ սաղմոսարանաւ, ի ձայն օրհնութեան գովիլ։

Ուրախ արարեր զիս, Տէր, յարարածս քո, և ի գործս ձեռաց քոց ցնծացայց։

Որպէս զի մեծ են գործք քո, Տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո։

Այր անզգամ զայս ոչ ճանիցէ, և անմիտն զայս ոչ առնու ի միտ։

Ի բուսանել մեղաւորաց որպէս խոտ, ի ծաղկիլ այնոցիկ՝ որ գործեն զանօրէնութիւն։

Սատակեսցին յաւիտեանս յաւիտենից, և դու բարձրեալ ես յաւիտեան, Տէր։

Զի ահա թշնամիք քո, Տէր, զի ահա թշնամիք քո կորիցեն. ցրուեսցին ամենեքեան՝ որ գործեն զանօրէնութիւն։

Բարձր եղէցի որպէս վիեղջերուց եղջիւր իմ, եւ ծերութիւն իմ ի ձէթ պատարտութեան։

Եռեա ամն իմ ի թշնամիս իմ, զոր յա-
րուցեալ են ի վերայ իմ չարութեամբ, ի
նոսա լսիցէ ունկն իմ։
Արդարքն որպէս զարմանալիս ծաղկեա-
ցին, որպէս մայրքն Լիբանանու բազմա՛մբ
եղիցին։
Տնկեալք եղիցին ի տան Տեառն, և ի գա-
ւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեացին։
Եւս և բազմա՛մբ եղիցին ի ծերութիւն
պարարտութեան, գիրդք և փափուկք
եղիցին ի պատմել. ուղիղ է աէր Աստ-
ուած մեր, և ոչ գոյ ի նմա անկրաւա-
թիւն։

Տունք ժգ։ Գոբղաս կգ։

ՍԱՂՄՈՍ ՂԲ։

Յօրն առաջին շաբաթու, յոր հաստատեցաւ երկիր։
օրհնութիւն գովութեան ի Դաւիթ։

Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն ղգե-
ցաւ, ղգեցաւ Տէր զօրութիւն՝ ընդ մէջ
իւր ածու։
Հաստատեաց զաշխարհ ի մի ստանեցոյն,
պատրաստ է աթոռ քո ի սկզբանէ, յա-
ւիտեանս դու ես։

Ամբարձան գետք, Տէր, և ամբարձին գետք
ղձայնս իւրեանց. եւ յարիցեն գետք ի
գնացս իւրեանց։
Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի եղեն
ղբաստանք ծովու։
Սքանչելի ես դու, Տէր, ի բարձունս,
վկայութիւնք քոյ ամք յոյժ հաւատա-
լիք։
Տան քում վայելէ սրբութիւն, Տէր, ընդ
երկայն աւուրս։

Տունք ղ։

ՍԱՂՄՈՍ ՂԳ։

Յաղագս ի Դաւիթ. յերկրորդաբաթու։

Աստուած՝ վրէժխնդիր Տէր, Աստուած
վրէժխնդիր յայտնեցար։
Բարձր լեր որ դատիս զերկիր, հատո՛ւց
հատուցումն ամբարտաւանիդ։
Մինչեւ երբո՞ւ մեղաւորք, Տէր, մինչեւ երբ՞
մեղաւորք պարծեսցին։
Բարբառեսցեն խօսեսցին զանիրաւութիւն,
խօսեսցին ամենեքեան՝ որ գործեն զանօ-
րէնութիւն։
Զժողովուրդ քո, Տէր, խանարհ արարին,
և ղժառանգութիւն քո նուաստացուցին։

Զայրին և զպանդուխան ասանին, զրբան
կոտորեցին, և ասացին, ոչ տեսանէ զայս
տէր, և ոչ ՚ի միտ առնու Աստուած Յա-
կովբայ։
Խնդարարք անզգամք ժողովրդոյ և ան-
միտք, մինչեւ յերբ ոչ առնուք ՚ի միտ։
Որպէս զի թէ որ անկեաց զականն՝ ինքն
ոչ լսէ, կամ որ ստեղծ զականն՝ ինքն
ոչ տեսանիցէ։
Որ խրատէ զազգս, որպէս թէ ոչ յանդի-
մանեսցէ, որ ուսուցանէ մարդոյ զգիտու-
թիւն. տէր ճանաչէ զխորհուրդս մարդ-
կան՝ զի են ընդունայնք։
Երանի մարդոյ զոր խրատես դու, տէր, և
յօրինաց քոց ուսուցանես դու նմա։
Յածուցանես դու նմա զաւուրս չարու-
թեան, մինչեւ փորեսցի խորխորատ մե-
ղաւորի։
Ոչ մերժէ տէր զժողովուրդ իւր, և զմա-
ռանգութիւն իւր ոչ առնէ անտես։
Մինչեւ դարձցին իրաւունք յարդարու-
թիւն, ընկալցին զնա ամենեքեան սր-
ուղիղ են սրտիւք։
Ո՞ յարիցէ ընդ իս ՚ի վերայ չարայ, կամ
ո՞ հաւասարեսցէ ինձ ՚ի վերայ այնոցիկ՝
որ գործեն զանօրէնութիւն։

Թէ ոչ տեառն օգնեալ էր ինձ, փոքր մի
եւս բնակեալ էր անձն իմ ՚ի դժոխս։
Եթէ ասէի՝ թէ սահ սասանեցան ոտք իմ,
ողորմութիւն քո, տէր, օգնէր ինձ։
Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ միխթա-
րութիւն քո ուրախ առնէր զանձն իմ։
Մի հաւասարեսցէ քեզ աթոռ անօրէնու-
թեան, ո՛ պատճառէ դիստակս ընդդէմ
հրամանի։
Հրապուրեն զանձն արդարոյ, և զարիւն ան-
բիծ պարտաւոր առնէին։
Եղեւ տէր ապաւէն իմ, Աստուած օգնա-
կան յուսոյ իմոյ։
Հատուսցէ նոցա տէր ըստ անօրէնութեան
նոցա, ըստ չարութեան նոցա կործանեսցէ
զնոսա տէր Աստուած մեր։

Տունք խ։

ՍԱՂՄՈՍ ՂԴ։

Օրհնութիւն գթութեան ՚ի Դաւիթ։

Եկայք սիմաստութ ՚ի տէր, աղաղակեսցուք
առ Աստուած փրկիչ մեր։
Կանխեսցուք առաջի նորա խոստովանու-
թեամբ, սաղմոսիւք աղաղակեսցուք առ
նա։

Աստուած մեծ է, տէր՝ թագաւոր մեր ի վերայ ամենայն երկրի։

Ի ձեռս նորա են ամենայն սիեղեռք երկրի, բարձրութիւնք լերանց նորա են։

Նորա է ծով և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին։

Եկայք երկիր պագցուք նմա, անկցուք և լացցուք առաջի Տեառն որ արարչին մերոյ։

Նա ինքն է տէր Աստուած մեր, մեք ժողովրդք ձեռին նորա, եւ խաշն արօտի նորա։

Ա. յսօր եթէ ձայնի նորա լսիցէք, մի խլացուցանէք զսիրտս ձեր որպէս ի դառնութեան։

Յաւուրն փորձութեան յանապատին՝ ուր փորձեցին զիս հարքն ձեր, քննեցին զիս և տեսին զգործս իմ զքառասուն ամ։

Յանացոյց ընդ ազգին ընդ այնմիկ և ասացի, միշտ մոլորեալ են սրտիւք. և նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ։

Որպէս երդուայ ի բարկութեան իմում, թէ մացեն ի հանգիստ իմ։

Տունք ժա։ Գոբզայս լբ։

ՍԱՂՄՈՍ Ղ.

Յաղագս ի գաւթի. ի ժամանակի զի տաճարն չինեցաւ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, օրհնեցէք զՏէր ամենայն երկիր։

Օրհնեցէք զՏէր և օրհնեցէք զանուն նորա, աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա։

Պատմեցէք ի հեթանոսս զփառս նորա, յամենայն ժողովուրդս զքրանչելիս նորա։

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ, ահարկու է նա ի վերայ ամենայն կրոց։

Ամենայն կուռք հեթանոսաց դեւք են, և տէր զերկինս արար։

Խոստովանութիւն և վայելչութիւն է առաջի նորա, սրբութիւն և մեծվայելչութիւն ի սրբութեան նորա։

Մատուսջէք տեառն, ազգք ազգաց, մատուսջէք տեառն զփառս և զպատիւ, մատուսջէք տեառն զփառս անուան նորա։

Առէք պատարագս և մտէք ի սրահս նորա, երկիր պագէք տեառն ի գաւիթս սրբութեան նորա. եւ խռովեսցի յերեսաց նորա ամենայն երկիր։

Ասացէք ՚ի հեթանոս՝ թէ տէր թագա-
ւորեաց , հաստատեաց զաշխարհ ի մի
սասանեցի , և դատի ղժողովուրդս իւր
ուղղութեամբ :
Ուրախ եղիցին երկինք և ցնծասցէ երկիր ,
ղաւարձասցի ծով լրիւ իւրով , ցնծասցեն
դաշտք և ամենայն որ է ՚ի նոսա :
Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք ան-
տառի յերեսաց տեառն ի գայ , և գայ նա
՚ի դատել զերկիր :
Դատի զտիեզերս իրաւամբք , եւ զժողո-
վուրդս ամենայն ճշմարտութեամբ իւրով :

Տունք ԺԸ :

ՍԱՂՄՈՍ Ղ.Զ.

Սաղմոս ՚ի Դաւիթ . ՚ի ժամանակի զի երկիրն
հաստատեցաւ :

Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր , ու-
րախ եղիցին կղզիք բազումք :
Ամպ և մէգ շուրջ է զնովաւ , յիրաւու-
նէ և յարդարութիւն ուղղեալ է աթոռ
նորա :
Հուր առաջի նորա գնասցէ , այրեսցէ
շուրջ զթշնամիս նորա :
Երեւեցան փայլատակունք նորա տիեզե-

րաց , եռաց և սասանեցաւ երկիր :
Լերինք որպէս մում հալեցան յերեսաց
Տեառն , յերեսաց Տեառն ամենայն երկիր :
Պատմեցին երկինք զարդարութիւն նո-
ա , տեսին ամենայն ժողովուրդք զփառս
նորա :
Ամաչեցին ամենեքեան որ երկիր պա-
գանեն կուռս , և յոյք պարծին ՚ի դրօշեալս
իւրեանց :
Երկիր պագեն նմա ամենայն հրեշտակք
նորա , զի լուաւ և ուրախ եղեւ Սիովն ,
և ցնծացեն դստերք Յուդայ վասն իրա-
ւանց քոց , Տէր :
Զի դու Բարձրեալ ես ՚ի վերայ ամենայն
երկրի , յոյժ բարձրացար ՚ի վերայ ամե-
նայն կռոց :
Որ յք սիրէք զՏէր՝ ատեցէք զչարութիւն ,
պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց , ՚ի ձե-
ռաց մեղաւորի փրկեսցէ զնոսա :
Լոյս ծագեաց արդարոց , ուղղոց սրտիւ
եղեւ ուրախութիւն :
Ուրախ եղերուք , արդարք , ՚ի Տէր , խոս-
տովան եղերուք յիշատակի սրբութեան
նորա :

Տունք ԺԲ :

ՍԱՂՄՈՍ ՂԷ.

Սաղմոս Ի Դաւիթ. օրհնութեան:

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, զի սքանչելիս արար:
Փրկեաց զնա աջ իւր, եւ բազուկ սուրբ իւր:
Եցոյց Տէր զփրկութիւն իւր, առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր:
Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակովբ, ճշմարտութեամբ իւրով զտունն Իսրայէլ. և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:
Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, օրհնեցէք ցնծացէք և սաղմոս ասացէք:
Սաղմոս ասացէք Աստուծոյ մերոյ օրհնութեամբ, օրհնութեամբ և Ի ձայն սաղմոսաց:
Ի ձայն օրհնութեան կառածոյ վոլոյ, օրհնութեամբ ցնծութեամբ և Ի ձայն եղջիւր վոլոյ, և աղաղակեցէք առաջի Թագաւորին Տեառն:
Խռովեսցի ծով լցիւ իւրով, սիեզերք և ամենայն բնակիչք նորա. և գետք ծափս հարցեն Ի միասին ձեռամբ:

Լերինք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ և հասանել է Տէր Ի դատել զերկիր:
Դատի զաշխարհս արդարութեամբ, եւ զժողովուրդս իւր ուղղութեամբ:
Տուն ժ: Գոլայս լէ:

ՍԱՂՄՈՍ ՂԸ.

Սաղմոս Ի Դաւիթ:

Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք. որ նստիս Ի քրովբէս, սասանեսցաւ երկիր:
Տէր Ի Սիովն մեծ է, և բարձր է Ի վերայ ամենայն ժողովրդոց:
Խոստովան եղիցուք անուան քում մեծի, զի ահաւոր և սուրբ է, և պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ:
Դու պատրաստեցեր զուղղութիւն, զի բաւունս եւ զարդարութիւն Յակովբայ դու արարեր:
Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:
Մովսէս և Ահարոն երիցունք նորա, Սա-

մաբել ընդ այնոսիկ որ կարդան զանուն նորա։

Կարդային առ Տէր և նա լսէր նոցա, և ի սիրեն անդոյ խօսէր ընդ նոսա։

Պահէին զվկայութիւն նորա, և զհրամանս զոր ետու նոցա։

Տէր Աստուած մեր, դու լսէիր նոցա. Աստուած, դու քաւիչ լինէիր, վրէժխնդիր ի վերայ ամենայն գործոց նոցա։

Բարձր արարէք զտէր Աստուած մեր, երկիր պագէք ի լեառն սուրբ նորա, զի սուրբ է տէր Աստուած մեր։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՂԹ.

Սաղմոս խոստովանութեան ի Դաւիթ։

Աղաղակեցէք առ Տէր, ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա յինծութեամբ, ծաներ բուք զի նա է տէր Աստուած մեր։

Նա արար զմեզ և ոչ մեք էաք, մեք ժողովուրդք և խաշն արօտի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութիք, և օրհնութեամբ ի յարկս նորա։

Խոստովան եղերուք Տեառն, և օրհնեցէք զանուն նորա։

Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա, ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա։

Տունք ղ։

ՍԱՂՄՈՍ ճ.

Սաղմոս ի Դաւիթ։

Յաղորմութիւն և յիրաւունս օրհնեցից զքեզ, տէր. սաղմոս ասացից և ի միտս առից։ Ճանապարհ ամբիծ մինչև եկեսցէ առ իս. զի գնայի ես յանբծութեան սրտի իմոյ ի մէջ տանն իմոյ։

Ոչ եդի առաջի աչաց իմոց իրս անիրաւութեան, զործ առնելին զանբարութիւն ատեցի։

Ոչ մերձեցաւ առ իս որ թիւրն էր սրտիւ. խոտորեալ չինէն անպատմին, և ես ինչ ոչ գիտէի առնել։

Որ խոսէր գաղտ զընկերն իւրմէ, զնա բացէ ի բաց հալածէի։

Որ ամբարտաւան էր աչօք և ագահ սրտիւ, ընդ նմա և հաց ոչ ուտէի։

Աչք իմ ի հաւատացեալս երկրի, զի նստցին ընդ իս։

Որ գնայր ի ձանապարհ ամբիծ, նա պաշտ տէր զիս։

Ոչ բնակէր ի մէջ սան իմոյ՝ որ առնէր զամբարտաւանութիւն, որ խօսէր զանիրաւութիւն՝ չէր յաջողեալ նմա առաջի աչաց իմոց։

Ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի, սատակեցից ի քաղաքի Տեառն զամենեսեան՝ որ գործեն զանօրինութիւն։

Տունք ժ։ Գոբղայս խգ։

ԱՂՄՈՍ ՃԱ.

Աղօթք Ովսէի. իբրեւ ձանձրացի և առաջի Տեառն սիրեցի զինդրուածս իւր։

Տէր, լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զականջն քո, յորում աւուր կարգամ առ քեզ՝ վաղվաղակի լուր լինէ։

Սպառեցան որպէս ծուխս աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոխ չորացան։

Հարաւ որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ

իմ, մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ։

Կպեցաւ ոսկր իմ ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալասան անապատի։

Եղէ ես որպէս բուս յաւերակի, սքնեցայ եւ եղէ ես որպէս ձնճղուկ միայն ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհասապաղ, և գովիչք իմ լինեւ երդնուին։

Զմոխիր որպէս հաց կերայ, և զըմպելի իմ արտասուաք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դուք բարձրացուցեր եւ խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դուք, Տէր, յաւիտեան կաս, և յիշատակ քոյ ազգէ մինչեւ յազգ։

Դուք յարուցեալ գթասցիս ի վերայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և ի հողս նորա գթասցին։

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ, և ամենայն թագաւորք երկրի ի փառս քոյ։

Ելիցէ տէր զՍիովն, և երեւեսցի փառօք
իւրովք ի նմա ։
Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ
արհամարհեաց զինդրուածս նոցա ։
Գրեսցի այս յազգ յայլ, ժողովուրդ զոր
ստացեալ է՝ օրհնեսցէ զՏէր ։
Հայեցաւ նա ի բարձանց ի սրբութենէ
իւրմէ, Տէր յերկինից յերկիր հայեցաւ ։
Լսել զկենցաղեալսն կապելոց, և արձակել
զորդիս մահապարտաց ։
Պատմել ի Սիովն զանուն Տեառն, և զօրհ-
նութիւնս նորա յԵրուսաղէմ ։
Ժողովել ժողովրդոց ի միասին, և թագա-
ւորաց ծառայել Տեառն ։
Պատասխանի եւս նմա ի ճանապարհի զո-
րութեան իւրոյ, զնուազութիւն աւուրց
իմոց ասա ինձ, և մի հաներ զիս ի կէս
աւուրց իմոց. զի ազգէ յազգ են ամք քո ։
Ի սկզբանէ, Տէր, զհիմունս երկրի հաս-
տատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք
են ։
Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յա-
ւիտեան ։
Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին, որ-
պէս վերարկուս փոխեսցես զնոսա և փո-
խեսցին ։

Քայց դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ ան-
ցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցեն
ի նմա, և զաւակն նոցա յաւիտեան ա-
ջողեսցի ։
Տունք կղ ։

ՍԱՂՄՈՍ ՃԲ ։
Պաղտա ի Դաւիթ ։

Օրհնեա, անձն իմ, զՏէր, և ամենայն ա-
կերք իմ զանուն սուրբ նորա ։
Օրհնեա, անձն իմ, զՏէր, և մի մոռանար
զամենայն տուրս նորա ։
Ո քաւէ զամեղս քո, բժշկէ զամենայն հի-
ւանդութիւնս քո ։
Ո փրկէ յապականութենէ զկեանս քո, պա-
տակէ զքեզ ողորմութեամբ և գթու-
թեամբ ։
Ո լնու ի բարութենէ զպանկուածիւն քո,
նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն
քո ։
Առնէ ողորմութիւնս Տէր, եւ իրաւունս
ամենայն զրկելոց ։
Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի, և
որդւոցն Իսրայէլի գործս իւր ։
Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ եւ
բազմողորմ ։

Ոչ խոպառ բարկանայ մեզ տէր, և ոչ յա-
ւիտեան պահէ ոխս։
Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ տէր, և
ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց
մեզ։
Ա՛յլ որպէս բարձր են երկինք յերկրէ,
այնպէս զօրացոյց տէր զողորմութիւն իւր
՚ի վերայ երկիւղածաց իւրոց։
Որչափ հեռի են արեւելք յարեւմտից,
այնպէս հեռի արար ՚ի մէնջ զանօրէնու-
թիւնս մեր։
Որպէս գթայ հայր ՚ի վերայ որդւոց իւ-
րոց, այնպէս գթացոյց տէր յերկիւղածս
իւր։
Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յի-
շեաց թէ հող եմք։
Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր,
որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղիկէ։
Շնչէ ՚ի նմա հովմ՝ և ոչ է, և ոչ եւս ե-
րեւի տեղի նորա։
Բայց ողորմութիւն տեառն յաւիտեանս
յաւիտենից ՚ի վերայ երկիւղածաց իւրոց։
եւ արդարութիւն նորա յորդւոց մինչեւ
յորդիս։
Ո՛յք պահեն զսխտս նորա, յիշեն զպա-
տուիրանս նորա և առնեն զնա։

Տէր յերկինս պատրաստեաց զթոռ իւր,
արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։
Օրհնեցէք զՏէր, ամենայն հրեշտակք նո-
րա, հզօրք զօրութեամբ՝ որք առնէք զբա-
նս նորա, լսել ձայնի պատգամաց նորա։
Օրհնեցէք զՏէր, ամենայն զօրութիւնք նո-
րա, պաշտօնեայք եւ արարածք կամաց
նորա։
Օրհնեցէք զՏէր, ամենայն գործք նորա,
ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա.
օրհնեա, անձն իմ, զՏէր։
Տունք իբ։ Գոբզայս իբ։

ՍԱՂՄՈՍ ՃԳ.

Սաղմոս ՚ի Դաւիթ. ՚ի վերայ աշխարհագործ
արարածոյ։

Օրհնեա, անձն իմ, զՏէր, տէր Աստուած
իմ, մեծ եղեր յոյժ։
Խոստովանութիւն եւ մեծվայելչութիւն
զգեցար, արկար զլոյս որպէս զթոյզ, ձգե-
գեցեր զերկինս որպէս խորան, և յարկար
՚ի վերայ ջուրց զվերնայարկս նորա։
Ո դնէ յամպս զդնացս իւր, և զջրն նա ՚ի
վերայ թեւոց հողմոց։

Ո արար զԷրեշտակս իւր հոգիս, և զպաշ-
տօնեայս իւր ի հուր կիզեալ։
Հաստատեաց զերկիր ի վերայ հաստա-
տութեան իւրոյ, զի մի տատանեսցի յա-
ւիտեան։
Խորք որպէս զդեստ վերարկու է նորա,
ի վերայ լերանց կացցեն ջուրք։
Ի սաստ քումմէ փախիցեն, և ի ձայնէ
որոտալոյ քումմէ սարսիցեն։
Ելանեն լեռնանան՝ և իջանեն դաշտանան,
ի տեղի յոր հաստատեցեր զնոսա։
Սահման եդիր՝ և ոչ անցցանեն, և ոչ եւս
դառնան ի ծածկել զերկիր։
Առաքեցեր զաղբիւրս ընդ ձորձորս, ի
մէջ լերանց գնացին ջուրք։
Արբուցանել զամենայն գազանս վայրի,
յագեցին ցիւրք ի ծարաւս իւրեանց։
Անդ թռչունք երկնից բոյնս դիցեն, և ի
մէջ ճիւղոց տացեն ձայնս իւրեանց։
Արբուցանէ զերկինս ի շաւիղաց իւ-
րոց, ի պտղոյ գործոց իւրոց լցցի երկիր։
Բուսուցեր զխոտ ի լերինս, զդալարի ի
ծառայութիւն մարդկան։
Հաներ զհաց յերկրէ. գինի ուրախ առ-
նէ, իւղ զուարթ, և հաց հաստատէ զսիրտ մարդոյ։

Յագեցին ծառք անտառի, և մայրքն Լի-
բանանու զորս դուս տնկեցեր։
Անդ թռչունք երկնից ձագս հանցեն, և
բոյն արագիլ ապաւէն է նոցա։
Լերինք բարձունք են եղջերուաց, և վէմք
ապաւէն նապաստակաց։
Արարեր զլուսին վասն ժամանակի, արե-
գակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ։
Արարեր զխաւար՝ և եղեւ գիշեր, ի նմա
գնան ամենայն գազանք անտառի։
Կորիւնք առիւծուց մռնչեն և յափշտա-
կեն, և խնդրեն յԱստուծոյ կերակուր
իւրեանց։
Ի ծագել արեւուս ժողովին, և ի մորիս
իւրեանց դադարեն։
Ելանէ մարդ ի գործս իւր, և ի վաստակս
ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ։
Որպէս զի մեծ են գործք քո, տէր, զամե-
նայն ինչ իմաստութեամբ արարեր, և լե-
ցաւ երկիր ստեղծուածովք քովք։
Ա՛յս ծով մեծ և անդորր. ի սմա են սո-
ղունք՝ որոց ոչ գոյ թիւ, գազանք մեծա-
մեծք և մանունք. ի սմա և նաւք գնան,
վիշապն զոր ստեղծեր խաղալ նովաւ։
Ամենեքեան քեզ ապասեն, և դուս տաս
կերակուր նոցա ի ժամու։

Տաս դու նոցա և կերակրին, բանաս ըզ
ձեռն քո՝ և կերակրես զամենեսեան կա-
մօք քովք ։
Գարձուցանես զերեսս քո ՚ի նոցանէ՝ եւ
խռովին, հանես զոգի ՚ի նոցանէն՝ պա-
կասին և ՚ի հող դառնան ։
Առաքես զոգի քո և ստեղծանին, և
նորոգես զերեսս երկրի ։
Եղիցին փառք Տեառն յաւիտեան, Տէր
ուրախ եղիցի յարարածս իւր ։
Ո հայի յերկիր և տայ դողալ սմա, մերձի
՚ի լերինս և ծխեսցին ։
Օրհնեցից զՏէր ՚ի կեանս իմ, սաղմոս ա-
սացից Աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես ։
Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ, և ես
ուրախ եղէց ՚ի Տէր ։
Պակասեսցին մեղաւորք յերկրէ, և ամբա-
րիշտք ոչ եւս գոյցին ՚ի նմա . օրհնեա
անձն իմ զՏէր ։
Տունք լգ ։

ՍԱՂՄՈՍ ՃԳ ։

Ալէլուիա ։

Խոստովան եղերուք Տեառն և կարդացէք
զանուն նորա, պատմեցէք ՚ի հեթանոս
գործս նորա ։

Օրհնեցէք և սաղմոս ասացէք նմա, պատ-
մեցէք զամենայն սքանչելիս նորա, և գո-
վեսցարուք յանուն սուրբ նորա ։
Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որք խնդր-
բեն զՏէր . խնդրեցէք զՏէր՝ և հզօրք եղե-
ցուք . խնդրեցէք զերեսս նորա յամենայն
ժամ ։
Յիշեցէք զքանչելիս նորա զոր արար, զար-
ուեստս և զիրաւունս բերանոյ նորա ։
Զաւակն Աբրահամեան՝ ծառայք նորա,
որդիք Յակովբայ՝ ընտրեալք նորա ։
Նա ինքն է տէր Աստուած մեր, յամենայն
երկրի են իրաւունք նորա ։
Յիշեաց յաւիտենից զուխտ իւր, և զբանն
զոր պատուիրեաց մինչ ՚ի հազար ամ ։
Զուխտն զոր եդ ընդ Աբրահամու, եւ
զերդումն իւր ընդ Իսահակայ ։
Հաստատեաց առ Յակովբ զկրաման իւր,
և առ Իսրայէլ զուխտ իւր յաւիտենից ։
Ասէ . Զեզ տայց զերկիրն Քանանու, զվիճ
ակ ժառանգութեան ձերոյ ։
Զի էին նոքա թուով սակաւ, նուազք և
պանդուխտք ՚ի նմա ։
Անցին նոքա ազգէ յազգ, ՚ի թագաւո-
րութենէ ՚ի ժողովուրդ այլ ։
Ոչ եթող մարդիկ մեղանչել նոցա, կրճ-

տամբեաց զԹագաւորս վասն նոցա ։
Մի՛ մերձենայք , ասէ , յօծեալս իմ, և՛ ի
մնարպարէս իմ մի՛ մեզանչէք ։
Կոչեաց սով յերկիր նոցա , եւ զամենայն
զօրութիւն հացի եբեկ ։
Առաքեաց առաջի նոցա այր , ի ծառա-
յութիւն վաճառեցաւ Յովսէփ ։
Խոնարհ արարին ի կապանս զոտս նորա ,
և անց ընդ երկաթս անձն նորա ։
Մինչեւ եկեսցէ բան նորա , և բան Տեառն
փորձեաց զնա ։
Առաքեաց Թագաւորն և ելոյծ զնա , իշ-
խան ժողովրդեան եմոյ զնա ։
Կացոյց զնա Տէր տան իւրոյ , իշխան ի
վերայ ամենայն առացուածոց իւրոց ։
Խրատել զիշխանս նոցա որպէս զինքն , և
զծերս նոցա՝ իմաստուն արարցէ ։
Եմուտ Իսրայէլ Եգիպտոս, Յակովբ պան-
դխատեաց յերկիր Քամայ ։
Եճեայց զժողովուրդ իւր յոյժ , և զորա-
յոյժ զնոսա քան զթշնամիս իւր ։
Դարձոյց զսիրտս նոցա՝ ատել զժողովուրդ
իւր , և՛ նենգել զծառայս իւր ։
Առաքեաց զՄովսէս ծառայ իւր , և զԱ-
հարովն զընտրեալ իւր ։
Եա նոցա զբան նշանաց իւրոց , եւ զար-

ուեստս իւր յերկիր Քամայ ։
Առաքեաց խաւար և խաւարեցոյց զնոսա ,
զի դառնացուցին զբան նորա ։
Դարձոյց յարիւն զգետս նոցա , և սպան
զամենայն ձկունս նոցա ։
Եհաս յերկիր նոցա գորտ , և՛ ի շտեմա-
րանս Թագաւորաց նոցա ։
Ասաց՝ և եկն շանաճանճ եւ մժեխ ընդ
ամենայն սահմանս նոցա ։
Դարձոյց զանձրեւս նոցա՝ ի կարկուտ , և
հուր յերկիր նոցա բորբոքեցաւ ։
Եհար զայգիս և զթզենիս նոցա , և փըշ-
րեաց զամենայն ծառս սահմանաց նոցա ։
Ասաց՝ և եկն մարախ և խառնիճ՝ զի ոչ
գոյր Թիւ ։
Եկեր զամենայն խոտ երկրի նոցա , ըսպա-
ռեաց զամենայն պտուղ անդից նոցա ։
Եհար զամենայն անդրանիկս Եգիպտաց-
ւոց , զսկիզբն ամենայն վաստակաց նոցա ։
Եհան զնոսա ոսկւով և արծաթով , և ոչ
գոյր յազգի նոցա հիւանդ ։
Ուրախ եղեւ Եգիպտոս ընդ ելանելն նոցա ,
զի անկաւ ահ Տեառն՝ ի վերայ նոցա ։
Սփռեաց ամպ՝ հովանի առնել նոցա՝ ի
տուէ , և հրով լոյս տայր նոցա՝ ի գիշերի ։
Խնդրեցին՝ և եկն լորամորգի , եւ հացիւ

երկնից լցոյց զնոսա ։
Եհար զվէմն՝ և բղխեցին ջուրք, և գնա-
ցին գետք ընդ անջրդիս ։
Յիշեաց զբան իւր սուրբ, որ ընդ Աբրա-
համ ծառայի իւրում ։
Եհան զժողովուրդ իւր ցնծութեամբ, և
զընտրեալս իւր ուրախութեամբ ։
Եւ նոցա զգաւառս հեթանոսաց, ՚ի վաս-
տակս ժողովրդոց ժառանգեցոյց զնոսա ։
Զի պահեսցեն զվկայութիւնս նորա, եւ
զօրէնս նորա խնդրեսցեն ։
Տունք խգ ։ Գոբզայս հը ։

ՍԱՂՄՈՍ ՃԵ ։

Ալէլուիա ։

Խոստման եղերութք տեառն՝ զի քաղցր է,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։
Ո՞խօսեսցի զզօրութիւնս տեառն, լսելի ա-
րասցէ զամենայն օրհնութիւնս նորա ։
Երանի պ.ք պահեն զիրաւունս, և առնեն
զարդարութիւն յամենայն ժամ ։
Յիշեա զմեզ, տէր, ընդ հաճոյս ժողովրդեան
քոյ, և այց արա մեզ ՚ի փրկութեան քում ։

Տեսցուք մեք զբարեաղրութիւն ընտրելոց
քոց, ուրախ եղիցուք յուրախութիւն
ազգի քոյ, և գովեսցուք մեք ՚ի ժառան-
գութեան քում ։
Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինե-
ցաք և յանցեաք ։
Հարքն մեր յԵգիպտոս ոչ խնդացան զբազ-
մութիւնս քո, եւ ոչ յիշեցին զբազում ողոր-
մութիւնս քո ։
Բարկացուցին զբեզ յանցանելն իւրեանց
ընդ ծով կարմիր, փրկեաց զնոսա վասն
անուան իւրոյ, զի ծանիցեն զզօրութիւնս
նորա ։
Սաստեաց ՚ի ծով կարմիր՝ և ցամաքեցաւ,
առաջնորդեաց նոցա ընդ անդունդս որ-
պէս ընդ անապատս ։
Կեցոյց զնոսա ՚ի ձեռաց ատելեաց նոցա,
եւ փրկեաց զնոսա ՚ի ձեռաց թշնամեաց
նոցա ։
Ծածկեաց ծով զհեղինս նոցա, եւ մի ՚ի
նոցանէ ոչ ապրեցաւ ։
Հաւատացին ՚ի բան նորա, և օրհնեցին
զօրհնութիւնս նորա ։
Վաղվաղեցին և մոռացան զգործս նորա,
և ոչ անասցին խորհրդոց նորա ։
Յանկացան զյանկութիւն յանապատի, և

փոքձեցին զԱստուած յանկըդի :
Եւ նոցա զինդրեաց նոցա , առաքեաց
լիուԹիւն յանձինս նոցա :
Բարկացուցին զՄովսէս ի բանակի , և զՀարոնն սուրբ Տեառն :
Բացաւ երկիր և եկուլ զԴաթան , և ծածկեաց զբանական զԱբիրոնէլի :
Հուր վառեցաւ ի ժողովս նոցա , և բոց մաշեաց զմեղաւորս :
Արարին որթ ի Քորեբ , և երկիր պագին պատկերի , և փոխեցին զփառս Իւրեանց
ի նմանուԹիւն արձու խոտակերի :
Մոռացան զԱստուած կենարարն Իւրեանց , որ արար զմեծամեծս իւր յԵգիպտոս , զքանչելիս իւր յերկիր Քամայ , եւ
զահ իւր ի վերայ կարմիր ծովուն :
Ասաց աստակել զնոսա , եԹէ ոչ Մովսէս
ընտրեալ կայր առաջի նոցա :
Դարձաւ առ Տէր և անցոյց զբարկուԹիւն
նորա , զի մի ատտակեացին նոքա :
Անարգեցին զերկիրն ցանկալի , և ոչ հաւատացին բանի նորա :
Տրանջեցին ի բանակս Իւրեանց , եւ ոչ
լուան ձայնի Տեառն :
Համբարձ զձեռն Իւր ի վերայ նոցա , հարկանել զնոսա յանապատի :

Ցրուեացի զաւակ նոցա ընդ հեԹանոսս ,
ցրուեացի զաւակ նոցա ընդ գաւառս :
Պղծեցան նոքա ի Բէլփեգովր , զի կերան
զպահեալ և զմեռելոսին :
Բարկացուցին զնա ի գործս Իւրեանց , յաճախեաց ի վերայ նոցա բեկումն :
Անդ եկաց ի միջ փենեհէս , քաւեաց և
արգելաւ մահ , համարեցաւ նմա յարդարուԹիւն ազգէ յազգ մինչև յաւիտեան :
Բարկացուցին զնա ի ջուրն հակառակուԹեան , չարչարեցաւ Մովսէս վասն նոցա ,
զի գառնացուցին զոգի նորա :
Հրամայեաց շԹամբք Իւրովք , և ոչ ապականեցին զազգն՝ զոր ասաց նոցա Տէր :
Խառնակեցան ընդ հեԹանոսս և ուսան
գործս նոցա , ծառայեցին կուռս նոցա , և
եղեւ նոցա ի գայԹակղուԹիւն :
Զոհեցին զորս ասես և զդստերս Իւրեանց
դիւաց , և հեղին արիւն ամբիծ :
Արիւն ուսուերաց և դստերաց Իւրեանց ,
զոր զոհեցին կուռն Քանաան :
Շաղախեցաւ երկիր յարենէ նոցա , եւ
պղծեցաւ ի գործոց նոցա , զի պոռնկեցան
ի գնացս Իւրեանց :
Բարկացաւ սրտմտուԹեամբ Տէր ի վերայ
ժողովրդեան Իւրոյ , եւ գարշեցոյց զժա-

ռանգութիւն իւր յոյժ ։
Մատնեաց զնոսա ՚ի ձեռս հեթանոսաց ,
սիրեցին նոցաատելիք իւրեանց , և թշ-
նամիք իւրեանց նեղեցին զնոսա , եւ խո-
նարհ եղեն ՚ի ներքոյ ձեռաց նոցա ։
Բազում անգամ փրկեաց զնոսա , և նոքա
դառնացուցին զնա ՚ի խորհուրդս իւրեանց
և կորացան յանօրէնութեան իւրեանց ։
Հայեցաւ Տէր ՚ի նեղութիւնս նոցա , ՚ի
լսել ձայնի աղօթից նոցա ։
Յիշեաց զուխտ իւր , և ղղջացաւ լսատ բա-
զում ողորմութեան իւրոյ . եւ զնոսա
՚ի գթութիւնս առաջի ամենայն գերելոցդ
նոցա ։
Փրկեա զմեզ , ա՛ռ Աստուած մեր , և ժո-
ղովեա զմեզ ՚ի հեթանոսաց ։
Խոստովան եղիցուք անուան քում սրբոյ ,
և պարծեսցուք յօրհնութիւնս քո ։
Օրհնեալ ա՛ռ Աստուած Իսրայէլի , յաւի-
տեանս յաւիտենից ։
Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն . եղիցի
եղիցի ։

Տունք խգ ։

Նմանող Գոլգոթա է ։ Սաղմս ԺԷ ։ Տունք չԺգ ։

ՍԱՂՄՈՍ ԵԶԵԿԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ՀՐԷԱՍՏԱՆԻ ,
Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՑՈՐՈՒՄ ՀԻՒԱՆԴԱՑԱՒ , ԵՒ
ՑԱՐԵԱՒ Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԵՆՆ ԻՒՐՄԷ

Եռաչեայ լը ։

Ես ասացի ՚ի վերայնում չինէն աւուրց
իմոց , թէ գնացի ես ՚ի դրունս դժոխոց ։
Թողի զամենայն յիտին իմ , և ասացի թէ
այլ ոչ եւս տեսից զփրկութիւն Տեառն
յերկրին կենդանեաց . եւ ոչ եւս տեսից
զմարդ բնակչաց իւրոյ զհանգերձ ։
Պակասեցայ ես յաղքատահոգի իմմէ . այսու-
հետեւ թողի լքի զամենայն զկեանս իմ ։
Եւ գնաց՝ մեկնեաց չինէն հոգի իմ , որ-
պէս զայն՝ որ քակէ զտաղաւար . և եղէ
ես որպէս զատոյն սատարաց՝ մերձ ՚ի
հատանել ։
Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յատաւօ-
ս՛ որպէս ՚ի ձեռս առիծու . այնպէս
խորտակեաց մանրեաց զսկերս իմ , զի յա-
ռաւօտս մինչ ՚ի գիշեր մատնեցայ ։
Որպէս ծիծառն՝ այնպէս ճռեցի , որպէս զա-
ւազն՝ այնպէս մռնչեցի , զի նաւադեցին աչք
իմ ՚ի սեռանելն ։

Հայեցայ ՚ի բարձունս առ տէր Աստուած իմ, որ փրկեացն զիս, և փարատեցոյց իւնէն զգաւս անձին իմոյ։

Տէր, վասն այսորիկ պատմեցաւ քեզ, զարթուսցեր զանձն իմ, դարձուսցեր զհոգի իմ. միխիթարեցայ և կեցի։

Ահա ՚ի խաղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ, փրկեցեր զանձն իմ, զի մի կորեայց, և ընկեցեր յետոյ զամենայն ըզանցեալս իմ։

Զի ոչ Թէ որք ՚ի դժոխս են, խոստովանեսցին առնին առ քեզ. և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ և ոչ յաւտասցին ՚ի ճշմարտութիւնդ քո ամենեքեան որ իջանեն ՚ի դժոխս։

Ապ կենդանիքս օրհնեսցուք զքեզ, Տէր, որպէս և ես այսուհետեւ մանկունս ծընանայց, որ պատմեսցեն զարդարութիւնս քո՝ Տէր փրկութեան իմոյ։

Ես ոչ եւս դադարեցից օրհնել զքեզ յօրհնութիւն նոր զամենայն աւուրս կենդանոյ իմոյ՝ յանդիման տաճարիդ Աստուծոյ։

Փառք Հօր և Որդւոյ և.

ՄԱՂԹԱՆԴ

Յայս կենդանութեան, յայս և ապաւէն փրկութեան, տէր ցխաւս փրկիչ, փրկեա և փարատեայս զգաւս անձին իմոյ։

Մարդասէր, Տէր, վասն որբութեանս մեր քոյ մեր և կսկիծ, և վասն խաչի քոյ պատուականի, ընկալ զաղաչանս մեր եւ կեցոյս զմեզ։

Զարթուր Ա ղաղթս՝ ՚ի վերջ Սրկիրք պատմեն Յանդիման գլուխս ՚ի 77 էջեան։





Համբարձում. Աստուած օրհնութեամբ, եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս: ՍԱՂ. ԽԶ. 5:

ՍԱՂՄՈՍ ՃԺ.

Ալելուիա:

Քրիստոս եղերաբեր տեառն՝ ի քաղաք է, ի յաբիւռեան է ազգս մեռելոցն նորա:

Առաջեն փրկեալք տեառն, զոր փրկեաց ի ձեռաց թշնամւոյն:

Յամենայն գաւառաց ժողովեաց զնոսա, յարեւելից և յարեւմտից, ի հիւսիսոյ և ի ծովէ:

Մեղրեցան նոքա յանապատի յանկոյս ճանապարհի, քաղաք բնակութեան ոչ գտին:

Քաղեան և ծարաւեցան, և անձինք նոցա ի նոսին նուաղեցան:

Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւրեանց, ի վերայ նոցա փրկեաց զնոսա:

Առաքինութեաց նոցա ի ճանապարհ ու-
ղիղ զի երթիցեն ի քաղաք բնակութեան
իւրեանց :
Խոստովան եղիցին Տեառն՝ ողորմութեանց
նորա , սքանչելեաց նորա՝ որդիք մարդկան :
Զի յագեցոյց զանձինս քաղցեալս , և զան-
ձինս կարօտեալս լի սրտի բարութեամբ :
Ոյք նստէին ի խաւարի և ի սուսերս
մահու , կապեալ էին չաղբատութեան
որպէս յերկաթս :
Զի դառնացուցին զբանն Աստուծոյ , և
զխորհուրդս Բարձրելոյն բարկացուցին :
Խոնարհ եղեն ի ցաւս սիրտք նոցա , տկ-
կարացան՝ և ոչ ոք էր որ օգնէր նոցա :
Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւ-
րեանց , ի վշտաց նոցա եհան զնոսա :
Փրկեաց զնոսա ի խաւարէ և ի սուսե-
րաց մահու , և խզեաց զկապանս նոցա :
Խոստովան եղիցին Տեառն՝ ողորմութեանց
նորա , սքանչելեաց նորա՝ որդիք մարդկան :
Զի փշրեաց զդրունս պղնձիս , և զնիգս
երկաթիս խորտակեաց :
Օգնեաց նոցա ի ճանապարհի անօրէնու-
թեան իւրեանց , զի վասն մեղաց իւրեանց
խոնարհ եղեն յոյժ :
Յամենայն կերակրոց գարշէին սիրտք նոցա,

մերձենային մինչեւ ի դրունս մահու :
Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւ-
րեանց , ի վշտաց նոցա ապրեցոյց զնոսա :
Առաքեաց զբան իւր և բժշկեաց զնոսա ,
եւ փրկեաց զնոսա յապականութենէ իւ-
րեանց :
Խոստովան եղիցին Տեառն , ողորմութեանց
նորա , սքանչելեաց նորա՝ որդիք մարդկան :
Մատուսցեն նմա պատարագ օրհնութեան ,
և պատմեսցեն զգործս նորա ցնծութեամբ :
Ոյք իջանէին ի ծով նաւովք , և առնէին
զգործս ի ջուրս բազումս :
Նոքա տեսին զգործս Տեառն , և զքանչե-
լիս նորա ի խորս անդնդոց :
Ասաց՝ և յարեաւ հողմ և մրրիկ , և բարձ-
րացան ալիք նորա :
Ելանէին յերկինս և իջանէին յանդունդս ,
և անձինք նոցա յանձինս իւրեանց մտչե-
ցան :
Խռովեցան ոստանեցան որպէս արբեալք ,
և ամենայն իմաստութիւն նոցա ընկաւ :
Աղաղակեցին առ Տէր ի նեղութեան իւ-
րեանց , ի վշտաց նոցա կեցոյց զնոսա :
Դարձոյց զմրրիկն յօդ՝ և դադարեցոյն ա-
լիք նորա , ուրախ եղեն զի դադարեցոյն , և
առաքինորդեաց նոցա ի նաւահանգիստս

կամայ իւրեանց։
Խոստովան եղիցին Տեառն՝ ողորմութեանց
նորա, սքանչելեաց նորա՝ որդիք մարդկան։
Բարձր արասցեն զնա ի ժողովս ժողովրդոց, և յաթոռս ծերոց օրհնեսցեն զնա։
Զի դարձոյց զգետս ի ցամաք, և զբնացս
ջուրց յերկիր ծարաւուտս։
Աւրար զերկիրն պաղաբեր յաղտաղտուկս,
վասն չարութեան բնակչաց նորա։
Աւրար զանապատն ի ճահիճս ջուրց, և
զերկիրն ծարաւուտ ի բնացս ջուրց։
Բնակեցոյց ի նմա քաղեաղս, և շինեցին
քաղաք բնակութեան իւրեանց։
Վարեցին արտս և տնկեցին այգիս, և ա-
բարին պտուղ արմտեաց իւրեանց։
Օրհնեաց զնոսա՝ և բազմացան յոյժ, և ա-
նասունք նոցա ոչ նուազեցան։
Նուազեցան նոքա և չարչարեցան, ի նե-
ղութենէ չարեաց և ի վշտաց։
Եկն անարգութիւն ի վերայ իշխանաց նո-
ցա, մոլորեցոյց զնոսա յանապատի և ոչ
ի ճանապարհի։
Օգնեաց անանկին յաղքատութեան, ա-
ւաջնորդեաց որպէս խաշին ազգի նոցա։
Տեսցեն ուղիղք և ուրախ եղիցին, և ամե-
նայն անօրէն խցցէ զբերան իւր։

Ո՞վ է իմաստուն՝ որ պահեսցէ զայս, և ի
միտ առցէ զողորմութիւնս Տեառն։
Տունք իբ։

ՍԱՂՄՈՍ ՃԷ.

Օրհնութիւն ազգացոյ ի Դաւիթ։

Պատրաստ է սիրտ իմ, Աստուած, պատ-
րաստ է սիրտ իմ օրհնել և սաղմոս ասել
քեզ փառաք իմովք։
Զարթիր փառք իմ, զարթիր սաղմոսիք
և օրհնութեամբ, և ես զարթեցայ առա-
ւօտուց։
Խոստովան եղէց քեզ ի ժողովրդոս, Տէր,
և սաղմոս ասացից քեզ յազգս։
Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւն
քո, մինչեւ յամպս ճշմարտութիւն քո։
Բարձրեալ եւ դու յերկինս, Աստուած,
և յամենայն երկրի են փառք քո։
Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո աջով
քով և լուր ինձ։
Աստուած խօսեցաւ ի սրբութենէ իւր-
մէ, բարձր եղէց, բաժանեցայց զՍիւքեմ,
և զհովիտն չափով չափեցից։

Իմ է գալայագ և իմ է Մանասէ, եփրեմ
հզօրիչ գլխոյ իմոյ։
Յուդա թագաւոր իմ, Մովաբ աւազան
յուսոյ իմոյ։
Յեդովմէ ուղղեցից զգնացս իմ, եւ ինձ
պղաղդիք հնազանդ եղեն։
Ո՞ տարցէ զիս ՚ի քաղաք ամուր, կամ ո՞
առաջնորդեսցէ ինձ մինչեւ յԵդովմէ։
Թէ ոչ դու, Աստուած, որ մերժեցեր զմեզ,
և ոչ ելեր, Աստուած, ընդ զօրս մեր։
Տուր մեզ օգնական ՚ի նեղութեան, զի
սուտ է փրկութիւն մարդոյ։
Աստուծով արասցուք զօրութիւն, և նա
յամօթ արասցէ զթշնամիս մեր։
Տունք ժգ։

ՍԱՂՄՈՍ ՃԸ.

Ի կատարած. սաղմոս ՚ի Դաւիթ։

Աստուած, օրհնութեան իմոյ մի լռեր,
զի բերան մեղաւորի բերան նենգաւորի
բացաւ ՚ի վերայ իմ։
Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ, և
բանիւատելութեան պատերազմեցին զիս։
Մարտեան ընդ իս ՚ի տարապարտուց, փո-
խանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես
յաղօթս կայի։

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բա-
րւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ։
Կացո ՚ի վերայ նորա մեղաւոր, սատանայ
կացցէ ընդ աջմէ նորա։
Ի դատաստանի իւրում ելցէ դատապար-
տեալ, և աղօթք նորա ՚ի մեղս դարձցին։
Եղիցին աւուրք նորա նուազ, և զպաշտօնու-
թիւն նորա՝ զայն այլ տարցի։
Եղիցին որդիք նորա որբ, և կին նորա այրի.
սահեսցին փոփոխեսցին, որդիք նորա մու-
րացք եղիցին, եւ ելցեն ՚ի քնակութենէ
իւրեանց։
Քննեսցէ փոխատու զամենայն ինչս նորա,
յափշտակեսցեն օտարք զվաստակս նորա։
Մի գոյցի օգնական նմա, և մի որ ողոր-
մեսցի ՚ի վերայ որբոց նորա։
Եղիցին որդիք նորա ՚ի սատակումն, և յա-
ջիկ քննեսցի անուն նորա։
Յիշեսցին մեղք հօր նորա առաջի Տեառն,
և մեղք մօր նորա մի քննեսցին, և եղիցին
առաջի Տեառն յամենայն ժամ։
Սատակեսցի յերկրէ յիշատակ նորա, փո-
խանակ զի ոչ յիշեաց առնել ողորմու-
թիւն։
Հալածեաց զայր աղքատ և զանանկ, սպա-
նանել զայն՝ որ խոնարհ է սրտիւ։

Սիրեայ զանէծս՝ և եղեւ նմա, ոչ կամեցաւ
զօրհնութիւն, հեռի եղիցի ի նմանէ։
Զգեցաւ զանէծս որպէս հանդերձ, մտցէ
որպէս ջուր ի փոր նորա, որպէս ձէթ ընդ
ոսկերս նորա։
Եղիցի նմա որպէս հանդերձ զի ագանիւ,
որպէս գօտի՝ որ ածէ հանապազ ընդ մէջ։
Ա՛յս գործ է այնոցիկ՝ որ չարաբաւս կային
զինեն տէր, և այք խօսեսցին չար զանձնէ
իմմէ։
Ա՛յլ դու տէր, տէր, արա ընդ իս ըստ ան-
ուան քումմ, զի քաղցր է ողորմութիւն քո,
և փրկեա զիս, զի աղքատ և անանկ եմ ես։
Սիրտ իմ խռովեցաւ ի փորի իմում, և ես
որպէս աստուեր ի խոնարհիլ իմում պա-
կասեցայ, և թօթափեցայ որպէս մարախ։
Ծունկք իմ տկարացան ի պահոց, և մարմին իմ այլագունեաց յիւղոյ։
Եղէ ես նախատինս նոցա, տեսին զիս և շար-
ժեցին զգլուխս իւրեանց։
Օգնեա ինձ, տէր Աստուած իմ, և փրկեա
զիս ըստ ողորմութեան քումմ։
Ծանիցեն զի ձեռն քո այս է, և դու, տէր,
արարեր զայս։
Նզաք անիծանիցեն՝ և դու օրհնեսցես, այք
յարուցեալ են ի վերայ իմ՝ ամօթ կրեսցեն

ցեն, այլ ծառայ քո ուրախ եղիցի ի քէն։
Զգեցցին զամօթ որ չարախօս կային զանձ-
նէ իմմէ, և որկրեն որպէս կրկնոց զամօթ
իւրեանց զիւրեանց։
Ա՛յլ ես խոստովան եղէց առ տէր յոյժ
բերանով իմով, ի մէջ բազմաց օրհնեցից
զքեզ։
Զի եկաց նա ընդ աջմէ անանկին, փրկել
զիս յայնցանէ՝ այք հալածեն զանձն իմ։

Տուն իբ։

ՍԱՂՄՈՍ ՃԹ։

ի կատարած. սաղմոս ի Դաւիթ։

Ա՛ստ տէր յՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմ
մէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուա-
նդան ոտից քոց։
Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ
Տէր ի Սիովնէ, և տիրեսցես դու ի մէջ
թշնամեաց քոց։
Ընդ քեզ է ինձ սկիզբն ասուրց զօրու-
թեան, ի վայելչութիւն սրբոց քոց յա-
ռաւօտս ծնայ
զքեզ։
Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի, թէ
դու ես քահանայ յաւիտեան ըստ կար-

դին Մելքիսեդեկի, եւ տէր ընդ ամէն քուրմէ։

Խորտակեսցէ յաւուր բարկութեան զթագաւորս. դատի զհեթանոսս և բազում առնէ զկարուածս, և խորտակեսցէ ըզգլուխս բազմաց յերկրի։

Ջուխա ի ճանապարհի արբուսցէ, վասն այսորիկ և բարձր արասցէ զգլուխս։

Տունք գ։ Գոբզաս խը։

ՍԱՂՄՈՍ ՃԺ.

Ալելուիա։

Յոտանէն եղէց քեզ, տէր, բղխրով սրտիս լինիլ, ի խորհուրդս ուղղոց ի ժողովուրդս. մեծ են գործք տեառն, և բնենեալ են յամենայնի կամք նորա։

Խոստովանութիւն եւ վայելչութիւն են գործք նորա, արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից։

Յիշատակ արար սքանչելեաց իւրոց ուղղոց. ողորմած գթած է տէր, կերակուր տայ երկիւղածաց իւրոց։

Յիշեսցէ յաւիտենից զուխտ իւր, զգօրութիւն գործոց իւրոց պատուիրեսցէ ժողովուրդեան իւրում։

Տալնոցա զժառանգութիւն հեթանոսաց, և գործք ձեռաց նորա արդարութիւն և իրաւունք են։

Հաւատարիմ են յամենայնի պատուիրանք նորա, հաստատեալ են յաւիտեանս յաւիտենից, արարեալ են ճշմարտութեամբ և ուղղութեամբ։

Փրկութիւն առաքեաց տէր ժողովրդեան իւրում, պատուիրեաց յաւիտենից զուխտ իւր. սուրբ և ահեղ է անուն նորա։

Սկիզբն զգօնութեան երկիւղ տեառն, իմաստութիւն բարի ամենեցուն՝ որ առնեն, եւ օրհնութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից։

Տունք բ։

ՍԱՂՄՈՍ ՃԺԱ.

Ալելուիա. ի վերայ ապաշխարութեան, Անգիայ և Զաքարիայ։

Երանելի է այր՝ որ երկնչի ի տեառնէ, զպատուիրանս նորա նա կամի յոյժ։

Հզօր եղիցի երկրի զաւակ նորա, և աղգ ուղղոց օրհնեսցի։

Փառք և մեծութիւն են ի տան նորա, արդարութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից։

Ծագեալ ի խաւարի լոյս ուղղոյ, սըրբ-
մանդ գիշած և ապդար է տէր։
Գաղդը այր սղջմի և տայ փոխ, յօրինէ
զբան իւր ի դատաստանի, զի յաւիտեան
նա մի տատանեսցի։
Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն, ի
համբաւէ չարէ նա մի երկիցէ։
Պատրաստ է սիրտ նորա յուսալ առ Ա-
ստուած։
Հաստատեալ է սիրտ նորա և նա մի եր-
կիցէ, մինչեւ տեսցէ ի թշնամիս իւր։
Սփռեալ եւ եւս աղքատաց. արդարու-
թիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից,
և եղջիւր նորա բարձր եղիցի փառօք։
Մեղաւորն տեսցէ և բարկասցի, զատա-
մունս իւր կրճտեսցէ և հալեսցի, և ցան-
կութիւն մեղաւորաց կորիցէ։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԳ։

Ալէլուիա։

Օրհնեցէք, մանկունք, զՏէր, և օրհնեցէք
զանուն Տեառն։
Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հե-
տէ մինչեւ յաւիտեան։

Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու օրհ-
նեալ է անուն Տեառն։
Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր,
և յերկաւորունս են փառք նորա։
Ո՞վ է որպէս աէր Աստուած մեր, ի բարձ-
ունս բնակեալ, եւ զխոնարհս առնուն
յերկինս և յերկրի։
Յարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր
առնէ զաստապետաց յաղքեւոյ։
Նստուցանէ զնոսա լիշանս ընդ իշխանս
ժողովրդեան իւրոյ։
Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախա-
միտ, որպէս մայր որդւովք բերկրեալ։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԳ։

Ալէլուիա։

Ելանելն Իսրայելի յեգիպտոսէ, տանն
Յակովբայ ի ժողովրդենէ պարպրեալ։
Եղեւ Հրէաստան սրբութիւն նորա, եւ
Իսրայէլ իշխանութիւն նորա։
Ծով եւես և փախեաւ, և Յորդանան
անդրէն դարձաւ։
Լերինք ցնծացին որպէս խոյք, և բլուրք
որպէս գառինք մաքենայ։

Չի է քեզ, Ծով, զի աեաեր և վախեաը, կամ դու Յորդանան՝ զի դարձար անդրէն։
Լերինք, ցնծացէք որպէս խոյք, և բլուրք՝ որպէս գառինք մաքեաց։
Ցերեսաց Տեառն սասանեցաւ երկիր, յերեսաց Աստուծոյ Յակովբայ։
Ո դարձոյց զվէմն ՚ի վտակս ջուրց, և զապառաժն յաղբերակունս։
Մի մեզ, Տէր, մի մեզ, այլ անուան քումմ տուր զփառս, վասն ողորմութեան եւ ճշմարտութեան քոյ։
Մի երբէք ասասցեն ՚ի հեթանոսս, Թէ ո՞ւր է Աստուած նոցա։
Աստուած մեր յերկինս և յերկրի, զամենայն զոր ինչ կամեցաւ և արար։
Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են, ձեռագործք են որդւոց մարդկան։
Բերան ունին՝ և ոչ խօսին, աչս ունին՝ և ոչ տեսանեն։
Ականջս ունին՝ և ոչ լսեն, ունչս ունին՝ և ոչ հոտոտեն։
Ձեռս ունին՝ և ոչ շօշափեն, ոտս ունին՝ և ոչ գնան. և ոչ գոյ բարբառ ՚ի կոկորդս նոցա։
Նմանս նոցա եղիցին՝ որք արարին զնոսա, ամենեքեան որք յուսացեալ են ՚ի նոսա։

Տունն Իսրայելի յուսացաւ ՚ի Տէր, օգնական ընդունելի է նոցա։
Տունն Ահարովնի յուսացաւ ՚ի Տէր, օգնական ընկերելի է նոցա։
Երկիւղածք Տեառն յուսացան ՚ի Տէր, օգնական և փրկիչ է նոցա։
Յիշեաց զմեզ Տէր և օրհնեաց զմեզ. օրհնեաց Տէր զտունն Իսրայելի. օրհնեաց Տէր զտունն Ահարովնի։
Օրհնեաց Տէր զերկիւղածս իւր, զփոքրս կամ և զմեծամեծս։
Յաւելցէ ՚ի ձեզ Տէր, ՚ի ձեզ և յորդիս ձեր։
Օրհնեալ էք դուք ՚ի Տեառնէ, որ արար զերկինս և զերկիր։
Երկինք երկնից Տեառն են, և զերկիրսետ որդւոց մարդկան։
Ոչ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ, և ոչ ամենեքեան՝ որ իջանեն ՚ի դժոխս։
Ա՛լ կենդանիքս օրհնեացուք զՏէր, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Տունք խդ։ Գոբզայս ծբ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԳ.

Աւետիս։

Սիրեցի զի լսիցէ Տէր ձայն աղօթից իմոց. խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առնա։
Շրջեցան զինեւ երկունք մահու, և վիշտք դժոխոց պատին զիս։
Չնեղութիւն և զանձկութիւն գտի, եւ զանուն Տեառն կարդացի։
Ո՛ Տէր, փրկեա զանձն իմ. ողորմած Աստուած մեր ողորմի և պահէ զաղայս Տէր։
Ես խոնարհ եղէ և Տէր կեցոյց զիս, դարձ անձն իմ ի հանգիստ քո՝ զի Տէր օգնեաց քեզ։
Փրկեաց զանձն իմ ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ ի գայթակղութենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն յերկիր կենդանեաց։

Տունք ղ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ.

Աւետիս։

Հաւատացի զոր և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ։

Ես ասացի ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է։
Զինչ տացէ արիւնուր Տեառն, ընդ ամենայնի զոր ետ ինձ։
Բաժակ փրկութեան ընկալայց, և զանուն Տեառն կարդացի։
Զաղօթս իմ Տեառն տացէ առաջի ամենայն ժողովրդեան նորա։
Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց նորա. ո՛ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քոյ։
Հատեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն Տեառն կարդացից։
Զաղօթս իմ Տեառն տացէ առաջի ամենայն ժողովրդեան նորա, ի գաւիթս տանն Տեառն, և ի մէջ քո, Երուսաղէմ։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ.

Աւետիս։

Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք, գովեցէք զնա ամենայն ժողովուրդք։
Զօրացաւ ողորմութիւն նորա ի վերայ մեր, ճշմարտութիւն Տեառն մնայէ յաւիտեան։

Տունք ր։

ՍԱՂՄՈՍ ՃԺԵ·

Ալելուիա·

Խոստման եղեր ուք տեառն՝ ով բարի է, ով յաւիտեան է ողորմութիւն նորա։
Ասասցէ տունն Իսրայելի՝ ով բարի է, ով յաւիտեան է ողորմութիւն նորա։
Ասասցեն տունն Ահարոնի, ով յաւիտեան է ողորմութիւն նորա։
Ասասցեն երկիւղածք տեառն՝ ով բարի է, ով յաւիտեան է ողորմութիւն նորա։
Ի նեղութեան կարդացի առ տէր, և լուաւ ինձ յանդորր։
Տէր է իմ օգնական և ես ոչ երկեայց· զի՞ արասցէ ինձ մարդ։
Տէր է իմ օգնական, և ես տեսից ի թշնամիս իմ։
Բարի է յուսալ ի տէր՝ քան յուսալ ի մարդ։
Բարի է յուսալ ի տէր՝ քան յուսալ ի իշխանս։
Ամենայն ազինք շրջեցան զինեաւ, և անուամբ տեառն յաղթեցի նոցա։
Շրջելով շրջեցան զինեաւ, և պաշարեցին զիս ի միասին, և անուամբ տեառն վանեցի զնոսա։

Շուրջ եղեն զինեաւ որպէս մեղուք, վառեցան բորբոքեցան որպէս փուշք ի հուր, և անուամբ տեառն մերժեցի զնոսա։
Ի մերժելն դրդուեցայ, և եղէ մերձ ի դլորել, և տէր ընկալաւ զիս։
Զօրութիւն իմ և օգնութիւն իմ տէր, և եղեւ ինձ ի փրկութիւն։
Ձայն ցնծութեան փրկութեան՝ ի յարկս արդարոյ։
Աջ տեառն արար զօրութիւն, աջ տեառն բարձր արար զիս, եւ աջ տեառն արար զօրութիւն։
Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործս տեառն։
Խրատելով խրատեաց զիս տէր, և ի մահ ոչ մատնեաց։
Բացէք ինձ զդրունս արդարութեան՝ զի մտից ընդ այն, և խոստովան եղէց տեառն։
Ա՛յս դուռն տեառն է, և արդարք մտանեն ընդ սա։
Խոստովան եղէց քեզ, տէր, զի լուար ինձ, և եղեր ինձ ի փրկութիւն։
Վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան։
Ի տեառնէ եղեւ այս, և է սքանչելի առաջի աչաց մերոց։

Ա յսօր է զոր արար Տէր, եկայք յնծասցուք եւ ուրախ եղիցուք ի նմա։
Ո՛ Տէր, փրկեա, ո՛ Տէր, առաջնորդեա. արհնեալ որ գալոցդ ես յանուն Տեառն, եւ օրհնեցաք զքեզ ի տանէ Տեառն։
Տէր Աստուած մեր երեւեցար մեզ, տո՛ւր արիք ոճս ուրախութեան կանխաւ մինչ չեւ յանկիւնս սեղանոյ։
Աստուած իմ ես դու՝ խոստովան եղէց քեզ, Աստուած իմ ես դու՝ եւ բարձր սո՛ւր արից զքեզ։
Խոստովան եղէց քեզ, Տէր, զի լսեր ինձ, եւ եղեր ինձ ի փրկութիւն։
Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
Տունք իւր։ Գոբզայ խղ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԴ.

Ալէլուիա։

Երանեալ են անբիծք ի ճանապարհի, եւ որք գնան յօրէնս Տեառն։
Երանի որք քննեն զվկայութիւնս նորա, ընդորով սրտիւ խնդրեսցեն զնա։

Ոչ թէ որք գործեն զանօրէնութիւն, ի ճանապարհս նորա գնացին։
Դու պատուիրեցեր զպատուիրանս քո, ի պահել լինել յոյժ։
Ոչ թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ, ի պահել լինել զարդարութիւնս քո։
Յանիժամ ես ոչ ամաչէի ի դիւրանալ լինել ի պատուիրանս քո։
Խոստովան եղէց քեզ, Տէր, յուղղութիւն սրտի իմոյ, որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քո։
Զիրաւունս քո պահեցի, մի թողուր զիս մինչ ի սպառ։
Ի՞նչ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ ի պահել զբանս քո։
Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ, մի մերժեր զիս ի պատուիրանացդ քոց։
Ի սրտի իմում թագուցի զբանս քո, որպէս զի մի մեղայց քեզ։
Օրհնեալ ես դու, Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։
Շրթամբք իմովք պատմեցից զամենայն իրաւունս բերանոյ քո։
Ի ճանապարհս վկայութեանց քոց զուարճացայ, որպէս յամենայն ի մեծութեան։
Ի պատուիրանս քո հոգացայ, եւ դի՛տ

ջացայ ՚ի ճանապարհս քո ։
Ձիրաւունս քո խօսեցայ , և ոչ մոռացայ
զբանս քո ։
Հատո ծառայի քումմ , զի կեցից եւ պա-
հեցից զբանս քո ։
Զաչս զաչս իմ , և նայեցայց ՚ի սքանչե-
լիս օրինաց քոց ։
Պ անդուխտ եմ ես յերկրի , մի թագու-
ցաներ յինէն զպատուիրանս քո ։
Փափաքեաց անձն իմ , ՚ի ցանկալ ինձ մի-
րուաւունս քո յամենայն ժամ ։
Սաստեցեր սմբարտաւանից , անիծեալ որք
խոտորեցան ՚ի պատուիրանաց քոց ։
Ի բաց արա յինէն զնախատինս և զարհա-
մարհանս , զի զվկայութիւնս քո լանդրեցի ։
Քանզի նստան իշխանք և չարախօսեին զի-
նէն , այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո ։
Զի վկայութիւնք քո խօսք իմ էին , և խոր-
հուրդք իմ արդարութիւն քո ։
Մերձեցաւ անձն իմ ՚ի հող , տէր , կեցո
զիս ըստ բանի քումմ ։
Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝ և լսեր
ինձ , ուս ինձ զարդարութիւնս քո ։
Ի ճանապարհս արդարութեանց քոց ի-
մաստուն արա զիս , և քննեցից զքանչե-
լիս քո ։

Տ քնեցաւ անձն իմ առ ՚ի ձանձրանալ
հաստատեա զիս ՚ի բանս քո ։
Զճանապարհս մեղաց ՚ի բաց արա յինէն ,
և օրէնս քո ողորմեա ինձ ։
Զճանապարհս ճշմարտութեան քո ընտրե-
ցի , և զկրաւունս քո ես ոչ մոռացայ ։
Մերձեցայ ես ՚ի վկայութիւնս քո , տէր ,
մի յամօթ առներ զիս ։
Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթա-
ցայ , զի անդորր արարեր սրտի իմոյ ։
Օրէնսդէտ արա զիս , տէր , ՚ի ճանապար-
հըս լրաւանց քոց , և խնդրեցից զնա յա-
մենայն ժամ ։
Իմաստուն արա զիս , և քննեցից զօրէնս
քո , և պահեցից զնա բովորով սրտիւ ի-
մով ։
Առաջնորդեա ինձ ՚ի շաւիղս պատուիրա-
նաց քոց , զի ընդ նոսա հաճեցայ ։
Խոնարհեցո զսիրտ իմ ՚ի վկայութիւնս քո ,
և մի յագահութիւն ։
Դարձո զաչս իմ զի մի տեսից զնանրու-
թիւն , ՚ի ճանապարհս քո կեցո զիս ։
Հաստատեա ծառայի քումմ՝ զբան քո
յերկիւղ քո ։
Հան յինէն զնախատինս զոր և կարծեցի ,
զի դատաստանք քո քաղցր են ։

Ա.Հա ցանկացայ պատուիրանաց քոց, յորս
գտրուԹեան քում կեցո զիս։
Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմուԹիւն քո, Տէր,
և փրկուԹիւն քո ըստ բանի քում։
Տայ պատասխանի ոյք նախատեն զիս բա-
նիւք, զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ
զբան ճշմարտուԹեան մինչեւ յոյժ, զի
յիրաւունս քո յուսացայ։
Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւի-
տեան և յաւիտեանս յաւիտենից։
Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս
քո խնդրեցի։
Խօսէի զվկայուԹիւնս քո առաջի Թագա-
ւորաց, և ոչ ամաչէի։
Խորհէի ՚ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի։
Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո
զոր սիրեցի, և խորհէի յարդարուԹեան
քում։
Ցիշեա զբան ծառայի քո, յոր և յուսա-
ցուցեր զիս։
Սա մխիԹարեսէ զիս ՚ի խոնարհուԹեան
իմում, զի բանք քո կեցոյց զիս։
Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ,
այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։
Ցիշեցի զվճռաւունս քո յաւիտենից, Տէր,

և մխիԹարեցայ։
ՏրամուԹիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց,
և ոչ զՔեզնից զօրէնս քո։
Գովելի են ինձ իրաւունք քո, ՚ի տեղւոջ
պանդխտուԹեան իմոյ։
Ցիշեցի ՚ի գիշերի զանուն քո, Տէր, և պա-
հեցի զօրէնս քո։
Սա եղեւ ինձ ճանապարհ ՚ի կեանս, զի
զարդարուԹիւնս քո խնդրեցի։

Տունք ծգ։

Ա.ԱԼԵՓԲԱ։

Բաժին իմ ես դու, Տէր, ասացի պահել
ինձ զօրէնս քո։
Աղաչեցի զերեսս քո բովորով սրտիւ իմով,
ողորմեա ինձ ըստ բանի քում։
Խորհեցայ ՚ի ճանապարհս իմ, և դարձու-
ցի զոտս իմ ՚ի վկայուԹիւնս քո։
Պատրաստեցայ և ոչ խռովեցայ, զի պա-
հեցի զպատուիրանս քո։
Տուռունք մեղաց պատեցան զինեւ, այլ
զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել
առ քեզ, վասն իրաւանց և արդարու-
Թեան քո։

Հաղորդ էի ես ամենայն երկիւղածութ.քոյ,
որոց պահեալ է զպատուիրանս քո։
Ողորմութեամբ տեառն լի եղեւ երկիր,
զարդարութիւնս քո ուսո ինձ։
Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քումմ,
տէր, ըստ բանի քումմ։
Քաղցրութիւն զնարատ եւ զդիւտութիւն
ուսո ինձ, զի ի պատուիրանս քո ես հաւատացի։
Մինչեւ խոնարհեալ էի ես՝ մեղայ, վասն
այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։
Քաջդ ես դու, տէր, և քաղցրութեամբ
քովդ ուսո ինձ զարդարութիւնս քո։
Բազմացան յիս անիրաւութիւնք ամբարտաւանից, այլ ես բոլորով սրտիւ իմով
քննեցի զպատուիրանս քո։
Մածաւ որպէս կաթն սիրտք նոցա, այլ
ես զօրէնս քո խոսեցայ։
Բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս, որպէս ուսցայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան զբիւր
հաղարս ոսկւոյ և արծաթոյ։
Ձեռք քո արարին և ստեղծին զիս, իմաստուն արա զիս՝ և ուսցայց զպատուիրանս քո։
Երկիւղածք քո տեսցեն զիս և ուրախ եղիցին, զի ես ի բանս քո յուսացայ։

Ծանեայ, տէր, զի արդարութեամբ են
դատաստանք քո. յիրաւի խոնարհեցուցեր զիս։
Եղիցի ողորմութիւն քո ի մխիթարել զիս,
ըստ բանի քումմ զծառայսդ քո։
Եկեսցեն յիս գթութիւնք քո և կեցից,
զի օրէնք քո իսոսք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որ ի տարապարտուց անիրաւեցան յիս, այլ ես հոգացայ ի պատուիրանս քո։
Խրատեսցեն զիս երկիւղածք քո, և այք
ճանաչեն զվկայութիւնս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութեան
քումմ, զի մի ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ ի փրկութիւնս քո,
զի ես ի բանս քո յուսացայ։
Սպառեցին աչք իմ բանի քումմ, ասացի՝
ե՞րբ մխիթարեսցե զիս։
Եղէ ես որպէս տիկ ի պարզի, զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո, ե՞րբ
արասցես ինձ իրաւունս ի հալածչացն իմոց։
Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս, այլ
ոչ որպէս զօրէնս քո։
Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են, ի
նանիր հալածեցին զիս, օգնեա ինձ։

Փոքր մի եւս և կորուսանէին զիս յերկրի,
այլ ես ոչ Թողի զայսոսիկ քո։
Ընտ ողորմելեան քում կեցո զիս, եւ
պահեցից զկայութիւնս բերանոյ քոյ։
Յաւիտեան, Տէր, քան քո կայ յերկինս,
ազգէ մինչեւ յազգ ճշմարտութիւն քո։
Հաստատեցեր զերկիր, եւ կայ։
Հրամանի քում միոյ օրս, զի ամենայն
ծառայք քո են։
Եթէ ոչ օրէնք քո խոսք իմ էին, կանխաւ
եւս արդեօք կորուսեալ էի ի նուաստու-
թեան իմում։
Յաւիտեան ոչ մոռասցայց զարդարութիւնս
քո, զի նոքօք կեցուցեր զիս։
Քո եմ ես եւ կեցո զիս, զի զարդարու-
թիւնս քո խնդրեցի։
Ինձ սպասեցին մեղաւորք ի կորուսանել,
զի զկայութիւնս քո ես ի միտ առի։
Յամենայն կատարած տեսի զվախճան,
յոյժ անդորր էին ինձ պատուիրանք քո։
Որպէս սիրեցի զօրէնս քո, զօրհնութեամբ
խոսք իմ էին։
Քան զԹշնամիս իմ խնամատուն արարեր զիս
ի պատուիրանս քո, զի յաւիտեան իմ
էին։
Քան զամենայն ուսուցիչս իմ խնամատուն

եղէ, զի վկայութիւնք քո խոսք իմ էին։
Քան զծերս խնամատուն եղէ, զի զպատ-
ուիրանս քո քննեցի։
Յամենայն ճանապարհէ չարէ արգելի
զոտս իմ, որպէս զի պահեցից զբանս քո։
Ձկրաւանէ քոց ես ոչ խոտորեցայ, զի դուն
օրէնսդէտ արարեր զիս։
Որպէս զի քաղցր են ի բերան իմ բանք քո՝
քան զմեղր բերանոյ իմոյ։
Ի պատուիրանաց քոց լինջեալ՝ ատեցի
զամենայն ճանապարհս չարոյ, զի դուն
օրէնսդէտ արարեր զիս։
Ճրագ է բան քո ոտից իմոց, և լոյս ստից
շաւղաց իմոց։
Երդուայ և հաստատեցի, զի պահեցից
զամենայն իրաւունս արդարութեան քո։
Խոնարհ եղէ մինչեւ յոյժ, Տէր, կեցո զիս
քոսո բանի քում։
Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեաս, Տէր, և
զկրաւունս քո ուսո ինձ։
Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ,
և զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Եդին ինձ մեղաւորք որոգայթ, ի պատ-
ուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ։
Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւի-
տեան, զի ցնծութիւն է սրտի իմոյ։

Խոնարհեցուցի զկերտս իմ առնել զարդարութիւնս քո յաւիտեան, վասն հատուցման։

Զանօրէնս առեալ, և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու, և ես ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք ինէն, չարք, և քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ։

Օգնեա ինձ ըստ բանի քում և կեցո զիս, և մի յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ։

Օգնեա ինձ և ապրեցո զիս, և խորհեցայց միրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան որ ապստամբ եղեն յարդարութեանց քոց, զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի, վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Տունք կդ։

Աղեփա։

Արարի իրաւունս և արդարութիւն, մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց։

Ընկալ զծառայս քո ի բարի, զի մի ամբարտաւանք ղլուեսցեն զիս։

Սպառեցին աչք իմ փրկութեան քում, տէր, և բանից արդարութեան քո։

Արա ընդ ծառայի քում, տէր, ըստ ողորմութեան քում, զարդարութիւս քո ուսո ինձ։

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո։

Ժամ է պաշտել զտէր, խափանեցին զօրէնս քո։

Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո, քան զամենայն ոսկի և տպազիոն։

Ամենայն պատուիրանք քո աջողեցան ինձ, զի ատեցի ես զճանապարհս չարաց։

Քանչելի են վկայութիւնք քո, վասն այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։

Յայտնութիւն բանից քոց լուսաւոր և իմաստուն առնէ զտղայս։

Զբերան իմ բացի և առի հոգի, ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ։

Նայեա առ իս և ողորմեա ինձ, ըստ իրաւունս սիրողաց անուան քո։

Ճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում, եւ մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք։

Փրկեա զիս ի ղպտարութենէ մարդկան,

և պահեցիր զպատուիրանս քո ։
Ներեաց զերեսս քո ի ծառայս քո, և ո-
ող ինձ զարդարութիւնս քո ։
Վտակք ջուրց իջին յաչաց իմոց, զի ո՛չ
պահեցին զօրէնս քո ։
Արդար ես դու, տէր, եւ ուղիղ են դա-
տաստանք քո ։
Պատուիրեցեր զարդարութիւն վկայու-
թեանց քոց, և ճշմարիտ են յոյժ ։
Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան
զբանս քո թշնամիք իմ ։
Ընտրեալ են բանք քո յոյժ, և ծառայ քո
սիրեաց զսա ։
Մանուկ եմ ես և արհամարհեալ, և զար-
դարութիւնս քո ես ո՛չ մոռացայ ։
Արդարութիւն քո արդարութիւն յաւի-
տենից, և օրէնք քո ճշմարիտ են ։
Նեղութիւնք և վիշտք գտին զիս, և պա-
տուիրանք քո խոսք իմ էին ։
Արդարութեամբ են վկայութիւնք քո յա-
ւիտեան, խնամատար սորա և կեցո զիս ։
Կարդասցի առ քեզ բողոքով սրտիս իմով,
լուր ինձ, տէր, զի զարդարութիւնս քո
խնդրեցի ։
Աղաղակեցի առ քեզ և փրկեա զիս, եւ
պահեցից զվկայութիւնս քո ։

Կանխեցի առաջամուբ՝ աղաղակեցի, եւ
ես ի բանս քո յուսացայ ։
Կանխեցին աչք իմ առաւօտու ի խոսել
ինձ զբանս քո ։
Ձայնի խնամով լուր, տէր, ըստ ողորմութեան
քոմ՝ տէր, յիրաւունս քո կեցո զիս ։
Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէ-
նութիւն, զի յօրինաց քոց հեռի եղեն ։
Մերձ ես դու, տէր, և ամենայն պատուի-
րանք քո ճշմարիտ են ։
Ի սկզբանէ ծանեայ ի վկայութեանց քոց,
զի յաւիտեան հաստատեցեր զնոսա ։
Տես զխոնարհութիւն իմ և փրկեա զիս,
զի զօրէնս քո ես ոչ մոռացայ ։
Դատաստան դատաստանաց իմ և փրկեա զիս,
եւ ըստ բանի քոմ կեցո զիս ։
Հեռի է ի մեղաւորաց փրկութիւն, զի
զիրաւունս քո ոչ պահեցին ։
Գթութիւնք քո բազում են, տէր, և ըստ
իրաւանց քոց կեցո զիս ։
Բազում են որ հալածեն և նեղեն զիս,
ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ ։
Հայեի յանհպումն և մաշէի, զի զպատ-
ուիրանս քո ոչ պահեցին ։
Տես՝ զի զպատուիրանս քո սիրեցի, տէր,
ողորմութեամբ քո կեցո զիս ։

Սիրեցի քանից քոյ ճշմարտութիւն է, յա-
ւիտեան են ամենայն իրաւունք արդա-
րութեան քո։
Իշխանք հալածեցին զիս ի նանիր, և ի
բանից քոյ երկեաւ սիրտ իմ։
Յնծայեայ ես ի բանս քո, որպէս այն որ
գտանէ աւար բազում։
Զմեղս առեյի և անարդեցի, և զօրէնս քո
սիրեցի։
Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ,
վասն իրաւանց և արդարութեան քո։
Խաղաղութիւն բազում է այնոցիկ որ սի-
րեն զօրէնս քո, եւ ոչ գոյ ի նոսա գայ-
թակղութիւն։
Սպասեցի փրկութեան քումմ, Տէր, և զպ
պատուիրանս քո սիրեցի։
Պահեայ անձն իմ զվկայութիւնս քո, և
սիրեայ զնոսա յոյժ։
Պահեցից զպատուիրանս և զվկայու-
նս քո, զի ամենայն ճանապարհք իմ ա-
ոաջի քո են։
Մերձեսցին լինդրուածք իմ առաջի քո,
Տէր, ըստ բանի քումմ իմաստուն ա՛ր զիս։
Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, և ըս-
նիւ քով փրկեա զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո,

յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւ-
նըս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն
պատուիրանք քո արդարութեամբ են։
Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի
զպատուիրանս քո ընտրեցի։
Յանկացայ փրկութեան քումմ, Տէր, և օ-
րէնք քո խօսք իմ էին։
Կեսցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ, եւ ի-
րաւունք քո օգնեսցեն ինձ։
Մոլորեցայ ես որպէս զչխար կորուսեալ,
խնդրեա զծառայ քո, զի զպատուիրան
քո ես ոչ մոռացայ։

Տունք ծգ։

Կանոնս Գարեգին է։ Սաղմոս ժդ։ Տունք ոկբ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՑԵԱՑ
ԿԱՑՏԱԿՆԱՄԱՓՈՒՐ ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԷԻՆ
Եաչէյ խբ։

Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն նոր,
զի իշխանութիւն նորա ի բարձունս վա-
ոաւորի։
Եւ անուն նորա փառաւորեալ է ի ծա-
գոյ մինչեւ ի ծագս երկրի։

Ձայք քննէին ի ծով նաւուք, կղզիք եւ ամենայն բնակիչք նոցա ընդ նոսա։

Ուրախ եղիցի անապատն՝ եւ ամենայն բնակիչք իւր, ուրախ եղիցին բանակք եւ խաչք Կեդարայ. եւ ուրախ եղիցին բնակիչք վիհոյ վիմին։

Ի գլխոյ լերանց գոչեսցեն, ասացեն զփառս Աստուծոյ. եւ զքաջութիւն նորա կղզիք պատմեսցեն։

Տէր, Աստուած զօրութեանց, զիմեալ գոյ զօրութեանել զպատերազմ, յարուցանել զնախանձ. փող հարկանել՝ գոչել ի վերայ թշնամեաց իւրոց զօրութեամբ բազմաւ։

Ուրախ եղիցին երկինք ի վերուստ, եւ ամք յօղեսցեն զարդարութիւն։

Բղխեսցէ երկիր զաղբիւրութիւն, եւ զարդարութիւն աւս հասարակ բղխեսցէ։

ԱՂՕԹՔ ՅՈՎՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻ

Ի ձեզաւթեան խնամ եմ աւս Տէր կարդացի, եւ լուաւ Աստուած յանդիմդոյ պժոխոյ ողաղակի իմում։

Լուր, Տէր, ձայնի իմում. զի ընկեցեր զիս ի խորս ծովու, եւ շրջանք գետոյ պաշարեցին զիս։

Ամենայն ղեօսանք քո եւ ալիք քո անձին ի վերայ իմ. եւ ասացի՝ Թէ մերժեցայ ես աչաց քոց։

Արդ լսէ Թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քո, զի հեղան զինեւ ջուրք մինչեւ յանձն իմ, եւ անդունդք անհնարինք պաշարեցին զիս։

Եմուռս գլխոյ իմ ընդ վտակս լերանց, իջի ես ի խորս երկրի՝ եւ առեալ զինիս նոցա, զի էին որպէս ալիք յաւիտենից, եւ ելցեն յապականութենէ կեանք իմ։

Առ քեզ, տէր Աստուած իմ, ի հնազանել անձին իմոյ կարդացի, եւ գքեզ Տէր յիշեցի, եւ մտցեն ազօթք իմ ի տաճար սուրբ քո։

Զի որ պահեին զնանգնութիւն եւ զողորմութիւն յողորմութենէ իւրեանց մերժեցան։

Ես ես ի ձայն օրհնութեան խոստովանեղէց քեզ, մատուցից պատարագս Տեառն, եւ կատարեցից զնես իմ ի վերս կենդանեան։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ.


Մ Ա Ղ Թ Ա Ն Ի Ք

Եկեսցեն ազօթք մեր ՚ի տաճար սուրբ քո, խունարհեսցի ահնկն քո ՚ի խնդրուածս մեր։

Մարդասէր, Տէր, վասն սրբուհւոյ անուան քոյոմ մերոյ քոյ և հօսոի, և վասն խաչի քոյ պատուականի, ընկալ զաղաչանս մեր եւ կեաց զմեզ։

Չ-տրանէ և զաղթիս՝ ՚ի վերջ Մի նախանձիր խնդրին գտցես ՚ի 122 երեսն։





Առաքեա զոգի քո եւ ստեղծցին ցնոսա, եւ նորոգեա զերեսս երկրի։ սաղ. ճգ. 29։

ՍԱՂՄՈՍ ՃԺԹ.

Օրհնութիւնք առաքնոյ։

Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ իմում ես առ տէր կարդացի, և լուաւ ինձ. տէր փրկեաց զանձն իմ ի շրթանց նենգաւորաց և ի լեզուէ չարէ։

Զի՞ տացի քեզ կամ ինչ յաւելցի, լեզուս նենգաւոր։

Որպէս նետք հզօրի, սր մխեալ են կայծակամբք կատնաց։

Վա՛յ ինձ՝ սր ընդ երկար եղեւ պանդխտութիւն իմ, բնակեցայ ես ի վրանս կեդրայ։

Բաւական անգամ բնակեաց անձն իմ ընդ այնոսիկ, սք աւելին զոչխան։

Ես էի խաղաղարար. յորժամ խօսէի մնար սնոցունք ընդ ես։

ՍԱՂՄՈՍ ՃԻ.

Օրհնութիւնք առաքեանց։

Համբարձի զաչս իմ՝ ի լերինս, ուստի և կեացէ ինձ օգնութիւն։
Օգնութիւն ինձ՝ ի տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։
Մի՛ տար՝ ի սասանութիւն ոտն քո, և մի՛ ննջեսցէ պահապան քո։
Որպէս ոչ ննջէ և ոչ՝ ի քուն երթայ պահապան Իսրայելի։
Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընկալցի զքո ձեռամբ իւրով։
Արեգակն՝ ի տուէ քեզ մի՛ մեղեսցէ, և մի՛ լուսին՝ ի գիշերի։
Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ, պահեսցէ տէր զանձն քո։
Տէր պահեսցէ զմուտ և զել քո՝ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ.

Օրհնութիւնք առաքեանց։

Ուրախ եղէ ես՝ որք ասէին ցիս, ՚ի տուն տեառն երթիցուք մեք։

Հառեալ կայմն ոտք մեր առ դրունս քո, երուսաղէմ։
Զերուսաղէմ շինեալ որպէս քաղաք, եւ բնակութիւն իւր շուրջ զնովաւ։
Անդ եկն ազգք ազգք տեառն, վկայութիւն Իսրայելի խոստովան լինել անուան տեառն։
Անդ աթոռք են ամբոխք դատաստանի, աթոռս ազգի՝ ի տան Դաւթի։
Հարցէք զողջունել զերուսաղէմի, և զխնամ ունելիսն՝ սէր սիրեսք զնա։
Եղիցի խաղաղութիւն ՚ի զօրութեան քում; և շինութիւն յաշտարակս յամենայն քո։
Վասն եղբարց և ընկերաց խնդ խօսեցայ զխաղաղութիւն, վասն քոյ և վասն տան տեառն Աստուծոյ մերոյ խնդրեցայ զբարութիւն ՚ի քէն։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ.

Օրհնութիւնք առաքեանց։

Ա՛ռ քեզ, տէր, համբարձի զաչս իմ, որ բնակեաղդ ես ՚ի յերկինս։
Որպէս աչք ծառայի ՚ի ձեռն տեառն իւրոյ, որպէս աչք աղախնոյ ՚ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Ա՛խ յոտկէս են աչք մեր առ քեզ, Տէր Աստուած մեր, մինչեւ ողորմեսցես ի վերայ մեր։

Ողորմեա մեզ, Տէր, ողորմեա մեզ, զի բազում լցաք արհամարհանաց։

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք՝ որ նախատէին զմեզ, և արհամարհանօք ամբարտաւանից։

Տունք ե։

ՍԱՂՄՈՍ ՃԻԴ։

Օրհնութիւնք ասիմանայ։

Եթէ ոչ Տէր էր առ մեզ, ասասցէ Իսրայէլ, եթէ ոչ Տէր էր առ մեզ։

Ընդ յառնել մարդկան ի վերայ մեր, կենդանեացն կամեցան կլանել զմեզ։

Ի բարկանալ սրտմտութեամբ նոցա ի վերայ մեր, ապա և ջուրք ուրեմն ընկղմէին մեզին զմեզ։

Ընդ ուղիս անձին անձինք մեր, անձին անձինք մեր ընդ ուղիս անդադարս։

Օրհնեալ է Տէր, որ ոչ ետ զմեզ յոյս ատամանց նոցա։

Անձինք մեր ապրեցան որպէս ճնճղուկ, յորոգայթէ որսողաց։

Որոգայթք նոցա փշրեցան, եւ մեք ապրեցաք։

Օգնութիւն է մեզ յանուանէ Տեառն, որ արար զերկինս և զերկիր։

Տունք ը։

ՍԱՂՄՈՍ ՃԻԴ։

Օրհնութիւնք ասիմանայ։

Ո յուսայ ի Տէր՝ որպէս լեառն Սիովն, մի սասանեսցի յաւիտեան՝ որ բնակեալն է Երուսաղէմ։

Լերինք շուրջ են զնովաւ, Տէր շուրջ է զժողովրդեամբ իւրով, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Ոչ թողուս Տէր զգաւազան մեղաւորաց ի վիճակս արդարոց, և արդարք մի ձգեսցեն զձեռս իւրեանց յանօրէնութիւն։

Բարի առնէ Տէր բարեաց, և այնոցիկ որք ուղիղ են սրտիւք։

Իսկ զմիւսեսեան յափշտակութեամբ, տանի զնոսա Տէր ընդ այնոսիկ որք գործեն զանօրէնութիւն. խաղաղութիւն ի վերայ Իսրայէլի։

Տունք ե։ Գոլաս կ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ.

Օրհնութիւնք առաքեալոց:

Ի գարձուցանել Տէառն զգերութիւնն Սիովնի, եւ եղաք մեք մխիթարեալք:
Յայնժամ լցան բերանք մեր ինդութեամբ, եւ լեզուք մեր ցնծութեամբ:
Յայնժամ ասացին ի հեթանոսս, մեծ արար Տէր զառնել իւր ընդ նոսա. մեծ արար Տէր զառնել իւր ընդ մեզ, եւ մեք եղաք բերկրեալք:
Գարձո, Տէր, զգերութիւնս մեր որպէս զուղիս ի հարաւոյ, որ վարիչն արտասուօք՝ ցնծութեամբ հնձեսցէն:
Երթալով երթայրն եւ լայրն, որ բարձեալ սանեկին զսերմանիս իւրեանց:
Գալով եկեսցեն եւ ցնծասցեն, որ առեալ բերցեն զորայս իւրեանց:

Տունք ղ:

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ.

Օրհնութիւնք առաքեալոց:

Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա:

Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդունայն աչխին պահապանք նորա:
Ի նանիր է ձեզ յառնել կանխաւ. արդ արիք՝ միանգամ էք ննջեցեալ, որ ուտէք զհաց ցաւոց:
Ի ժամանակի որպէս տայ քուն սիրելեաց իւրոց. ժառանգութիւն առն որդիք են, որոյ վարձք իւր են, այն է պտուղ որովայնի իւրոյ:
Որպէս նետք ի ձեռս հզօրի, այնպէս են և որդիքն թոթափելոյ:
Երանի որ եւնոյ զգանակութիւն իւր ի նմա, մի ամաչեսցեն՝ յորժամ խօսեսցին թշնամիք նոցա ընդ նոսա առ դրան:

Տունք ղ:

ՍԱՂՄՈՍ ՃԻԷ.

Օրհնութիւնք առաքեալոց:

Երանի ամենեցուն որ երկնչին ի Տէառնէ, և գնան ի ճանապարհս նորա:
Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ, և բարի եղիցի:
Կին քո որպէս այգի վայելուչ յանկիւնս տան քո, որդիք քո որպէս նորատունկ ձիթենւոյ շուրջ զսեղանով քով:

Ա յտակս օրհնեսցի ամենայն մարդ որ երբ կընդ ի տեառնէ, օրհնեսցե զքեզ տէր ի Սիովնէ։

Եւ տեսցես դու զբարութիւն յերուսաղէմ զամենայն աւուրս կենաց քոց։

Տեսցես դու զորդիս որդւոց քոց, խաղաղութիւն ի վերայ Իսրայէլ։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՁԻԶ.

Օրհնութիւնք աստիճանաց։

Բազում անգամ մարտեան ընդ իս ի մանկութենէ իմմէ, ասացե Իսրայէլ։

Բազում անգամ մարտեան ընդ իս ի մանկութենէ իմմէ, և ինձ ոչ յաղթեցին։

Զթիկունս իմ հարին մեզաւորք, ընդ երկար արարին զանօրէնութիւնս իւրեանց։

Տէր արդար է, և խորտակէ զլեռն մեղաւորաց։

Ամաչեսցեն և յետս դարձցին ամենեքեան՝ որք ատեն զՍիովն։

Եղիցին նոքա որպէս խոտ տանեաց, որ մինչեւ ի բուռն եկեալ չորացաւ։

Ոսոմն ոչ եղից զուսան իւր հնձողն, և ոչ զգիրկս իւր՝ որ զդրան ժողովէր։

Ոչ ասացին ամենեքեան որք անցանէին առ նոքօք, թէ օրհնութիւն տեառն ընդ ձեզ, և օրհնեցաք զձեզ յանուանէ տեառն։

Տունք ե։

ՍԱՂՄՈՍ ՁԻԹ.

Օրհնութիւնք աստիճանաց։

Ի խորոց կարդացի առ քեզ, տէր, տէր, լսեր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ի լսել ձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս իմ քննես, տէր, տէր, իսկ ո կարէ կալ առաջի քո, զի ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քո համբերի, տէր, համբեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ի տէր։

Ի պահէ առաւօտու մինչեւ երեկոյ, ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ ի տէր։

Ի տեառնէ է ողորմութիւն քաղցր, ի նմա միանէ է փրկութիւն, և նա փրկեսցէ զԻսրայէլ յամենայն նեղութենէ նորա։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՃԱ.

Աղեղութիւնք առաքեալական։

Տէր, ոչ բարձրացաւ սիրտ իմ, և ոչ ըղձա
ման աչք իմ։
Ոչ գնացի ես ընդ մեծամեծս, և ոչ ընդ
այնոսիկ որք սքանչելի եղեն քան զիս։
Բայց էի խոնարհեցուցի ես զոգիս մանուկ
առաքացեալ՝ ի առնէ մօր իւրոյ, և գարձ
նորա անդրէն՝ ի նմին։
Ա՛յլ էի հաստատացուսյի զոգիաք զանձն
իմ, այսպէս եղիցի հատուցումն անձին ի
մէջ, յաւուրսյաւ խորհիլ՝ ի Տէր յայսմ հետ
ի միշտ յաւիտեան։

Տուն ք։ Գալլոյ խոչ։

ՍԱՂՄՈՍ ՃԱԼ.

Աղեղութիւնք երգ ուխտի։

Յիշեա, Տէր, զԴաւիթ, և զամենայն հեզ
ութիւն նորա։
Որպէս երդուաւ Տեառն, և ուխտաւ եզ
Առաքոբայ Յակովբայ։
Թէ ոչ մտից՝ ի տուիս տան իմոյ, էի եղիցի
անկողնին մահճոյ իմոյ։
Թէ տայց քուն աչաց իմոց, կամ նինջ ար
տեւանաց իմոց, կամ հանգիստ կրծանաց
իմոց, մինչեւ գտից զտեղի տաճկի Տեառն
Առաքոբայ Յակովբայ։
Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ, և գտաք
զնա՝ ի դաշտս մայրենւոյ։
Մտցուք՝ ի տաճկ նորա, երկիր պագցուք
՝ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա։
Արի, Տէր, ՚ի հանգիստ քո, դու և տա
պանակ կտակի սրբութեան քո։
Երիցանք քո զգեցցին զարդարութիւն, և
սուրբք քո ցնծալով ցնծասցեն։
Վասն Դաւթի սիրելւոյ քո, մի դարձու
ցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ։
Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ՝
և ոչ ստեսցէ նմա, ՚ի պտղոյ որովայնէ քումմէ
զնստուցից յաթոռ քո։
Թէ պահեսցեն որդիք քո զուխտ իմ, և զբա
նիւսյիս զայսոսիկ զոր ուսուսցից նոսա։
Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաթո
ռի քում։
Հաճեցաւ Տէր ընդ Սիոն, եւ բնակեաց
բնակել՝ ի նմա. ասէ, այս է հանգիստ իմ
յաւիտեան յաւիտենից, ՚ի սմա բնակե
ցայց զի հաճեցայ ընդ սա։

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից, և զաղ-
բատս սորա լցուցից հացիւ։
Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն,
և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։
Անդ ծագեցից զեղջիւր ի Դաւիթ, պատ-
րաստ բառնալ զճրագ օծելոյ իմոյ։
Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ
ի վերայ նորա ծաղկեսցի պսակութիւն իմ։

Տունք ԺԷ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԲ։

Օրհնութիւնք երդ չորից։

Զի բարի կամ ողի վայելուչ, զի քնաքէն
եղեալքդ ի միասին։
Որպէս իւղ զի իջանէ ի գլուխ և ի մօրուսն
Ահարոնի, ի մօրուացն իջանէ ի բրա-
գանս զգեստուս նորա։
Որպէս ցօղ զի ցօղէ ի Հերմոնէ, ի վերայ
լերինն Սիովնի։
Ցէր անդ պատուիրեաց զօրհնութիւն,
և զկեանսն յաւիտենից։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԳ։

Օրհնութիւնք երդ չորից։

Ահա օրհնեցէք, ամենայն ծառայք Տեառն,
զՏէր, որ կայք ի տունն Տեառն և ի գաւիթս
Աստուծոյ մերոյ։
Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սուրբ
քութիւն, և օրհնեցէք զՏէր։
Օրհնեսցէ զմեզ Տէր ի Սիովնէ, որ արար
զերկինս և զերկիր։

Տունք գ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԴ։

Ալէլուիա։

Օրհնեցէք զանուն Տեառն, օրհնեցէք,
ծառայք Տեառն, զՏէր, որ կայք ի տունն
Տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ։
Օրհնեցէք զՏէր՝ զի բարի է, սաղմոս ասա-
ցէք անուան նորա՝ զի քաղցր է։
Զձակոբ ընտրեաց իւր Տէր, և զԻսրայէլ
ժառանգութիւն իւր։
Ես ճանեայ՝ զի մեծ է Տէր, և Տէր մեծ է
քան զամենայն կուռս։
Զամենայն զոր ինչ կամեցաւ՝ և արար Տէր,

յերկինս և յերկրի, ի ծով և յամենայն
խորս։
Հանէ զամպս ի ծագաց երկրէ, զխայտ-
տակաւնս իւր յանձրեւս արար, և հանէ
հողմս ի շտեմարանաց իւրոց։
Եհար զամենայն անդրանիկս Եգիպտա-
ցւոց՝ ի մարդոյ մինչեւ յանասունն։
Առաքեաց զնշանս և զարուեստս իւր ի
մէջ քո, Եգիպտա՛, ի փառաւորն և յա-
մենայն զօրս իւր։
Եհար զազգս բազումս, և սպան զթա-
գաւորս հզօրս։
Զսեհոնն թագաւոր Ամովրհացւոց, զՈվգ
թագաւոր Բասանու, եւ զամենայն թա-
գաւորութիւնս Քանանացւոց։
Եւ զերկիր նոցա ի ժառանգութիւն,
ժառանգութիւն Իսրայէլ ժողովրդեան
իւրոց։
Տէր, անուն քո յաւիտեան, Տէր, յիշո-
ւատակ քո ազգէ մինչեւ յազգ։
Դատի Տէր զժողովուրդս իւր, և ի ծա-
ռայս իւր մխիթարի։
Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են
ձեռագործք են որդւոց մարդկան։
Բերան ունի՝ և ոչ խօսին, աչք են՝ եւ ոչ
առանեն։

Ականջք են՝ և ոչ լսեն, և ոչ գոյ շունչ ի
բերանս նոցա։
Նման նոցա եղիցին որք արարին զնոսա,
ամենեքեան որք յուսացեալ են ի նոսա։
Տուն Իսրայէլի, օրհնեցէք զՏէր, տուն
Ահարոնի, օրհնեցէք զՏէր։
Տուն Ղեւեայ, օրհնեցէք զՏէր, երկիւղածք
Տեառն, օրհնեցէք զՏէր։
Օրհնեալ Տէր ի Սիովնէ, որ բնակեալն է
Երուսաղէմ։

Տունք ի։ Գողգաս խգ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԵ։

Ալէլուիա։

Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
Խոստովան եղերուք Աստուծոյ աստուածոց,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա։
Խոստովան եղերուք Տեառն տերանց, զի
յաւիտեան է ողորմութիւն նորա։
Արար զքանչելիս մեծամեծս միայն, զի յա-
ւիտեան է ողորմութիւն նորա։
Զերկինս արար իմաստութեամբ իւրով,
զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Արար զլուսաւորս մեծամեծս միայն, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Զարեգակն արար իշխանական տուընջեան, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Զլուսին և զաստեղս իշխանական գիշերոյ, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եհար զերկիրն Եգիպտացւոց՝ անդրանկօք նոցովք հանգերձ, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եւ եհան զԻսրայէլ ՚ի միջոց նորա, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ի ձեռն բարձր և ՚ի բազուկ նոր, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եհերձ զծովն մեծ և բաժանեաց յերկուս մասունս, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եւ անցոյց զԻսրայէլ ընդ մէջ նորա, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ընկղմեաց զփարաւոնն և զզօրս նորա ՚ի ծովակարմիր, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եւ եհան զժողովուրդ նոր յանապատ, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եհար զազգս մեծամեծս միայն, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եւ սպան զիշխագաւորս հզօրս, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Զսեհոնն Թագաւոր Ամովրհացւոց, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Զովգ Թագաւոր Բասանու, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եւ զերկիր նոցա ՚ի ժառանգութիւն, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ժառանգութիւն Իսրայէլի ծառայի իւրոյ, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Յիշեաց զմեզ ՚ի խոնարհութեան մերում, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Եւ փրկեաց զմեզ ՚ի ձեռաց հակառակորդաց մերոց, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ո տայ կերակուր ամենայն կենդանեաց, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Խոստովան եղերուք Աստուծոյ երկնաւորի, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Տուընք փգ։

ՍԱՂՄՈՍ ՁԱՋ։

Ի Դաւիթ ՚ի ձեռն Երեմիայի՝ անձնական յերեսակեցոյն։

Առ գետս Բաբելացւոց՝ անդ նստեաք և լացաք, որպէս յիշեցաք մեք անդ զՍիովն

ի մէջ ուրեայ նոցա կախեցեալ վկայակա-
նեալ մեր :

Անդ հարցանէին զերիչք մեր զքանս օրհ-
նութեան, գերեվարք մեր սոխակին ըզ-
մեզ և ասէին .

Օրհնեցէք մեզ յօրհնութենէ Սիոնի . իսկ
վասն զի օրհնեսցուք զօրհնութիւնս տեառն
յերկիր օտար :

Թէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռաս-
ցի զիս աջ իմ :

Կցեսցի լեզու իմ ՝ ի բիմն իմ ՝ թէ ոչ յի-
շեցից զքեզ, թէ ոչ նախ նուագեցից ըզ-
քեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան
իմոյ :

Յիշեա , Տէր , զորդիան Եդովմայ՝ յաւուրն
Երուսաղէմի :

Ո՛յք ասէին , քակեցէք քակեցէք , մինչեւ
ի հիմն հատուցէք :

Դուստր Բաբելացւոյ թշուառական , ե-
րանի որ հատուսցէ զհատուցումն քո զոր
դու մեզ հատուցեր :

Երանի որ կալասցէ զմանկունս քո , և եհար
զքարի :

Տունք ժ :

ՍԱՂՄՈՍ ՃԱԼԷ .

Սաղմոս ի Դաւիթ :

Խոստովան եղէց քեզ, Տէր , բոլորով սիր-
տիւ իմով , առաջի հրեշտակաց սաղմոս
ասացից քեզ :

Չի լսեար զբանս բերանոյ իմոյ , երկիր պա-
պիցի ի տաճար սուրբ քո , և խոստովան
եղէց անուան քումմ վասն ողորմութեան
և ճշմարտութեան քո :

Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ
քո . յորում աւուր կարդամ առ քեզ՝
վաղվաղակի լսեր ինձ , և բազմացար արաս-
ցես զզօրութիւնս յանձն իմ :

Խոստովան եղիցին առ քեզ ամենայն թա-
գաւորք երկրի , զի լսեան զբանս բերանոյ
քոյ , և օրհնեսցեն զճանապարհս քո :

Մեծ են փառք Տեառն , բարձր է Տէր՝
զխոնարհս տեսանէ , և զբարձունս ի հե-
ռաստանէ ճանաչէ :

Թէ գնացից ես ի մէջ նեղութեանց , կեն-
ցուսցես զիս ի բարկութենէ թշնամեաց :

Զգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո ,
և Տէր հատուսցէ ընդ իմ :

Տէր , ողորմութիւն քո յաւիտեան , զգործս
ձեռաց քոց մի անտես առներ :

Տունք ը : Գորգաս խդ :

ՍԱՂՄՈՍ ՃԱ.

Ի կատարած, տաղմս ՚ի Դաւիթ։

Տէր, փորձեցեր զիս և ծանեար զիս, դու ծանեար զնստել իմ և զյառնել իմ։
Ի միտ առեր զխորհուրդս իմ ՚ի հեռաստանէ, զշաւիղս իմ եւ զպլճակս իմ դու քննեցեր, եւ զամենայն ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութիւն ՚ի լեզուի իմում։
Ահա դու, Տէր, ծանեար զյետինն իմ եւ զառաջինն իմ, դու ստեղծեր զիս, և եդիր զձեռն քո ՚ի վերայ իմ։
Սքանչելի եղեւ գիտութիւն քո յինէն, զօրացաւ և ոչ հանդարտեմ սմա։
Ցո՞ երթայց ես յոգւոյ քումմէ, կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։
Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, և թէ իջանեմ ՚ի գոհս՝ և անդ մօտ ես։
Թէ առնից զթեւս իմ ընդ առաւօտս, և բնակեցայց յեղերս ծովուս։
Սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ, և աջ քո ընկալցի զիս։
Ասացի, խաւար ուրեմն արդեօք ծածկեսցէ զիս, կամ գիշեր փոխանակ լուսոյ փարկութեան լինիցի։

Խաւարն ՚ի քէն ոչ խաւարեսցի, և գիշեր ըստ որպէս տիւս լուսաւոր եղիցի, և խաւար նորա որպէս զլոյս նորա։
Դու ստացար զերիկամունս իմ, և ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ։
Խոստովան եղէց քեզ, Տէր, զի ահեղ եւ սքանչելի ես, սքանչելի են գործք քո, եւ անձն իմ սիրեաց յոյժ։
Ոչ թագեաւ ոսկր իմ ՚ի քէն զոր արարեր ՚ի ծածուկ, և կար զօրութեան իմոյ ընդ ստորինս երկրի։
Զանգործս իմ տեսին աչք քո, և ՚ի գիրս քո ամենեքեան գրեցան։
Ի տուէ մնջորեցան, և ոչ ոք էր որ առաջնորդեր նոցա։
Ինձ յոյժ մեծարուց եղեն բարեկամք քո, Աստուած, և յոյժ զօրացան իշխանք նոցա։
Թուեցի զնոսա, և քան զաւազ բազմացան, զարթեայ, և արդ ընդ քեզ եմ։
Թէ սպանանես զմեզաւորս, Աստուած, արք արեան ՚ի բաց եղերուք յինէն։
Ի հակառակութիւն և ՚ի նախանձ, առցեն ՚ի նանիր զքաղաքս քո։
Զատեցիս քո, Տէր, ատեցի, և ՚ի վերայ թշնամեաց քոց մաշեցայ։
Ատելութիւն կատարեալ ատեցի զնոսա,

և եղեն ինձ Թշնամիք ։

Փորձեա զիս, Աստուած, և ծանիր զսիրտ իմ. քննեա զիս և ծանիր զշաւիղս իմ. և տես Թէ իցէ՞ն անօրէնութիւնք ի ճանապարհս իմ, և առաջնորդեա ինձ ի ճանապարհս քո յաւիտենից ։

Տունք իբ ։

ՍԱՂՄՈՍ ՃԼԹ.

Ի կատարած, սաղմոս ի Դաւիթ ։

Ասացեալ զիս, Տէր, ի մարդոյ չարէ, յաւնէ անիրաւէ փրկեա զիս ։

Խորհեցան զանօրէնութիւնս ի սիրտս իւրեանց, զօր ամենայն պատերազմս ։

Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից ի նեռքոյ շրթանց նոցա ։

Պահեա զիս, Տէր, ի ձեռաց մեղաւորի, և ի մարդոյ չարէ փրկեա զիս ։

Խորհեցան խափանել զընացս իմ, թագուցին ամբարտաւանք որոգայթ ինձ ։

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, շուրջ զշաւղաք իմովք եդին ինձ գայթակղութիւն ։

Ասացի, տէր Աստուած իմ ես դու, ունկնդիր, Տէր, ձայնի աղօթից իմոց ։

Տէր, Տէր զօրութիւն փրկութեան իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի ։

Մի մատներ զիս, Տէր, ի ցանկութիւն մեղաւորաց՝ զոր խորհեցան վասն իմ, մի լքեր զայր հպարհաներ զիս ։

Զի մի երբեք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի կատարեսցին. վախճան կատարածի նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա ։

Աւրկեաս ի վերայ նոցա զկայծակունս հրոյ, և կործանեսցես զնոսա. ի տառապանսն մի կարասցեն կալ ։

Մարդ լեզուանուն մի աջողեսցի ի վերայ երկրի, զայր մեղաւոր չարիք լուր որսացեն ի կորուստ ։

Ծանեայ զի առնես, Տէր, դատաստան աղքատի, և իրաւունս տնանկի ։

Արդարք գոհասցին զանուանէ քումմէ, և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց ։

Տունք իժ ։

ՍԱՂՄՈՍ ՃԽ.

Սաղմոս ի Դաւիթ ։

Տէր, կարգացի առ քեզ և լուր լինէ, նայեա ի ձայն աղօթից իմոց ի կարգալ իմում առ քեզ ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո, տէր, համբարձումն ձեռաց իմոյ պատարագ երեկոյի։

Դիր, տէր, պահապան բերանոյ իմոյ, եւ դուռն ամուր շրթանց իմոց, զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան։

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ որք գործեն զանօրէնութիւն. եւ ոչ եղէց կցորդ ընտրելոց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ՝ եւ յանդիման արասցէ, իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ ի կամն նորա։

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լսեսցեն բանից իմոց՝ եւ քաղցրասցին։

Որպէս լծանձրուկիւն հողոյ զի սիրեալ է ի վերայ երկրի՝ ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս։

Առ քեզ, տէր, տէր, են աչք իմ, ի քեզ յուսացայ, մի հաներ զհոգի յինէն։

Պահեա զիս յորոգայթէ որ թաւուեցաւ ինձ, ի գայթակղութենէ՝ գործողին զանօրէնութիւն։

Անկցին ի ցանցս նորա մեղաւորք, մինչդեռ եմ ես մինչեւ անցից։

ՍՍՂՄՈՍ ՃԽԱ.

Խնդրուածք ի գաւթի։ Աղօթք, ի ժամանակի զի էր նա յայրի անդ։

Զայնիւ իմով ես առ տէր կարդացի, ձայնիւ իմով ղտէր աղաչեցի։

Սփռեցից առաջի տեառն զաղօթս իմ, զդատաստանութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու, տէր, ճանեար զշաւիղս իմ, ի ճանապարհ յոր գնայի՝ թաղուեցաւ ինձ որոգայթ։

Հայեի յաջմէ՝ տեսանէի, եւ ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, եւ ոչ գոյաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ, տէր, եւ ասացի, դու ես յոյս եւ բաժին իմ յերկրին կենդանեաց։

Լսեայ, տէր, յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ի հալածչաց իմոց՝ զի հզօր եղեն քան զիս։

Տէր, հան ի բանտէ զանձն իմ, զխոստանալ զանուանիդ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչեւ հատուսցես ինձ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԲ.

Սաղմոս ՚ի Դաւիթ, ՚ի ժամանակի զի հալածէր զնա Աբիսողոմ որդի նորա։

Տէր, լուր աղօթից իմոց, ունկն դիր ի բարձրութիւն դրօշածոց իմոց ճշմարտութեամբ քով։
Լուր ինձ արդարութեամբ քով, եւ մի մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քումմ, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։
Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։
Զանձրացաւ յիս հոգի իմ, եւ սիրտ իմ խռովեցաւ յիս։
Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։
Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ, Տէր, զի նուազեցաւ յինէն հոգի իմ։
Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, նըմանիցեմ այնոցիկ որք իջանեն ՚ի գուբ։
Լսել ար ինձ առաւօտուս զողորմութիւնս քո, զի ես ՚ի քեզ, Տէր, յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր գնայից, զի առ քեզ, Տէր, համբարձի զանձն իմ։
Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց, Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։
Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ։
Վասն անուան քո, Տէր, կեցուսցես զիս արդարութեամբ քով, հանցես ՚ի նեղութենէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակեա, Աստուած, զթշնամիս իմ, և կորոյս զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Տունք ԺԴ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԳ.

Սաղմոս ՚ի Դաւիթ առ Գողիաթ։

Օրհնեալ տէր Աստուած իմ, որ ուսոյց զձեռս իմ ՚ի պատերազմ, և զմատունս իմ ՚ի ճակատամարտս։
Ողորմութիւն իմ և ապաւէն իմ, օգնականն իմ և փրկիչ իմ. ապաւէն իմ, և ես յուսամ ՚ի նա. ո՛ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ։

Տէր, ո՞ է մարդ զի յայտնեցար դմա, կամ որդի մարդոյ՝ թէ համարիս ինչ զնա։
Մարդ նանրութեանց նմանեաց, և աւուրք նորա որպէս հովանի անցանին։
Տէր, խոնարհեցո զերկինս և էջ, մերձեա՛ ի լերինս՝ և ծխեացին։
Փայլատակեա զփայլատակումն քո և խըռաւիլեա զնոսա, առաքեա զնետս քո եւ ցրուեա զնոսա։
Առաքեա զձեռն քո ի բարձանց և փըրկեա զիս ի ջուրց բազմաց, և ի ձեռաց որդւոց օտարաց։
Որոց բերանք խրեանց խօսեցան զնանրութիւն, և աջ նոցա աջ է մեղաց։
Աստուած, յօրհնութիւն նոր օրհնեցից զքեզ, տաւնաղեաւ տաղմոսարանաւ տաղմոս ասացից քեզ։
Ո տացէ զփրկութիւն Թագաւորաց մերոց, որ փրկեցին լոկէ զԴաւիթ ծառայ իւր ի սրոյ չարէ։
Փրկեա զիս եւ ապրեցո զիս, ի ձեռաց որդւոց օտարաց։
Որոց բերանք խրեանց խօսեցան զնանրութիւն, և աջ նոցա աջ է մեղաց։
Որոց ուստերքը իրեանց որպէս նորատունկ, հաստատուն են ի մանկութենէ իրեանց.

դստերքը նոցա զարդարեալ և պաճուճեալ ի նմանութիւն տաճարի։
Շտեմարանք նոցա լի են և բղխեն ի միմեանս, խաշինք նոցա բազմածինք են և բազմանան ի գնացս իւրեանց, և անդեայք նոցա պարարտք են։
Ոչ գոյ խրամատութիւն պանկոյ նոցա, և ոչ աղաղակ ի հրապարակս նոցա։
Արդ երանեցին ժողովրդեան՝ որոյ այս այսպէս է. նա՝ երանի ժողովրդեան՝ որոյ տէր Աստուած է նոցա։

Տունք ԺԷ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԴ.

Օրհնութեանց տաղմոս ի Դաւիթ։

Բարձր առնեմ զքեզ, Աստուած իմ եւ Թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։
Զօրհնանապաղ օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։
Մեծ է տէր և օրհեալ է յոյժ, և մեծութեան նորա ոչ գոյ ջաւր։
Աղբեր և աղբեր գովեսցեն զգործս քո, եւ զզօրութիւնս քո պատմեսցեն։

Զմեծվայելչութիւն փառաց սրբութեան
քո խօսեացին, եւ զբանչելիս քո պատ-
մեսցեն։
Զզօրութիւն ահի քո ասասցեն, եւ զմե-
ծութիւնս քո պատմեսցեն։
Զյիշատակ բազում քաղցրութեան քո
բղխեսցեն, եւ արդարութեամբ քո ցըն-
ծասցեն։
Գթած ողորմած է տէր, երկայնամիտ եւ
բազումողորմ։
Քաղցր է տէր առ ամենեսեան, եւ գթու-
թիւն նորա ի վերայ ամենայն արարածոց
նորոց։
Խոստովան եղիցին առ քեզ, տէր, ամենայն
գործք քո, եւ սուրբք քո օրհնեսցեն զքեզ։
Զփառս արքայութեան քո ասասցեն, եւ
զզօրութիւնս քո պատմեսցեն։
Ձանաչել որդւոց մարդկան զզօրութիւնս
քո, եւ զփառս մեծվայելչութեան արքա-
յութեան քո։
Արքայութիւն քո արքայութիւն ամենայն
յաւիտենից, եւ տէրութիւն քո ազգէ մին-
չեւ յազգ։
Հաւատարիմ է տէր յամենայն ի բանս
իւր, եւ արդար է յամենայն ի գործս իւր։
Հաստատէ տէր զամենայն գայթակղեալս,

եւ կանգնէ զամենայն գլորեալս։
Աչք ամենեցուն ի քեզ յուսան, եւ դու
տաս կերակուր նոցա ի ժամու։
Տաս դու նոցա եւ կերակրին, բանաս ըզ-
ձեռն քո, լցուցանես զամենեսեան քաղց-
րութեամբ կամաց քոյոց։
Արդար է տէր յամենայն ճանապարհս իւր,
եւ սուրբ է յամենայն ի գործս իւր։
Մերձ է տէր առ ամենեսեան որ կարդան
առ նա, առ ամենեսեան որ կարդան առ
նա ճշմարտութեամբ։
Զկամս երկիւղածացն իւրոց առնէ տէր, ա-
ղաթիկ նոցա լսէ, եւ կեցուցանէ զնոսա։
Պահէ տէր զամենեսեան որ սիրեն զնա,
եւ զամենայն մեղաւորս սատակէ տէր։
Զօրհնութիւնս տեառն խօսեսցի բերան
իմ. օրհնեսցէ ամենայն կենդանի զանուն
սուրբ նորա յաւիտեան, եւ յաւիտեանս
յաւիտենից։

Տունք իբ։ Գոբզայս ծբ։

ՍԱՂՄՈՍ ՁԼԵ։

Ալէլուիա։ Անգեայ և Զաքարիայ։

Օրհնեա, անձն իմ, զՏէր. օրհնեցից ըզ-
Տէր ի կեանս իմ; սաղմոս ասացից Աստու-
ծոյ իմոյ մինչեւ եմ ես։

Մի յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան,
յն ոչ գոյ փրկութիւն ՚ի նոսա։
Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձցին անդ-
րէն ՚ի հող, և յայնմ աւուր կորիցեն ա-
մենայն խորհուրդք նոցա։
Երանի ազգի որոյ տէր Աստուած Յակով
բայ օգնական է նմա, և յոյս նորա ՚ի տէր
Աստուած է։
Որ արար զերկինս և զերկիր, զծով և զա-
մենայն որ է ՚ի նոսա։
Ո պահէ զճշմարտութիւն յաւիտեան, և
առնէ իրաւունս զրկելոց։
Տայ հաց քաղցելոց, և արձակէ կիսատես-
լոս տէր։
Տէր բանայ զաչս կուրաց, և կանգնէ ըզ-
գլխեալս տէր։
Տէր սիրէ զարդարս, տէր պահէ զպան-
դուխտս. զորբս և զայրիս ընդունի տէր,
և զճանապարհս ամբարշտաց կորուսանէ։
Թագաւորեսցէ տէր յաւիտեան, Աստուած
քո, Սիովն, ազգէ ազգի։
Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՁԽԶ։

Ալէլուիա։ Անգիտ և Զաքարիայ։

Օրհնեցէք զՏէր՝ զի բարի են սաղմոսք՝ Ա-

տուծոյ մերում քաղաք եղիցի օրհնութիւն։
Շինէ զՅերուսաղէմ տէր, եւ զգրուեալսն
Իսրայէլի ժողովէ։
Բժշկէ զսեղմեալ սիրտս, և պատէ զվէրս
վէրս նոցա։
Ո թուէ զբազմութիւն աստեղաց, և զա-
մենեսեան զնոսա յանուանէ կոչէ։
Մեծ է տէր մեր և մեծ է զօրութիւն նո-
ցա, իմաստութեան նորա ոչ գոյ քանակ։
Ընդունի զհեզս տէր, եւ խոնարհ առնէ
զամբարտաւանս մինչեւ յերկիր։
Օրհնեցէք զՏէր խոստովանութեամբ, սաղ-
մոս ասացէք նմա օրհնութեամբ։
Ո ծածկոյց զերկինս ամպովք, պատրաստ
արար զանձրեւ իւր յերկիր։
Բուսոյց զխոտ ՚ի լերինս, զգազար ՚ի ծա-
ռայութիւն մարդկան։
Ո տայ անասնոց կերակուր, ձագուց ագ-
ռաւուց՝ որ կարդան առ նա։
Ոչ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կամիցաւ տէր,
և ոչ ընդ իրանս առն հսկոյն հաճեցաւ։
Այլ հաճեցաւ տէր ընդ երկիւղածս իւր,
եւ ընդ այնոսիկ՝ որք յուսան յողորմու-
թիւն նորա։
Տունք ժբ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ։

Ալէլուիա. Անգեայ և Զաքարիայ։

Գալեա Երուսաղէմ զՏէր։
Եւ օրհնեա զԱստուած քո Սիովն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։
Ո եդ զսահմանս քո ի խաղաղութիւն, պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր, վազվազ լինի թանան պատգամք նորա։
Դնէ զձիւն որպէս զասր, և զմէգ որպէս փոշի ցանեաց։
Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։
Առաքէ զբան իւր և հալէ զնոսա, հնձեսցեն հողմք և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր Յակովբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայելի։
Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա։

Տաղք ժ։ Գոբզայս լբ։

ԱՂՕԹՔ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Ամբակ. գ։

Տէր, լուր քո լուայ՝ և երկեայ. ցէր, նայեցայ ի գործս քո և զարհուրեցայ։
Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու, ի մերձենալ ամացն յայտնեացիս, և ի հասանել ժամանակին երեւեսցիս։
Ի խառնել անձին իմոյ՝ ի ժամանակի բարկութեան, ողորմութիւն յիշեսցես։
Աստուած ի հարաւոյ եկեսցէ, և սուրբն ի փառան լեռնէ։
Ծայանեացեն երկինք զվայելչութիւն փառացոյ նորա, և օրհնութեամբ նորա լցան տիեզերք։
Ճառագայթք որպէս զլուսոյ հատան ի նմանէ, և եղջիւրք ի ձեռին նորա գտան. եւ անդ հաստատեցաւ զօրութիւն փառացոյ նորա։
Յերեսաց նորա ելցեն հարուածք, և ըզհետ շուղացոյ նորա երթիցեն մեծամեծք ի թռչնոյ։
Եկայ՝ և չափեաց զերկիր. հայեցաւ՝ և դիտեաց զհեթանոսս։
Լերինք հալեսցին, և անտառք վանեսցին

ցին . ձանապարհդ՝ որ ի սկզբանէն էիր
յաւիտենից , կոբացոյն . և ի նմանէ զա-
զատէ ամենայն երկիր :
Տէր ղբանակս Քուշտուց . խոռվեցան
բնակիչք վրանացն Մադիամու :
Միթէ ի վերայ գետոց բարկացա՞ր դու ,
Տէր , կամ սրտմտութիւն քո ի վերայ գե-
տոց , կամ բարկութիւն քո ի վերայ ծովու՞ :
Նկեր դու ի կառս քո , հեծելութիւնդ քո
փրկութիւն է յերանելոց քոց :
Զարթեաւ աղեղն քո . զնետս կապարձից
քոց արբեցուցեր , զգետս ցրուեցեր , վեր-
կիր դազանացեր՝ ի սաստկութենէ անձ-
րեւի , որ անցանէն ընդ սա :
Անդունդք աղաղակեցին ձեռամբս , լոյս
ի բարձունս արեգական աբգելու , եւ ծա-
գումն լուսնին դադարեաց :
Ոպես ի նշոյլս սլաքաց քոց գնասցեն , և
որպես ի լոյս փայլատակման սրոյ քո :
Բարկութեամբ զարհիցես ի վերայ երկ-
րի , և գազանութեամբ կասցես զհեթանոսս :
Ելեւեցար ի փրկութիւն ժողովրդեան
քո , ի փրկել զընտրեալս քո :
Նեռաձիւկ եղեր ի գլուխս մարդկան ամ-
բարտաւանից , մինչեւ յանդունդս ծովու
ընկղմեցան :

Խնդրեցեր զվրէժ զօրութեամբ քով ի զա-
զատիսն մեղաւորաց , որ յաւասարել ե-
ղեն յանդգնութիւն խրենց . զի կերան
զաղքատն ի գաղտնիս :
Առաքեցեր ի վերայ ծովու զերիվարս քո ,
խառնիճեան յաղթ ջուրցն անդնդոց :
Կապի եմ՝ և գեղան աղիք իմ ի ձայնէ բե-
րանոյ իմոյ . եմուտ գողութիւն յոսկերս իմ ,
և ես յանձն իմ խռովեցայ :
Զայս պահեսցես յաւուր նեղութեան , ա-
ծել ի վերայ ազգի ամենայնի , որ մարտնչ-
ին ընդ ժողովրդեան քումմ :
Թզենի ոչ ասցէ զպտուղ իւր , և այգւոյ
բեր մի գոցի . ձիմինիք մատցին , և երբ
կիր մի բաւասցէ զդալարի :
Պակասեսցին հօտք ի ձարակայ , և եզինք
մի գոցին առ մնուրս :
Ես ի Տէր յուսացայ , յինծացայց և ուրախ
եղէց յԱստուած փրկիչ իմ :
Տէր , Տէր , եւս լինձ զօրութիւն , և կացուց
զոտս իմ ի հաստատութեան . ի վերայ
պարանոցի թշնամեան կացից զիս և հան-
գուցից զիս երագ երագ :
Փառք Հօր և Որդւոյ և .

ՄԱՂԹԱՆՔ

Լսեր մեզ, Տէր, լսեր մեզ առատաձայնին ողորմութեամբ և գթութեամբ քո խնայեա յորաթաձս քո։

Մարդասէր, Տէր, վասն սրբոհետ անուանդ մերոյ քոյ և կոսի, և վասն խաչի քոյ պատուականի, ընկալ զաղաչանս մեր և թո կեցո զմեզ։

Չարդն և պաղիս՝ ի վերջ Ողորմեա խանդին
գտանես ի 161 երես։

ՍԱՂՄՈՍ ՃԽԸ.

Ալելուիա. Աղեկայ և Զաքարիայ։

Օրհնեցէք զՏէր յերկնից, օրհնեցէք զնա ի բարձունս։

Օրհնեցէք զնա ամենայն Հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա։

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին, օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյս։

Օրհնեցէք զնա երկինք երկնից, և ջուրք՝ որ ի վերոյ քան զերկինս՝ օրհնեցէք զանուն Տեառն։

Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան։

Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտենից, սահման եդ և ոչ անցանեն։

Օրհնեցէք զՏէր յերկրէ վիշապք, և ամենայն խորք։

Հուր և կարկուտ, ձիւն և սառն, հոգմ և մրրիկ որ առնէք զբան նորա։

Լերինք և ամենայն բարձունք, ծառք պտղաբերք և ամենայն մայրք։

Գազանք և ամենայն անասունք, սողունք և ամենայն թռչունք թեւաւորք։

Թագաւորք երկրի և ազգք իւրեանց իշխանք և ամենայն դատաւորք երկրի։

Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք օրհնեցէք զանուն Տեառն։

Բարձրացաւ անուն նորա միայն, խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի։

Բարձր առնէ Տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ, օրհնութիւն նմա յամենայն սրբոց, յորդւոցն Իսրայէլի, ժողովրդի որ մերձ է առ Տէր։

Տունք Ժգ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԹ.

Ալելուիա. Աղեկայ և Զաքարիայ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, օրհ

Նուիրեալն նման լեհելոցս սրբոց։
Ուրախասցի Տէրն ի գործս իւր, որպէս
Սիմէոն ցնծացեալ ի Տաճարին Իսրայէլ։
Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ,
աղաղակեսցեն նմա աղաղակ երգոյ
գեսպանն նման։
Հաճի տէր ընդ ժողովուրդս իւր սուրբ, և
զարձեալ առնէ զհեղս ի փրկութեան։
Պարծեսցին սուրբքն փառաւք, և ցնծասցեն
ի հանգիստս իւրեանց, և բարձր արասցեն
զաստուած բերանովք իւրեանց։
Սուր երկայրի ետու ի ձեռս նոցա, առնուլ
հատուցումն ի հեթանոսաց, ի յանդիմանս
նուիրեալն ամենայն ժողովրդոց։
Ի կապել զթագաւորս նոցա կապանօք, զընտ
զօրաւորս նոցա ձեռակապօք երկաթեօք։
Առնել նոցա զդատաստան ըստ գրոյ, փառք
այս են ամենայն սրբոց նորա։

Ցունկ ը։

ՍԱՂՄՈՍ ՁԴ։

Ալելուիա։ Անդեայ և Զաքարիայ։

Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նո-
րա, օրհնեցէք զնա ի հաստատութեան
զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա, օրհ-
նեցէք զնա ի բազում մեծութեան նորա։
Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան, օրհ-
նեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ։
Օրհնեցէք զնա ցնծութեամբ, գովեցէք
զնա ուրախութեամբ։
Օրհնեցէք զնա ի քանն քառաք, գովեցէք
զնա ի բարբառ լսելի։
Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան, ամե-
նայն հոգիք՝ օրհնեցէք զՏէր։

Տունք գ։ Գօրեայս կը։

Դասանս յիսք։ Զորք կանոնս Տունք ոչխք։
Ա՛ինհամեան սաղմոսք՝ Գօրեայս ձզ։ Սաղմոս ձդ։
Տունք ի սմա մնկք։

Ա՛յս սաղմոս ինքնագիր Գաւթի արտաքոյ Թուոց։
ի ժամանակի՝ զի էր նա նահատակ ընդդէմ Գողիա-
թու, առաջի Սաուղայ և ամենայն զօրացն Իսրայելի։

Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտսեր ի տան
հօր իմոյ, արածէի զհօտսն հօր իմոյ։
Ձեռք իմ արարին սաղմոսարան, և մա-
տունք իմ կազմեցին գործն օրհնութեան։
Եւ արդ ո՞պատմեսցէ զայս Տեառն իմում։
Ինքնին Տէր ամենայնի՝ լուիցէ զամենայն։
Եւ առաքեաց Տէր զՀրեշտակ իւր, և

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ

Դանիէլ ը։

Օրհնեալ ես տէր Աստուած հարցն մե-
ծոց, օրհնեալ փառաւորեալ անուն քո
յաւիտեան։
Յիրաւունս անցուցեր զայս ամենայն ընդ
մեզ. արդար ես դու տէր, եւ ամենայն
գործք քո ճշմարիտ են։
Ճանապարհք քո ուղիղ են, և ամենայն
դատաստան քո արդար են։
Դատաստան արդարութեան ածեր ի վե-
րայ մեր. քան ամենայնի զոր ինչ ածեր ի
վերայ մեր, և քաղաքի սրբոյ հարցն մերոց
երուսաղէմ։
Արդարութեամբ և ճշմարիտ ածեր զայս
ամենայն ի վերայ մեր, վասն մեղացն մե-
ծոց։
Անօրինեցաք և յանցեաք առաջաւոր լինել
ի քէն. մեղաք յամենայնի և պատուիրա-
նաց քոց մեր ոչ անսացաք։

Համբարձ զես ի հօտէ խաշանց հօր լմոյ,
և օձ զես յօձումն իւղոյ իւրոյ։
Եղբարք իմ մեծամեծք և գեղեցիկք, և
ոչ հաճեցաւ ընդ նոսա տէր։
Եկի ես ընդ առաջ այլազգւոյն, և նզովեցեր
զիմառս նորա։
Հանի զառւսերն ի նմանէ և հատի զլեառ
նարինն, եւ քարձի զնախատինս յորդւոյն
Իսրայէլի։
Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։
Ա յժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։
ամէն։



Ոչ պահեցաք և ոչ արարաք՝ որպէս պա-
ւսւէիրեցեր դու մեզ, մի զբարիս դոյզն-
ինչ ի քէն։

Արդ զամենայն զոր արարեր՝ և զոր ինչ ա-
ձեր ի վերայ մեր, արդարդ գտաստանաւ
արարեր։

Մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մե-
րոց, անօրինաց՝ խաւխց և ապստամբողաց,
ի ձեռս թագաւորի անօրինի և չարի քան
զամենայն երկիր, մատնեցեր զմեզ։

Եւ արդ ոչ դոյ մեզ ժամ բանալ զբերան
մեր, զի ամօթ և նախատինք եղեալ ծա-
ռայից քոց պաշտանեից։

Այլ մի մատներ զմեզ խոպան վասն ան-
ուան քո, մի ցրեր զսխտա քո, և մի ի
բացեայ առներ զողորմութիւնս քո ի մէնջ,
վասն Աբրահամու սիրելւոյ քո, Իսահա-
կայ ծառայի քո, և Իսրայէլի սրբոյ քո։

Խոստացար նոցա՝ և ասացեր, բազմացու-
ցեալ զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից
բազմութեամբ, և որպէս զաւազ առ եզր
ծովու։

Եւ արդ, տէր, նուազեցաք մեք քան զա-
մենայն ազգս, և եմք առաւսպեալք յամե-
նայն երկրի այսօր վասն մեղաց մերոց։

Ոչ դոյ ի ժամանակի յայսմիկ իշխան՝ մար-

գարէ և առաջնորդ, ոչ ողջակէզք պատա-
րագայ, ոչ խունկք օրհնայ, և ոչ տեղի
պատարագս մատուցանել առաջի քո, և
ողորմութիւն գտանել ի քէն։

Այլ անձամբք խոնարհեալ և հոգւով տա-
ռապանայ ընդունելի լիցաք մեք՝ որպէս
զողջակէզս խոյոց և զեզաւրակաց, և որպէս
բիւրաւորս գառանց պարարտուց։

Այնպէս ընդունելի լիցին պատարագք մեր
այսօր առաջի քո, զի կատարեալ գոյ-
գինի քո, և չէ ամօթ յաւուրցեայս ի քէն։

Եւ արդ զամէն զհետ քո ամենայն սրտիւք
մերովք, երկնչիմք մեք ի քէն, և խնդրիմք
զերեսս քո, տէր, մի յամօթ առներ զմեզ։

Այլ արա առ մեզ ըստ հեծութեան քում
և ըստ բազում ողորմութեան քում։ փրկ-
կեա զմեզ վասն սքանչելեաց քոց, և փա-
ռաւորեսցի անուն քո յաւիտեան։

Զամօթ լիցին ամենեքեան որ չարչարեն
զծառայս քո, ամաչեցեալ լիցին բոնու-
թիւնք նոցա, և ամենայն զօրութիւնք նո-
ցա խորտակեսցին։

Եւ ծանիցեն զի դու ես տէր Աստուած
միայն, որ փառաւորեալ ես ի վերայ ա-
մենայն տիեզերաց։

Օրհնեալ ես դու տէր Աստուած հարցն

մերոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառացդ, գովեալ և առա.

Օրհնեալ ես ի տաճարի փառացդ սրբոյ Թեան քո, գովեալ և առա.

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայու Թեան քո, գովեալ և առա.

Օրհնեալ ես որ նստիս ի քերովբէս և հայիս յանդունդս, գովեալ և առա.

Օրհնեալ ես ի վերայ հաստատուԹեան երկնից, գովեալ և առա.

Օրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Օրհնեցէք երկինք զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Օրհնեցէք Հրեշտակք Տեառն, և ջուրք որ ի վերոյ երկնից զՏէր, օրհնե.

Օրհնեցէք զօրուԹիւնք Տեառն, արեգակն և լուսին զՏէր, օրհնե.

Օրհնեցէք աստեղք երկնից, անձրեւք և ցօղք զՏէր, օրհնե.

Օրհնեցէք ամենայն հողմք, հուր և ջեր զՏէր, օրհնե.

Օրհնեցէք ցուրտ և ոսԹի, ցօղ և ձիւնաբեր զՏէր, օրհնե.

Օրհնեցէք սառն և պարչ, եղեամն և ձիւն զՏէր, օրհնե.

Օրհնեցէք սիւք և դիշերք, լոյս և խաւար զՏէր, օրհնե.

Օրհնեցէք ամպք և վոյլատակունք և երկիր զՏէր, օրհնե.

Օրհնեցէք լերինք և բլուրք, և ամենայն բոյսք երկրի զՏէր, օրհնե.

Օրհնեցէք աղբիւրք ծովք և գետք զՏէր, օրհնե.

Օրհնեցէք կէտք և ամենայն կայուածք որ ի ջուրս, և Թռչունք երկնից զՏէր, օրհնե

Օրհնեցէք գազանք և անասունք, և որդիք մարդկան զՏէր, օրհնե.

Օրհնեսցէ Իսրայէլ զՏէր, օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան։

Օրհնեցէք քահանայք զՏէր, օրհնե.

Օրհնեցէք ծառայք Տեառն զՏէր, օրհնե.

Օրհնեցէք անձինք եւ շունչք արդարոց զՏէր, օրհնե.

Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք զՏէր, օրհնե.

Օրհնեցէք Անանիա՝ Ազարիա և Միսայէլ զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Գ-ի · ա ·

Մեծացուսցէ անձն իմ զՏէր, և ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։

Այլ արար ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետև երանեացեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա։

Ողորմութիւն արար ազգաց յազգս եւ կիւրացուածոց իւրոց. որոյ զօրութիւն բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից. և քակեաց զՀզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս եղեալ բարութեամբ, զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլ ծառայ իւրոյ, յիշելով ողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ Հարս մեր, ընդ Աբրահամ, և զաւակի նորա յաւիտեան։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԶԱՔԱՐԻԱՑԻ ՀՕՐՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Գ-ի · ա ·

Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի որ յայց եկն, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ։

Յարոյց մեզ եղջիւր փրկութեան ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ, որպէս խօսեցաւ բերանովք սրբոցն՝ որ յաւուրանից մերոց գարեքն էին։

Փրկութիւն ի թշնամեաց մերոց, և ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց։

Առնել ողորմութիւն առ Հարսն մեր, և յիշել զվճռակտութիւն սրբութեան իւրոյ։

Երդումն՝ զոր երդուաւ Աբրահամու Հօր մերոյ, տալ մեզ առանց երկիւղի փրկութիւն ի թշնամեաց մերոց։

Պաշտել զնա սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա, զամենայն աւուրս կենաց մերոց։

Եւ դու, մանուկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա։

Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ, ի թողութիւն մեղաց մերոց։

Վասն գթոյ ողորմութեանց տեառն Աստուծոյ մերոյ, որով երեւեցաւ մեզ արեգական ի բարձանց՝ լուսաւոր առնել ընդ խաւար մեր։

Ճապել լոյս ի վերոյ այսոցիկ՝ որ նստեաք ի խաւարի և ի ստուերս մահու. ուղղել զգոյս մեր ի ճանապարհս խաղաղութեան։

ԱՂՕԹՔ ՍԻՄԷՈՎՆԻ ԾԵՐՈՒՆԻՈՑՆ

Ղ. ՚ի ՚ի. բ։

Արդ, արձակեա զծառայ քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց։

Լոյս յայտնեցար հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայելի։

ՄԱՆԱՍԻԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Տէր ամենակալ, Աստուած Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ՝ և զաւակին նոցա արդարոյ. ամենակալ Տէր, Թող զմեզս իմ։

Որ արարեր զերկինս և զերկիր, և զամենայն զարդ նոցա. ամենակալ Տէր, Թող.

Որ կապեցեր զծով բանիւ հրամանաւ քո. փակեցեր զխոր, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով. ամենակալ Տէր, Թող.

Որ ամենայն ինչ սարսէ և դողայ յերեսաց ահի զօրութեան քո. ամենակալ Տէր, Թող.

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քո. ոսոխիկ է բարկութիւն ընդ պատնէշեաց քոց ի վերայ մեղաւորաց, անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենակալ Տէր, Թող.

Դու, Տէր, բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազմողորմ. և դղջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ Տէր, Թող.

Դու, Աստուած, ոչ եդիր ապաշխարու-

Թիւն վասն արդարոյն Աբրահամու, Խոս-
հակայ և Յակովբայ, որք ոչ մեղան քէդ.
ամենակալ Տէր, Թող.

Ա՛յլ եդիր ապաշնարհութիւն վասն իմ մե-
ղաւորիս, զի մեղայ առեալ քան զաւաղ ծո-
վու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ա-
մենակալ Տէր, Թող.

Չեմ արժանի հայել և տեսանել զբարձ-
րութիւնս երկնից, ի բազմութենէ անօ-
րէնութեան իմոյ. ամենակալ Տէր, Թող.

Կարացեալ եմ ես ի բռնութենէ կապա-
նաց երկաթեայց, և ոչ դու ինձ. Հանգիստ.
ամենակալ Տէր, Թող.

Բարկացուցի զբարութիւն, և չար ա-
ռաջի քո արարի. կանգնեցի պատկեր և
բազմացուցի զգաստութիւն. ամենակալ Տէր,
Թող.

Եւ արդ, Տէր, խոնարհեցուցանեմ զծունր
սրտի իմոյ, և խնդրեմ ի քաղցրութենէդ
քոմմէ. ամենակալ Տէր, Թող.

Մեղայ, Տէր, մեղայ, և զանօրէնութիւնս
իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ Տէր,
Թող.

Աղաչեմ և խնդրեմ ի քէն՝ Թող ինձ, Տէր,
Թող ինձ. և մի կորուսանիր զիս ընդ ա-
նօրէնութեան իմոյ. ամենակալ Տէր, Թող.

Մի յաւիտեան բարկանար ինձ, Տէր. եւ
մի յիշեր զչարիս իմ, և մի պատասխուիր
զիս ընդ իմեալն ի ներքոյ երկրի չարեօք.
ամենակալ Տէր, Թող.

Զի դու, Աստուած, Աստուած ապաշխա-
րողաց ես. և յիս ցոյց զբարերարութիւնդ
քո՝ որ անարժան եմ. ամենակալ Տէր, Թող.

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութե
քում, և ես օրհնեցից զքեզ զամենայն ա-
ւուրս կենաց իմոց. ամենակալ Տէր, Թող.

Զքեզ, Տէր, օրհնեն ամենայն զուարթուն
երկինք. և քո են փառք յաւիտեան. ամէն:

Փառք Հօր, և Որդւոյ և. Ա. յժմ և միշտ և.

Աղաչեմ և խնդրեմ ի քէն, Տէր, Թող
ինձ զմեղս իմ:

Բազումողորմ, Տէր, ողորմեա ինձ:

Աստուած, քաւեա զիս զմեղաւորս ի
մեղաց, և կեցո:

Արարիչ իմ և յոյս, Աստուած, զթայ յիս
ի մեղուցեալ ծառայս, եւ ողորմեա ինձ
բազմամեղիս:

Ամենօրհնեալ, Սրբուհի, և միշտ կոյս Աս-
տուածածին Մարիամ, բարեխոսեա առ
Տէր վասն իմ մեղաւորիս:

Ամենայն սուրբք Աստուծոյ՝ բարեխօսեցէք առ Հայր ի յերկինս վասն մեր մեղաւոր բաց։

Քրիստոս, որդի Աստուծոյ անմահական, ընկալ զաղաչանս մեր, զի ի քեզ են ապաւէն նեալ անձինք մեր։

Յաղթող զօրութեամբ, սուրբ և կենդանարար և պատուական խաչիդ քո, տէր, պահպանեա զմեզ։

Առաքեա, տէր, զհրեշտակ խաղաղութեան քո, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով ի տունս և ի դիշերի։

Եւ մարդասիրութեամբդ քո յիշեա զմեզ, տէր, յիշեա զմեզ, յորժամ դաս աքքայութեամբ քով. և ողորմեա մեզ։



Նախադրութիւնք խրատականք յաղագս աղօթիցն, զոր արարեալ է Տեառն Ներսէսի եղբօրն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի։

Աղօթք հասարակաց Քրիստոնէից մեծաց և փոքունց, զոր պարտին ուսանել ամենեքեան՝ և ուսուցանել զմիմեանս. քահանայք՝ զժողովուրդս, հարք՝ զորդիս, մարք՝ զդստերս, և ընկերք՝ զընկերն իւր։ Եւ աղօթեացեն սովաւ յաւուրն հինգ անգամ՝ երկոտասան ծնրադրութեամբ ի ժամուն, այսինքն՝ յառաւօտուն, ի ճաշուն, ի հասարակ աւուրն, յերեկոյին, և ի հանգըստեան։ Ապա թէ պղերդ ոք լինիցի և ծուլանայ զհինգ ժամ աղօթս կատարել, աղօթեացէ չորս անգամ, կամ երեք անգամ, կամ երկու անգամ, կամ մի անգամ յաւուրն, որ միայն ճանաչի թէ Քրիստոնեայ է, և զինքն ծանիցէ թէ արարած եմ Աստուծոյ և երկրպագու նորա։ Եւ թէ զամենայն բանս աղօթիցն հեղգայ ուսանիլ, (որք եւ զաստանայական երգս բաղումս վութով ուսանին), ուսցի զկէս սորա կամ

այլ նուաղ. զի թէ առնս երիս ուսանիցին
ի սմանէ, և աղօթեացեն երիս ծնրադրու-
թեամբ ի ժամուն, ընդունելի է առաջի
Աստուծոյ: Ապա թէ ոք ի ֆրխաստանէից
անփոյթ առնէ զսա յուսանելոյ և աղօթե-
լոյ, յանդիմանեսցի . . . . և ի ժողովոյն
պլաղդեաց. որք զաղօթսն զոր ուսոյց նո-
ցա, ի պատերազմունս անգամ ոչ խոտո-
նեն՝ թող թէ ի խաղաղութեան: Իսկ մեք
ժողովուրդք արտաքոյ աղօթից տեղւոյ բա-
նաւ ոչ յիշեն զանուն Աստուծոյ. զի ոչ
ունին միտս ի կարգս աղօթից որպէս զսա-
տուածատաչսս, այլ սիրեն զդատարկա-
բանութիւնն քան զաղօթս: Եւ թէ եր-
բեմն գան ամանք յաղօթել առ քահանայն,
կամ փակեալ բերանով կանգնին, կամ զբ-
ուցատրութիւնս առնեն ընդ միմեանս.
զի ոչ ինքեանք գիտեն զբանս աղօթից, և
ոչ քահանայից միտ դնեն սաղմոսաց եւ
պաշտամանց: Վասն այսր պատճառի ա-
րտաքոյ զաղօթս զայս պարզ և յատակ բա-
ռիւ վասն ամենայնի գիւրահաս լինելոյ.
որ է սակաւ ըստ բանից՝ տուն քան և
ջրոս, ըստ ժամուց առաքելեան և գիշերոյ,
և ըստ սահմանի սրբոյ Մարգարէիցն, և զբ-
աւոր ըստ մատց. զի ղպղպագոյն պէտս

քնդրուածոց մերոց որ յԱստուծոյ՝ ունի
վայելեան. և առաւել ժողովրդեան մերում
յաստուծի. զի ամենայն անձն ֆրխաստանեայ
ուսցի զսա. և ուր հանգիպեսցին ի ժամ
աղօթիցն՝ իսահեսցին ասել ընդ Աստուծոյ,
թէ յեկեղեցւոջ՝ թէ ի տան՝ թէ յանդի՝
թէ ի գործ ինչ՝ թէ ի ճանապարհի: Եւ
որք ուսանին զսա և աղօթեացեն մտադիր-
ութեամբ՝ ջերմեռանդ սրտիւ և արուա-
ստաւոք. ամենայն հնդրուածք որ գրեալ
են ի սմա՝ կատարեսցին ի կենդանութեան
և յետ մահու: Իսկ որք ոչհամարձակին և
ոչ ուսանին և ոչ աղօթեացեն, ինքեանք
սեպհեն զվնաս անձանց իւրեանց. մեք հա-
ստատ ի միտ զպատճառն՝ առնելով զա-
ղօթս զսա. զի մի այլ եւս պատճառեսցեն
թէ ոչ գիտեմք բանս աղօթից, վասն
այնպիսւոյ ոչ կամք յաղօթս: Բայց ծանիցեն
այնպիսիքն, թէ սատանայ ոչ այնչափ կա-
նայ զայլ բարեգործութիւնս մեր խափա-
նել՝ որչափ զաղօթս. զի գիտէ որ յաղո-
թիցն միայն ինքն հալածի ի միտ, և Աս-
տուած բնակէ ի մեզ: Արդ՝ մեք աղաչես-
ցուք զարարչէն Աստուած բանալ զսրտ
մատց ձերոց, յօժարութեամբ ուսանել զսա
և աղօթել, և Աստուծոյ սիրելի լինել:

Եւ յաղօթեն՝ զՊրիգորիոս կաթուղիկոս Հայոց, և զեղբայրն նորին զՆերսէս զաղօթիս յօրինսն յիշեցէք ի Քրիստոս : Եւ ոչ ընդօրինակէք ի գիրս զաղօթս, գրեցէք և զերաժշտական բանս զայսոսիկ. եւ որք գրեն զսա՝ գրեսցին ի գպրութիւն կենաց յաւիտենից : Եւ որք ուսանին եւ աղօթեսցեն, ողորմութիւն ընկալցին ի Քրիստոսէ. և որք ուսուցանիցեն զընկերս, վարձս առցեն յԱստուծոյ : Եւ որք գրենն, մի առաւել քան զօրինակ՝ քան կամ դիք խառնեսցեն, եւ մի նուազ գրեսցեն, զի մի այլ և այլ լինիցին բանքն, այլ հաւատարմապէս լինիցին ամենեքեան ուր և գրեսցին : Եւ ախմանքն ի գիրս՝ ուղիղ գրուածն տացեն գրել. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն :



ԱՂՕԹՔ ԻԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ

ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

Զոր արարեալ է որդի Տեառն Ներսէս Հայոց կաթողիկոսի :

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ, Հայր և Որդի, և Սուրբ Հոգի. անեղ և անմահ բնութիւն, արարիչ Հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց, և ինձ բաղմամեղիս :

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի, հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղայ և անգիտութեան, և լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի քէն զնդրուածս իմ. և ողորմեա քո արարածոյ և ինձ բազմամեղիս :

Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՔրիստոս քո սիրելի ՚ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. քնկալ զիս որպէս զնաւաւոր որդին, և զգեցո ինձ զպատմուճանն զառաջինն՝ որ մերկացայ մեղօք. և ողորմեա.

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար թաղեցար եւ յարեար ՚ի մեռելոց և համբարձար փառօք առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն՝ յորժամ գաս ազքայութեամբ քով. և ողորմեա.

Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ լցեր ՚ի Յորգանան և ՚ի վերնատունն, և բնաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մնքրեա զիս վերստին աստուածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ ղԱռաքեալն. և ողորմեա.

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մոռաք խոտիք, հոգւով և մարմնով խոտ. մի յիշեր զվնաս իմ զառաջինս վասն անուանդ քո սրբոյ. և ողորմեա.

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ընկեա զձեռադիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ՚ի դպրութեան կենաց. և ողորմեա.

Իննոզ գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. Թողութիւն ընդհեա մեղաւորիս, զի ՚ի ծննդենէ սուրբ աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա.

Ամենախնամ տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս հայել յաթոռ, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ ՚ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զգործումն մոյն լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. եւ ողորմեա.

Հուր կենդանի Քրիստոս, ջնջեա սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զխոտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ

զնելոյ մտաց իմոց, եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վաւերսցէ զայս գիտուԹեան քո ՚ի սրտի իմում. և ողորմեա.

ԻմաստուԹիւն հօր ցիտուս, տուր ինձ լիմաստուԹիւն զբարիս խորհել և խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ՚ի չար խորհրդոց ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա զիս. և ողորմեա.

Կամեցող բարեաց, տէր կամարար, մի Թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա.

Աչքայ երկնաւոր, տուր ինձ զաչքայուԹիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց. և զբացս զսիրտ իմ առել զմեզս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողորմեա.

Խնամող արարածոց, պահեա ՚ի շանաւ խաչն քո զհոգի և զմարմին իմ ՚ի պատրանաց մեղաց, ՚ի փորձուԹեանց դիւաց, և ՚ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա.

Պահապան ամենայնի գրիստոս, աչք քո հովանի լեսցի ՚ի վերայ իմ, ՚ի տուէ և ՚ի գիշերի, ՚ի նստել ՚ի տան, և ՚ի գնալ ՚ի ճանապարհ, ՚ի ննջել և ՚ի յառնել, զի

մի երբէք սասանեցայց. և ողորմեա.

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո եւ լնուս զամենայն արարած ողորմուԹեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ, դու հոգա և պատրաստեա զկետս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հեաՀ մինչեւ յաւիտեան. և ողորմեա.

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ՚ի չար սովորուԹենից իմոց ՚ի բարի սովորուԹիւն. և բեւեռեա ՚ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենին, եւ զսէր արքայուԹեան. զի զղջացայց ՚ի մեղաց, և գործեցից զարդարուԹիւն. եւ ողորմեա.

Աղբիւր անմահուԹեան, աղբերացո ՚ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարուԹեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զլսելն իմ յաշխարհէս. և ողորմեա.

Պարգեւիչ ողորմուԹեան, պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդուԹեամբ գալ առ քեզ. և ողորմեա.

Բարերար տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրուԹեամբ աւանդել

զՀոգի իմ, և անխառն անցուցանել ընդ
ջաւրութիւն այսոցիկ՝ որ են ի ներքոյ երկ
նից. և ողորմեա.

Լսա՛ Ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա
զՀոգի իմ ուրախութեամբ սեանել ընդ
լոյս փառաց քոյ ի կոչմանն աւուրն. եւ
հանդչել յանաւալ բարեաց յորհնեանս որ
դարոյ մինչեւ յօր մեծի գալստեան քո. և
ողորմեա.

Գոտուառ արդար, յորժամ գաս փառօք
Հօր դատել զկենդանիս եւ զմեռեալս,
մի մոռաներ ի դատաստան ընդ ծառայի
քումմ. այլ փրկեա զնա ի յաւիտենական
հրոյն, և լսելի արա ինձ զերանելեաւքն կո
չեցմն արդարոցն յերկինից արքոյութիւնդ.
և ողորմեա.

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հա
ւատացելոց ի քեզ, լսոց և օտարոց, ծա
նօթից և անծանօթից, կենդանեաց և մե
ռելոց. շնորհեա, և թշնամեաց իմոց և
ատելեաց զթողութիւն որ առ իս յանցա
նաց. և դարձո զնոսա ի ջարեացն զոր ու
նին վասն իմ, զի ողորմութեան քումմ ար
ժանի եղիցին. և ողորմեա.

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծա
ռայիս քո, և կատարեա ի բարի զկնդըս

ուածս իմ, բարեխոսութեամբ Սրբուհւոյ
Աստուածածնին եւ Յովհաննու Մկրտչին
և սրբոյն Միքայէլի հրեշտակապետին եւ
սրբոյն Գրիգորի մեծի լուսաւորչին, եւ
սրբոց առաքելոց, մարգարէից, վարդա
պետաց, մարտիրոսաց, հայրապետաց,
ճգնաւորաց, կուսանաց, և ամենայն սրբ
ոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց:
Եւ քեզ փառք և երկրպագութիւն անճ
պատանելի Սուրբ Երրորդութեանդ յաւի
տեանս յաւիտենից. ամէն:



ՄԱՂԹԱՆՔ ՋՕՐԱՒՈՐՔ ԱՐՀԱՒՐԱՑ

ԳԻՇԵՐԱՅՆՈՑ

Աբբայ Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ։
Բան ԺԲ։

Ընդհակ քաղցրութեամբ, տէր Աստուած հզօր, զդաւնացողիս զազաչանս. մաղիր գթութեամբ, առ պատկառեալս դիմօք. փարատեա, առիւծապարգեւս, զամբարհաւան տխրութիւնս. բարձ յինէն, ողորմած, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա, հնազբաւոր, զմահացու կրթութիւնս. աւազեա, միշտ յաղթող, զնաբոզին հաճոյութիւնս. բացատրեա, վերնային, զմոլեցեալն մանաւանդ. կնքեա, կեցուցիչ, զկորուսեալն ընթացմունս. ցրուեա, ծածկատես, զքմ քունոզին չար գամմունս. խորտակեա, անքննին, զմարտողին դիմեցմունս։ Տեառնագթեա՛ քո անուանդ զքեզ սանեցելդ երդ յարկիս, պարփակեա՛ քո ձեռամբդ զաւազատաղ տաճարիս. գծագրեա՛ քո արեամբդ զմուտ սեմոյ սենեկիս. կերպացո՛ զքո նշանդ ի հետս ելից մաղթողիս. մի բայց քո աջովդ զհանգստեանս խշոի. մաքրեա ի հաղթից զձագկարան անկողնոյս. պահեցեա՛ քո կամօքդ զառաւտպեալ անձն ոգւոյս. անխորդափս արասցես զքո ընտրեալ շունչ մարմնոյս. կացուցես զքեզ փակ զսրտի զբոցդ երկնային. կարգեացես ի դիմի ընդդէմ դիւացն պատուս։ Տա՛ք հանդիստ բերկրութեան մնահանգոյնս նկրտման ի խորութեան փիշերիս, բարեխոսութեամբ Հայցուածոյ սրբոյ Աստուածածնիդ և ամենայն ընտրելոց։ Ամիսվեալ պարսրեա զպատուհան աեւսութեանդ ըզգայարանացս իմոց ի անզարհաբելի վեհեղմամբ ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազից, խօլականաց ցնորից, յիշատակաբ քո յաւդ անվերառելի պաշտպանեալ։ Եւ սփոփեալ վերատին ի ննջմանէ ծանրութեան ամենապատառ արիութեամբ, հոգենորոգ զսարթուութեամբ ի քեզ արձանացեալ զայս ձայն մաղթանաց բազմամբ հաւատոց, քեզ, ամենօրհնեալ Թագաւոր փառաց, անճառից փառաբանողաց, երկնագումար խմբից երգակցեալ յերկինս աճապարել։ Զի դու, փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՑԵԱՆ

Նորին սրբոյն Գրիգորի,
Բաղդ.

Ողորմած յաւիտենական, բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք ի մահու, և լոյս ի խաւարի. յոյս ակն ունողաց և երկնմտութիւն ոտարակուսելոց: Որ ամենաբուեաւ իմաստութեամբ քո՝ զարձուցանես յոյգ զբաստերս մահու, անուազ ծագումն և անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւարտ գիշերոյ: Որում կրկնի ծանր երկրպագութեան ամենայն եղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց և անդաստամեռոտիանաց, որ լսես զհեծծումն կապերոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նոցա. Աստուած իմ և Թագաւոր իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ. Քրիստոս, Աստուածդ ամենայնի. տուրըդ հանդուցեալ ի հոգիս սրբոց, միխիթարութիւն վշտաց՝ և քաւարան մեղաց, որ գիտես զամենայն յառաջ քան

զլինել նոցա. առաքեա զպահպանողական գօրութիւն աջոյ քո, և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և ի դիւէ ջարէ: Որպէս զի զքնաստակս առակալք և առլըք քո անուանդ՝ միշտ համբուրեալ չրթամբք հոգւոյ՝ ընծաութեան ընծայ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ ի բոլոր սրտէ: Եւ ի գրուշէ խաչի քոյոյ նշանիդ, զոր առաուածային արեամբդ քո ներկեալ նորոգեցեր, և ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր. այսու պարգեւօք աստուածականօք ամենեսեան աստանայ, քահանային մեքենայքն, բարձրին որոգայթքն, պարտեցին մարտուցեալքն, պահականային զէնքն ասրտասուրք, մերժեցին մեգն, փարատեցին խաւարն, մեկնեցին մառախուղն: Բաղուկ քո հովանոցի, և աջ քո կնքեացէ. վասն զի դիմած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է ի վերայ ծառայից քոց: Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւովդ Սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ա. ՊԱՕԹՔ ԶՕՐԱՒՈՐ

Նորին պարսն Գրիգորի։

Բան խա։

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յա-
ւիտեանի, հարդ ահաւորի անքննին ծը-
նունդ, որ սկսրանայ առ ի քէն եւ ոչ
ինչ. որ ի ծագել անասուեր նշուլից ո-
ղորմութեան քո փառաց, հալին մեղք,
հալածին դեւք, ջնջին չանցանք, խլին կա-
պանք, խորտակին շղթայք, կենդանանա-
նին մահացեալք, բժշկին հարուածք, ող-
ջանան վէրք, բառնին տգիտանութիւնք,
տեղի տան սխրութիւնք, նահանջին հե-
ծութիւնք, փախուստ խաւարն, մեկնի մէ-
գըն, մերժի մառախուղն, փարատի մըր-
ուայն, ապառի աղջամուղջն, վերանայ մու-
թըն, գնայ գիշերն, տարագրի տափնա-
պըն, չքանան չարիքն, հալածին յուսա-
հատութիւնքն, եւ թագաւորէ ձեռն քո
աւետակաւ, քաւիչդ աւետեանի։ Որ ոչ եւ
կիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կե-

ցուցանել. Թող ինձ զանթիւ չարիսն իմ
քաղցր ողորմութեամբդ, զի դուս միայն
ես յերկինի անճառ, և յերկրի անընկեր, ի
տարր գոյ, և յեղծս ծագածոց աշխարհի,
սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայն
լսեմբ, օրհնեալ ի բարձունս. եւ քեզ
կենդ հոր և հոգւոյդ Սրբոյ փառք յաւի-
տեանս. ամէն։



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ ՍԱՂՄՈՍԱՑ

Ըստ կարգի այբուբենիդ ։

Աղաղակեցէք առ Աստուած ամենայն երկիր։	ղէ ։
Աղաղակեցէք առ ցէր ամենայն երկիր։	ղէ ։
Ապրեցո զիս ցէր, զի նուաղեաց սուրբ։	ժա ։
Ապրեցո զիս ցէր՝ ի մարդոյ չարէ։	էլԹ ։
Առ դէտս բաբելացւոց, անդ նստեաք։	ճկզ ։
Առ քեզ ցէր կարդացի Աստուած իմ, մի՛։	իէ ։
Առ քեզ ցէր համբարձի զանձն իմ։	իդ ։
Առ քեզ ցէր համբարձի զաչս իմ, որ։	ճիբ ։
Ասաց անզգամն՝ ի սրտի իւրում, Թէ ոչ։	ժզ ։
Ասաց անզգամն՝ ի սրտի իւրում, Թէ ոչ։	ծբ ։
Ասաց ցէր ցէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ։	ճի ։
Ասացի՝ Թէ պահեցից զճանապարհս իմ։	լբ ։
Ասէ անօրէնն՝ ի միտս ընդ մխտս։	լէ ։
Աստուած՝ ականջօք մեերովք լուաք, զոր հարքն։	խզ ։
Աստուած Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ։	կբ ։
Աստուած Աստուած իմ՝ նայեաց առիս, ընդ։	իա ։
Աստուած աստուածոց ցէր խօսեցաւ եւ կոչեաց։	խԹ ։
Աստուած հիւաց՝ ի ժողովս աստուածոց։	ձա ։
Աստուած ղնդաւունս զո արքայի սուր։	հա ։
Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն։ օգ։	խա ։
Աստուած մերժեցեր եւ ամեխեցեր զմեզ։	ծԹ ։
Աստուած մոին հեթանոսք՝ ի ժառանգու։	հը ։
Աստուած յանուան քումմ կենդ զիս, եւ՝ ի զօ։	ծգ ։
Աստուած յօդնի՛լ լինիմ նայեաց, եւ ցէր լըն։	կի ։
Աստուած ողորմեա մեզ եւ օրհնեա զմեզ։	կզ ։
Աստուած՝ ո՞ զեզ նմանիցի, մի՛ լռեր եւ։	ձբ ։

Ողորմած վերնվիրեալդ. տէր Աստուած. ղդ։
Աստուած օրհնութեան խնդ մի լսեր, պի. ճը։
Այս օրհնեցեք ամենայն ծառայք տեառն. ճդ։
Բազում անդամ մարտեան ընդ իս. ճկը։
Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր անձն. կա։
Բանից խնդ ունկնդիրը տէր, եւ ի միտ առ. ե։
Բարի է խոստովան լինել տեառն, եւ սաղմոս. ղա։
Բարձր առնեմ զբեզ Աստուած իմ եւ թա. ճկդ։
Բարձր առնեմ զբեզ տէր, զի ընկալար. լժ։
Բղխեսցէ սիրտ իմ զպատգամն քո բարի. խդ։
Գոհացայց զքէն տէր բոլորով սրտիւ. թ։
Գովեա Երուսաղէմ զՏէր. ճկե։
Դատ արա ինձ Աստուած, եւ իրաւ արա. խը։
Դատ արա ինձ տէր, զի ես յանբծութեան. խե։
Դատեա տէր զայնոսիկ՝ որք դատեն. ղէ։
Եթէ ոչ տէր էր առ մեզ, ասասցէ. ճիգ։
Եթէ ոչ տէր չինէ զաւուրն՝ ի նանիր. ճկզ։
Եկայք ցծնօղսդ՝ի տէր, աղաղակեսցուք. ղղ։
Երանեալ են անբիծք՝ի ճանապարհի. ճժը։
Երանեալ է այր՝ որ երկնչի՝ի տեառնէ. ճժա։
Երանեալ է այր որ ոչ գնաց՝ի խորհուրդս. ա։
Երանի ամենեցուն՝ որք երկնչին՝ի տեառնէ. ճկե։
Երանի որ խորհի զաղքատն եւ զտնանկն. կա։
Երանի, ում թողութիւն եղեւ մեղաց. լա։
Երկինք պատմին զվեառս Աստուծոյ եւ զարս. ժը։
Չէ՞ բարի կամ չի՞ վայելուչ, զի բնակին. ճկը։
Չէ՞ պարծի՝ի չարութեան հզօր. ծա։
Չաղօթեմ քեզ տէր յաւիտեան օրհ. ձը։
Լինդեր խոովեցան հեթանոսք եւ ժողո. բ։
Լինդեր մերժեցեր Աստուած՝ի սպառ. հզ։
Թէ արդարեւ զաղտարութիւն խօսէիք. ծէ։

Իբրեւ զի բարի է Իսրայէլի Աստուած. հը։
Ի գարձուցանել տեառն զդերութիւն. ճիե։
Ի լսելոց կարդացն առ քեզ տէր, տէր. ճկթ։
Ի կարդալ իմում լուսոյ լինէ Աստուած. ղ։
Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի. ճժթ։
Ի տէր յուսացայ, որպէս ասիցէք ցանձն. ժ։
Ի քեզ տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան. լ։
Ի քեզ տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. հ։
Լուարուք զայս ամենայն ազգք, ունկն դիր. խը։
Լսեցէք քեզ տէր յաւուր անձկութեան. ժթ։
Լսր Աստուած ազօթից խնդ յաղաչել լինէ. կէ։
Լսր Աստուած ազօթից խնդ, եւ նայեա տէր. կ։
Լսր տէր արդարութեան, եւ նայեա. ժզ։
Խոնարհեցո տէր զունկն քո՝ եւ լսր լինէ. ձե։
Խոստովան եղերուք տեառն՝ եւ կարդա. ճզ։
Խոստովան եղերուք տեառն՝ զի բարի է. ճժե։
Խոստովան եղերուք տեառն՝ զի բարի է. ճլե։
Խոստովան եղերուք տեառն զի քաղցր է. ճե։
Խոստովան եղերուք տեառն՝ զի քաղցր է. ճզ։
Խոստովան եղէց քեզ տէր բոլորով սրտիւ. ճժ։
Խոստովան եղէց քեզ տէր բոլորով սրտիւ. ճլե։
Խոստովան եղիցուք առ քեզ Աստուած. հգ։
Ծարաւ հարեք ամենայն հեթանոսք. խզ։
Կեցո զիս Աստուած, զի հասին ջուրք. կը։
Հաճեցար տէր ընդ երկիր քո, եւ դարձուս. ձէ։
Հաճարձակի գաչս իմ՝ի լերինս, ուստի եկիս. ճի։
Համբերելով համբերի տեառն, եւ նայեցաւ. լի։
Հաւատացի զոր եւ խոսեցայ, եւ ես խո. ճժե։
Հիմունք նորա՝ի լերան սուրբ նորա. ձզ։
Զայնիւ իմով ես առ տէր կարդացի. հզ։
Զայնիւ իմով ես առ տէր կարդացի. ճկա։

Աստուցեք ցհաուն՝ որդիք Աստուծոյ . իլ ։
Մեծ է տէր , եւ օրհնեալ է յոյժ . խէ ։
Մի՛ նախանձիր ընդ չարս , եւ մի՛ ընդ այնս . լղ ։
Մինչեւ յե՞րբ տէր՝ մոռանաս զիս . ժբ ։
Յայտնի է ՚ի Հրէաստանի Աստուած , եւ . հև ։
Յարիցէ Աստուած՝ եւ ցրուեսցին ամենայն . կէ ։
Յեղանէն Իսրայէլի յՆգիպտոսէ . ճժդ ։
Յիշեա տէր զդաւիթ , եւ զամենայն հնազու . ճյա ։
Յողորմութիւն եւ յիրաւունս օրհնէ . ճ ։
Նայեցցարուք ժողովուրդք յօրէնս իմ . հէ ։
Ողորմեա ինձ Աստուած , ի կրկնից . ծև ։
Ողորմեա ինձ Աստուած՝ ողորմեա ինձ . ծղ ։
Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողոր . ծ ։
Ո յուսայ ՚ի տէր , որպէս լեառն սիովն . հիգ ։
Որ բնակիսն է յօգնութիւն բարձրի . ղ ։
Որ հովուեալ Իսրայէլի նայեաց՝ որ . հի ։
Որպէս սիրելիք են յարկք քո տէր զօրու . ձղ ։
Որպէս փափաքի եղջերու յաղբերս . իա ։
Ուրախ եղէ եւ . ոչ ասելին ցիս . ծդ ։
Ուրախ եղէ եւ . ոչ ասելին ցիս . էիա ։
Պահեա զիս Աստուած իմ՝ զի եւ ՚ի քեզ . ժե ։
Պատշաճ է սիրտ իմ Աստուած , պատ . ճէ ։
Սիրեցի , զի լուիցէ տէր զձայն . ճժդ ։
Սիրեցից զքեզ տէր զօրութիւն իմ . ժէ ։
Տեառն է երկիր լիս իւրով . իդ ։
Տէր ապաւէն եղեր մեր ազգէ . ձի ։
Տէր Աստուած իմ ՚ի քեզ յուսացայ . է ։
Տէր Աստուած փրկութեան իմոյ , ՚ի տուէ . ձէ ։
Տէր զի բազում եղեն նեղիչք իմ . կ ։
Տէր թագաւորեաց , բարկացան ժողո . ղը ։
Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ . ղբ ։

Տէր թագաւորեաց ցնծասցէ երկիր . ղէ ։
Տէր ՚ի զօրութեան քումմ ուրախ եղիցի . ի ։
Տէր լոյս իմ եւ կեանք իմ , ես յումմէ՞ . իզ ։
Տէր լուր աղօթից իմոց , ականջ դիր . ճկբ ։
Տէր լուր աղօթից իմոց , աղաղակ . ճա ։
Տէր կարդացի առ քեզ եւ լուր ինձ . ճա ։
Տէր հոլովեսցէ զիս եւ ինձ ինչ ոչ . իբ ։
Տէր մի՛ սրտմտութեամբ քովկ յանդիմա . ղ ։
Տէր մի՛ սրտմտութեամբ քովկ յանդիմա . լէ ։
Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ . եւ ոչ . հլ ։
Տէր ո՞ կացցէ ՚ի խորանի քումմ . ժդ ։
Տէր տէր մեր զի սքանչելի է անուն . ը ։
Տէր փորձեցեր զիս եւ ծանեար . ճլբ ։
Ցնծացէք առ Աստուած , օգնական է . ձ ։
Ցնծացէք սրդարք ՚ի տէր , ուղղոյ . լբ ։
Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց Աստուած . ծբ ։
Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ՚ի սիովն . կղ ։
Օրհնեա անձն իմ զտէր , տէր Աստուած . ճգ ։
Օրհնեա անձն իմ զտէր , եւ ամենայն . ճբ ։
Օրհնեա անձն իմ զտէր , օրհնեցից զտէր . ճիա ։
Օրհնեալ ուրեք Աստուած իմ՝ որ ուսոյց . ճկդ ։
Օրհնեցէք զանուն տեառն , օրհնէ . ճլդ ։
Օրհնեցէք զԱստուած ՚ի սրբութեան նորա . ճժ ։
Օրհնեցէք զտէր ամենայն ազինք գո . ճժզ ։
Օրհնեցէք զտէր զի բարի է սաղ . ճկզ ։
Օրհնեցէք զտէր յերկնից , օրհնէ . ճկբ ։
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր , զի . ղէ ։
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր , օրհ . ղե ։
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն ՚ի նոր . ճկթ ։
Օրհնեցէք ամենքեանք զտէր՝ եւ . ճժբ ։
Օրհնեցից զտէր յամենայն ժամ , յամէ . լէ ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ

Ալէք արձակիա զծառայս քո ցեր. 336
Եւ ասացի ի վերանալ յինէն աւուրց. 245
Զի հաւր բորբոքեցաւ ի բարկութենէ. 118
Ի գիշերոյ կամիմ հոգի իմ՝ առաւօտ առ. 205
Ի նեղութեան խնամ ես առ ցեր կարդացի. 282
Հաստատեցաւ սիրտ իմ ի ցեր, եւ. 159
Մեծացուսցէ անձն իմ զցեր, եւ. 334
Նայեցարուք երկինք, եւ խօսեցայց. 75
Տեր զարք քո լուայ եւ երկեայ. 321
Տեր ամենակալ Աստուած Աբրահամու. 337
Փառք էր ես յեղբարս իմ, եւ կրտսեր. 327
Օրհնեալ ես տէր Աստուած հարցն մեր. 329
Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի, որ. 335
Օրհնութիւնք զցեր, զի վաստակ է. 32
Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն ձեր. 281

Եօթն ստղոյք Ասպետութեան։

Տեր մի սրտմտութեամբ քով յանդիմ. զ։
Եբանի, ում թագուհին եղեւ մեղայ. ըս։
Տեր մի սրտմտութեամբ քով յանդիմա. լե։
Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողոր. ծ։
Տեր լուր աղօթից իմոց, ականջակ. ճա։
Ի խորոց կարդացի առ քեզ ցեր, ցեր. ճիթ։
Տեր՝ լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդ. ճիզ։

2035

1978